

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐ**

**9**



**ԵՐԵՎԱՆ 2008**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ  
ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ


ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ  
СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

9



ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԾԵԱՆ  
ՄԱՏԵՆԱԾԱՐ

37



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES

37

ԵՐԵՎԱՆ 2008

93844

ՀՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

Հ 282

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական  
խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, պ.գ.դ. Ա. Ա. Մելքոնյան (նախագահ)

պ.գ.թ. Գ. Ա. Գրիգորյան

պ.գ.թ. Կ. Հ. Խաչատրյան

Ժողովածուի խմբագիրներ՝

պ.գ.թ. Ա. Ռ. Խոսրոնա

պ.գ.թ. Ա. Վ. Մաղալյան

Հ282 ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ /Գիտական հոդվածների  
ժողովածու/. - Եր.: Պատմ. ինստ., 2008, - 303 էջ:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի «Հայոց պատմության  
հարցեր» խորագրով գիտական հոդվածների 9-րդ ժողովածուում  
գետեղված աշխատություններն արքյուրագիտական լայն հենքի  
վրա լույս են սփռում Հայոց հին, միջնադարյան, նոր և նորագույն  
պատմության մի շարք հիմնահարցերի վրա:

Ժողովածուին նախատեսված է մասնագետ-պատմաբան-  
ների և ընթերցող լայն հասարակության համար:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 978-99941-79-10-5

*МИХЭИЛ КУРДИАНИ*  
(Грузия)

СЛЕД ЗАРАТУШТРЫ В НАРТОВСКОМ  
ЭПОСЕ ОСЕТИН

В августе 1882 г. академик Всеволод Федорович Миллер опубликовал статью "Черты старины в сказаниях и быте осетин"<sup>1</sup>, которая оказалась этапной не только для нартоведения, но и для иранистики:

"Мудрой и плодотворной была мысль, вдохновившая Вс. Миллера в 1882 г. на его памятную записку... менее чем двадцатью страницами он для Юго-Востока Европы положил блестящее начало новому порядку исследований, сравнимому с тем, который в ту же эпоху ученые применили для Северо-Запада, для кельтского мира"<sup>2</sup>.

В вышеуказанной статье В. Ф. Миллер "стал искать общие черты между многочисленными и оригинальными эпическими сказаниями осетин и теми сведениями, которые, например, Геродот или Аммиан Марцелин передали нам о скифах, сарматах и др."<sup>3</sup>

Вдохновленный методом Миллера Жорж Дюмезиль в 1930 г. продолжил подобные сопоставления и значительно увеличил их число<sup>4</sup>.

Из всех имеющихся сопоставлений, как Миллера, так и Дюмезиля, самым убедительным и, соответственно, самым ценным надо признать установленную Миллером параллель между эпизо-

---

<sup>1</sup> Журнал Министерства народного просвещения", СПб., ч. ССХХII, отд. II: 191-207.

<sup>2</sup> Дюмезиль Ж., Осетинский эпос и мифология, Москва: "Наука", 1976, с. 132.

<sup>3</sup> Там же.

<sup>4</sup> Результаты его многолетних усилий см. на русском языке в монографии "Осетинских эпос и мифология", Москва: "Наука", 1976.

дом нартского эпоса из цикла Созрыко, в котором Созрыко, победив богатыря Элтагана и срезав у него скальп, собирает всех девок и молодух нартского аула и говорит им: "Скроите мне шубу из головных волос и усов"<sup>5</sup> и сообщением Геродота об одном обычае скифов:

"былина сохранила воспоминание об обычае скальпирования и утилизации скальпов для шуб, некогда существовавшем на Северном Кавказе. Действительно, такой обычай исторически зафиксирован Геродотом у скифов. Вот что рассказывает греческий историк (кн. IV, дл. 64): "Какое бы число (неприятелей) скиф ни убил, он отрезает у всех головы и приносит к царю; только таким образом получает он долю в добыче и лишается ее, если не принесет головы. Чтобы освободить череп от волос, он делает круговой надрез на голове повыше ушей, и, держа скальп, встряхивает голову; затем он отскребляет бычьим ребром мясо на скальпе, и, размягчив кожу перетиранием в руках, употребляет скальп как утиральник. Скиф гордится скальпами и вешает их на уздечке коня: чем больше таких утиральников может он показать, тем выше почитается он в народе. Многие делают себе шубы, вроде тулупов наших крестьян, сшивая вместе множество скальпов"<sup>6</sup>.

Естественно, надо полагать, что вышеприведенный эпизод, отражающий древний скифский обычай, попал в нартский эпос благодаря исторической памяти народа, о долговечности которой, судя по всему, мы имеем весьма и весьма отдаленное и скудное представление, а не через письменные источники, в первую очередь, из "Истории" Геродота, доступной как в оригинале, так и в переводе (resp. в переводах) гимназистам и студентам, а среди них были и осетины, времен предшествующих или совпадающих с записью этого эпизода нартского эпоса.

Что же касается той "черты старины в сказаниях и быте осетин", о которой ниже пойдет речь, она, во-первых, намного

---

<sup>5</sup> Миллер В., В горах Осетии, Владикавказ: "Алания", 1998, с. 427.

<sup>6</sup> Там же, с. 428.

древнее обычая, засвидетельствованного Геродотом, и, во-вторых, не зафиксирована в известных на сей день письменных источниках. Следовательно, однозначно исключается ее проникновение в нартовский эпос каким-либо другим путем как не исторической памятью народа.

Речь идет об эпизоде нартовского эпоса, известного под заглавием "Батрадз и чаша нартов Уацамонга".

Экспозиция этого эпизода такова:

"Много сокровищ было у нартов, но среди них больше всего дорожили они чашей своей Уацамонга. Драгоценное свойство имела эта чаша: если кто-либо из пирующих говорил правду о своих подвигах и о доблести своей, она сама подымалась прямо к губам этого человека. Если же кто-либо хвастался понапрасну, не трогалась она с места"<sup>7</sup>.

Этот эпизод не прошел мимо внимания академика Миллера:

"Несколько далее Геродот сообщает другой скифский обычай (гл. 66). Однажды в год правитель каждой области, на назначенном месте, собирает народ и замешивает чашу вина, из которой имеют право пить только те скифы, которые убивали неприятелей; те, которые никого не убили, не допускаются пить из чаши и сидят в отдалении. Нет для скифа большего позора, чем этот... Любопытно, что о такой богатырской чаше сохранилось предание в осетинском эпосе. Эта чаша получила чудесные свойства и даже носит собственное имя нарт-амонгж (указательница нартов) или уацамонгж"<sup>8</sup>.

После этих слов В. Ф. Миллер пересказывает эпизод с Уацамонгой из нартовского эпоса:

"Обычный мотив в эпосе тот, что богатыри пируют и рассказывают свои похождения: кто оказывается достойным богатырской чаши, к устам того она чудесным образом поднимается

---

<sup>7</sup> Сказания о нартах (Пер. с осет. Ю. Либединского), Владикавказ: Республиканское издательско-полиграфическое предприятие им. В. А. Гассиева, 2000, с. 397.

<sup>8</sup> Миллер В., указ. соч., с. 428.

сама. Так, одна из былин нашего сборника вводит нас как бы в обстановку скифского сблища. Нарты пируют и спорят о своей доблести. Чудесная чаша не поднялась ни к кому, кроме нарта Сослана. Тогда нарты говорят старику Хамицу, отцу мальчика Батраза, которого подвигов еще никто не знал:

"Нука, старик, расскажи, что ты видал; может быть, чаша пойдет к тебе!"

Хамиц молчит о своих делах и ищет глазами маленького Батраза. Мальчик подошел и сел перед отцом.

- Вот я! Отец, - сказал он, - я сейчас расскажу, что я сработал: я убил пять дауагов (высших духов) и шесть уациллов. Я убил отца хлебного духа Бор-хуар-али, и во свидетельство этого пусть уацамонгж поднимется к усам моего отца и пусть старик пьет".

В одну минуту чаша поднялась сама ко рту Хамица"<sup>9</sup>.

В сводном тексте осетинского нартовского эпоса этот эпизод представлен в близком, но не идентичном варианте:

"Раз как-то пировали нарты, и до краев наполненная брагой чаша Уацамонга стояла перед ними. И стали друг перед другом выхваляться нарты, рассказывая о своих доблестях и подвигах. Но сколько они ни говорили, чаша Уацамонга не трогалась с места.

Один только Батрадз сидел молча на этом пиру и слушал спокойно рассказы нартов. Когда все замолчали, Батрадз легко встал с места, рукоятью плети постучал по краю чаши и сказал:

- Охотился я вчера вечером, подымался по горному склону и семь вечерних дауагов убил. Правду сказал я, и так же в правде подымись, чаша Уацамонга, и стань на колени отцу моему Хамицу.

Плавнo поднялась с земли чаша и опустилась на колени Хамица"<sup>10</sup>.

Батрадз, рассказав о своем следующем подвиге (спускаясь по другому склону горы, он убил семь дауагов рассвета), дает на-

---

<sup>9</sup> Там же, с. 429.

<sup>10</sup> Сказания о нартах, с. 398.

каз чаше подняться до пояса Хамыца, а рассказав о своем третьем подвиге (вновь поднявшись на склон горы, убил семерых елиадауагов грома и семерых мыкалгабыров-дауагов созревшего хлеба, среди которых был и сын самого владыки хлебов Хор-алдара Бур-хор-али), обращается к чаше: "И так же, как сказал я правду, так в правде подымись чаша, к губам отца моего Хамица". И поднялась Уацамонга к убам Хамыца...

Именно тогда и происходит нечто страшное, из ряда вон выходящее:

"А когда захотел Хамыц хлебнуть из чаши, оказались в брассе ящерицы, змеи, лягушки и прочие гады (sic. М. К.). Клубясь, всплывали они в чаше и устремлялись в рот Хамыцу. Но тверды, как булат, были усы Хамица, он бил и колот гадов своими булатными усами, и вновь спрятались они на дне чаши. И тогда булатноусый Хамыц опрокинул вверх дном чашу Уацамонга"<sup>11</sup>.

На первый взгляд здесь явная несуразность: пить брагу из Уацамонга — это великая честь для любого нарта. Хамыц удостоился этой чести (из-за "подвигов" сына) и, соответственно, всем этим гадам: ящерицам, змеям, лягушкам и прочим в столь почетной чаше места вроде не должно было найтись.

Но, как ни странно, именно эта несуразность и оказалась самым надежным доказательством исторической достоверности данного эпизода нартовского эпоса, и именно она проложила мост между древнейшим, письменно не зафиксированным обычаем арийцев и народным эпосом осетин.

В восьмидесятых годах XX века археологи из Института археологии АН СССР обнаружили на крайнем востоке Туркмении следы некогда процветающей арийской страны, которая в древнеперсидских клинописных текстах упоминается как Маргуш, а в древнегреческих текстах как Маргиана.

При раскопках на территории Маргианы археологи нашли развалины некогда величественного и монументального храма,

---

<sup>11</sup> Там же, с. 399.



который напоминал крепость и состоял из трех взаимосвязанных частей, в научной литературе ему присвоили имя — Тоголок-21.

Храм оказался зороастрийским, и при нем "... были найдены практически все атрибуты, необходимые для приготовления сомы-хаомы (ритуального напитка зороастрийцев — М. К.): огромные конической формы чаны, в которых, видимо, размачивались ветки эфедры, каменные терки, пестики и ступки в количестве, явно превышающем потребности обычных поселений. Особенно много было средних размеров сосудов конической формы с круглым отверстием в центре дна. Прикрытые кусочком ткани или клочком овечьей шерсти, они отлично выполняли роль сепараторов. Наконец, были обнаружены сосуды, в которых бродил напиток. До самого последнего времени не были известны культовые сосуды, куда он разливался после изготовления, но и они были найдены при раскопках — это средних размеров сосуд и в нем — пять миниатюрных, так что вместе они составляли целый набор для питья"<sup>12</sup>.

Именно открытие ритуальных сосудов для питья хаомы, сделанное в храме Тоголок-21, пролило свет на необъяснимый доселе эпизод нартовского эпоса с Уацамонгой и гадами.

Археолог В. И. Сарияниди, один из первых исследователей древнего зороастрийского храма Тоголок-21, так описывает эти ритуальные сосуды:

"Как правило, венчик основного сосуда украшен терракотовыми статуэтками птиц, людей и животных. Внутри сосуда на его стенках наклеенные извивающиеся змеи часто находились между фигурками распластанных лягушек (sic. М. К.)"<sup>13</sup>.

Вот причина появления ящериц, змеев и лягушек в Уацамонге Хамыца- эти гады были наклеены на внутренних стенках ритуального сосуда — Уацамонга.

---

<sup>12</sup> Сарияниди В. И., Где родился Зороастр?, Сб.: "Гипотезы. Прогнозы. Будущее науки": Международный ежегодник, Выпуск 22, Москва: "Знание", 1989: с. 260-261.

<sup>13</sup> Там же, с. 261.

Кстати, ритуальные сосуды, найденные при храме Тоголок-21, имели форму чаши, о чем свидетельствует фотографии<sup>14</sup>.

Наклонив чашу при питье браги, Хамиц увидел объемистые изображения змеев, лягушек и т. п. на внутренних стенках Уацамонги.

Таким образом, нартовский эпос осетин сохранил информацию о форме ритуальных сосудов арийских зороастрийцев около трехтысячелетней давности.

Эффект же, произведенный на Хамица гадами, которые, клубясь, всплыли в чаше и устремлялись в рот Хамицу, легко объясняется составной браги — приготовленной из хаомы, обладающей галлюцинирующими свойствами.

Арийцы (индоиранцы) еще до распада общеиндоиранского языка на иранские и индийские языки употребляли в священных ритуалах напиток из хаомы:

"Ритуальные приношения воде, совершаемые в конце богослужения, готовили из молока, веток одного растения и из сока, полученного после того, как стебли другого растения будут истолчены. Растение, которое толкли, называлось по-древнеиндийски сома, а по-авестийски хаома, что буквально значит "то, что выжимают". Не ясно, какое растение первоначально употребляли протоиндоиранцы, но вполне возможно, что это могли быть разновидности эфедры (как хом — "эфедра", "хвойник", используемый зороастрийцами в настоящее время)"<sup>15</sup>.

Археологические открытия в храме Тоголок-21 дали однозначный ответ и на вопрос какое растение первоначально употребляли протоиндоиранцы для изготовления ритуального напитка сома/хаома:

В науке долгое время обсуждался вопрос, из какого конкретного растения изготавливался священный напиток. Предполагали, что это могли быть конопля, мандрагора, мак, особый вид

---

<sup>14</sup> Там же.

<sup>15</sup> Бойс М., Зороастрийцы. Верования и обычаи, Санкт-Петербург: "Азбука-Классика"/"Петербургское Востоковедение", 2003, с. 22.

гриба-мухомора и т. д. Очевидно, индоиранские племена, обитавшие в разных регионах обширной территории, могли использовать разное сырье, но впервые с документальной точностью установлено, что в древней Маргиане употребляли эфедру. Правда, "эфедра шишконосная", и сегодня произрастающая в Каракумах, практически не содержит эфедрина. Зато другой вид - эфедра интермедиа — до сих пор выращивается (сейчас в медицинских целях) в предгорьях Копетдага и содержит высокий процент эфедрина. К сожалению, по ископаемым остаткам эфедры из Тоголок-21 нельзя определить ее вид, но можно не сомневаться, что это была именно эфедра интермедиа"<sup>16</sup>.

Об исключительном значении хаомы для арийцев говорит их вера в то, что после окончательной победы над злом "... Ахура-Мазда и шесть Амэша-Спэнта ("Бессмертные Святые — М. К.) торжественно совершат последнее духовное богослужение — Ясна и принесут последнее жертвоприношение (после которого смерти вообще больше не будет). Они приготовят мистический напиток — "белую хаому", который даст всем блаженным воскресшим, кто вкусит его, бессмертие"<sup>17</sup>.

Под галлюцинирующим воздействием ритуального напитка хаомы, пьющему из сосуда — появившиеся в процессе питья объемистые изображения змеев и лягушек на внутренних стенках сосуда — представлялись живыми — именно так было в случае Хамыца.

Можно лишь поражаться долговечностью исторической памяти осетинского народа, принесшего из своей арийской прародины на Кавказ и на протяжении тысячелетий сохранившего не одну уникальную информацию, в том числе и о форме ритуальных сосудов зороастрийцев.

---

<sup>16</sup> Сариниди В., указ. соч., с. 260.

<sup>17</sup> Бойс М., указ. соч., с. 53.

**ՁՐԱՂԱՇՏԻ ՀԵՏՔՆ ՕԱԵՐԻ ՆԱՐՏԱԿԱՆ ԷՊՈՍՈՒՄ**

**ԱՍՓՈՓՈՒՄ**

Հոդվածում հեղինակն անդրադառնում է օսերի պատմական հիշողության հիմնախնդրին, որն արժարժվում է նրանց նարտական էպոսում, հին շրջանում Հյուսիսային Կովկասում բնակվող ցեղերի պատմագրության, ինչպես նաև հնագույն արիական դիցաբանական սինվոլիզմի վերլուծության մեջ:

ՍՅՈՒՆՅԱՑ ՈԱԶՄԻԿՆԵՐԸ 482-484 թթ.  
ԺՈՂՈՎՐԴԱ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

482 թ. Հայաստանում վերստին բռնկվեց ազատագրական պատերազմ, որի գործուն մասնակիցներն էին Մամիկոնյան, Բագրատունի, Սյունյաց, Կամսարական, Ամատունի և այլ տների զորալիզները: Նրանց ջանքերով հաղթանակով պսակվեց Վարդանանց պատերազմի հերոսների ծրագրային մտահղացումը, այն է՝ պահպանել հայ նախարարների ինքնավար իրավունքները, քրիստոնեական կրոնը և Հայոց առաքելական եկեղեցին:

Թե՛ 450-451-ին, և թե՛ 482-484 թթ. հակառակորդի գերակշիռ ուժերի դեմ մղած անհավասար մաքառումներում հաղթեցին հայերը, քանզի արդարացի էր նրանց ոգորումը: Նրանք ապավինում էին սեփական ուժերին, պաշտպանում հայրենի եզերքը:

482-484 թթ. պատերազմում գործուն մասնակցություն ունեցան նաև սյունեցի ռազմիկները: Նրանք հավատարիմ մնացին 450-451 թթ. ժողովրդական պատերազմի ոգեշնչող, Սյունիքի զավակ, Հայոց կաթողիկոս Հովսեփ Վայոցձորեցու<sup>1</sup> (որը նահատակվեց 454-ին) և սյունեցի քաջորդիների ավանդներին: Հովսեփ կաթողիկոսի հետևորդն էր Գյուտ Արահեզացի կաթողիկոսը (461-478), որի օրոք երկրում ստեղծվել էր ծանր իրավիճակ: Ղազար Փարպեցին սրտի մորմոքով գրում է, որ 451-ից հետո Հայոց աշխարհում այլևս վերացել էր իմաստությունն ու քաջությունը, Հայոց փառապանծ զորքը կարծես զրկված էր մարտական ավյունից<sup>2</sup>:

Սակայն հայրենանվեր գործիչները համախմբվեցին Գյուտ հայրապետի շուրջը, ծրագրելով ազատագրական պայքարի նոր ուղեմիջներ: Նրանք ելնում էին այն իրողությունից, որ Ավարայրի հերոսամարտից հետո ժողովրդի ընդերքում պահպանվել են ազատագրական մղումներ-

<sup>1</sup> Ծնվել է Հողոցիմք գյուղում, որը տեղորոշվում է այժմյան Մարտիրոս գյուղի մերձակայքում, Վայքի լեռնաշղթայի հյուսիսային ստորոտին:

<sup>2</sup> Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնյան, աշխ. Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904, III, ԿԳ, էջ 111:

րը, որոնց վրա հենվելով Գյուտ կաթողիկոսն ու նրա շուրջը համախմբված հայրենասեր գործիչները կամենում էին ապացուցել, որ բնավ էլ չի վերացել հայերի դիմադրական կորովը, պահպանվել է ժողովրդի պետական և հոգևոր կենսունակությունը: Այդ նպատակադրումով, իր գահակալության իններորդ տարում՝ 469 թ. Գյուտը կառուցել է տալիս կաթողիկե եկեղեցի, այնտեղ ամփոփելով հայերի ետավարայրյան մաքառումների ընթացքում պարսկական գերագանց ուժերի դեմ մարտնչած և հերոսի մահով նահատակված հայորդիների մասունքները: Վերջիններիս մասին հիշատակում է Սյունյաց պատմագիր Ստեփաննոս Օրբելյանը, որի վկայություններից երևում է, որ պարսից զորականների դեմ այդ հերոսների մղած ճակատամարտը տեղի է ունեցել Սյունիքի Վայոց ձոր գավառի Եղեգիս և Մոզան (Արփայի վտակներ) գետերի միախառնման տեղում, մի բլրի մոտ: Այդ մասին նա գրում է. «...Կաթողիկոսն երանելին Գիւտ, զոր լուեալ հրամայէր շինել վկայարան մեծ ի վերայ սրբոցն: Եւ ժողովեալ զոսկերսն նոցա ի վկայարան... Եւ կատարեալ զնա մեծածախ գանձիւք կանգնեցին ճեմարան իմն երկնաման հրաշաճարտար շինուածովք երկազմբէս և եռախորանս. և յերկուց կողմանէ գաւիթս և սրահակս, վերնատունս սեամբք և սքանչելի յօրինուածովք շինեալ»<sup>3</sup>:

Նկատենք նաև, որ Վայոց ձորի Արտաբույնք (այժմ՝ Եղեգիս), Շատին (այժմյան Վայոց ձորի մարզի նույնանուն գյուղը) և նրանից մոտ 2,5 կմ հեռավորության վրա գտնվող Ոստինք (հետագայի Հոստունը) գյուղերի մոտ նույնպես հայ զինվորները երեք անգամ հերոսական դիմադրություն են ցույց տվել պարսկական գերակշիռ ուժերին<sup>4</sup>:

Գյուտի կառուցած եկեղեցին չի պահպանվել: Ստեփաննոս Օրբելյանի օրոք այն արդեն ավերված էր<sup>5</sup>: Սակայն ժամանակին այդ եկեղեցին դարձավ հայրենիքի ազատագրության համար արյուն հեղած հայ

<sup>3</sup> Ստեփաննոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 71:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 69: Այդ մասին տես Հ. Մելքոնյան, Ետավարայրյան իրադարձությունները Վայոց ձորում. մի զորաջոկատի նահանջի ուղին («Ավարայրի խրոհուրդը», Ե., 2003), էջ 223-224:

<sup>5</sup> Ստեփաննոս Օրբելյան, էջ 72:

քաջորդիների սուրբ հիշատակը հավերժացնող հուշարձան, որը ոգեկոչում էր հայոց հերոսական անցյալը:

Գյուտ կաթողիկոսի օրոք Մասանյանների վարած քաղաքականությունից դժգոհ նախարարները գաղտնի ժողովներում Գյուտի հետ միասին հղանում էին ազատագրական պայքարի հնարավոր ուղիներ: Նրանք, ինչպես հաղորդում է Ղազար Փարպեցին, «կարևոր համարէին համբերութեամբ ի քրիստոնէութեան կարգի վախճանել, քան թէ փառախնդիր յածամբ պատահել ուրացութեան և կորնչել...»<sup>6</sup>: Նախարարները, - շարունակում է նույն պատմագիրը, - «ժողովեալք նստէին առ սուրբ քահանայապետին Հայոց Գիւտայ, որ ոչ երբէք լռէր յարտասուելոյ զմոխրասիրացն զմոլորութիւնս, որ խնդրէր լռելեայն պաճարանս հայթայթանաց հանդերձ նոքօք, երբեմն փախչել յօտարութիւն, և երբեմն ի խնդիր լինել օգնականութեան և ապստամբել: Առաքէին գաղտ և պատգամաւորս միանգամ և երկիցս առ թագաւորն Յունաց Լևոն, որոյ թէպէտ և յանձն առեալ կամէր օգնել՝ յերկարէր ժամն և խափանէին խորհեալքն»<sup>7</sup>:

Այս վկայությունից երևում է, որ հայերը երկու անգամ պատվիրակներ են ուղարկել Բյուզանդիայի Լևոն I կայսեր (457-477) մոտ: Նախարարների մեջ առաջատարներն են հիշվում Բաբիկ Սյունին և Առնակ Ամատունին<sup>8</sup>, որոնք էլ հավանաբար գլխավորել են Լևոն I կայսեր մոտ մեկնող պատվիրակներին<sup>9</sup>:

Բաբիկը հետևում էր 450-451 թթ. Վարդանանց պատերազմում Վարդան Մամիկոնյանին զորակացող Սյունյաց իշխաններ Բաբկեն և Բակուր իշխանների հերոսական ավանդներին: Նշելի է, որ Եղիշեն և Ղազար Փարպեցին կալանաված ուխտապահ հայ նախարարների մեջ Սյունյաց այս իշխաններին հիշում են առաջին տեղում<sup>10</sup>:

Գյուտի և նրա զինակիցների քաղաքական ծրագրերը իրականացան նրա մահից երեք տարի հետո, երբ Վահան Մամիկոնյանի շուրջը

<sup>6</sup> Ղազար Փարպեցի, III, 49, էջ 112:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 112-113:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 112:

<sup>9</sup> Տես Ն. Աղոնց, Վասիլ Հայազն, երկեր, հ. Ա, Ե., 2006, էջ 428:

<sup>10</sup> Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխ. Ե. Տեր-Մինասյանի, Ե., 1957, էջ 171: Տես նաև Ղազար Փարպեցի, I, ԽԷ, էջ 86:

համախմբված հայ ազատամարտիկներն ապստամբության դրոշ պարզեցին, բնավ չապավինելով օտար ուժերի զորակցությանը: Ավելին, նրանք զինական աջակցություն ցույց տվեցին ապստամբ Վրաստանին: Ձեռքի դիմած հայ նախարարներն ասում էին, որ «գլոյս մեր ոչ ի Յոռոմս եղեալ է և ոչ ի Յոնս, բայց նախ յողորմութիւնն Աստուծոյ...»<sup>11</sup>:

Ազատագրական պայքարի դաշտ նետված հայրենասեր ուժերը 482 թ. Դվին քաղաքում կազմեցին կառավարություն, մարզպան ընտրելով Ասիակ Բագրատունուն, սպարապետ՝ Վահան Մամիկոնյանին: Դա բացարձակ մարտահրավեր էր սասանյան իշխանություններին: Հայաստանից վտարված պարսից մարզպան Ատրվշնասպը 7000-անոց բանակով պատժարշավ ձեռնարկեց հայ ապստամբների դեմ, որոնք չնայած իրենց ուժերի փաքրաթվությանը, քաջակորով հայ զորապետների՝ Սյունյաց իշխան Բաբկենի, Վահանի եղբոր՝ Վասակի, Կամսարական եղբայրներ Ներսեհի ու Յրահատի և ուրիշ զորականների գլխավորությամբ ռազմի ելան Սասսի ստորոտները հասած հակառակորդ ուժերի դեմ: «Այնուհետև, - գրում է Ղազար Փարպեցին, - ի պատերազմն կազմեցան՝ Սիւնիւն Բաբգէն, զոր անուանեցին ի ժամուն իշխան տէրութեան Սիւնեաց, և ամենալաւ քաջ սեպուհն Մամիկոնէից Վասակ, եղբայր սպարապետին Վահանայ... և երկոքեան որդիքն երանելոյ Կամսարականին Արշաւրայ... և երկու արք ի Գնունեաց տոհմէն»<sup>12</sup>: Նրանք, ինչպես հավաստում է պատմագիրը, իրենց տրամադրության տակ ունեին «թուով ընդ բնաւ չորեք հարիւր այր»<sup>13</sup>:

Բաբկեն Սյունին այդպիսով կանգնել է Սյունիքի իշխանության գլուխ: Հասկանալի է, նրա իրավունքները ճանաչել է Սյունիքի ազատանին, հանդես գալով իբրև ազատագրական պատերազմին զորակցող ուժ:

Վահան Մամիկոնյանը, Բաբկեն Սյունին, Սահակ Բագրատունին և ուխտադիր մյուս նախարարները քաջ գիտակցում էին, որ միայն ապահով ու զորավոր թիկունք ունենալու պարագայում է հնարավոր ապահովել կայուն հաղթանակ: Ուստի Վահան Մամիկոնյանը և Սահակ Բագ-

<sup>11</sup> Ղազար Փարպեցի, III, 42, էջ 119:

<sup>12</sup> Նույն տեղում, III, 40, էջ 122:

<sup>13</sup> Նույն տեղում:



րատունին չմեկնեցին մարտադաշտ, որպեսզի հուսադրեն ժողովրդին, ի չիք դարձնեն սրբազան պատերազմի ուխտը թյուրողների հնարավոր որոգայթները և հարկ եղած դեպքում թշնամու դեմ դիմադրություն կազմակերպեն:

Ապստամբ զորագունդը Բաբկեն Սյունեցու, Վասակ Մամիկոնյանի և մյուսների գլխավորությամբ մարտակարգ ընդունեց Մասսի հյուսիսային լանջին, Ակոռի գյուղի մատույցներում: Այդ զորագունդը սակավաթիվ էր, բայց լավ մարզված էր: Այն մարտից առաջ բաժանվեց չորս զորաթևի: Կենտրոնի զորասյունը դրվեց Բաբկեն Սյունու և Վասակ Մամիկոնյանի հրամանատարության տակ, ձախակողմյանը գլխավորում էր Խորխոռունյաց նախարար Գարջույլը, աջ կողմի զորաբաժինը՝ Գնունի եղբայրները<sup>14</sup>: Պահեստազորի հրամանատարությունն ստանձնեցին Կամսարական եղբայրները: Սակայն Խորխոռունյաց իշխանը մարտից առաջ լքեց յուրայիններին, անհեռանկար համարելով պարսիկների գերազանց զորուժին դիմակայելը: Այդուհանդերձ հայ զորայինների շարքերը չերերացին: Նրանք Բաբկեն Սյունու, Վասակ Մամիկոնյանի և Կամսարական եղբայրների ղեկավարությամբ գրոհեցին թշնամու զորաշարքերի վրա: Ակոռիի ճակատամարտն ավարտվեց հայ ռազմիկների փայլուն հաղթանակով: Հակառակորդը կորցնելով բազմաթիվ զինվորներ, դիմեց անկանոն նահանջի: «Անդ, - հաղորդում է ժամանակակից պատմիչը, - ի կողմանն քաջին Վասակայ սեպհին Մամիկոնեից և Սիւնոյն Բաբգենայ անկեալ սատակէր Ատրվշնասպն մարզպանն... և այլ բազում պարսիկք...»<sup>15</sup>: Այդպիսով պարսից մարզպանի գլխավորած զորամիավորումը գլխավոր հարվածն ուղղել է Հայոց կենտրոնի զորաբաժնի դեմ, որն ինչպես նշվեց, գլխավորում էին Բաբկեն Սյունին և Վասակ Մամիկոնյանը: Սակայն թշնամին չարաչար պարտվել է, մարտում զոհվել է նաև Ատրվշնասպ մարզպանը: Այդ պարտությունը բեկում է մտցրել ճակատամարտի ընթացքի մեջ:

Պարտության դառը պտուղները ճաշակած հակառակորդը չվարանեց հայերի մեջ խուճապ սերմանել՝ իրեն հարած Գնթունի և Սահառունի վատոգի ազատների միջոցով, որոնք նախքան հաղթանակի լուրը

<sup>14</sup> Ղազար Փարպեցի, III, ԿԹ, էջ 123-124:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 124:

Դվին մայրաքաղաք հասնելը, արագ մեկնեցին այնտեղ և Վահան Մամիկոնյանին ու Մահակ Բագրատունուն գուժեցին, որ իբր Ակոռիի մարտուն Դայոց զորքը գլխովին ջախջախվել է, սպանվել են Բաբկեն Մյունին, Վասակ Մամիկոնյանը, Կամսարական եղբայրները և ուրիշներ: Սակայն նրանց չհաջողվեց մոլորեցնել Վահանին ու նրա զինակիցներին, քանի որ փոքր-ինչ հետո Դվին հասած Առաստոմ Գնունին ավետեց հայերի տարած հաղթանակի մասին: Նույն պահին Դայոց հաղթապանծ այրուծին Բաբկեն Մյունեցու, Վասակ Մամիկոնյանի և Կամսարական իշխանների գլխավորությամբ սրարշավ ռազմերթով հասավ Դվին<sup>16</sup>:

Դայ ռազմիկները, օգտվելով ժամանակավոր դադարից, անհրաժեշտ պատրաստություններ տեսան ծնեռելու համար: Նրանք հաշվի էին առնում, որ գարնանը թշնամին նոր և մեծաթիվ ուժեր է նետելու իրենց դեմ, ուստի հայ զորայինները ծնռանը զինավարժությունների և այլ միջոցառումների շնորհիվ «հոգային առ գարունն զպատրաստութիւն պատերազմին»<sup>17</sup>, - գրում է Փարպեցին: Նրանք նաև ջանացին գալիք մաքառմանը նախապատրաստել իրենց հնարավոր դաշնակիցներին: Սակայն վրաց թագավորը չկարողացավ կատարել հոների զորագունդը Դայաստան ուղարկելու խոստումը: Վահան Մամիկոնյանն օգնակոչով դիմեց հարավային Դայաստանի նախարարներին՝ Արծրունի, Անձևացյաց, Մուկաց և Ռշտունյաց տերերին, հորդորելով զորակից լինել ապստամբներին:

Դարկ է նշել, որ Դայաստանի հարավային գավառների իշխանների մի զգալի մասը նույնպես ուներ պարսկամետ դիրքորոշում, ուստի նրանցից ոչ բոլորն էին, որ արծագանքեցին Վահանին: Այդուամենայնիվ Անձևացիք գավառի ազատներից Դովհանը և Ներսես Երվանդունին իրենց զորագնդերով ժամանեցին Դվին մայրաքաղաք և զորակից եղան ազատագրական պայքարի բոցերի մեջ նետված հայ ռազմիկներին: Նրանց հայրենասիրական քայլը ոգևորեց ապստամբներին, և այդ առթիվ Դովհան Մանդակունի կաթողիկոսը Դվինի Մայր եկեղեցում մատուցեց պատարագներ<sup>18</sup>:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 125-126:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 126:

<sup>18</sup> Ղազար Փարպեցի, III, 3, էջ 127-128:



483 թ. ապրիլի վերջին, ինչպես և սպասվում էր, պարսկական զորքը Հայաստանի Հեր և Ջարեվանդ գավառներով փորձեց թափանցել Այրարատ և հաշվեհարդար տեսնել ապստամբների հետ: Իր դիտախույզերի միջոցով կանխավ տեղեկանալով հակառակորդի զորաշարժի մասին, սպարապետ Վահան Մամիկոնյանը Հայոց զորքը շարժեց նրա դեմ: Հայոց զորքի թվակազմը հասցվում է 30 հազարի<sup>19</sup>: Ցավոք, աղբյուրներում դա հաստատող վկայություն չկա:

Թշնամու առաջխաղացումը կանխելու նպատակով Վահանը զորքը տեղակայեց Վասպուրական նահանգի Արտազ գավառում, Ներսեհապատ գյուղի մերձակայքում: Այդ գավառում, ինչպես հայտնի է, 451 թ. մայիսի 26-ին տեղի էր ունեցել Ավարայրի ճակատամարտը, որտեղ նահատակված հայ քաջորդիների անմահ հիշատակը սխրանքների էր մղում Վահանանց պատերազմի մասնակիցներին:

Ներսեհապատի ճակատամարտին մասնակցեց նաև Սյունյաց այրուձին՝ Բաբկեն իշխանի գլխավորությամբ: Սարտը սկսվեց ապրիլյան առավոտներից մեկում և, ինչպես Ավարայրում էր, այն ավարտվեց նույն օրվա երեկոյան: Ճակատամարտից առաջ Վահան Մամիկոնյանը զորքը բաժանեց երեք զորասյուների: Սյունյաց զորագունդը աջ զորաթևում էր<sup>20</sup>: Հենց այս զորաբաժնի դեմ հակառակորդն ուղղեց իր գլխավոր հարվածը, ուստի հայ ռազմիկների զորաշարքերը թշնամու գերակշիռ ուժերի առջև մի պահ երեբացին: Սակայն նրանց օգնության հասան Վահանի և Կամսարական եղբայրների գլխավորությամբ մարտնչող հարևան զորագնդերը: Թշնամին չդիմացավ ճնշմանը, և տագնապահար փախուստի դիմեց: Սյունյաց և մյուս զորագնդերի քաջությունը ոգեպնդեց բոլորին: Աջ զորաթևի ռազմիկները, - գրում է պատմագիրը, - «ոգի առեալ զօրանային, և դարձեալք անդրէն և զկնի հալածչացն եղեալք՝ զբազունս սպանանէին, և զբազունս արկեալ առաջի՝ հալածականս առնէին: Եւ լինէր առաւելագոյն թիւ կոտորելոցն ի գնդէն Պարսից, քան թե գերծելոցն փախստիցն...»<sup>21</sup>:

<sup>19</sup> Տես Հայ ժողովրդի պատմություն (ՀԽՍՀ ԳԱ հրատ.), հ. II, Ե., 1984, էջ 201:

<sup>20</sup> Ղազար Փարպեցի, III, ՀԱ, էջ 129:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 129-130:

Ներսեհապատուն տարած հաղթանակից հետո, 483 թ. ամռանը Հայոց զորքը տեղափոխվեց հանգստի՝ Այրարատի Ծաղկոտն գավառում, Վարչակի ջերմուկների շրջանում:

Մակայն հայ ռազմիկները չկարողացան վայելել հանգիստը, քանի որ Վրաց թագավոր Վախթանգ I Գորգասարը ապստամբ վրաց զորքի հետ պարտվելով պարսից զորայիններից, զորքով ստիպված նահանջել էր Հայաստան՝ Գուգարաց աշխարհի անմատույց վայրեր: Նա օգնություն հայցեց Վահան Մամիկոնյանից, հավաստիացնելով, որ իբր մինչև հայերի տեղ հասնելը, հոներն «անհամար բազմությամբ» արդեն կժամանեն Վրաստան և հենց այնտեղ էլ կջախջախեն պարսիկներին, ուստի հայ և վրաց զորականներն իբր թե այլևս անելիք չեն ունենա<sup>22</sup>:

Վախթանգը, ինչպես գրում է Փարպեցին, - «խաբէր պատիր բանիւք»: Այնուամենայնիվ Վահանը չհապաղեց արծագանքել Վրաց թագավորի օգնակոչին, քանի որ հայ նախարարները, անծամբ Վահան Մամիկոնյանը, սեպուհներն ու ամբողջ զորքը, ինչպես հավաստում է պատմագիրը, երդվել էին «Աւետարանաւ և խաչիւ ընդ թագաւորին Վրաց Վախթանգայ՝ յարուցեալ վաղվադակի և անյապաղ ամենայն զօրքն Հայոց առ արքայն Վրաց հասանէին, և բանակեալք առ վայր մի գաւառին Կանգարաց դադարէին»<sup>23</sup>:

Հարց է ծառանում, որ եթե իրոք հոներն օգնության էին հասնելու Վրաց արքային, անգամ ջախջախելու էին պարսիկներին, իսկ հայ և վրաց զինվորներն, ինչպես հավատացնում էր Վախթանգը, այլևս անելիք չէին ունենալու, ապա ինչու վերջինս պետք է օգնություն խնդրեր հայերից: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ ոչ մի հոն զորական չի ժամանել Վրաստան: Անշուշտ, Վախթանգ թագավորը կանխապես գիտեր, որ այդպես է լինելու, ուստի դիմեց հայերին:

Գուգարքի Կանգարք գավառ, ապա Քնի հովիտ հասած Հայոց զորքի կազմում էր նաև Մյունյաց զորագունդը՝ Բարկենի գլխավորությամբ: Հայոց զորքն ամառվա տապից հոգնած իջավ Քնի ձախ ավի՝ ճարմանայնի դաշտ և բանակեց այնտեղ: Երեք-չորս օր հետո այդտեղ հասավ պարսից զորքը՝ Միհրանի գլխավորությամբ: Նրա դեմ ճակատամարտի

<sup>22</sup> Նույն տեղում, III, 34, էջ 133:

<sup>23</sup> Նույն տեղում:

պատրաստվելով՝ հայ և վրաց զորքերը մարտակարգեր ընդունեցին: Վահան Մամիկոնյանը, որպես գլխավոր հրամանատար, հայ և վրաց զորքերը դասավորեց «Ըստ օրինի ճակատուն պատրաստութեան»<sup>24</sup>: Նա ստանձնեց նաև Կենտրոնի հրամանատարությունը, իսկ ծախս զորասյունը գլխավորելու էր Վախթանգ թագավորը: Աջ զորաթևի և կենտրոնի միջև տեղավորվեց այն զորաբաժինը, որի հրամանատարներն էին Բաբկեն Այունին և Սահակ Բագրատունին<sup>25</sup>: Այդ զորաթևի մեջ անշուշտ, պատկառելի թիվ էին կազմում Սյունյաց ռազմիկները: Բաբկեն Սյունեցու և Սահակ Բագրատունու գլխավորած զորաբաժինը անհրաժեշտության դեպքում պետք է զորակից լիներ աջ և կենտրոնական զորաթևերին: Տեղանքը ճահճապատ էր, ուստի դժվարացնում էր զորքի տեղաշարժը, զցում նրա մարտունակությունը: Այնուամենայնիվ, կենտրոնի զորախումբը Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ ջախջախեց իր դեմ կանգնած պարսից զորասյանը և ցանուցիր արեց: Բայց հայ և վրաց որոշ իշխաններ հակված էին պարսիկների կողմը: Նրանք նույնիսկ հեռացան մարտադաշտից մինչև մարտն սկսելը:

Դա բացասաբար ազդեց մարտի ելքի վրա: Հարմար պահը որսալով, պարսից զորապետը ճնշող ուժեր նետեց Բաբկեն Սյունու և Սահակ մարզպանի գլխավորած զորաբաժնի դեմ, որն ստիպված նահանջի դիմեց: Գերակշիռ թշնամու ճնշմանը դիմադրել չկարողանալով, հայ և վրաց զորքերը անկանոն կերպով նահանջեցին: «Ձօրքն ամենայն Հայոց, ընդ որս և անպիտան զօրքն Վրաց, հանդերձ թագաւորաւն իւրեանց Վախթանգաւ, վատնեալք ցրուէին. զորոց զկնի հետամուտ եղեալ գունդքն Պարսից՝ զբազումս կոտորէին, և բազումք յայլ և այլ տեղիս գերծեալ ապրէին»<sup>26</sup>:

Սարտում զոհվեցին Սահակ Բագրատունին և ուրիշներ: Ծանր կորուստներ ունեցավ նաև Սյունյաց զորագունդը, որին օգնության հասած Վահան Մամիկոնյանը ծանր վիրավորված Բաբկեն Սյունեցուն նստեցնելով իր ձիու թամբին, հանեց մարտադաշտից, փրկելով հերոսի կյան-

<sup>24</sup> Նույն տեղում, III, 37, էջ 134:

<sup>25</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 135:

քը<sup>27</sup>: Թշնամուն հաջողվեց գերի վերցնել հայ և վրացի զորայինների, որոնց մեջ էին նաև Հրահատ Կամսարականը և Սյունյաց ազատներից Հազդը: Պարսից զորահրամանատար Միհրանը վերադարձավ արքունիք, հետը կապանքների մեջ դրած տանելով նաև նրանց: Բագրևանդ գավառում, Բագավանի մերձակայքում Հրահատին հաջողվեց փախուստով ազատվել ոսոխի ճիրաններից: Միհրանն ու իր ուղեկիցներն, ի վրեժ Հրահատի այդ քայլի, «հրաման տային ածել զերանելի սեպուհն Միւնեաց գՅազդ ի նմին աւուր զառաջեաւ իւրեանց»<sup>28</sup>, - հաղորդում է Փարպեցին: Նրանք Հազդին խոստացան կենդանի թողնել, ի գին ուրացության: Այդ քայլին էր նրան մղում նաև պարսիկներին հարած Գդիհոն Սյունին, թերևս հույս ունենալով առերես ուրացությանը փրկել իր տոհմակցի կյանքը<sup>29</sup>: Սակայն զուր անցան թե՛ նրա և թե՛ Միհրանի, նրա զորակիցների հորդորները: Հազդն արիաբար մերժեց նրանց առաջարկներն, ասելով. «Ուրախ եմ և խնդամ վախճանել քրիստոնէութեամբ, քան թէ զհազար հազարս ամաց կեալ ուրացութեամբ»<sup>30</sup>: Այնուհետև Հազդին տարան Բագրևանդի Բագավան գյուղ և գլխատեցին: Հազդի դին հայերը ամփոփեցին Ս.Գրիգոր մատուռում<sup>31</sup>: Սյունիքի քաջակորով զավակի սուրբ հիշատակն ընդմիշտ անմար մնաց սերունդների հիշողության մեջ: Հետագայում (XVI դ.) Սիմեոն Ապարանցին (ծնված Մոկաց Մպարկերտ գավառի Ապարանք գյուղում) Մամիկոնյան և Պահլավունի տոհմերին նվիրված պատմական պոեմում գրել է.

Իսկ զերանեալ Յազդ Միւնեցին

Վասն Յիսուսի գլխատեցին<sup>32</sup>:

Վահան Մամիկոնյանը յուրայինների հետ շարունակեց մաքառումները հակառակորդի գերակշիռ ուժերի դեմ: Սակայն նրա հետ չէր Բաբկեն Սյունին, քանի որ ծանր վիրավորվելու պատճառով չէր կարող մար-

<sup>27</sup> Նույն տեղում:

<sup>28</sup> Նույն տեղում, III, 72, էջ 139:

<sup>29</sup> Ստեփաննոս Օրբելյանը (էջ 66) Հազդին անվանում է պարսկասեր իշխանների պարագլուխ Գդիհոնի «եղբայր», անշուշտ, նկատի առնելով նրանց տոհմակցությունը:

<sup>30</sup> Ղազար Փարպեցի, III, 72, էջ 140:

<sup>31</sup> Ստեփաննոս Օրբելյան, էջ 67:

<sup>32</sup> Սիմեոն Ապարանցի, Բանաստեղծություններ, աշխ. Կ. Սուքիասյանի, Ե., 1976, էջ 118-119:

տեր վարել: Սյունյաց պատմիչը գրում է, որ Բաբկենը «վասն խոցուածոյն այլ ոչ շոջեցաւ ընդ Վահանայ. այլ անց, գնաց յանքոյթ տեղիս»<sup>33</sup>:

Սյունեցի և մյուս հայ ռազմիկների հեղած արյունը տվեց իր պտուղները: Այն ապացուցեց, որ նրանց մղած ազատագրական պայքարն առաջին հերթին ոգիների մաքառում էր, որը պսակվեց հայերի հաղթանակով: 484 թ. Նվարսակ գյուղում կնքված հայ-պարսկական պայմանադրութունը դրա վառ ապացույցն էր: Հայերն այդ պայմանագրով մնացին իրենց հոգու տերը, պահպանեցին իրենց ինքնավար իրավունքները, քրիստոնեական կրոնը և հայրենավանդ օրինակարգն ու իրավակեցութունը:

*ВРЕЖ ВАРДАНИЯ  
ИИ НАН РА*

## СЮНИКСКИЕ ВОИНЫ В НАРОДНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ ВОЙНЕ 482-484 гг.

### РЕЗЮМЕ

В освободительной войне 482-484 гг. против Сасанидского государства воины Сюника доблестно сражались во главе с Бабкеном Сюни, который возглавлял соединения повстанцев в битвах у с. Акори, Нерсехапат, в местности Чарманайни - в долине р. Кур.

---

<sup>33</sup> Ստեփաննոս Օրբելյան, էջ 65:

«ԱՇԽԱՐԴԱՑՈՅՑԻ»-Ի ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՈՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«Աշխարհացոյց»-ը պատմա-աշխարհագրական հուշարձան է, նվիրված Մեծ Հայքի, Վիրքի, Աղվանքի, Սասանյան Իրանի, ինչպես նաև Եվրոպայի, Լիբիայի (Աֆրիկայի) աշխարհագրական նկարագրությանը: Այս բոլոր երկրների մասին հեղինակը խոսում է մի այնպիսի քաջատեղյակությամբ, որ բացառիկ երևույթ է իր դարի պատմության մեջ: Ուստի պատահական չէ նրա նկատմամբ ուսումնասիրողների հետաքրքրությունը:

«Աշխարհացոյց»-ը մեզ է հասել երկու խմբագրություններով՝ համառոտ<sup>1</sup> և ընդարձակ<sup>2</sup>, թարգմանվել է տարբեր լեզուներով և ապա փորձ է կատարվել վերականգնելու նրա սկզբնական բնագիրը<sup>3</sup>:

Գոյություն ունի «Աշխարհացոյց»-ի 60 ձեռագիր ընդօրինակություն, որոնցից 45-ը Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի սեփականությունն է, իսկ մյուսները պահվում են արտասահմանում՝ Վենետիկում, Վիեննայում և Երուսաղեմում<sup>4</sup>:

Մատենադարանի «Աշխարհացոյց»-ների 36 ձեռագրերի նկարագրությունը հրատարակել է պրոֆ. Աշոտ Աբրահամյանը<sup>5</sup>:

Յավոք, «Աշխարհացոյց»-ի բնագիրը մեզ չի հասել: Մեզ հասած «Աշխարհացոյց»-ները ընդօրինակություններ են, որոնք դարերի ընթացքում արտագրողների կողմից ենթարկվել են փոփոխությունների և մեկը մյուսից տարբերվում են: «Աշխարհացոյց»-ը հանդես է եկել մեկը

<sup>1</sup> Патканов К., Армянская география VII века, СПб, 1877.

<sup>2</sup> Geographie de Moïse de Corène d'après Polemée, Texte arménien, traduit en français par le P. Souknu, Venise, 1881. Ընդարձակ խմբագրության բնագիրն ունի նաև «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ յավելուածովը նախնեաց» խորագիրը, Վենետիկ, 1881:

<sup>3</sup> Երեմյան Ա., «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագրի վերականգնման փորձ, ՊԲՀ, 1972, թիվ 4, էջ 209-230, 1973, թիվ 1, էջ 238-252, թիվ 2, էջ 261-274:

<sup>4</sup> Անանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմ. առաջաբանը և ծանոթագր. Ա. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի, Ե., 1979, էջ 352:

<sup>5</sup> Աբրահամյան Ա., Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջը, Ե., 1940, էջ 10-18:



մյուսից տարբեր վերնագրերով՝ «Աշխարհագիր», «Տեսակ աշխարհայ և հանգամանին երկրի», «Յաղագս աշխարհագրութեան ստոյգ և ճշմարիտ Մովսէսի Խորենացւոյ», «Մովսէսի Խորենացւոյ ասացեալ է, երկրաչափ յաղագս աշխարհագրութեան»: Թե նշված վերնագրերից որն է նախնականը, առայժմ պարզ չէ:

Նախքան «Աշխարհացոյց»-ի հրատարակություններին անցնելը, նշենք, որ բավական ժամանակ է, ինչ քննության է առնվում շատ կարևոր մի հարց՝ ո՞վ է պատմաաշխարհագրական այդ հուշարձանի հեղինակը, երբ է այն ստեղծվել:

«Աշխարհացոյց»-ի հեղինակի, ստեղծման ժամանակի վերաբերյալ ուսումնասիրողները հայտնել են տարբեր կարծիքներ:

1. Մխիթարյան միաբանության անդամները «Աշխարհացոյց»-ը համարել են Մովսես Խորենացու աշխատություն՝ պատմահորը համարելով V դ. հեղինակ<sup>6</sup>:

2. Ֆրանսիացի հայագետ Սեն-Մարտենը «Աշխարհացոյց»-ը համարել է (կեղծ) Մովսեսի գործ՝ գրված IX դ. վերջում կամ X դ. սկզբներին՝ մասնավորապես 950 թ.: Սեն-Մարտենը այս կարծիքին էր հանգել հիմնվելով մի քանի աշխարհագրական անունների վրա<sup>7</sup>:

3. Պրոֆ. Բ. Պատկանյանը «Աշխարհացոյց»-ը համարում է Անանիա Շիրակացու աշխատություն՝ գրված VII դ.<sup>8</sup>:

4. Եվ վերջապես ակադեմիկոս Զ. Մանանդյանը «Աշխարհացոյց»-ի հեղինակ է համարում Մովսես Խորենացուն՝ վերջինս հասցնելով IX դ.<sup>9</sup>:

Մինչև XIX դ. սկզբները անխախտ էր այն տեսակետը, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակն է Մովսես Խորենացին, իսկ աշխատությունը գրված է V դ.: Սակայն Սեն-Մարտենի կողմից «Աշխարհացոյց»-ի նոր հրատարակությունը, որն օժտված էր ընդարձակ ներածականով,

<sup>6</sup> Ինճիճյան Ղ., Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Ի. Գ., Վենետիկ, 1835, էջ 304-314:

<sup>7</sup> Saint Martin M. J., Mémoires historiques et géographiques sur l'Arménie, Paris, 1819, p. 301-394.

<sup>8</sup> Патканов К., նշվ. աշխ., XVIII:

<sup>9</sup> Մանանդյան Զ., Խորենացու առեղծվածի լուծումը, Ե., 1934, էջ 113:

Ֆրանսերեն թարգմանությամբ և բազմաթիվ ծանոթագրություններով, սուր վեճերի առիթ տվեց:

Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս Ինճիճյանը<sup>10</sup> և ակադեմիկոս Յ. Մանանդյանը<sup>11</sup> լուրջ փաստարկներով հերքեցին Սեն-Մարտենի տեսակետները: Այսպես նրանք ցույց տվեցին, որ ի թիվս այլ անճշտությունների, մասնավորապես «Աշխարհացոյց»-ի ընտիր օրինակներում ընդհանրապես բացակայում է «որ է Յօզու Ռուսաց» արտահայտությունը և Շատախ գավառանունը:

Նրանք ցույց տվեցին, որ Սեն-Մարտենի հրատարակածը «Աշխարհացոյց»-ի սխալաշատ մի ձեռագիր է, որ նրա բերած կռվանների զգալի մասը հանդիսացել են ընդմիջակություններ և դրանցից մի քանիսն էլ սխալ են մեկնված: Ի դեպ, մենք ևս «Աշխարհացոյց»-ի շատ հրատարակություններ մայելիս չենք հանդիպել «որ է Յօզու Ռուսաց» արտահայտությանը:

Հաջորդ տեսակետի հետևորդները Մխիթարյան միաբանության անդամներն են, որոնք «Աշխարհացոյց»-ի հեղինակ են համարում Մովսես Խորենացուն՝ պատմահորը անվանելով V դ. հեղինակ: «Աշխարհացոյց»-ի պատմության մեջ շրջադարձային կետ հանդիսացավ XIX դ. 70-ական թթ., երբ պրոֆ. Զ. Պատկանյանը հիմք ունենալով 1865 թ. Վենետիկյան հրատարակությունը, 1877 թ. հրատարակեց «Աշխարհացոյց»-ի ռուսերեն թարգմանությունը՝ նրան օժտելով ընդարձակ ներածականով և ծանոթագրություններով<sup>12</sup>: Համոզված լինելով, որ Մովսես Խորենացին V դ. հեղինակ է, իսկ «Աշխարհացոյց»-ը պարունակում է VI-VII դդ. տեղեկություններ, նա առաջինն էր, որ ցույց տվեց, թե «Աշխարհացոյց»-ի մեջ իբրև աղբյուր հիշատակված Կոստանդին Անտիոքացին VI դ. հեղինակ Կոզմաս Չնդկաչուն է, որի «Քրիստոնեական երկրագրություն»-ից օգտվել է «Աշխարհացոյց»-ի հեղինակը:

Համարելով «Աշխարհացոյց»-ի հեղինակին VII դ. անձնավորություն, նա իրավամբ հեղինակ ճանաչեց VII դ. հայ մեծ բնագետ Ամանիա Շիրակացուն: Զ. Պատկանյանի այս ենթադրությունը ընդհանուր

<sup>10</sup> Ինճիճյան Ղ., նշվ. աշխ., էջ 314:

<sup>11</sup> Մանանդյան Յ., նշվ. աշխ., էջ 26:

<sup>12</sup> Патканов К., նշվ. աշխ., X-XII:

ընդունելություն գտավ, նա դարձավ հայագիտության մեջ այն ուղղության հիմնադիրը, որի ներկայացուցիչներն անվերապահորեն «Աշխարհացոյց»-ի հեղինակ ճանաչեցին Անանիա Շիրակացուն:

Հորրորդ և վերջին տեսակետի հիմնադիրը ակադեմիկոս Յ. Մանանդյանն է, որը գտնում է, որ Մովսես Խորենացին ապրել և ստեղծագործել է IX դ. և «Աշխարհացոյց»-ն էլ համարում է IX դ. աշխատություն<sup>13</sup>:

Եշենք, որ ակադեմիկոս Յ. Մանանդյանի տեսակետը առաջ բերեց ուժեղ հակադեցություն: Մեր խնդրից դուրս է մեկ առ մեկ քննության առնել այդ տեսակետները, նշենք միայն, որ եթե կարելի է վիճել «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջ, ապա պատմագիտության համար անվիճելի է, որ Մովսես Խորենացին V դ. հեղինակ է:

Առաջ անցնելով, նշենք, որ պրոֆ. Բ. Պատկանյանի «Աշխարհացոյց»-ի համառոտ և Ա. Սուքոյանի ընդարձակ հրատարակությունները ոչ միայն վերջնականապես չլուծեցին «Աշխարհացոյց»-ի պատկանելության և ժամանակի հարցը, այլ նոր սուր վեճերի տեղիք տվեցին, որոնք շարունակվում են մինչ այսօր: Տարբեր տեսակետներ առաջ քաշեցին ոչ միայն հայ, այլև օտարազգի հեղինակները: Ա. Գուտշմիդը գտավ, որ «Աշխարհացոյց»-ը VII դ. աշխատություն է, սակայն դրա հեղինակ ճանաչեց Մովսես Խորենացուն՝ գտնելով, որ պատմահայրն ապրել և ստեղծագործել է VII դ.<sup>14</sup>:

Դրանից հետո տարբեր հեղինակներ ուսումնասիրել են «Աշխարհացոյց»-ի հեղինակի և ժամանակի հարցը, սակայն բոլոր կարծիքների մեջ տիրապետողն է այն տեսակետը, որ «Աշխարհացոյց»-ը գրվել է VII դ. և նրա հեղինակն է Անանիա Շիրակացին: Վերջին տեսակետին հետևեցին Յ. Տաշյանը<sup>15</sup> և Գ. Խալաթյանը<sup>16</sup>: Վերջինս համարել է, որ Շիրակացու «Աշխարհացոյց»-ը աղբյուր է ծառայել Խորենացու Հայոց պատմությանը:

<sup>13</sup> Մանանդյան Յ., նշվ. աշխ., էջ 16:

<sup>14</sup> Gutschmid A., Kleine Schriften, B. III, Leipzig, 1892, S. 332-338.

<sup>15</sup> Տաշյան Յ., Ցուցակ հայերեն ծեռագրաց մատենադարանին Մխիթարանց ի վիճմնա, 1895:

<sup>16</sup> Халатьянц Г., Армянский эпос в истории Армении Моисея Хоренцкого, Москва, 1896, с. 18, 133.

«Աշխարհացոյց»-ի հարցին անդրադարձավ նաև գերմանացի գիտնական պրոֆ. Գ. Մարկվատը՝ ենթադրելով, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը ապրել է VII դ., մասնավորապես նշելով, որ «Ա. Շիրակացին իսկական գիտնական է, որ Հայաստանի բաժանումից 300 տարի հետո ապշեցուցիչ ճշտությամբ տվել է Հայաստանի աշխարհագրությունը բաժանումից առաջ»<sup>17</sup>:

Հարցին անդրադարձավ նաև գերմանացի մեծ հայագետ Գ. Հյուբշմանը: Նա անկարելի համարեց, որ «Պատմություն Հայոց»-ը և «Աշխարհացոյց»-ը միևնույն հեղինակի գործ են: Համեմատելով երկու աշխատությունները, գերմանացի հայագետը գտնում է, որ խորենացու պատմությունն «աշխարհագրական տեսություններով ու անուններով» ավելի Փավստոսին է մոտ, քան «Աշխարհացոյց»-ին: Նշելով, որ «Պատմություն Հայոց»-ի ստեղծման ժամանակը կարելի է որոշել առանց «Աշխարհացոյց»-ը նկատի ունենալու, որը գրվել է պատմահոր երկից շատ ավելի ուշ, ապա զարգացնելով միտքը ավելացրել է. «Աշխարհագրութեան գրութեան ժամանակին վարի սահմանն է Նախճաւան գաւառին Վասպուրականէ բաժնուիլն ու Սիւնեաց հետ միացուիլը...»<sup>18</sup>:

Թվում էր, թե հարցը վերջնականապես լուծվել է, սակայն վեճերը շարունակվեցին XX դ. 30-ական թթ., երբ ակադեմիկոս Գ. Մանանդյանը հանդես եկավ առանձին մենագրությամբ՝ փորձելով մեկընդմիջտ լուծել «Աշխարհացոյց»-ի պատկանելիության և ժամանակի հարցը<sup>19</sup>:

Ինչպես նշում է ակադ. Գ. Մանանդյանը «խորենացու պատմությունը և «Աշխարհացոյց»-ը գրվել են IX դ.: հայ վաճառականության զարգացման ու տարանցիկ առևտրի վերականգնման շրջանում»: Սակայն ակադ. Գ. Մանանդյանի տեսակետների մերժումով հանդես եկավ ակադ. Մտ. Մալխասյանցը, որն ապացուցեց, որ Մովսես խորենացին ապրել է V դ., ապա նշելով, որ «Աշխարհացոյց»-ը Անանիա Շիրակացու

<sup>17</sup> Markwart J., Sudarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930, S. 56-57.

<sup>18</sup> Հյուբշման Գ., Հին Հայոց տեղոյ անունները, Վիեննա, 1907, էջ 263-264, 267:

<sup>19</sup> Մանանդյան Գ., նշվ. աշխ., էջ 32:

աշխատությունն է<sup>20</sup>, իսկ ակադ. Ա. Երեմյանը նշում է. «Հակոբ Մանանդյանը մեծ շփոթության մեջ է ընկել Խորենացու ժամանակի հարցում»<sup>21</sup>:

Հ. Մանանդյանի տեսակետների հերքումով հանդես եկավ պրոֆ. Աշոտ Աբրահամյանը՝ «Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջը» աշխատությամբ<sup>22</sup>: Բնության ենթարկելով Մատենադարանում պահվող «Աշխարհացոյց»-ների 36 ձեռագրեր, հեղինակը հայտնաբերել է, որ 1600 թ. առաջ գրված «Աշխարհացոյց»-ներից ոչ մեկի վերնագրում չի հիշատակվում Մովսես Խորենացու անունը: Ա. Աբրահամյանը հանգելով ճշմարտացի եզրակացության՝ նշում է, որ մինչև XVI դ. «Աշխարհացոյց»-ը դեռևս չէր ճանաչվել Մ. Խորենացու աշխատություն, և միայն այդ ժամանակ արտագրողներից որևէ մեկն է ավելացրել Խորենացու անունը: Վերջնականապես քննության առնելով «Աշխարհացոյց»-ին վերաբերող բազմաթիվ հարցեր, եզրակացնում է, որ «Աշխարհացոյց»-ը VII դ. ապրած հեղինակի գործ է: Գրված է նախքան Հայաստանը արաբների կողմից նվաճվելը<sup>23</sup>: Նշենք, որ պրոֆ. Ա. Աբրահամյանը կատարեց արժեքավոր ուսումնասիրություն՝ շրջանառության մեջ մտցնելով ձեռագրական հարուստ նյութ:

Կարևոր էր «Աշխարհացոյց»-ի 1944 թ. հրատարակությունը պրոֆ. Ա. Աբրահամյանի կողմից, որին կանդրադառնանք առանձին<sup>24</sup>:

Տեսնելով, որ իր առաջ քաշած տեսակետները հերքվում են, ակադ. Հ. Մանանդյանը կրկին հանդես եկավ իր տեսակետների պաշտպանությամբ 1947 թ. «Византийский временник» պարբերականում: Սակայն որևէ նոր փաստեր առաջ չքաշեց՝ պաշտպանելով իր նախորդ տեսակետները<sup>25</sup>:

<sup>20</sup> Մալխասյանց Ա., Խորենացու առեղծվածի լուծումը, Ե., 1940, էջ 32:

<sup>21</sup> Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 26:

<sup>22</sup> Աբրահամյան Ա., Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի հարցի շուրջը, Ե., 1940:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 28-29, 114:

<sup>24</sup> Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Ե., 1944:

<sup>25</sup> Манандян А., Когда и кем была составлена "Армянская География" приписываемая Мойсею Хоренскому, Византийский временник, т. 1 (XXVII), Москва, 1947, с. 127-143.

XX դ. 50-ական թթ. «Աշխարհացոյց»-ի քննութեամբ հանդես եկավ Թ. Հակոբյանը, որը նույնպէս «Աշխարհացոյց»-ը համարում է Անանիա Շիրակացու աշխատություն<sup>26</sup>:

«Աշխարհացոյց»-ի ուսումնասիրության ամենամեծ ներդրումը ունի ակադեմիկոս Ս. Երեմյանը: 1963 թ. լույս տեսավ մեծ գիտնականի «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» մեծարժեք ուսումնասիրությունը<sup>27</sup>:

Ձեռնամուխ լինելով հարցի քննարկմանը Ս. Երեմյանը նշում է, որ «Աշխարհացոյց»-ը եղել է մոտավորապէս 15 քարտեզների ժողովածու-ատլաս, որոնց մեջ հիմնականում եղել են իր կողմից վերակազմվող Մեծ Հայքի, Կողքիսի, Վիրքի և Աղվանքի քարտեզները: Ս. Երեմյանը եկել է այն եզրակացության, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը նկարագրում է Հայաստանը և Անդրկովկասը երկու ժամանակաշրջանում՝ առաջինը մինչև 387 թ., երկրորդը հեղինակի ապրած ժամանակաշրջանն է, և արտացոլում է Հայաստանը 591-610 թթ.: Ակադ. Ս. Երեմյանը քննադատում է այն ուսումնասիրողներին, որոնք «Աշխարհացոյց»-ը համարել են Պտղոմեոսի կամ նրանից օգտված Պապոս Ալեքսանդրացու երկերի ընդօրինակություն: Նրա կարծիքով «Աշխարհացոյց»-ի հեղինակը մեծ ինքնուրույնություն է ցուցաբերել հատկապէս Մեծ Հայքի, Սարմատիայի, Վիրքի, Աղվանքի և Պարսկաստանի նկարագրության մեջ<sup>28</sup>:

Իր աշխատության մեջ ակադ. Ս. Երեմյանը հանգել է այն եզրակացության, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը կազմել է քարտեզների մի ամբողջ ժողովածու, այսինքն ատլաս, սակայն քարտեզների վրա եղած նյութը նա շարադրել է նաև առանձին, այսինքն եղել է աշխարհագրական ձեռնարկ: Աշխատությանը կից հրատարակվեց Հայաստանի հարևան երկրների նկարագրությունը, փորձեց նաև վերականգնել «Աշ-

<sup>26</sup> Հակոբյան Թ., Դիտողություններ 7-րդ դարի «Աշխարհացոյց»-ի մասին, «Երևանի համալսարանի գիտական աշխատություններ», հ. 43, 1954, էջ 121-122:

<sup>27</sup> Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 13-14:

խարհացոյց»-ի նախնական բնագիրը<sup>29</sup>: Իր նշանավոր աշխատության մեջ՝ Ս. Երեմյանը անհավանական է համարում, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը Անանիա Շիրակացին է՝ նշելով «Աշխարհացոյց»-ը գրվել է ամենաուշը 608-610 թթ. և հարց է առաջանում, թե որքանով են ճիշտ բանասերները, որոնք «Աշխարհացոյց»-ը համարում են Ա. Շիրակացու 610-685 թթ. աշխատություններից մեկը<sup>30</sup>։ Սակայն 1980 թ. իր նոր աշխատանքում ակադ. Ս. Երեմյանը «Աշխարհացոյց»-ի հեղինակ ճանաչեց Անանիա Շիրակացուն<sup>31</sup>։

Ս. Երեմյանի աշխատությունը վերջնականապես չլուծեց «Աշխարհացոյց»-ի բազմաթիվ վիճելի հարցեր։ 1965 թ. նորից հանդես եկավ Թ. Հակոբյանը՝ փորձելով հերքել Ս. Երեմյանի առաջ քաշած տեսակետները։ Նշելով, որ «Աշխարհացոյց»-ը երկրագրական աշխատություն է և իր բնույթով նման է Ատրաբոնի ու մյուս հին հեղինակների աշխարհագրական երկերին։ Թ. Հակոբյանը չմերժեց ակադ. Ս. Երեմյանի այն կարծիքը, որ գոյություն են ունեցել «Աշխարհացոյց»-ին կից քարտեզներ։ Թ. Հակոբյանը մերժեց Ա. Երեմյանի տեսակետը «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցում, նշելով, որ այն ստեղծվել է VII դ. 40-50-ական թթ. Անանիա Շիրակացու կողմից<sup>32</sup>։

Բնականաբար պրոֆ. Թ. Հակոբյանի հայտնած կարծիքը չլուծեց «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցը։ Բանավեճին հետազայում միացան նաև այլ ուսումնասիրողներ։ Մ. Խաչատրյանը իր «VII դ. «Աշխարհացոյց»-ի մասին» հոդվածում նշում է, որ «Աշխարհացոյց»-ը քարտեզագրական ու աշխարհագրական գիտելիքների կոմպլեքս է, որը ժամանակի ընթացքում անհետացել է։ Ինչպես ոչնչացել ու մեզ չեն հասել էրատոսյանների ու Պտղոմեոսի քարտեզները և Ռուսաստանի XVII դ. Մեծ Գծագիրը։ Մ. Խաչատրյանը գտնում է, որ «Աշխարհացոյց»-ն ունեցել է միայն աշխարհի քարտեզ, իսկ բնաշխարհները տրվել են

<sup>29</sup> Երեմյան Ս., «Աշխարհացոյց»-ի սկզբնական բնագրի վերականգնման փորձ, ՊԲՀ, 1972, թիվ 4, էջ 209-230, 1973, թիվ 1, էջ 238-252, թիվ 2, էջ 261-274։

<sup>30</sup> Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 12, 25-26։

<sup>31</sup> Еремян С., География и картография, Культура раннефеодальной Армении (VII вв.), Е., 1980, с. 230-236.

<sup>32</sup> Հակոբյան Թ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի աշխատության մասին, Երևանի համալսարանի «Գիտական տեղեկաիր, հաս. գիտ.», հ. 96, պրակ 8, Ե., 1965, էջ 86-87։

շարադրանքով<sup>33</sup>: Հեղինակը գտնում է, որ Հայաստանի և մերձակա երկրների աշխարհագրական այն նկարագրություններն ու տեղեկությունները, որոնք գրանցված են «Աշխարհացոյց»-ի քարտեզի վրա, քաղված են մեծ մասամբ հայ հեղինակների գործերից: Մ. Խաչատրյանը գտնում է, որ «Աշխարհացոյց»-ն ուսումնասիրող գիտնականները քարտեզագրական վերլուծումներ չեն կատարել, այլ անդրադարձել են հայ ժողովրդի պատմության կապակցությամբ: Ավարտելով իր միտքը Մ. Խաչատրյանը հանգում է այն եզրակացության, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը չի կարող լինել Անանիա Շիրակացին, որովհետև «Տիեզերագիտության» և «Աշխարհացոյց»-ի տեսակետները սկզբունքային մի շարք հարցերում տրամագծորեն հակառակ են՝ միմյանց ժխտող ու հակասող»<sup>34</sup>:

Ա. Խաչատրյանի հայտնած տեսակետը նորից ստիպեց հանդես գալ պրոֆ. Ա. Աբրահամյանին:

Նշենք, երբ կասկածի տակ էր առնվում Շիրակացու՝ «Աշխարհացոյց»-ի հեղինակ լինելը, ապա այդ տեսակետի կողմնակիցները կատարելով նոր մանրազննին հետազոտություն, փորձում էին մեկընդմիշտ վերջ տալ արդեն տասնամյակներ շարունակվող վեճին: Պրոֆ. Ա. Աբրահամյանը իր՝ «Աշխարհացոյց»-ի հեղինակի պրոբլեմը՝ հոդվածում<sup>35</sup> քննադատության ենթարկեց Մ. Խաչատրյանին և կրկին հիմնավորեց իր նախկին տեսակետը՝ ցույց տալով, որ «Աշխարհացոյց»-ը Անանիա Շիրակացու մտքի արգասիքն է:

Նախորդ դարի 70-ական թթ. մի շարք հոդվածներով հանդես եկավ պրոֆ. Գ. Պետրոսյանը, որը նույնպես աղբյուրագիտական մանրակրկիտ ուսումնասիրությունից ելնելով գտավ, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակն է Անանիա Շիրակացին<sup>36</sup>:

<sup>33</sup> Խաչատրյան Մ., VII դ. «Աշխարհացոյց»-ի մասին, ՊԲՀ, 1968, էջ 81:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 85-89:

<sup>35</sup> Աբրահամյան Ա., «Աշխարհացոյց»-ի հեղինակի պրոբլեմը, ՊԲՀ, 1969, թիվ 3, էջ 226-240:

<sup>36</sup> Պետրոսյան Գ., «Աշխարհացոյց»-ի հեղինակի առեղծվածը, «Լրաբեր հաս. գիտ.», 1971, թիվ 10, էջ 54-60:



1979 թ. լույս տեսավ պրոֆ. Գ. Պետրոսյանի «VII դարի Հայկական «Աշխարհացոյց»-ի մասին» հոդվածը<sup>37</sup>, որտեղ հեղինակը մերժելով Ս. Խաչատրյանի պաշտպանած տեսակետները, մասնավորապես նշեց, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը նոր քարտեզ չի կազմել, այլ եղած առանձին երկրների նոր քարտեզներից համապատասխան նյութ է քաղել իր աշխատության՝ հատկապես Հայաստանի համար: Դրան հաջորդեց Գ. Պետրոսյանի ևս մեկ հոդված<sup>38</sup>, որտեղ ոչ միայն քննադատության ենթարկվեց ակադ. Ս. Երեմյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի» մեծարժեք ուսումնասիրությունը, այլև նրա կողմից «Աշխարհացոյց»-ի մասին առաջ քաշված և ընդունելության արժանացած տեսակետները:

Փորձելով հերքել Ս. Երեմյանի մի շարք տեսակետներ, Գ. Պետրոսյանը հայտնել է այն տեսակետը, որ «Աշխարհացոյց»-ի աղբյուրը Պապոս Ալեքսանդրացու աշխատությունն է, ինչպես նաև նշելով, որ Անանիա Շիրակացին կազմել է իր ժամանակին հայտնի աշխարհի նկարագրությունը, որը դարձել է աշխարհագրական ձեռնարկ<sup>39</sup>:

Դրան հետևեց Ա. Երեմյանի սուր քննադատությունը, որտեղ պաշտպանելով իր՝ քառորդ դար շրջանառված տեսակետը, մասնավորապես նշեց, որ «արժարժվող հարցերի մասին խոսողը առաջին հերթին պիտի լինի քարտեզագետ»<sup>40</sup>: Աշխատանքի վերջում Գ. Պետրոսյանին հոդվածագիրը մեղադրում է կողմնակալ մոտեցման, ինչպես նաև գրաբարին չտիրապետելու մեջ<sup>41</sup>:

Այդ նույն ժամանակ պրոֆեսորներ Ա. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի համատեղ ջանքերով լույս տեսավ «Աշխարհացոյց»-ի աշխարհաբար թարգմանությունը<sup>42</sup>:

<sup>37</sup> Պետրոսյան Գ., VII դ. «Աշխարհացոյց»-ի մասին, ՊԲՀ, 1979, թիվ 2, էջ 243:

<sup>38</sup> Պետրոսյան Գ., VII դ. Հայկական «Աշխարհացոյց»-ի նոր լուսաբանության մի փորձի մասին, «Լրաբեր հաս. գիտ.», 1986, թիվ 6, էջ 59-65:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 64:

<sup>40</sup> Երեմյան Ա., Պետրոսյան Գ., «VII դ. հայկական «Աշխարհացոյց»-ի նոր լուսաբանության մի փորձի մասին» հոդվածի առիթով, «Լրաբեր հաս. գիտ.», 1986, թիվ 7, էջ 53, 58:

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 58:

<sup>42</sup> Անանիա Շիրակացի, Մատենագիտություն, թարգմ., առաջաբանը և ծանոթագր. Ա. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի, Ե., 1979:

Մեծ հետաքրքրություն են առաջացնում հայագետ Ռոբերտ Յուսընի կատարած ուսումնասիրությունները: Հեղինակը քննության է առնում «Աշխարհացոյց»-ի հեղինակի և ժամանակի հարցը՝ գտնելով, որ «Աշխարհացոյց»-ը ստեղծվել է 610-636 թթ. ընթացքում: Հեղինակն ուսումնասիրելով VI դ. Բյուզանդական Հայաստանում կատարված վարչական փոփոխությունները, չորս Հայքերի առկայությունը, ինչպես նաև այլ վարչական փոփոխություններ, կատարված Մորիկ կայսեր կողմից, գտնում է, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակն է Անանիա Շիրակացին<sup>43</sup>: Իր հաջորդ ուսումնասիրություններում արտասահմանյան հայագետն անդրադառնում է Մեծ Հայքի վարչական փոփոխություններին<sup>44</sup>: Ռ. Յուսընի կողմից քննության է առնվում նաև 15 աշխարհների ծագման խնդիրը: Հեղինակի կարծիքով Մեծ Հայքի 15 աշխարհները միաժամանակ հանդես չեն եկել, այլ մ.թ.ա. 56 թ. սկսած մինչև 636 թ.<sup>45</sup>: Ռ. Յուսընի հաջորդ աշխատության մեջ քննության են առնվում «Աշխարհացոյց»-ի ընդարձակ և համառոտ խմբագրությունները, որոնց հեղինակն օժտել է մանրամասն ծանոթագրություններով: Բայց ելնելով մեր խնդրից, նշենք Ռ. Յուսընի ամենամեծ ծառայությունն այն է, որ Ա. Սուքրյանի կողմից հրատարակված տեքստերի և Ա. Աբրահամյանի կողմից տպագրված համառոտ խմբագրության բնագրի վերահրատարակությունը Նյու-Յորքում, ինչպես նաև «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության ձեռագրի ֆաքսիմիլեն<sup>46</sup>:

«Աշխարհացոյց»-ի որոշ հարցերով, մասնավորապես տիեզերագիտական խնդիրներով զբաղվել է է. Դանիելյանը<sup>47</sup>: Նրա վերջերս լույս տեսած «Գանձասարի պատմություն» մեծածավալ ուսումնասի-

<sup>43</sup> Hewsens R., On the Date and Authorship of the Ašxarhacocyc. - Revue des études arméniennes, Nouvelle serie, t. IV, p. 423.

<sup>44</sup> Hewsens R., Introduction to Armenian historical Geography. - Revue des études arméniennes, série, t. XIII, p. 84.

<sup>45</sup> Սույն տեղում, էջ 88-90:

<sup>46</sup> Ašxarhacocycs, The Seventy Century Geography Attributed to Ananias of Shirak, A Facsimile Reproduction of the 1881, Venice, Edition of the Long version of the Text, of the Unique Manuscript (Venise N 1245) upon which it was based and of the 1944 Yerevan Edition of the short version and with an Introduction by R. Hewsens, Delmer, New York, 1994.

<sup>47</sup> Даниелян Э., Армянские космографические труды VII века о строении вселенной, Е., 1978.

րութեան մեջ մասնավորապես նշվում է, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակներն են պատմահայր Մովսես Խորենացին (V դ.) և նրա գործը շարունակող նշանավոր աշխարհագրագետ Անանիա Շիրակացին (VII դ.)<sup>48</sup>:

Արժարժվող հարցին կողմնակիորեն անդրադարձել է պրոֆ. Դ. Սվազյանն իր «Աղվանից աշխարհի պատմություն» աշխատության մեջ, որտեղ ներկայացված է Աղվանքի ամբողջական պատմությունը: Նա «Աշխարհացոյց»-ի հեղինակ է ճանաչում Անանիա Շիրակացուն, իսկ ստեղծման ժամանակը՝ VII դ.<sup>49</sup>:

«Աշխարհացոյց»-ի խնդիրների, մասնավորապես Մեծ Դայքի վարչա-քաղաքական բաժանման հարցերի ուսումնասիրությամբ, մեծարժեք աշխատությամբ հանդես եկավ պրոֆ. Բաբկեն Դարությունյանը: Դեղինակը աշխատության սկզբում մանրազննին քննության է ենթարկել «Աշխարհացոյց»-ի խնդիրները, վերջինիս հրատարակությունները, ապա մանրամասնորեն ուսումնասիրության է ենթարկել Մեծ Դայքի աշխարհների վարչա-քաղաքական բաժանումն ու տեղադրությունը<sup>50</sup>:

Անդրադառնալով «Աշխարհացոյց»-ի հեղինակի և ժամանակի խնդրին, պրոֆ. Բ. Դարությունյանը հանգում է այն եզրակացության, որ «Աշխարհացոյց»-ը V դ. ստեղծագործություն է և պատկանում է Մովսես Խորենացու գրչին<sup>51</sup>: Դեղինակը մասնավորապես նշում է, որ Կապկոհ Քուստանի նկարագրության մեջ նշվում է 13 աշխարհ, սակայն դրանք թվարկելիս հիշատակվում են 14: Գտնում է, որ մեկը ավելացվել է հետագայում, խմբագրողների կողմից: Ապա նշելով, որ ավելացվածը Սիսականն է, որն առանձին աշխարհի վերածվեց 571 թ. հետո: Նա հանգում է այն եզրակացության, որ այս իրողությունը ինքնուրունյա անհնար է դարձնում «Աշխարհացոյց»-ի ստեղծումը 571 թ. հետո: Ապա պրոֆ. Բ. Դարությունյանը խոստանում է աշխատության երկրորդ մասում ավելի մանրամասնորեն քննության առնել տասնամյակներ շարու-

<sup>48</sup> Դանիելյան Է., Գանձասարի պատմություն, Ե., 2005, էջ 8:

<sup>49</sup> Սվազյան Դ., Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից – VII դարոս ներառյալ), Ե., 2006, էջ 7-8:

<sup>50</sup> Դարությունյան Բ., Մեծ Դայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ուստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 2001:

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 33-34:

նակվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի ու ժամանակի հարցը և տալ սպառիչ պատասխան:

*Սեր ուսումնասիրությունը մեզ բերել է այն եզրակացության, որ «Աշխարհացոյց»-ը գրվել է VII դ. և պատկանում է Անանիա Շիրակացու գրչին: Բերենք մի քանի փաստարկներ, որոնք վկայում են այդ մասին:*

Սեզ համար անվիճելի է պրոֆ. Ա. Աբրահամյանի ուսումնասիրության շնորհիվ պարզված հանգամանքը՝ Մովսես Խորենացու անվան բացակայությունը 1600 թ. առաջ գրված «Աշխարհացոյց»-ների վերնագրերում: Ձարգացնելով իր միտքը՝ Ա. Աբրահամյանը գալիս է այն եզրահանգման, որ մինչև XVI դ. «Աշխարհացոյց»-ը դեռ չէր ճանաչվել պատմահոր մտքի արգասիք, և XIV դ. գրիչներից մեկն է այն վերագրել է Մովսես Խորենացուն<sup>52</sup>:

Նշենք նաև, որ անժխտելի է այն հանգամանը, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը պետք է ունենար աշխարհագրական ու մաթեմատիկական գիտելիքներ:

«Աշխարհացոյց»-ի տեքստում հիշատակվում են չորս Չայքերը, որոնք, ինչպես գիտենք, կազմավորվել են VI դ. Հուստինիանոսի կողմից և Մովսես Խորենացին, որն ապրել է V դ. չէր կարող անդրադառնալ VI դ. կեսերին կատարված փոփոխություններին:

«Աշխարհացոյց»-ը Անանիա Շիրակացու աշխատություն ճանաչողների բերված անհերքելի փաստարկները անցնում են մեկ տասնյակից, և մենք բոլոր կարծիքներին անդրադառնալիս նշել ենք ուսումնասիրողների մեծ մասի տեսակետները «Աշխարհացոյց»-ի հեղինակի և ժամանակի հարցում:

«Աշխարհացոյց»-ը մինչև այժմ ունեցել է շուրջ 12 հրատարակություններ, թարգմանվել է տարբեր լեզուներով, սակայն, ցավոք, չկանրա գիտաքննական բնագիրը:

---

<sup>52</sup> Աբրահամյան Ա., Խորենացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջ, Ե., 1940, էջ 28-29:

КРАТКАЯ ИСТОРИЯ ИССЛЕДОВАНИЯ  
"АШХАРАЦУЙЦ"-А

РЕЗЮМЕ

Время создания "Ашхарацуйц"-а и вопрос его автора по сегодняшний день остаются поводом для дискуссий. Больше двух столетий, как эта тема сконцентрировала на себе внимание исследователей.

В сфере изучения "Ашхарацуйц"-а большой вклад внесли члены общества Мхитарян, арменовед из Франции Сен-Мартен, арменовед из Германии, проф. Маркерт, академики А. Манандян, С. Еремян, профессора К. Патканян, А. Абраамян, Б. Арутюнян и другие.

Наше исследование привело нас к тому выводу, что "Ашхарацуйц" — плод ума Анании Ширакаци и был написан в VII веке. Он имел около 12 изданий.

ԲՅՈՒՋԱՆԴԻԱՅԻ ՎԱՐԱԾ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ VII դ..

Եկեղեցու դավանանքի և առհասարակ ծիսական հարցերը միջնադարում ունեին իրենց քաղաքական նշանակությունը, այսինքն՝ դավանական ու ծիսական հարցերի մշակմամբ պահպանվում էր եկեղեցու ազգային դիմագիծը, անաղարտ պահվելով քրիստոնեական այլ եկեղեցիների օտարամուտ ներգործությունից: Այս առումով ահա եկեղեցական հարաբերությունները շատ հաճախ սքողում էին զուտ քաղաքական հարաբերությունները, ավելին, նման հարաբերություններում դավանական-վարդապետական կողմը երբեմն մղվում էր երկրորդական պլան:

Վերոնշյալը բնորոշում է նաև միջնադարի հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերությունները: Սկսած VI դ. II կեսից բյուզանդական առանձին կայսրեր փորձեցին հայոց եկեղեցին ենթարկել բյուզանդական եկեղեցուն, որովհետև եկեղեցու ենթարկելը առաջին մասնապայմանն էր նաև քաղաքական լիարժեք ենթարկման: Այս փորձերը որևէ դրական արդյունքի չեն հանգեցնում, որովհետև միությունը շարունակ խարսխվում էր Քաղկեդոնի դավանության վրա, մինչդեռ հայոց եկեղեցին իր հակաքաղկեդոնականությամբ ամենահետևողականն էր արևելյան եկեղեցիների մեջ:

Եվ եթե VI դ. II կեսին հայ-բյուզանդական եկեղեցիների միության իրագործումը բյուզանդական կողմը տեսնում էր անվերապահորեն Քաղկեդոնի դավանության հիմքով, ապա դրությունը մի փոքր փոխվում է VII դ.: 610 թ. բյուզանդական գահ բարձրացած Հերակլիոս Մեծը (610-641) ի վիճակի եղավ գնահատել իրավիճակը իրական լույսի ներքո: Հակաքաղկեդոնիկները թե՛ ազգային և թե՛ դավանական առումով շատ ավելի բազմաքանակ էին քաղկեդոնիկների համեմատությամբ:

յամբ<sup>1</sup>: Այս հանգամանքը ստիպում էր գնալ փոխզիջման: Եվ ամենևին էլ պատահական չէր Կոստանդնուպոլսի պատրիարքության որդեգրած նոր վարդապետությունը՝ միականությունը, որով վերջ էր դրվում Քաղկեդոնի դավանության երկվությանն ու անջատողական երանգավորմանը: Նոր վարդապետությամբ փորձ է արվում վերացնել մի կողմից քաղկեդոնիկների, մյուս կողմից հակառակորդ արևելյան եկեղեցիների միջև առկա անջրպետը. անջրպետ, որը շուրջ 200 տարվա համառ պայքարի պատճառով ունենր:

Արդեն VII դ. 30-ական թթ. առաջին կեսին միականության վարդապետության շուրջ են համախմբվում արևելյան խոշորագույն երեք պատրիարքությունները՝ Կոստանդնուպոլսի, Անտիոքի և Ալեքսանդրիայի: Նոր վարդապետությունն օգտագործվում է նաև հայ-բյուզանդական եկեղեցիների միության փորձում, իրագործված 633 թ. Կարինի ժողովում: Ջարմանալիորեն, միջնադարյան հայկական աղբյուրներից և ոչ մեկը չի վկայում, որ ժամանակի կաթողիկոս Եզր Փառաժնակերտցուն ինչպես որ տրամաբանորեն ժամանակաշրջանի իրողությունն է փաստում, ժողովում առաջարկվեց հենց միականության դավանությունը, որով փորձ էր արվում միջին մի ուղի հարթել հակառակորդ կողմերի միջև գոհացուցիչ մի բանաձևով, որն ընդունելի կլիներ երկու կողմերին էլ<sup>2</sup>: Ընդհակառակն, մեծաքանակ աղբյուրներ շատ որոշակի նշում են, թե 633 թ. հենց քաղկեդոնականությունն պարտադրվեց Չերակլիոսից, իսկ միության արդյունքում կաթողիկոս Եզր

---

<sup>1</sup> Hefele C., Histoire des conciles d'après les documents originaux, t. 4, Paris, 1870, p. 12, հմմտ. Bury J., A history of the Later Roman Empire (395 a. d. to 800 a. d.), vol. II, Amsterdam, 1966, p. 249.

<sup>2</sup> Չեստաքքիթ է, որ նոր բանաձևից շատ ավելի գոհ էին միաբնակները, և այն իր էությամբ ավելի հարիր էր մի բնություն քարոզողներին: Տես այս մասին, Թեոփանես Խոստովանող, ժամանակագրություն, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Գ. Բարթիկյանի, Օտար աղբյուրները Չայաստանի և հայերի մասին, 13, Բյուզանդական աղբյուրներ, 4, Ե., 1983, էջ 40:

Փառաժնակերտոցին դարձավ քաղկեդոնիկ<sup>3</sup>: Այն հանգամանքը, որ հետագա դարերում եկեղեցա-դավանաբանական կարգի գրություններում եզրի անվան սկզբնատառը գլխիվայր էր գրվում՝ ի նշան ավանդական հավատի ուրացության, վկայում է, թե ժամանակաշրջանի մտածողությամբ որքան ծանր էր «քաղկեդոնիկ» որակումը:

Ընդհանրապես, վաղ միջնադարում, ցանկացած կարգի զիջում հայոց նախնավանդ վարդապետությունից դիտվում էր որպես քաղկեդոնականության կրկնություն, հատկապես այս դեպքում, երբ մի կամ-քի վարդապետությունը կրկին ներառում էր «երկու բնություն» հասկացությունը, ինչպես որ IV տիեզերական ժողովն էր սահմանել: Իր հակաքաղկեդոնականության մեջ չափազանց հետևողական հայոց եպիսկոպոսներն ու վարդապետները, նաև հավատացող ժողովուրդն անկարող էր գնահատել միականության վարդապետական նորությունը, այն, որ իր դավանաբանությամբ այն մեծ չափով զիջում էր կատարում միաբնակներին: Եվ սա է բացատրությունը նրա, որ եզր Փառաժնակերտոցին, թեպետև իրականում ընդունեց միականությունը, ժամանակակիցների կողմից, նաև հետագա դարերում որակվեց որպես քաղկեդոնիկ:

Բյուզանդիայի եկեղեցական քաղաքականությունը հարևան երկրների, ներառյալ նաև Հայաստանի նկատմամբ կտրականապես փոխվում է Կոստաս II-ի (642-668) կայսրության շրջանում: Վերջ է դրվում Հերակլիոս Մեծի եկեղեցական քաղաքականությանը բնորոշ խաղաղ ու բանակցային գործելակերպին, որը ջանում էր արևելյան

<sup>3</sup> Որոշ աղբյուրներ անգամ ծիսական լուրջ փոփոխություններ են վերագրում հայրապետին, ինչպես օր. «Սակս ժողովոց...» փաստաթուղթը. «...բաժանեաց ի միմեանց զմիաւորեալ Ծնունդն և զՍկրտութիւնն, և զխաչեցարն յերիս սրբասացութեանցն որոշեաց», Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 222: Ստեփանոս Օրբելյանը նշում է, թե «...Եվ անդ (իմա Դվինում) կամեցան ժողովով հաստատել զնոր օրէնսն զոր առին», Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 118, իսկ Կիրակոս Գանձակեցին ավելի խիստ է իր մեղադրանքում. «... և եկեալ ի Հայս փոխեաց զանենայն ուղղափառ կարգաւորութիւնս եկեղեցւոյ և զընթերցուածս Յակոբայ և Կիրղի, փոխանակ այնորիկ զԱրտեմոնին եղեալ», Կիրակոսի Գանձակեցւոյ Համառօտ Պատմութիւն, Վենետիկ, 1865, էջ 31: Հայոց Հայրապետը, համաձայն Կիրակոս Գանձակեցու, ընդունում է հերձվածող Արտեմոնի նշանակած տոներն ու ընթերցվածները:



եկեղեցիները՝ բնորոշված որպես քրիստոնեական «հերձվածներ», միավորել բյուզանդական քաղկեդոնիկ եկեղեցուն մի նոր վարդապետության օգնությամբ:

Ըստ էության, եկեղեցու կողմից քարոզվող վարդապետությունն այնքան էլ չէր նտահոգում կայսրին: Նա միայն ձգտում էր, որ այն լիներ ընդհանուր, անփոփոխ՝ եկեղեցին դարձնելով կախյալ պետության մեջ: Պետության եկեղեցական միությունը Կոստաս II-ի համար պայմանավորված չէր ինքն իրենով, այլ գլխավորապես քաղաքական միության նշանակություն և իմաստ ուներ: Այս առումով ահա Բյուզանդիայի եկեղեցական քաղաքականությունը VII դ. կեսին ձեռք է բերում զուտ քաղաքական դրսևորում ու պարտադրանք, որում ամենաքիչը ուշադրություն էր դարձվում դավանական նրբություններին:

Վերոհիշյալի լավագույն ապացույցը 648 թ. Յայաստան ուղարկված կայսերական հրովարտակի բովանդակությունն է<sup>4</sup>: Հրովարտակի առաքման պատճառը VII դ. կեսին բավական սրված հայ միաբնակ-քաղկեդոնական հարաբերություններն էին: Յայերը սկսել էին մերժել անգամ հասարակ հոգևոր հաղորդությունը քաղկեդոնիկների, մասնավորապես՝ Յայաստանում գտնվող կայսերական զինվորների հետ, չթույլատրելով մասնակցել իրենց պատարագին: Դավանական միաբանություն հաստատելու համար կայսրը պահանջում էր եկեղեցական մեծ ժողովի գումարում: Վերջինիս պետք է մասնակցեր երկրի ամբողջ իշխանական դասը, ինչպես նշվում էր հատուկ<sup>5</sup>, որը թվում է, թե շատ ավելի կարևոր էր կայսրի համար, քան հոգևոր նվիրապետության ներկայությունը, թեև ժողովի գումարման առիթն ու տրվելիք պատասխանը զուտ դավանական էր: Ժողովի լիարժեքությունը նատենում էր ոչ թե հոգևոր դասի ամբողջականության, այլ իշխանական, աշխարհիկ դասի:

Այստեղ զգացվում է Բյուզանդիայի VII դ. կեսերի չափազանց քաղաքականացված եկեղեցու իրական պատկերը: Ի դեպ, նույն տա-

<sup>4</sup> Տե՛ս Սեբեոսի Պատմութիւն, աշխ. Գ. Աբգարյանի, Ե., 1979, էջ 148, հմմտ. Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 90-91:

<sup>5</sup> Ստեփանոս Տարոնացի, էջ 90-91:

րում, 648 թ., Բյուզանդիայում նոր էր հրապարակվել «Տիպոս» կոչված կայսերական հրամանագիրը<sup>6</sup>, որն արգելում էր բոլոր վեճերն ու քննարկումները դավանության շուրջ: Ինչպես նշել էինք վերը, եկեղեցական միությունը Կոստաս II-ի համար առաջին հերթին քաղաքական միության իմաստ ուներ և հենց դրանով էր պայմանավորված այն հանգամանքը, որ հրովարտական հստակ չէր նշվում Քաղկեդոնի ժողովը, այլ «զժողովն զայն»<sup>7</sup>:

Երկար ժամանակ ի վեր Կոստանդնուպոլսի պատրիարքության որդեգրած դավանության մեջ Քաղկեդոնի ժողովի հիշատակության պահպանումն արդեն ձևականություն էր համարվում և հենց նմանատիպ մի ձևականության պահպանում էր պահանջվում նաև Հայոց եկեղեցուց: Հավելենք, որ այս շրջանում Կ. Պոլսի պատրիարքն էր Պավղոս II-ը (641-653), հայտնի միական պատրիարքը, որին քաղկեդոնականության առավել հավատարիմ պապերից մեկը՝ Թեոդորոս I-ը (642-649) հերետիկոս էր հայտարարել՝ պահանջելով կարգալուծ անել նրան:

652 թ. աշնան իրադարձությունները ևս յուրովի բնորոշում են Բյուզանդիայի այս ժամանակաշրջանի եկեղեցական քաղաքականության ճշգրիտ նկարագիրը: Դվինի Ս. Գրիգոր եկեղեցում հունարեն պատարագի արարողությունն ոչ թե դավանական միության այլ պարտադրանքի ու ենթակայության քաղաքական փոխհարաբերության յուրատեսակ նշանակություն ուներ: Պարզ հոգևոր հաղորդության ընթացքում Քաղկեդոնի հիշատակությունն անկարևոր մի հանգամանք էր արդեն Կոստաս II-ի համար, թեկուզ ի նկատի առնելով այն փաստը, թե որքան անտարբեր էր նա աստվածաբանական խնդիրների հանդեպ<sup>8</sup>:

Ընդհանրապես Ներսես III Տայեցու դավանությանը վերաբերող խնդիրը պետք է վերլուծել՝ նկատի առնելով առաջին հերթին եկեղեցական իրադրությունը Բյուզանդական կայսրության մեջ և Կոստաս

<sup>6</sup> Mansi J., Sacrorum conciliorum nova et apilissima collectio, vol. 10, G.-Austria, 1960, p. 879, 1029, 1031.

<sup>7</sup> Սեբեոս, էջ 148:

<sup>8</sup> Թեոփանես, էջ 41, 58:

II-ի դավանությունը, կայսրի, որի գլխավորապես քաղաքական (և ոչ թե դավանական) պարտադրանքը Հայոց եկեղեցուն պայմանավորեց կաթողիկոսի վերաբերմունքն ու քայլերը, որն էլ հենց տեղիք է տվել թյուր պատկերացումների<sup>9</sup>:

Բյուզանդիայի եկեղեցական քաղաքականությունը նոր երանգ է ստանում Կոստանդին IV կայսեր (668-685) օրոք: Գրեթե ամբողջացել էր Արևելքի նվաճումը արաբների կողմից և այլևս իմաստ չունեի կանգ առնել միականության վրա, քանզի վերջինս կյանքի էր կոչվել՝ կամրջելու միաբնակների ու երկաբնակների միջև առկա խոր վիհը: Կոստանդին IV-ն իր եկեղեցական քաղաքականությամբ էապես տարբերվում էր թե՛ Հերակլիոս Մեծից և թե՛ Կոստաս II-ից: Եթե Հերակլիոսը եկեղեցական միության հարցերում չափազանց մեծ կարևորություն էր տալիս աստվածաբանական խնդիրներին, մեծ ժամանակ հատկացնելով բանավեճերին ու քննարկումներին, իսկ Կոստաս II-ը եկեղեցու միության հարցը բարձրացնում էր քաղաքական պարտադրանքի աստիճանի, ընդ որում բացարձակապես անտարբեր լինելով դավանական խնդիրների հանդեպ, ապա Կոստանդին IV-ը հարցի լուծումը դրեց եկեղեցական իրավունքի հարթության վրա, եկեղեցու միությունը՝ միմիայն եկեղեցու միջոցով, այսինքն՝ տիեզերական ժողովի գումարմամբ: Կոստանդին IV-ը իրապես հանդես եկավ որպես անկողմնակալ և անաչառ կայսր՝ անմիջական մասնակցություն չունենալով աստվածաբանական քննարկումներին:

VI տիեզերական ժողովը գումարվում է Կ. Պոլսի արքայական պալատի Տրուլլոս կոչված գմբեթավոր սրահում, 680 թ. նոյեմբերի 7-ից մինչև 681 թ. սեպտեմբերի 16-ը, գրեթե մի ամբողջ տարի<sup>10</sup>: Ժողովի արդյունքում դատապարտվում է միականությունը, որը շուրջ կես դար տրոհել էր արևելյան քրիստոնեությունը Քրիստոսի կամքի վարդապետության հարցում: Հաստատվում է Քրիստոսի երկու կամքի մասին վարդապետությունը:

<sup>9</sup> Ներսես III-ին քաղկեդոնիկ են համարել Ս. Չամչյանը, Ֆ. Թուռնըպիզը, Վ. Հացունին, Ս. Կոզյանը, Ստ. Մալխասյանը:

<sup>10</sup> Այս ժողովի մասին տես Mansi J., նշվ. աշխ., vol. 11, p. 208.

Հուստինիանոս II-ի (685-695) գահակալության շրջանում դարձյալ հիմնովին փոխվում է բյուզանդական եկեղեցական քաղաքականությունը: Հայաստանի հետ հարաբերություններում վերսկսվում են կայսրության ռազմական գործողությունները՝ զուգորդված եկեղեցական միության պարտադրանքի ջանքերով: Իրագործվում է հայ-բյուզանդական դավանական միությունը 689/90 թթ. Սահակ Չորրկորեցի կաթողիկոսի աթոռակալության շրջանում: Ոճը, որով "Narratio de rebus Armeniae" սկզբնաղբյուրը շարադրում է եկեղեցիների միության հիշյալ դեպքը, անթաքույց է դարձնում, թե վերջինս պարզապես պարտադրվել էր կայսեր կողմից<sup>11</sup>:

691/692 թթ. գումարվում է Տրուլլոս կոչված ժողովը<sup>12</sup>: Վերջինիս նպատակն էր քննարկել եկեղեցական բարքերին ու կարգուկանոնին վերաբերող կարևոր հարցեր, որոնք անուշադրության էին մատնվել վերջին աստվածաբանական քննարկումների հորձանուտում: Հիշյալ ժողովում ընդունված մի շարք կանոններ, մասնավորապես 32-33-րդ, 81-րդ, 91-րդ<sup>13</sup>, վերաբերում են հայոց սովորություններին և արգելվում է դրանց կիրառումը: Հենց արգելքի նկատառումով սահմանված այս կանոնները վկայում են, որ 692 թ. սկզբին բացակայում էր որևէ դավանական համաձայնություն հայ-բյուզանդական եկեղեցիների միջև:

VII դ. Բյուզանդիայի եկեղեցական քաղաքականության գլխավոր խնդիրը Հայաստանում եկեղեցիների միության հարցն էր: Այն իրական հող կստեղծեր նաև Հայաստանն արդեն քաղաքականապես ենթարկելու կայսրությանը: Հետևաբար եկեղեցական միության խնդիրն առաջնային նշանակություն ուներ ոչ միայն Կոստանդնուպոլսի պատրիարքության, այլ գլխավորապես Բյուզանդիայի իշխող վերնախավի համար:

<sup>11</sup> Տես այս մասին Մելիքյան Կ., "Narratio de rebus Armeniae հայ-քաղկեդոնական երկը վաղ միջնադարյան հայոց եկեղեցու պատմության կարևոր սկզբնաղբյուր», Ե., 2007, էջ 147-150:

<sup>12</sup> Ժողովը գումարվում է նույն գմբեթավոր սրահում, ուր և VI տիեզերական ժողովը, ուստի և գերազանցապես հայտնի է որպես Տրուլլոսի ժողով: Ժողովի ընդունած բարեկարգական կանոնները պահպանվել են, տե՛ս Mansi J., նշվ. աշխ., vol. 11, p. 930-1006, թվով 102 կանոններ:

<sup>13</sup> Այս կանոնների մասին տե՛ս Hefele C., նշվ. աշխ., էջ 215, 221, 224:

**ВИЗАНТИЙСКАЯ ЦЕРКОВНАЯ ПОЛИТИКА  
В АРМЕНИИ В VII ВЕКЕ**

**РЕЗЮМЕ**

В средние века церковная доктрина имела политическое значение. С этой точки зрения очень важна история сношений между Армянской и Византийской церквями. Император Геракл использовал монотелизм, как политическое средство, стремясь примирить монофизитскую Армянскую церковь с Византийской. В 633 г. созывается собор в Карине, где католикосом Армении была принята доктрина одной воли.

В середине VII в. император Костас II старался сделать церковь в государстве зависимой. Своей политикой он пытался считаться главой не только государства, но и церкви. Причастие католикоса Нерсес III и императора в 652 г. в церкви св. Григория являлось не союзом верования, а имела своеобразный смысл политического принуждения и подчинения.

Уже в конце VII в. в шестом вселенском соборе (680-681) Византийская церковь отказалась от монотелизма. Император Юстиниан II намеревался объединить Армянскую церковь с Византийской на основе Халкидонского собора 451 г. Таким образом в 689/90 гг. католикос Армении Саак III принужденно принял теологию Халкидона.

803 թ. ԲՅՈՒՀԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐ ՀՈՉԱԿՎԱԾ  
ԱՐԵՎԵԼԻՑ ՁՈՐԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՊԱՏՐԻԿԸ  
ԹՈՒՐՔ

Բյուզանդական կայսրության պատմության մեջ մեծ դեր են խաղացել հայազգի բազում քաղաքական և ռազմական գործիչներ: Ձգալի թիվ են կազմում նրանք, ովքեր իրենց հետնորդներն են ունեցել, ուստի կազմավորվել են բյուզանդական հայազգի ազնվականական ընտանիքներ, որոնք երկար տարիներ, անգամ դարեր, շարունակել են իրենց նախնիների գործունեությունը: Առանձին անհատներ, գրավելով բյուզանդական գահը, դարձել են հարստությունների հիմնադիրներ: Մեծ թիվ են կազմում հայազգի անհատ գործիչները, որոնք փայլատակելով կայսրության երկնակամարում, հեռացել են առանց հետնորդ թողնելու: Նրանցից են Վարդան (Βαρδάνης, Βαρδάνιος) անունը կրողները:

Բյուզանդագետ Ա.Կաժդանն իր «Հայերը Բյուզանդական կայսրության տիրող դասակարգի կազմում ԺԱ-ԺԲ դդ.<sup>1</sup>» կարևոր, հանգամանալից գրքում, որը խնդրին նվիրված մանրակրկիտ մի անկետա է, անդրադառնում է և Վարդաններին: Ամենից առաջ ընդգծենք, որ Կաժդանի սույն աշխատության թույլ կողմը հեղինակի հայերենին չտիրապետելն է, հայոց պատմության մասնագետ չլինելը և հայկական միջնադարյան աղբյուրներին օտար թարգմանություններից օգտվելը: Քիչ չեն դեպքերը, երբ քողարկված, բայց մասնագետի համար ոչ աննշմարելի ու թափանցիկ է քաղաքական գործունը, ձգտումը լոյալ լինել մեր հարևանների և կայսրության հիմնական տարրի ազգության հետ: Խոսքը վերաբերում է նախ և առաջ վրացադավան հայերին, որոնց նա նվիրել է իր գրքի Բ գլուխը և այն վերնագրել՝ «Այսպես կոչված (!) հայիբերական ընտանիքներ»: Ներառված են Թոռնիկյանները (27 գործիչ), Բակուրյանները (16 գործիչ), Վիկացիները (3 գործիչ) և Ապուրապաները (9 գործիչ): Ա.Կաժդանը Արմենոպոլիսներին (թարգմանաբար նշանա-

<sup>1</sup> Каждан А., Армяне в составе господствующего класса Византийской империи в XI-XII вв., Е., 1975.

կում է «հայրորդի», բառացի՝ «հայի ծագ», բյուզանդական աղբյուրներում հանդիպում են և սիրոպոլիտներ՝ ասորու ծագեր, ֆրանկոպոլիտներ՝ արևմտաեվրոպացիների, սարակինոպոլիտներ՝ արաբների, անգամ թուրքոպոլիտներ, թուրքի ծագեր), ներառել է իր գրքի Գ գլխում և այն վերնագրել «Ենթադրաբար հայկական ծագմամբ ընտանիքներ»: Եշեմ մի քանիսին՝ իրենց զուտ հայկական անուններով: Մխիթարներ, Վասպուրականցիներ, Ծնճղուկներ, Արտավազդներ, Լևոններ և ուրիշներ, շուրջ 20 ընտանիք: Արմենոպոլիտներին նա ենթադրաբար հայ է համարել, դրա հիմնական (քողարկված) պատճառը ԺԴ դարի բյուզանդական նշանավոր օրենսգետ Կոստանդին Արմենոպոլիտն է, «Յեքսաբիբլոսի», վեց գրքից բաղկացած Դատաստանագրքի հեղինակը, (նրա աշխատությունը գործել է նախ Բյուզանդիայում, ապա՝ Յունաստանում մինչև 1940 թ.): Յույն մասնագետները ոչ մի կերպ չեն ցանկանում նրա «Արմենոպոլիտ» ազգանվան որևէ նշանակություն տալ և ամեն կերպ ջանում են ընդգծել նրա հույն լինելը (հմտ. նորագույն «Յիդդիա» հանրագիտարանը<sup>2</sup>- «Այս հույն ռատավոռի գործը...»): Առանց հանվանե այս վերջինիս վրա կանգ առնելու, Ա.Կաթդանը գրում է. «Սակայն մեզ հայտնի ոչ բոլոր Արմենոպոլիտները կարող են անվերապահորեն հայերի թվում դասվել»: Այս կերպ նա իրեն ապահովագրում է հույն մասնագետներից: Բայց հարց է ծագում, ինչո՞ւ երկաբնակ՝ քաղկեդոնական հույնն հունական միջավայրում և ազնվականության շարքում իրեն պիտի Արմենոպոլիտ՝ Յայորդի անվաներ, նկատի ունենալով նաև այն իրողությունը, որ հայերը միաբնակ էլ են: Յասկանալի է, նա ծագումով էր հայ և ամենևին ոչ հայադավան:

Սույն հոդվածի առարկա Վարդանների մասին Ա.Կաթդանը գրում է. «Վարդան անունը լայն տարածում ուներ Ը-Թ դդ. բյուզանդական ազնվականության շրջանում: Սակայն այն ժամանակ դա հանդես է գալիս ավելի որպես անձնանուն, քան ազգանուն: Ուստի ոչ մի վստահություն չկա, որ այդ ժամանակաշրջանի աղբյուրներում հիշատակված սենեկապետների կամ բարձր զինվորական՝ սխուլերի դոմեստիկոսների և զորավարների պաշտոններ զբաղեցրած բոլոր Վարդանները պատ-

<sup>2</sup> \* Υδρια, 'Ελληνική και Παγκόσμια Μεγάλη Γενική 'Εγκυκλοπαίδεια, τόμος 10, Αθήναι 1980, σελ. 407.

կանում էին միևնույն ընտանիքին»: Դա հարկավ Վեճի առարկա չէ: Տարօրինակ է հեղինակի մտքի շարունակությունը. «Հնարավոր է արդյոք, որ բոլոր Վարդանները հայեր էին: Համենայն դեպս նրանցից մեկը՝ Թ դարի սկզբում սխուլերի դոմեստիկոս, կրում էր Թուրք (Турок) մականունը, հետևաբար իր ժամանակակիցների կողմից *ընդունվում էր ամենևին ոչ որպես հայ*»<sup>3</sup>: Բայց ո՞ր ժամանակակիցների, հույների, որոնց համար իրականությունն անկասկած հայտնի չէր, թե՞ հայերի: Մի՞թե հայերի...:

Շատ առաջ Վարդան «Թուրքին» անդրադարձել էր նաև Ն. Աղոնցը: Իր «Մամիկոնյան իշխանուհին Բյուզանդական գահի վրա» հոդվածում նա գրում էր. «Վարդանի մականունն էր թուրք, հավանորեն, Քերսոնի ճակատում թյուրքերի դեմ կռված լինելու համար: Հետաքրքրական է, - շարունակում է հոդվածագիրը,- որ բյուզանդական մի ժամանակագրի, Սիմեոն Լոգոթետի, գործի սլավոն թարգմանության մեջ Թուրքի փոխարեն կարդացվում է Կուրտ, լատիներեն Kourt: Հետաքրքրական է, որովհետև Կուրտ նույնն է թվում ինչ որ Կուրդիկ, կամ Քուրդիկ անունը, որ սեփական էր Մամիկոնյան տան: Կուրդ կարող էր Վարդանի հոր անունը լինել: Վանական կյանքում ընտրեց Սաբբա անունը և այնքան փայլեց սրբակեցությամբ, որ հույն եկեղեցին սրբերի կարգը դասեց նրան և հիշատակը տոնում է ցայժմ սեպտեմբերի 8-ին»<sup>4</sup>:

Անցնենք աղբյուրներից: Այս Վարդանին առաջին հիշատակողը դեպքերին ժամանակակից Թեոփանես Խոստովանողն է: Նրա «ժամանակագրության» հունարեն բնագրում գրված է. Βαρδάνης, ὁ πατρικίος καὶ στρατηγὸς τῶν Ἀνατολικῶν, ὁ ἐπίκλην Τοῦρκος<sup>5</sup>. Գևորգ Վանականի «ժամանակագրության» մեջ. Βαρδάνης τὸ ἐπίκλην Τοῦρκος<sup>6</sup>, իսկ Թեոփանեսի Շարունակողի մոտ՝ Βαρδάνιος ὁ Τοῦρκος ἐπίκλην<sup>7</sup>:

<sup>3</sup> Каждан А., նշվ. աշխ., էջ 117: Այս և մնացած բոլոր ընդգծումները հոդվածագրինն են:

<sup>4</sup> Աղոնց Ն., Երկեր հինգ հատորով, Ա, Պատմագիտական ուսումնասիրություններ, Ե., 2006, էջ 292-293:

<sup>5</sup> Theophanis Chronographia, recensuit Carolus de Boor, vol. I, Textum graecum continens, Lipsiae, 1883, p. 479.

<sup>6</sup> Georgius Monachus, In Theophanis Cronographia, p. 479.

<sup>7</sup> Theophanes Continuatus. Ex recognitione Immanuelis Bekkeri, Bonnae, p.6.



Հունարեն հոդի այս տարբեր գրությունները որոշ չափով փոխում են մտքի իմաստը: *ὁ ἐπικληγ* նշանակում է «մականվանյալն թուրք», *τὸ ἐπικληγ* «թուրք մականվամբ», իսկ *ᾧ ἐπικληγ* «ում մականունը թուրք էր»: Սա մանրունք է, բայց մեր հարցում կարող է նշանակություն ունենալ: *ὁ* և *ᾧ* վերաբերում են Վարդանին, *τὸ*-ն մականվան:

Հարց է առաջանում, Ա.Կաժդանն արդյոք գիտե՞ որևէ թուրքի, որ Վարդան անունը կրեր, դեռ ավելին, թ դ. սկզբին վարեր բյուզանդական բարձրագույն ռազմական պաշտոններ, անգամ կայսր հռչակվեր հենց հույների կողմից: Նա գիտե՞ որևէ թուրքի, որ Ը դարի վերջում քրիստոնյա էր: Կանգ առնելով այդ «թուրք» մականվան վրա, նա միանգամայն անտեսում է նրա Վարդան անունը, այդ գործչի վերաբերյալ բյուզանդական աղբյուրներում բազում մանրամասնությունները: Անհրաժեշտ են գտնում ամբողջությամբ մեջբերել թեոփանես Խոստովանողի վկայությունները: «*Անատոլիկոն բանակաթեմի գորավար<sup>8</sup> Վարդան պատրիկը, մականունը թուրք (Τούρκος) Պերատիկա բանակաթեմերի<sup>9</sup> կողմից կայսր հռչակվեց*: Նա թեև կտրականապես հրաժարվում էր ծիրանին հագնել, բայց նրանց վրա ազդել չկարողացավ: Նա իջավ մինչև Խրիսուպոլիս<sup>10</sup>, ութ օր շրջեց քաղաքը, բայց քաղաքացիներից<sup>11</sup> չընդունվելով, վերադարձավ Սալազինա<sup>12</sup>: *Աստծուց վախենալով, և չուզենալով իր պատճառով քրիստոնյաների կոտորած լինի, նա դիմեց Նիկեփորին<sup>13</sup> և նրանից իր կյանքի անվտանգության ու գույքի ապահովության մասին գրավոր երաշխիքներ ստացավ, որոնց տակ ստորա-*

<sup>8</sup> Անատոլիկոն (Արևելյան): Բյուզանդական կայսրության խոշորագույն բանակաթեմը: Նրա կազմի մեջ էին մտնում Դիոկլետիանոս կայսեր սահմանագծած Ասիա և Լիդիա նահանգները, Կարիայի որոշ մասեր, Պակաստյան Փոյուզիան, Փոյուզիա Սալուտարիան, Լիկատնիան, Երկրորդ Կապարոսկիան և Իսավրիան: Տե՛ս Գեյլցեր 3., Սկզբնավորությունք Բյուզանդական բանակաթեմերի դրության, Թարգմ. Գ. Գարանֆիլյանի, Վիեննա, 1903, էջ 10:

<sup>9</sup> Պերատիկա բանակաթեմերը՝ Անատոլիկոնն ու Օպսիկիոնը:

<sup>10</sup> Խրիսուպոլիս, Քաղկեդոնի մի մասը: ԺԲ դարից կոչվել է Սկուտարիոն: Այժմ Ուսկյուդար (Կոստանդնուպոլսի թաղամաս):

<sup>11</sup> Կոստանդնուպոլսի բնակիչները՝ («պոլսեցիները»):

<sup>12</sup> Զինվորական կայան էր Օպտիմատոն բանակաթեմում: Կենտրոնը Նիկոմեդիա քաղաքը:

<sup>13</sup> Նիկեփոր Ա կայսր (802-811 թթ.):

գրեցին նաև սրբազնագույն Տարասիոս պատրիարքը<sup>14</sup> և բոլոր պատրիկները: Ահա դրանից հետո նա իր բոլոր մտերիմներից գաղտնի, սեպտեմբեր ամսի 8-ին, կեսգիշերին փախավ, իջավ Բյութանիայի Կիոս (քաղաքը), Յերակլիոսի վանքը և գտնելով կայսեր ուղարկած խելանդիոնը<sup>15</sup>, մազերը խուզեց, հազավ վանականի սքեմը, և նավ նստելով գնաց Պրոտե կոչվող կղզին<sup>16</sup>, որտեղ ինքը վանք էր կառուցել: Նա հավատացած էր, որ Նիկեփորը, այդ ուխտադրուժը, չի խախտի տվածը սարսափելի երդումը, իրեն ոչ մի վնաս չի հասցնի: Սակայն կայսրը նախ գրավում է նրա ողջ ունեցվածքը, ապա պատրվակ գտնելով, ձերբակալում բանակաթեմերի բոլոր զորավարներին ու կալվածատերերին, ոմանց նաև մայրաքաղաքում, իսկ համայն բանակն էլ առանց ռոճիկի թողնում»<sup>17</sup>:

Թեոփանես խոստովանողը փոքր անց Վարդան «թուրքին» մեկ անգամ ևս է հիշում: Անդրադառնալով իր ատած Նիկեփոր կայսեր, ցույց է տալիս, որ նա «մանիքեցիների (նրանց այժմ պավլիկյան են կոչում) ամենաջերմ բարեկամն էր Փռյուգիայում և Լիկաոնիայում ապրող աթինգանների, իր հարևանների, որոնց բանդագուշակություններից ու արարողություններից բերկրում էր: Ի դեպ, երբ Վարդան պատրիկը իր դեմ ապստամբություն բարձրացրեց, Նիկեփորը հենց սրանց հրավիրեց և նրանց հմայություններով է, որ Վարդանին պարտության մատնեց»<sup>18</sup>: Սա, հարկավ, Նիկեփորին անվանարկելու մի անհաջող փորձ է, նրան վարկաբեկելու միտում ունեցող:

Կայսրը չհարգեց Վարդանի անձեռնմխելիության մասին տված երդումը: Նա «իր համախոհ ու համախորհ մի քանի լիկաոնացիների, ավելի ճիշտ՝ գայլ մարդկանց»<sup>19</sup> հրամայեց գիշերով Պրոտե կղզին գնալ և, որպես թե առանց իր գիտության, կուրացնեն Վարդանին, որից հետո

<sup>14</sup> Կոստանդնուպոլսի պատրիարք Տարասիոս (784-806 թթ.):

<sup>15</sup> Խոշոր նավի տեսակ է:

<sup>16</sup> Իշխանաց կղզիներից մեկը Մարմարայում:

<sup>17</sup> Օտար աղբյուրները Չայաստամի և հայերի մասին 13: Բյուզանդական աղբյուրներ Դ, Թեոփանես խոստովանող: Թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Գ. Բարթիկյանի, Ե., 1983, էջ 191:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 200:

<sup>19</sup> Լիկաոնիա տեղանվան վրա բառախաղ: Չունարեն «լիկոս» նշանակում է գայլ, այդտեղից ահա «գայլ մարդիկ»:

ապաստանեն եկեղեցում<sup>20</sup>: Հրամանը գործադրվեց, և այդ արարքը պատրիարքին ու սինոդին, աստվածավախ բոլոր մարդկանց մեծ ցավ պատճառեց»<sup>21</sup>:

Վարդան «թուրքի» մասին թեոփանեսի Շարունակողի մոտ կարդում ենք. «Նիկեփորը Վարդանին, մականունը՝ թուրք, որպես քաջ պատերազմողի և բազում այլ առաքինություններով օժտված մարդու, նշանակեց մոնոստրատեգոս՝ Արևելքի հինգ բանակաթեմերի գլխավոր և վերակացու: Վերջինս սիրում էր թշնամիներին պարտության մատնել և շարունակ երազում էր կայսր դառնալ»: Մի քիչ հետո՝ «Վարդանը գահի վրա աչք ուներ»<sup>22</sup>:

Ա.Կաժդանից տարբեր եզրակացության էին հանգել այլ հետազոտողներ: Շատ առաջ Ղ.Ալիշանը Վարդանին ոչ միայն հայ էր համարում, այլև հավատացած էր, որ նա բյուզանդական օրինավոր կայսր էր<sup>23</sup>: Ֆրանսիացի անվանի բյուզանդագետ Պ.Լըմերլը Վարդանին հայ է համարում՝ թուրք մականվանյալ<sup>24</sup>: Իսկ Գ. Օստրոգորսկին, անդրադառնալով «803 թ. ամռանն Արևելքում տեղակայված զորքերի ցնցումներին, որոնք սկիզբ առան երբ բոլոր բանակաթեմերի գլխավոր հրամանատար դարձավ Վարդանը»<sup>25</sup>, աղբյուրներում հիշված նրա անունը (և մականունը) թողնում է առանց մեկնաբանության (Bardanes Tourkos):

Արդ, ինչ է ստացվում: Արևելքի հինգ բանակաթեմերի զորավարը, Անատոլիկոն և Օպսիկիոն բանակաթեմերի կողմից կայսր հռչակվողը, մի աստվածավախ, քրիստոնյաների արյունը թափել չկամեցող մարդը, որի կայսեր տված կյանքի անձեռնմխելության մասին փաստաթուղթը ստորագրում են նաև Կոստանդնուպոլսի պատրիարքը և բոլոր պատրիկները, վանք կառուցող և աշխարհիկ կյանքից հրաժարած, վանականի սքեմը հագած, հսկայական ունեցվածքի տեր մարդը, որին հա-

<sup>20</sup> Սուրբ Սոֆիայի տաճարը:

<sup>21</sup> Թեոփանես Խոստովանող, էջ 192:

<sup>22</sup> Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 15: Բյուզանդական աղբյուրներ Ե, Թեոփանեսի Շարունակող: Թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Ե., 1990, էջ 3:

<sup>23</sup> Ալիշան Ղ., Վարդան կայսր: Յուզիկը հայրենեաց հայոց, Կ. Բ., Վենետիկ, 1921, էջ 310-311:

<sup>24</sup> Lemerle P., Thomas le Slave. „Travaux et Mémoires“, t. I, 1965, p. 264, n. 29.

<sup>25</sup> Ostrogorsky G., Histoire de l'Etat Byzantin, Paris, 1956, p. 224.

րած և կայսր հռչակած բանակաթեմերի զորավարներին ու կալվածատերերին ձերբակալում են, նրա համայն զինվորներին առանց ռոճիկի թողնում, վերջապես կայսեր հրամանով երդմնազանցորեն նրան կուրացման փաստը դատապարտում են Կոստանդնուպոլսի պատրիարքն ու սրբազան սինոդը, սովորական մի թուրք էր: Դա բացարցակապես անտրամաբանական և անբնական չէ՞: Եթե առեղծվածը ավելի ուշ դարաշրջանի վերաբերել, ապա այդ «թուրք» բառը կարող էր ածականի իմաստ ստացած լինել, որ և՛ հայերիս, և՛ հույների համար ունի բացասական նշանակություն՝ վայրագ, տգետ, խավարամոլ<sup>26</sup>, ապա դաժան, բիրտ, վայրենի, անողորմ մարդ<sup>27</sup>: Բայց դա ինչքանով է համերաշխվում մեր Վարդանին:

Առեղծվածը շատ պարզ լուծում ունի, բայց ոչ օտարազգի մասնագետի համար: Հունատառ (և նրա հիման վրա ստեղծված այլ լեզուներում՝ բուլղարերեն, սերբերեն, ռուսերեն, ուկրաիներեն, բելոռուսերեն և այլն), ապա և բոլոր լատինատառ լեզուներում «Թուրք» ցեղանունը գրվում է «S»-ով (T), միայն հայերենում «Թ»-ով՝ Թուրք: Ուստի բյուզանդական աղբյուրների Τοῦρκος-ը ոչ այլ ինչ է, քան *հայկական Տուրք անունը*՝ ստացած մականվան (էպոնիմի) նշանակություն:

Այստեղ մենք նպատակ չունենք արդրադառնալու Տուրք աստվածությանը, դա մեր թեմային չի առնչվում<sup>28</sup>: Անցնենք Մովսես Խորե-

<sup>26</sup> Աղայան էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. Ա, Ե., 1976, էջ 466:

<sup>27</sup> Δ. Δημητράκου, Μέγα Λεξικόν ἑλλης τῆς Ἑλληνικῆς γλώσσης, τόμ. ΙΔ', Ἀθῆναι, 1978, σελ. 7247. Հմտ. համապատասխան դարձվածքները. «կատաղությունից թուրք դարձավ»: Իսկ քացախի, (օղու) վերաբերյալ՝ թունդ. «այս քացախը (օղին) թուրք է»:

<sup>28</sup> Նշեմ միայն, որ Տուրք-թուրք թյուրիմացության առաջնեկը «ռուսագիր» Ք.Պատկանյանն է: Նա դա դիտել է որպես ակնարկ դեպի Հայաստան հին թրքական գաղթականության, տեղի ունեցած նախքան արաբական շրջանը, որը ժամանակի ընթացքում իբր ձուլվել է հայերի հետ: Տե՛ս Патканов К., О месте, занимаемом армянским языком в кругу индо-европейских, Тифлис, 1879. Ն. Արդնցը այդ կարծիքը բնորոշեց՝ որպես մտքի մառախուղներ, որոնք «ոչ մի գիտական կռվան չեն կարող ընծայել թուրքական հին գաղթականության հարցը պաշտպանելու և Պատկանյանի կարծիքը Տորքի մասին մնում է օդի մեջ առանց նեցուկի»: Ն. Արդնց, Տորք աստված հին հայոց: Երկեր, հ. Ա, Ե., 2006, էջ 82: «Տորք անունը, - շարունակում է Արդնցը, - ծանոթ է Խորենացուն, անշուշտ հայ կյանքից, հավանական է նաև որ հսկայի պատկերն իր հրեշավոր գծերով էապես առնված է հայ իրականությունից: Նույն տեղում, էջ 83:

նացուն: Իր պատմական երկի երկրորդ գրքի 8-րդ գլխում նա խոսում է «ի գաւակէ Պասքամայ, ի Յայկայ թռռնէ Տուրք»<sup>29</sup> անուն կոչեցեալ»-ի մասին, որին Վաղարշակ թագավորը «հաստատէ կուսակալ *արևմտից*»: Տորքի Անգեղեայ ածականի տորենացու մեկնաբանությունը, որն իրականում Անգեղեայ բառի ժողովրդական ստուգաբանությունն է, («ան» ժխտական մասնիկ, «գեղ» գեղեցկություն, այսինքն՝ տգեղ»)՝<sup>30</sup> Վերիիշենք պատմահոր հերոսին նվիրած նկարագրությունը: Տուրքն էր «վիթխարի հասակաւ և ուժով, ... բայց եթէ կամիս՝ ստեմ և ես յաղագս նորա անյաջ և փցուն, որպէս և պարսիկք վասն Ռոստոմայ Սագծի հարիւր և քսան փղոց ոյժ ունել: Քանզի կարի իմն անյարմար թուէին և նմա *երգ բանից վասն ուժեղութեան և սրտեայ լինելոյն*, որք ոչ Սամսոնի և ոչ Յերակլեայ և ոչ Աագծին յարմարին *այս գրոյցք*: Քանզի *երգէին նմա* բուռն հարկանել զործաքար վիմաց ձեռօք, ուր ոչ գոյր գեզութիւն, և ճեղքել ըստ կամաց մեծ և փոքր. և քերել եղնգամբքն և կազմել որպէս տախտակ, և գրել նոյնպէս եղնգամբք իւրով արծուիս և այլս այսպիսիս: Եւ յեզեր ծովուն Պոնտոսի դիպեալ նաւաց թշնամեաց՝ դիմէ ի վերայ. և ի խաղալն նոցա ի խորն իբրև ասպարեզս ութ, և սա ոչ ժամանեալ նոցա՝ առնու *ասեն*, վէմս բլրածև, և ձգէ զկնի. և ի սաստիկ պատառմանէ ջուրցն ընկղմին նաւք ոչ սակաւք, և ամբարձունն ալեաց, որ ի պատառմանէ ջուրցն, վարէ զմնացեալ նաւսն բազում մղոնս: Ո՛հ, կարի է առասպելս, այլ և առասպելաց առասպել: Բայց քեզ զի՞ն է. *քանզի էր արդարև սաստիկ հզօր և այսպիսեաց գրուցաց արժանի*»<sup>31</sup>:

Ուրեմն Տուրքի մասին *երգերը* հայոց շրջանում երգվում էին և հետագայում, և Ը դարի վերջի և Թ դարի սկզբի բյուզանդական հայագրի զորավարը կարող էր և Տուրք մականունով հանդես գար, կոչվել մեր (և իր) Հայկ նահապետի թոռ Տուրք անուն-մականվամբ Վարդան Տուրք,

<sup>29</sup> Գրաբար բնագրում հրատարակիչները բերում են Տուրք,, տողատակ որպես տարընթերցվածք՝ Տորք: Ստ. Մալխասյանցը *Խորենացու երկի իր շխարհաբար թարգմանության մեջ* գրում է Տորք:

<sup>30</sup> Патканов К., О месте занимаемом армянским языком в кругу индоевропейских, Тифлис, 1879. Նաև Գարագաշյան Ա., Քննական պատմություն հայոց, Ա, էջ 250: Ն. Աղոնցն Անգեղ անունը նույնացնում է «անգղ, բագե» բառի հետ: Տե՛ս նրա «Տարկուն հին հայերի մոտ», Երկեր, հ. Ա, Ե., 2006, էջ 88:

<sup>31</sup> Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց: Աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ա. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 114-115:

բայց ոչ երբեք Վարդան Թուրք: Նա հայ էր ոչ միայն իր հայկական հերոսական անվամբ, այլև և ոչ պակաս նշանավոր մականվամբ:

Բացառված չէ, ընդհակառակը, շատ հնարավոր է, որ հույների շրջանում Տուրքը (Τούρκος) զուգորդվում էր թուրք ցեղանվան հետ (հիշենք մեր բյուզանդական հեղինակներին և ժամանակակից բյուզանդագետներին), բայց ամենևին ոչ հայոց շրջանում: Առավել ևս այդ մականունը Վարդանին տվողի և կրողի կողմից: Եվ քանի որ մեր Վարդան Տուրքը միակն է այդ մականվամբ Բյուզանդիայում հայտնի հայը, ապա նա (կամ նրա ծնողները) վաղուց չէ, որի պիտի գաղթած լինեին Հայաստանից, թերևս Հուստինիանոս Ա-ի Չորրորդ Հայքի Անգեղտուն (Άγγελήνη) գավառից, որ մինչև Ձեռոն կայսրը կիսանկախ էր՝ հայ նախարարի (սատրապի) գլխավորությամբ, *բնակչությունն էլ բաղկացած էր հայերից* (Ξθνη, gentes)<sup>32</sup>: Հենց այստեղ պիտի լայն տարածված լինեին Տուրք Անգեղի մասին «երգերը»: Վարդանը Տուրք մականվամբ է Բյուզանդիա եկել, ծնողները, ովքեր անտարակույս ազնվականներ պիտի եղած լինեին, նրան հազիվ թե կայսրությունում այդպես մկրտեին, քանի որ իրենց համար հայտնի էր, թե այդ երկրում տեղյակ չեն ով է Տուրքը, գիտեն Թուրքը, իսկ հայը պիտի խուսափեր այդպես կոչվել, քանի որ, անտարակույս, Բյուզանդիայում ինքն ազգությամբ թուրք պիտի համարվեր:

Տուրք Անգեղի առասպելը Անգեղտան հայերի շրջանում կենդանի էր անգամ ԺՁ դարում, որոնցից և ծանոթ էր դարձել, ինչ-որ չափով աղավաղված, նաև քրդերին: Նրանց մոտ «Տուրքը» զուգորդվում էր «թուրքի» հետ: ԺՁ դարի քուրդ պատմիչ Շերեֆ էդ-դին Բիթլիսին (1543-մահվան թիվն անհայտ) իր նշանավոր «Շարաֆ նամե»-ում (գիրքն ավարտել է 1599 թ.) ցույց է տալիս, որ քրդական Միրդասի ցեղը հաստատվել էր Ազիլում, այն է՝ Անգեղ տանը: Պատմիչը գրում է. «Ազիլը մի բերդ է կառուցված բարձր լեռան լանջին: Այդ լանջը այնպես է ծռված, որ նայողին համակում է վախն ու սարսափը: Բոլորի լեզվում և բերնե բերան շրջում է ամենքին հայտնի առասպելն այն մասին, որ,

<sup>32</sup> Տես Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 5: Բյուզանդական աղբյուրներ Ա, Պրոկոպիոս Կեսարացի: Թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Ե., 1967, էջ 340:

իր, աստօնու սիրելի մարդկանցից (մարգարեներից) մեկը եկավ այստեղ և այդ լանջին *թուրքերեն* նշան արեց (պարսկերեն բնագրում՝ «be-lafze *torki* - Յ.Բ.) որն աստօն ամենագորությանը ծովեց<sup>33</sup>: Իրականությունը աստօնու է միայն հայտնի»<sup>34</sup>: «Թուրքերենի» տակ, անշուշտ, Տուրքն է թաքնված, նա է «նշան անողը»: Բայց Բյուզանդիայում, եթե չգիտեին Տուրքին, պարզվում է նրան շատ լավ գիտեին իր «Անգեղեայ» «մականվամբ»: Նրան նվիրված ժողովրդական երգերում այդ «երգ բանից *վասն ուժեղութեան և սրտեայ լինելոյն» զրույցները*, որոնք «ոչ Աամսոնի և ոչ Յերուսլեայ և ոչ Սագճին յարմարին», հանդիպում են հենց Ը-Թ դարում հայ պավլիկյանների շրջանում ստեղծված «Վասիլ Դիգենիս Ակրիտաս» բյուզանդական էպոսում, որտեղ երգողները խուսափել են հերոսին կոչել Տուրք (Թուրք) անվամբ, այդ իսկ պատճառով վերցրել են հերոսի «մականունը»՝ *Անգեղեայ*, բայց ամենևին ոչ հայոց կողմից բառին տրված ժողովրդական ստուգաբանությամբ, այլ հունական՝ *Անգիլաս (Αγκυλας)*, հունարեն *անգիլե* բառից (ἀγκύλη), որ տեգ, նիզակ, գեղարդ է նշանակում<sup>35</sup>:

Վասիլ Դիգենիս Ակրիտաս էպիկական հերոսը իր սխրանքների շարքում ցույց է տալիս, որ «Միջագետքի»<sup>36</sup> մեջ իր դեմը ելավ սիրուն ու ճարպիկ, *շատ քաջ մի տղա...*

<sup>33</sup> Բիթլիսի նահանգում, Բիթլիս քաղաքին մոտիկ էր Սասունը: Հիշյալ «ծնությունները» Սասնա Ծոռի քրդերի շրջանում աղավաղված պատկերացումը չէ՞ն արդյոք: Եթե հերոս Տուրք-Տորքին Շարաֆ էդ-դին Բիթլիսին բացատրում է ինչոր մարգարեի կողմից *թուրքերեն* (be-lafze *torki*) նշան անելուց, որի իմաստը նա չի հասկանում և գտնում, որ իրականությունը միայն աստօնու է հայտնի, ապա բարձր ժայռի ծովելը Ասսնա Ծոռի արձագանքը չէ՞: Սասնա ծոերը քրդերի պատկերացմամբ Սասունի ահասարսուռ (ծոված) լեռները չէ՞ն արդյոք . . .

<sup>34</sup> Cheref-Nameh ou Histoire des Kourdes par Cheref, prince de Bitlis, publ. par Veliaminof-Zernof, St. Peterbourg, 1860, I, p. 177. (Traduction franc. par F. Charmoy, St. Pet., 1868-1875, II, 17-18). Ռուսերեն թարգմանությունը՝ Шараф-хан ибн Шамсадин Бидлиси Шараф наме, т. I, Перевод, предисловие, примечания и приложения Е.И.Васильевой. Памятники письменности Востока, XXI, Москва, 1967, с. 233-234.

<sup>35</sup> Հարցի մասին մանրամասն՝ Бартикян Р., Заметки о византийском эпосе о Дигенисе Акрите, Византийский Временник, т. XXV, 1964, с. 151-160. Հոդվածի ֆրանսերեն թարգմանությունը՝ Н.М.Бartigian, Notes sur l'Épopée byzantine „Digénis Akritas“, Revue des Etudes Arméniennes, t. III, 1965, p. 152-166.

<sup>36</sup> Նկատի ունի «Միջագետք» (Մեսոպոտամիա) բանակաթեմը, որ հյուսիսում հասնում էր մինչև Կամախ:

Եւ շատ էր սիրուն ու *անջափ արի:*

«Շատ *հանդուզն ու անահ»* երիտասարդը գուրզով հարվածում է Դիգենիսին ու ասում.

«Վասիլ, մի՛ տխրիր, սիրտդ մի՛ կոտրիր,

Ճառան եմ ես քո, *արյուն Անգիլան»* (այսինքն՝ Տուրքը):

Անդրադառնալով տեղանքին, Դիգենիսն ասում է.

«Այս խոր ծորերում և կլեյտուրներում,

քարաժայռերում, հուժկու հարվածներ

պարզ և եւ տալիս *քաջերն ազնիվ,*

պարտքով մի հարված ինձ էլ տվեցին»<sup>37</sup>

Եզրափակենք մեր խոսքը կրկնելով. Վարդան Կարդան Կարդան-ը ամենևին թուրք չէ, այլ Տուրք և այդպես է նա կոչվել ցանկանալով կրել իր հայ նախնիների առասպելական հերոսի անունը՝ արդեն որպես մականուն:

**РАЧ БАРТИКЯН  
ИЛИ НАН РА**

## ПРОВОЗГЛАШЕННЫЙ В 803 Г. ВИЗАНТИЙСКИМ ИМПЕРАТОРОМ ДОМСТИК СХОЛ ВОСТОКА ВАРДАН ЭТНИЧЕСКИ ТУРОК?

### РЕЗЮМЕ

А. П. Каждан византийских аристократов, носящих имя Вардан, считает *предположительно* армянами и задается еще вопросом — «Можно ли считать, что все Варданы были армянами? Во всяком случае один из них — домстик схол в начале IX в. — носил прозвище Турок и, следовательно, воспринимался своими современниками отнюдь не как армянин». Автору безразлично, что не существует этнически турок с армянским именем Вардан, что домстик схол Вардан был христианином, провозглашен императором, что в его защиту встали сам константинопольский патриарх, синод церкви и все патрикии, а в конце, отказавшись

<sup>37</sup> Վասիլ Դիգենիս Ակրիտաս: Թարգմանություն, ուսումնասիրություն, ծանոթագրությունների Հրաչ Բարթիկյանի, Ե., 1978, տողեր՝ 3070-3071, 3075, 3080, 3105-3108:



от светской жизни, стал монахом и обосновался в им же построенном монастыре.

"Турк" (var. Tork) — это имя армянского мифического героя с этнонимом "турок" ничего общего неимеющее. Герой обладал невероятной силой и сравнивался с ветхозаветным Самсоном, греческим Гераклом и персидским Ростомом. О нем слагались песни. Следовательно имя мифического героя "Турк" стало для Вардана эпонимом.

ԱՇԽԱՐՀԻԿ ԵՎ ԳՈԳԵՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱԴԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ԴԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո հայոց պետականության գաղափարը ոչ միայն կենսունակ էր, այլև ի վիճակի եղավ իր շուրջը համախմբել հայ հասարակության մի հատվածին, որոնց հաջողվեց հայոց պետականությունը վերականգնել Կիլիկիայում:

Այստեղ կփորձենք պարզաբանել այն հիմնախնդիրը, թե հայկական պետականության մոդելում տեղակայված գաղափարները ինչպե՞ս կարողացան հանգրվան գտնել Կիլիկիայում և կառուցվածքային տեսք ստանալ: Եթե փորձենք տարանջատել և խմբավորել պետականության մոդելում ամրագրված հիմնական գաղափարները, ապա դրանք կարող են իրենց համապատասխանությունը գտնել և կառուցվածքային տեսք ստանալ երեք՝ մշակութային, քաղաքական և սոցիալական միջավայրերում, որոնց սերտ փոխներգործությունը ապահովում էր պետականության նոր կառույցների ձևավորումը: Կառուցվածքային առումով կփորձենք այդ գաղափարները տեղադրել աշխարհիկ և հոգևոր միջավայրերում, ուստի անհրաժեշտ է պարզաբանել երկու իշխանությունների կազմակերպման առանձնահատկությունները:

Քանի որ հայոց եկեղեցին ավելի վաղ էր հաստատվել Կիլիկիայում քան աշխարհիկ իշխանությունը, ապա ճիշտ կլիներ նախ և առաջ պարզաբանել հոգևոր նվիրապետության կազմակերպման հետ կապված խնդիրները:

Կիլիկիա տեղափոխված հայ հասարակության տարաբնակեցման առանձնահատկություններից մեկն այն էր, որ որոշակի սոցիալական միջավայր յուրացնելու հետ միաժամանակ փորձում էին կազմակերպվել որպես մշակութային խումբ. «Իսկ յաւուրս Տեառն Խաչկայ հայրապետին Դայոց սփռեալ տարածեցաւ ազգս Դայոց զկողմամբքն

արևմտից, մինչև ձեռնադրել նմա եպիսկոպոսունս յԱնտիոք Ասորւոց և ի Տարսոն Կիլիկեցւոց և ի Սուլմոյայ և յամենայն գաւառսն յայնոսիկ»<sup>1</sup>:

Եկեղեցու թեմական կառույցը սովորաբար իր համապատասխանությունը գտնում է պետության վարչական կազմակերպման շրջանակներում, մինչդեռ այս դեպքում օրինաչափությունը ամբողջովին չի պահպանվում, քանզի Կիլիկիայում դեռևս չէր ստեղծվել հայկական պետականություն: Նման դեպքերում հոգևոր նվիրապետության կազմակերպման հիմքում կարող էին դրվել այլ, մասնավորապես՝ էթնոտարածական և մշակութաարժեքային հատկանիշներ: Վերոհիշյալ մեջբերումից պարզ երևում է, որ հոգևոր նվիրապետությունը նախ և առաջ կազմակերպվում էր հնագույն եկեղեցական կենտրոնների, ապա այն շրջաններում, որտեղ հայկական էթնիկական ընդհանրությանը հաջողվել էր ձևավորել սեփական միջավայրը: Այս ճանապարհով հայոց եկեղեցին կարողանում էր Կիլիկիայում տարաբնակեցված հայ բնակչության համար ապահովել ներէթնիկական կապը և հաղորդակցությունը, որն անհրաժեշտ էր նույնականության պահպանման համար:

Կիլիկիայում հայոց հոգևոր նվիրապետության առկայությունը որոշակի դեր խաղաց նաև հայկական պետականության վերականգնման գործընթացում, քանզի.

ա/ հայոց եկեղեցին, թերևս միակ կառույցն էր, որ կարողացել էր պահպանել հայկական էթնոսի հասարակական-քաղաքական կյանքին բնորոշ իդեալները և նորմերը

բ/ էթնիկական ընդհանրության տարաբնակեցման հետ կապված խախտվել էին նրա կազմակերպման ավանդական կապերը և պատկերացումները, իսկ հայոց եկեղեցին կարողացավ ոչ միայն պահպանել, այլև անհրաժեշտության դեպքում վերակառուցել դրանք և հարմարեցնել ձևավորված պայմաններին:

Կիլիկիայում հայոց եկեղեցու կազմակերպումը կարելի է ներկայացնել երկու փուլով, որոնց համար սահմանագիծ կարող է հանդիսանալ պետականության վերականգնումը, որը ոչ միայն փոխեց նրա կառուցվածքը, այլև տեղը հասարակության կազմակերպման շրջանակ-

<sup>1</sup> Ստեփանոս Ասողիկ Տարօնեցի, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 258:

ներում: Հասկանալի պատճառներով այստեղ չենք անդրադառնալ հայոց եկեղեցու կազմակերպման սկզբնական փուլին, որն ընդգրկում է Խաչիկ Ա Արշարունի կաթողիկոսի (973-992) կոնդակից մինչև Կիլիկիայում հայկական իշխանական տների հաստատման ժամանակահատվածը: Կազմակերպման տեսակետից մինչև պետականության վերականգնումն ընկած ժամանակահատվածը կարելի է անվանել իշխանական եկեղեցի, քանզի թեմական կառույցները սովորաբար կազմավորվում էին իշխանական տների շուրջ:

Կիլիկիայում հաստատված հայ իշխանների միջև սոցիալ-քաղաքական գերակայության ու արժեքային կողմնորոշման համար մշտապես առկա մրցակցության պայմաններում եկեղեցու օժանդակության կարիքը խիստ զգացվում էր, ուստի նրանք աշխատում էին իրենց տիրույթներում, իսկ հնարավորության դեպքում նաև այլ տարածքներում կազմակերպել սեփական եկեղեցի: Երկրամասում հաստատված հայ իշխանական տներից յուրաքանչյուրն աշխատում էր իր որդեգրած սկզբունքները և դրանց կենսագործման համար ներդրվող ձգտումները ներկայացնել որպես միակ ճիշտ և օրինական, իսկ դա կարող էին ամեն եկեղեցու օգնությամբ, քանզի վերջինս էր գաղափարական հիմնավորում տալիս թույլատրելի և օրինական գործողությունների համար: Այս համատեքստում իշխանական տների և եկեղեցու փոխհարաբերություններում կարելի է առանձնացնել երկու տիպ.

ա/ իշխանական տները հնարավորին չափ օժանդակում և օգնում էին հայոց եկեղեցուն

բ/ իսկ մյուս կողմից աշխատում էին խիստ վերահսկողություն սահմանել նրա գործունեության նկատմամբ և այն ամբողջովին ներառել վարչաքաղաքական համակարգի շրջանակներում. «...ընդ ձեռամբ հոգեւոր վերակացութեան տեառն իմոյ Ներսիսի արքեպիսկոպոսի սրբոյ, որ այժմ կայ ի գլուխ սուրբ և հռչակաւոր այս ուխտի միաբանութեան ժողովոյ և հովուէ զմայրաքաղաքն Տարսոն՝ հանդերձ գաւառաւք Կիլիկիոյ...»<sup>2</sup>:

<sup>2</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Ե., 1988, էջ 268:

Տարսոնի արքեպիսկոպոսությունը Կիլիկիայի հնագույն եկեղեցական կենտրոններից էր, սակայն այս դեպքում այն անհրաժեշտ, բայց բավարար պայման չէ, որպեսզի հնարավորություն տա ճշգրտելու երկրամասում հաստատված հայոց եկեղեցու կանոնական աստիճանակարգությունը:

Կիլիկիայում հաստատված հայոց եկեղեցու կազմակերպման և կառուցվածքի մասին որոշակի պատկերացում կարող ենք կազմել 1178 թ. Հռոմկլայի ժողովի մասնակիցների դասաչարից, ուր Կիլիկիան ներկայացված է.

6 «Ներսես արքեպիսկոպոս մայրաքաղաքին Կիլիկեցւոց Տարսովնի

22 Յովհաննես եպիսկոպոս Անարզաբոյ

23 Բասիլիոս եպիսկոպոս Սելևկիոյ

25 Դավիթ եպիսկոպոս Մամուեստիայ Կիլիկեցւոց

31 Գրիգորիոս եպիսկոպոս Կոկիսոնի»<sup>3</sup>:

Հարկ է նշել, որ ցանկը ամբողջովին չի արտացոլում Կիլիկիայում ձևավորված հայոց եկեղեցական կառույցը, քանզի անհնարին է պատկերացնել, որ 1178 թ. այստեղ կար ընդամենը հինգ թեմ: Դասաչարի «մայրաքաղաքին Կիլիկեցւոց Տարսովնի» հատվածը և այն, որ Տարսոնի արքեպիսկոպոսը զբաղեցնում է առաջին տեղը դեռևս իրավունք չի տալիս աներկբա եզրակացնել, որ նա էր գլխավորում Կիլիկիայում ձևավորված հոգևոր նվիրապետությունը: Բավական հետաքրքիր է նաև Մամեստիայի առաջնորդի ստորագրությունը, որից կարելի է եզրակացնել, որ Կիլիկիայում հայոց եկեղեցին դեռևս կազմակերպվում էր երկու նշանավոր իշխանական տների՝ Ռուբինյանների և Հեթումյանների շուրջ: Չնայած նրա, որ հայոց կաթողիկոսությունը գտնվում էր Կիլիկյան Հայաստանից դուրս, այստեղ ձևավորված թեմերը կառուցվածքային ամբողջակամության նկատառումով ընդունում էին նրա կանոնական գերագահությունը: Տեղագրական կազմակերպ-

<sup>3</sup> Չամչյանց Մ., Հայոց պատմություն, հ. Գ, Ե., 1984, էջ 132:

ման տեսակետից հայոց եկեղեցին հաստատվում էր երկու՝ արքեպիսկոպոսական և եպիսկոպոսական միավորների շրջանակներում<sup>4</sup>:

Կիլիկիայում կազմակերպված հոգևոր նվիրապետության առանձնահատկությունների մասին քիչ թե շատ ամբողջական պատկերացում արդեն կարող ենք կազմել Լևոն Բ-ի թագադրության հանդեսին ներկա հոգևորականների և 1342 թ. Սսի ժողովի մասնակիցների ցուցակների ուսումնասիրությունից: Առաջինն արտացոլում է ԺԲ դարի վերջին ձևավորված միջանկյալ իրավիճակը, ուստի համատեղում է կազմակերպման երկու՝ իշխանական և պետական սկզբունքներ, իսկ երկրորդում առաջինը բացակայում է:

1198

1342

Տեր Գրիգոր կաթուղիկոս՝ որ մականուն Ապիրատ Տեր Դաւիթ՝  
արքեպիսկոպոս Մասայ, և առաջնորդ  
Արքայկաղնոյ  
Տեր Յոհաննէ՝ արքեպիսկոպոս Սոյո, և տէր  
Դրագարկուն  
Տեր Սիմաս՝ արքեպիսկոպոս Երուսաղէմի  
Տեր Յուսեփ՝ արքեպիսկոպոս Անտիոքայ, և տէր  
Յեսուանց վանիցն  
Տեր Կոստանդին՝ արքեպիսկոպոս Անաւարզոյ, և  
տէր Կաստաղոնին  
Տեր Վարդան՝ արքեպիսկոպոս Լամբրոնին, և  
առաջնորդ Սկտուն  
Տեր Ստեփաննոս՝ արքեպիսկոպոս Տարսոնի, և  
տէր Մլիճոյն  
Տեր Թորոս՝ եպիսկոպոս Սելևկիոյ  
Տեր Գրիգոր՝ եպիսկոպոս Կապնուն, և տէր  
Արիզնին  
Տեր Աստուածատուր՝ եպիսկոպոս Մեծքրուն  
Տեր Յոհաննէս՝ եպիսկոպոս Աանվիլեայ  
Տեր Կոստանդին՝ եպիսկոպոս Փիլիպոսայ  
Տեր Ստեփաննոս՝ եպիսկոպոս Բերդուսին  
Տեր Մխիթար՝ եպիսկոպոս Ընկուզուտիմ<sup>5</sup>:

Արքեպիսկոպոսը  
Բարսեղ Սոյո  
Վարդան Տարսոնի  
Ստեփաննոս Անարզարայ  
Սարկոս Կեսարու Կապադովկացուց  
Բարսեղ Իկոնիոյ  
Շմաւոն Սեբաստիոյ  
Եպիսկոպոսը  
Բասիլ Բարձրբերդոյ  
Գրիգոր Ստանոյ  
Յովհաննէս Այասու  
Լէրսես Կապնոյ  
Յովհաննէս Սաշարոյոյ  
Գրիգոր Մարաշոյ  
Բասիլ Անկուրիոյ  
Դավիթ Տարսոնոյ  
Դանիել Չմշկածագու  
Ստեփաննոս Տրապիզոնայ  
Պօղոս Կոկիսոնի  
Դավիթ Դամտոնոյ  
Գրիգոր Սաշկառի  
Մեսրոպ Խորձենոյ  
Գրիգոր Տիամոյ<sup>6</sup>:

<sup>4</sup> Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, Հավաքական տեքստը, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագր. Ա. Գալստյանի, Ե., 1958, էջ 26-27:

<sup>5</sup> Սմբատայ Սպարապետի եղբոր Հեթմոյ առաջնոյ արքայի Հայոց Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպօլիս եւ Հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց, Մոսկուա, 1856, էջ 99-100:

<sup>6</sup> Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Բ, մասն Ա, Պէյրուք, 1960, էջ 1869:

Անհրաժեշտ է նշել, որ երկու ցուցակն էլ ամբողջովին չեն արտացոլում Կիլիկիայում ձևավորված թեմական կառույցը, քանզի այն ավելի ընդգրկուև էր:

Այժմ փորձենք պարզաբանել առաջին ցուցակում հանդիպող «տէր» և «առաջնորդ» հասկացությունները, որոնք վկայում են Կիլիկիայում հայոց եկեղեցու կազմակերպման տարաբնույթ սկզբունքների մասին: Վերևում նշեցինք, որ այստեղ հաստատված հայ իշխանները հնարավորության դեպքում աշխատում էին սեփականության իրավունքը տարածել նաև եկեղեցու վրա: Արքայական և իշխանական տների ներկայացուցիչներն անդամագրվում էին հոգևոր դասին և իրենց համար ապահովում բարձր պաշտոններ հոգևոր նվիրապետության կառույցում: Այսպես Ներսես արքեպիսկոպոս Լամբրոնացին իր հորից՝ Օշինից, որպես ժառանգություն ստանում է Սկևռայի եկեղեցին ու վանքն իր հողատիրույթներով և 30 հազար դահեկան դրամ<sup>7</sup>: Հետագայում, երբ վերջ տրվեց հոգևոր պաշտոնների ժառանգականության սկզբունքին վերացավ նաև հոգևորականների անձնական-ժառանգական իրավունքը<sup>8</sup>: Այստեղից կարելի է եզրակացնել, որ առաջին ցուցակում տեղ գտած «տէր» հասկացությունը մատնանշում է սեփականատիրական իրավունքը վանքի և նրան պատկանող հողերի նկատմամբ: Դա ճիշտ հասկանալու համար մեջբերենք «Դատաստանագրքի» հետևյալ հատվածը. «Սահման էր՝ որ յառաջ չիշխէր եպիսկոպոսն վանացն. ապա թէմին մէն իշխէր, եւ զվաներն աշխարհական պարոնայք հոգային, եւ զով ուզէին՝ թողուին ի վանքն, ու զոր ոչ՝ նա հանէին: Նա գրած է հիմայ՝ որ ով լսաւ լինի սահմանիս, եւ յեպիսկոպոսն թողու զվանքն իր ապրնաւքն՝ նա աւրհնած է յԱստուծոյ...»<sup>9</sup>: Այսպիսով. «Տէր Կոստանդին՝ արքեպիսկոպոս Անաւարզոյ, և տէր Կաստաղոնին» բանաձևը ստանում է հետևյալ բացատրությունը: Սկզբնամասի «տէր» հասկացությունը մատնանշում է պատկանելությունը հոգևոր դասին,

<sup>7</sup> Բրոնազյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկիայան հայկական պետությունում 13-14-րդ դդ., Ե., 1973, էջ 212:

<sup>8</sup> Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, էջ 24:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 50:

իսկ «արքեպիսկոպոս Անաւարզոյ» մասը արտահայտում է թեմական իշխանությունը: «Տէր Կաստաղոնին» հատվածը բովանդակում է սեփականատիրական իրավունքը Կաստաղոն վանքի և նրան պատկանող տիրույթների նկատմամբ: «Դատաստանագրքի» վերոհիշյալ հատվածը արտահայտում է նաև եկեղեցու կազմակերպման հետագա միտումները, քանզի խրախուսում է այն անձանց, ովքեր հրաժարվում են սեփականատիրական իրավունքից հօգուտ եկեղեցու:

Հաջորդ խնդիրը կապված է «առաջնորդ» հասկացության հետ. «Տէր Վարդան՝ արքեպիսկոպոս Լամբրոնին, և առաջնորդ Սկևռուն»: Մենք հակված չենք կարծելու, որ գործ ունենք վանքի առաջնորդ՝ վանահայր իրողության հետ, քանզի այն այլ պաշտոն էր: Աղբյուրներում սովորաբար արքեպիսկոպոսական կամ եպիսկոպոսական թեմը հանդես էր գալիս նաև ուխտ անվանումով, ուստի թեմակալները ներկայանում էին «յառաջնորդութեան ուխտի» ձևով<sup>10</sup>: Փաստորեն ուխտը ներառում էր թեմը, նրան պատկանող եկեղեցիները, վանքերը, ինչպես նաև հավատացյալների (ներառյալ հոգևորականության) ամբողջությունը<sup>11</sup>: Այս տեսակետից օրինաչափ է, որ Սմբատ Սպարապետը Լևոն Բ-ի թագահանդեսին մասնակից հոգևորականության դասաշարը վերնագրել է. «Նախ սկիզբն արասցուք յառաջնորդաց»:

Այժմ փորձենք ներկայացնել Կիլիկյան Հայաստանի վարչաթեմական կառույցը:

Հայոց թեմագրություն	Գավառք	Լատին թեմագրություն
Արքեպիսկոպոսականք	Սելինոնդ	Ա. Տարսոն
Սիս	Սելեկիա	Սեբաստ
Տարսոն	Կոռիկոս	Սալլոս
Լամբրոն	Տարսոն	Տինե /Թինա/
Անաւարզա	Լամբրոն	Կոռիկոս
Սամեստիա	Բարձրբերդ	Պոտանդե

<sup>10</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց՝ Ա. Մաթևոսյան, Ե., 1984, էջ 88:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 379:



Եւ յիսկոպոսականք  
 Ատանա  
 Այաս  
 Բարձրբերդ  
 Կապան  
 Ծամնդաւ  
 Կոպիտառ  
 Մելեկիա  
 Ընկուզուտ  
 Հարգան  
 Մոլեւոն  
 Մաշկեւոր  
 Բերդուս  
 Մանվելնայ  
 Յոհնանց  
 Փիլիպպոսեան  
 Մեծքար  
 Մաշարդ  
 Տիանա  
 Կոկիսոն  
 Ցախուտ  
 Անդրիասեանց  
 Թիլ Համտուն  
 Ռորան  
 Անէ  
 Ճկեր

Մոլեւոն  
 Անդրիասանց  
 Մեծքարի  
 Միս  
 Ցախուտ  
 Հարգան  
 Ծամնդաւ  
 Անաւարգայ  
 Մարպայ  
 Կոպիտառ  
 Թիլ Համտուն  
 Ճկեր  
 Արսուս  
 Այաս  
 Մսիս  
 (Մոպսուեստիա)  
 Ատանա  
 Մաշկեւոր  
 Բերդուս  
 Ընկուզուտ  
 Մաշարդ  
 Մանվելանց.  
 /Մանվելնայ/  
 Յոհանանց  
 Փիլիպպոսեանց  
 Տիանոյ  
 Առակլեայ

Բ. Անարգաբա  
 Եպիփանիա  
 Ալէքսանդրիա  
 Փոքր  
 Եռինուպօլիս  
 Կամբիստաօլիս  
 Փլաւիաս  
 Հռոսոս  
 Կաստաւալ  
 Եգէաս  
 Միս<sup>12</sup>:

Հարկ է նշել, որ գաժառանգանկում գրանցվել են գաժառներ, որոնց տեղադրությունը Ղ. Ալիշանը փորձել է համապատասխանեցնել թեմական կառույցին, քանզի նրանց վերաբերյալ այլ տեղեկություններ չեն պահպանվել: Եթե Կիլիկյան Հայաստանի վարչական բաժանման համար ելակետ ընդունենք թեմական կառույցը, ապա արքեպիսկոպոսությունները պետք է համապատասխանեին վարչական ավելի խոշոր միավորների, (նահանգ, երկիր) իսկ եպիսկոպոսությունները՝ գաժառներին: Սակայն երկրի վարչաքաղաքական համակարգում այս համապա-

<sup>12</sup> Ալիշան Ղ., Միսուան. Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վնենտիկ, 1885, էջ 61-62, 65, 67:

տասխանությունը միշտ չէ, որ պահպանվում էր: Փաստորեն, հայոց եկեղեցու տեղագրական կազմակերպումը իր մեջ ներառում էր. նահանգ, գավառ, քաղաք, բերդ, գյուղ, որոնց համար սահմանվել էին նվիրապետության տարբեր աստիճաններ:

Ի տարբերություն եկեղեցական կառույցի, որը հայոց կաթողիկոսության շնորհիվ կազմակերպվում էր որպես աստիճանակարգություն աշխարհիկ նվիրապետության ձևավորումը՝ անկախ նրանից, որ Կիլիկիայում հայ իշխանները վաղուց էին հաստատվել կապված է Ռուբինյան իշխանության հիմնադրման հետ: Այս տեսակետից աշխարհիկ նվիրապետությունը կարելի է ներկայացնել երկու՝ իշխանական և թագավորական համակարգերով: Անկախ նրանից, թե աշխարհիկ նվիրապետության կազմակերպման հիմքում ինչ հատկանիշներ էին դրվում (վարչական, հողային, դատական, ռազմական, հարկային), նա առաջանում էր որևէ կենտրոնի շուրջ: Մինչև Ռուբինյանների իշխանության վերջնական հաղթանակը Կիլիկիա տեղափոխված հայ իշխանների մի մասը ներառվել էին բյուզանդական կայսրության աստիճանակարգության մեջ<sup>13</sup>: Պարզ է, որ պաշտոնները և համապատասխան տիրույթները տրվում էին որոշակի, մասնավորապես՝ ռազմավարչական ծառայության դիմաց: Տարածքները սովորաբար տրվում էին ոչ թե պայմանական, այլ ապայման (*dominium directum*) իրավունքով, ուստի հողակալը ստանում էր սեբաստոսի կամ պանսեբաստոսի վարչական աստիճանը, որը հաստատում էր նրա իրավունքները և պարտավորությունները: Փաստորեն, Կիլիկիայում հաստատված իշխանները այս կամ այն կարգավիճակով ներառվում էին կայսրության աստիճանակարգության մեջ, իսկ մյուս կողմից աշխատում էին տեղերում ձևավորել տարածքային հատվածական նվիրապետություններ:

Պատմականորեն որոշ պետություններ առաջացել են նվաճման ճանապարհով: Այսպես է առաջացել նաև Կիլիկյան Հայաստանը: Պետության տարածական ընդարձակման համար Ռուբինյանները կարող էին ընտրել. ա/ ռազմական գործողություններ, բ/ ռազմաքաղաքական դաշինքներ, գ/ իշխանության սրբագործում, որոնցից յուրաքանչյուրն

<sup>13</sup> Հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 255:

իր կնիքն էր դնում նվիրապետության ձևավորման և կառուցվածքի վրա: Կիլիկիայում ձևավորված աշխարհիկ նվիրապետությունը կարելի է ներկայացնել որպես սանդղաձև-կարգավիճակային աստիճանակարգություն: Առաջինը սովորաբար առաջանում է բռնի ճանապարհով, քանի որ սանդղաձևի ձևավորման ժամանակ ավելի ուժեղ հատկանիշները իրենց են ենթարկում թուլերին, մինչդեռ երկրորդի ժամանակ դրանք միավորվում են այլ ճանապարհով, ուստի պահպանում են որոշակի կարգավիճակ:

Եթե փորձենք ընդհանուր հայտարարի բերել աշխարհիկ նվիրապետության կազմակերպման հատկանիշները, ապա կարելի է առանձնացնել. ա/ հասարակության կազմակերպման ռազմա-աստիճանակարգված բնույթը, բ/ վարչական բաժանման երկակի կամ եռակի սկզբունքը, գ/ բազմասանդղաձև աստիճանակարգությունը:

Կիլիկյան Հայաստանում աշխարհիկ նվիրապետության կազմակերպման և նրա կառուցվածքի մասին քիչ թե շատ որոշակի պատկերացում կարող ենք կազմել Լևոն Բ-ի թագադրության հանդեսին մասնակցած իշխանների դասաշարի ուսումնասիրությունից<sup>14</sup>: Այն, որ Կիլիկիայում հասարակության կազմակերպման գերակա սկզբունքը ռազմականն էր, վկայում է դասաշարի ներկայացման երկու հատկանիշը.

ա/ գործակալություններից ներկայացված են միայն նրանք, որոնք կապված են ռազմական գործի կազմակերպման հետ

բ/ բերդը առաջին հերթին հանդես է գալիս որպես ռազմական միավոր:

Իշխանների ներկայացման ձևը իր մեջ պարունակում է երկու սկզբունք՝ վարչական. «Իշխանն Հարունոյն Լեւոն» և ռազմական. «Պարոն Լեւոն՝ տէր Հարունոյն»<sup>15</sup>: Երկրորդ հատվածը մատնացույց է անում սեփականատիրական իրավունքը բերդի նկատմամբ: Նույն ժամանակահատվածում Ֆրանսիայում բերդատերերը ևս հանդես էին գալիս նման (*dominus, sir*) տիտղոսներով: Սիր հասկացությունը շատ հաճախ

<sup>14</sup> Արշամյան Յ., Կիլիկյան Հայաստանի բերդատեր իշխանները XII դարի վերջին և XIII դարի սկզբին, «Բանբեր Երևանի համալսարանի», N 3, Ե., 1994, էջ 50-52:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 50:

օգտագործվում է նաև հայկական աղբյուրներում<sup>16</sup>: Այստեղից կարելի է եզրակացնել, որ սիրը համարժեք է պարոնիմ, ուստի երկուսն էլ որոշակի իշխանություն ունեցող անձանց համար սահմանված դիմելաձև է: Փաստորեն աշխարհիկ նվիրապետության կազմակերպան հիմքը բերո՞ւմ է, ուստի դասաշարը սկսվում է. «որ էին բերդատերք» ձևով:

Այժմ փորձենք պարզաբանել իշխան հասկացության բովանդակությունը և նրա կազմակերպման ձևերը: Սմբատ Սպարապետի ներկայացրած դասաշարում տեղ գտած իշխաններին կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինում կարելի է ներառել այն իշխաններին, որոնք մտնում էին աստիճանակարգության մեջ միայն ռազմական կազմակերպման շնորհիվ: Երկրորդ խմբի մեջ մտնում էին այն իշխանները, որոնք ռազմականից բացի օժտված էին իշխանության այլ հատկանիշներով: Իշխան հասկացությանը հաջորդող տեղագրական անվանումը ապաստանում է երկու՝ բերդ, գավառ վարչական միավորների շրջանակներում, ուստի ունի ոչ միայն ռազմական, այլև քաղաքական բովանդակություն: Հասարակության ռազմական կազմակերպման այս ձևը հետագայում սկսվում է վերակառուցվել, քանզի այն չէր տեղավորվում կենտրոնաձիգ թագավորական իշխանության շրջանակներում<sup>17</sup>: Թագավորները սովորաբար անհնազանդ նախարարների տիրույթները բռնագրավում և միացնում էին «յարքունիս»:

Աղբյուրներում առկա տեղեկությունների սակավության պատճառով զգուշությամբ կարող ենք ձևակերպել այն կարծիքը, որ «տէր» հասկացությունը արտահայտում է ոչ միայն սեփականատիրական իրավունքը բերդի, այլև այնտեղ ապրող մարդկանց նկատմամբ: Այս երևույթը հատուկ էր Ֆրանսիային, որի շրջանակներում էլ ծնունդ էր առել ու ձևավորվել «castellanus» հասկացությունը<sup>18</sup>: Մենք հակված ենք ընդունելու, որ հասարակության կազմակերպման այս ձևը յուրահատուկ է եղել նաև Կիլիկյան Հայաստանին, որը կարող ենք հիմնավորել.

<sup>16</sup> Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վեներտիկ, 1956, էջ 222:

<sup>17</sup> Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, էջ 9-10:

<sup>18</sup> Жорж Дюби, История Франции. Средние века (987-1460), Москва, 2001, с. 76-119.

1. Կիլիկյան Հայաստանում առկա բերդերի քանակը (մոտ 112)<sup>19</sup> վկայում է, որ բերդը իրագործում էր պաշտպանական գործառույթ: Այս դեպքում ռազմական ուժերի նկատմամբ բերդատերը պետք է ունենար նաև այլ իրավունքներ: Թագավորության հանդեսի մասնակիցները այս տիպի բերդատերերն էին<sup>20</sup>:

2. Այս ենթադրության հիմնավորման համար հիմք կարող է ծառայել նաև իշխանների տարաբնակեցման և ռազմական կազմակերպման ձևը: Իշխանական տունը սովորաբար բնակություն էր հաստատում որևէ ամրոցում և տոհմի ավագի շուրջ համախմբվում էին ազգակցական կապերով կապված մարդիկ, որոնց հիմնական պարտավորությունը զինվորական ծառայությունն էր:

Այսպես ձևավորվում էր այն իրավունքները, որոնք կարելի է տեղավորել տեր հասկացության շրջանակներում: Փաստորեն Կիլիկյան Հայաստանում չստեղծվեց աշխարհիկ նվիրապետության կազմակերպման այնպիսի համակարգ, որը հնարավոր լիներ տեղավորել մեկ մոդելի շրջանակներում, ուստի այն պետք է ներկայացնել որպես փոխներգործության մոդել, որը բաղկացած էր տարբեր հատկանիշներով:

Կիլիկյան Հայաստանի աշխարհիկ և հոգևոր նվիրապետությունների կազմակերպման պատկերը ամբողջության մեջ ներկայացնելու նկատառումով անդրադառնանք Սսի 1307 թ. ժողովի դասաչարին.

#### Իսկ եպիսկոպոսը էին

Կոստանդին. Մեծ արքեպիսկոպոսն Կեսարու  
Յոհաննես. արքեպիսկոպոսն Տարսոնի  
Ստեփաննոս. արքեպիսկոպոսն Սերաստիու  
Կոստանդին. արքեպիսկոպոսն մայրաքաղաքին Սըսոյ  
Ստեփաննոս. եպիսկոպոսն աստուածապահ քաղաքին Տարսոնայ  
Ներսես. եպիսկոպոսն Տիանոյ  
Յոհաննես. եպիսկոպոսն Անարզաբոյ  
Յոհաննես. եպիսկոպոսն Այսոյ

Իսկ իշխանք որ կային ընդ արքային  
Լևոնի և թագաւորահօրն Հեթնոյ էին  
այսոցիկ  
Արքայորդիք թագաւորի հայոց պարոն  
Օշին  
տէրն Կապնոյ. եւ պարոն Ալինախ տէրն  
Լամբրոնի, եւ Տարսոնի  
Պարոն Օշին, սպարապետն Հայոց, տէր  
Կանչոյն  
Պարոն Սմբատ, մարաքախտն, տէր Ասկուռոյ  
Պարոն Ռէմունդն. սէնեսչալն, տէր Սիքալլուի  
Պարոն Վասակ, տէր Բերդկանն

<sup>19</sup> Ալիշան Ղ., Սիսուան, էջ 63-64:

<sup>20</sup> Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, էջ 82:

Ստեփաննոս. եպիսկոպոս Բարձրբերդոյ  
Բասիլիոս. եպիսկոպոս գաւառին Կապնոյ  
Գրիգորիոս. եպիսկոպոս Մարաշայ  
Թորոս. եպիսկոպոս Սաշկերին  
Յակոբ. եպիսկոպոս քերոտոյի տէր Գրիգոր  
կաթողիկոսին  
Յուսիկ. եպիսկոպոս Ստինգուլայ  
Վարդան. եպիսկոպոս Տօկոյ  
Անդրէաս. եպիսկոպոս Չարքանոյ  
Սիմէոն. եպիսկոպոս Կոպիտաոոյ  
Լևոն. եպիսկոպոս Ծամնդաւի  
Յոհաննէս. եպիսկոպոս Մարանդունեանց  
Ստեփաննոս. եպիսկոպոս դրան  
կաթողիկոսարանին  
Գեորգ. եպիսկոպոս  
Չայրապետ. եպիսկոպոս Ռորանի  
Նիկողայոս. եպիսկոպոս Կիպոսայ  
Կարապետ. եպիսկոպոս Սեծկերտոյ  
Վարդան. եպիսկոպոս Անոյ  
Փիլիպպոս. եպիսկոպոս Խորձենոյ:

Պարոն Ամբատ, տէր Ամբատակլային  
Պարոն Օշին, տէր Կոպիտաոոյ  
Պարոն Լիկոս, տէր Կիսառամու  
Պարոն Թորոս, զտիկ թագավորին դար-  
պասուն զխաւորն  
Պարոն Թորոս, պռաքսիմոս, և տէր Ճօֆէլ-  
կային  
Պարոն Լիկոս, տէր Կեռաշենոյ <sup>21</sup>:

Նախ և առաջ նշենք, որ դասաշարը թերի է և ամբողջովին չի արտահայտում ձևավորված իրավիճակը, սակայն այլ տեղեկությունների բացակայության պայմաններում նվիրապետությունների մասին պատկերացում կազմում ենք սրա միջոցով: Աշխարհիկ նվիրապետության կառուցվածքը թույլ է տալիս մի շարք եզրակացություններ անել.

ա/ ցանկում ներկայացված իշխանների կազմակերպման հիմքում դրված էր երեք՝ ռազմական, քաղաքական, վարչական հատկանիշներ

բ/ թագավորի մերձավոր ազգականները որևէ նշանակալից պաշտոն չէին զբաղեցնում

գ/ հայոց թագավորի քաղաքական ինքնիշխանության և տիրոջ ժխական կազմակերպման սահմանները չէին համընկնում:

Այսպիսով, յուրաքանչյուր քաղաքական համակարգ ձևավորվում է որոշակի միջավայրում և ժամանակաշրջանում, ուստի նրա հետ առնչվող խնդիրների ամբողջական ուսումնասիրության համար անհրաժեշտ է ճշգրտել պատմական միջավայրի և ժամանակաշրջանի սահմանները: Սա առավել կարևորվում է Կիլիկյան Չայաստանի համար, քանզի երբ հայերը ձեռնամուխ եղան պետականության ստեղծ-

<sup>21</sup> Կղ. Գալանոս, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Յոովմայ, հ. 1, Հոռոմ, 1650, էջ 459-460:

մանը երկրամասում արդեն գոյություն ունեին ձևավորված սոցիալ-քաղաքական և մշակութային կառույցներ: Այս դեպքում ճշգրտման կարիք ունի հայկական պետականության տիպարանության խնդիրը, քանզի այնտեղ համադրվել էին հայկական, բյուզանդական և արևմտաեվրոպական հատկանիշներ:

*ГАГИК АРУТЮНЯН*

*ЕГУ*

## **ОСОБЕННОСТИ ОРГАНИЗОВАНИЯ СВЕТСКОЙ И ДУХОВНОЙ ВЛАСТИ В КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ**

### **РЕЗЮМЕ**

Каждая политическая система образовывается в определенной среде и эпохе. Для изучения тех задач, которые к ней относятся, надо уточнить границы исторической среды и эпохи. Это наиболее важно для Киликийской Армении, так как когда армяне начали создавать государственность, там уже существовали сформированные социально-политические и культурные строения. В этом случае требуется уточнить задачу типологии армянской государственности, так как в нем были сопоставлены армянские, византийские и западно-европейские черты.

ՊԱՊԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ  
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ (1291-1344 թթ.)

XIII դ. ընթացող քաղաքական մի քանի իրադարձություններ շրջադարձային նշանակություն ունեցան Կիլիկիայի հայկական թագավորության առևտրական հարաբերությունների զարգացման համար: 1258 թ. նվաճելով Բաղդադը և կործանելով Աբբասյան խալիֆայությունը, մոնղոլներն արմատապես փոխեցին տարածաշրջանի ոչ միայն ռազմաքաղաքական իրադրությունը, այլև դարերի ընթացքում ձևավորված առևտրական ճանապարհների ցանցը: Արդյունքում՝ Կիլիկիան, ի դեմս իր գլխավոր նավահանգիստ Այասի, դառնում է Ասիայի խորքերից Միջերկրական ծով ձգվող առևտրական մայրուղիների կարևոր հանգրվան՝ ավելի թուլացնելով խաչակրաց նավահանգիստների համանման դերը:

1261 թ. Լատինական կայսրության կործանումից հետո Բյուզանդիան կրկին վերականգնվում է և աստիճանաբար սկսում ամրացնել իր դիրքերը Սևծովյան առևտրական համակարգում: Եթե Ջենովան, որը Բյուզանդիայի գլխավոր դաշնակիցն էր, բացառիկ արտոնություններ ստացավ Սև ծովում, ապա մյուս բոլոր առևտրական տերությունների համար Կ.Պոլսում առևտուր իրականացնելու համար սահմանվեցին բավական բարձր մաքսատուրքեր<sup>1</sup>:

Ռազմա-քաղաքական երրորդ խոշոր իրադարձությունը, որը մեծապես խթանեց Հայկական թագավորության առևտուրը՝ խաչակրաց Արևելքի անկումն էր: 1289 թ. Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունը նվաճում է Տրիպոլիին, 1291 թ. մայիսի 18-ին սուլթան Աշրաֆը գրավում

<sup>1</sup> Riley-Smith J., Government in Latin Syria and Commercial Privileges of Foreign Merchants, "Relations Between East and West in the Middle Ages", Edinburgh University Press, 1973, p. 117.



է Աքքան, իսկ մի քանի շաբաթ անց՝ Տյուրոսը, Սիդոնն ու Բեյրութը<sup>2</sup>:

XIII դ. առաջին կեսից պապերի և մոնղոլների ակտիվ շփումներն աստիճանաբար նոր բնույթ էին ստանում: Ինչպես սպասվում էր՝ Կիլիկիան դառնում է Արևմուտքի և Իրանի մոնղոլների ինչպես քաղաքական, այնպես էլ առևտրա-տնտեսական ծրագրերի իրականացման հիմնական դերակատարներից մեկը: Իհարկե, այդ համագործակցության նպատակը մահմեդական աշխարհն ընդհանուր օղակի մեջ առնելն էր՝ ենթարկելով այն քաղաքական և տնտեսական մեկուսացման: Դեռևս Յեթում Ա-ը (1226-1270) քաջ գիտակցում էր, որ մամլուքյան հզոր սուլթանությանը ճնշելու միակ իրատեսական հնարավորությունը տնտեսական շրջափակումն է: Նա խստորեն արգելել էր իր բնակիչներին եգիպտացիների հետ փայտի և երկաթի առևտուր կատարել<sup>3</sup>: Նշենք, որ Եգիպտոսի հացահատիկի մեծ պահանջարկը, որը Սև ծովով, կիլիկյան ու կիպրոսյան նավահանգիստներով հիմնականում ապահովում էին եվրոպացիները, բավական հզոր լծակ էր սուլթանությանը տնտեսական ճգնաժամի առաջ կանգնեցնելու համար: Պատահական չէ, որ 1260-ականների կեսերին Եգիպտոսում տիրող սովը<sup>4</sup> մեղմելու նպատակով՝ Բայբարսը, 1266 թ. արշավանքից հետո, Յեթում Ա-ից պահանջում էր հացահատիկ ներկրել կիլիկյան նավահանգիստներով<sup>5</sup>:

Աքքայի անկումից անմիջապես հետո պապությունն արգելք դրեց Եգիպտոսի և Ասորիքի քաղաքների հետ ընթացող առևտրական կապերի վրա<sup>6</sup>: Ինչպես Բոնիֆացիոս VIII-ի (1294-1303), այնպես էլ Բենեդիկտոս XI-ի (1303-1304) սահմանած արգելքները տարածվեցին, գլխավորապես, Եգիպտոսի համար ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքատեսակների ներկրման վրա: Մասնավորապես, Վենետիկին ու Ջենովային արգելվեց սուլթանությանը ռազմամթերք վա-

<sup>2</sup> Микаелян Г., История Киликийского Армянского государства, Е., 1952, с. 425. Տե՛ս նաև Սուբաֆյան Կ., Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Ե., 2001, էջ 45; Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, Ե., 2005, էջ 98, 113; Muir S., The Mamluke or Slave Dynasty of Egypt, London, 1896, p. 44; Lane-Poole S., A History of Egypt in the Middle Ages, London, 1901, pp. 285-287.

<sup>3</sup> Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 319:

<sup>4</sup> Lane-Poole S., նշվ. աշխ., էջ 273:

<sup>5</sup> Պարթել Յովհ., Ժամանակագրութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, էջ Կէ:

<sup>6</sup> Ashtor E., Levant Trade in the Later Middle Ages, Princeton N.J., 1983, p. 17.

ճառել: Իսկ 1292 թ. սահմանվել էր ևս մի արգելք, որով փորձ էր արվում կանգնեցնել ստրուկների վաճառքը Եգիպտոս<sup>7</sup>:

Արտաքուստ, այս արգելքներն ուղղված էին տնտեսապես թուլացնելու սուլթանությանը, ինչը հնարավորություն կտար Արևմուտքին խաչակրաց նոր արշավանք ձեռնարկել: Սակայն, առավել քան երբևէ, միջազգային քաղաքական հարաբերություններն անքակտոր են միախուսվում էին տնտեսական շահի հետ: Բավական է նշել, որ 1289 թ. (Տրիպոլիի անկման տարում) Վենետիկը և 1290 թ. (Աքքայի անկման նախաշեմին) Ջենովան առևտրական նոր պայմանագրեր են կնքում Եգիպտոսի հետ, որոնց հետևում են Արագոնն ու Աիցիլիան<sup>8</sup>: Իրենց կողմից սահմանած արգելքների միջոցով պապերն ահռելի եկամուտ էին ստանում: Օրինակ, այն առևտրականները, որոնք խախտում էին արգելքները պարտավոր էին մեծ գումարների հասնող տուգանք վճարել կաթոլիկ եկեղեցուն (պապին կամ նրա կողմից թույլտվություն ստացած եպիսկոպոսություններին), որն իբր այն պետք է օգտագործեր խաչակրաց արշավանքի նախապատրաստման համար<sup>9</sup>: 1302 թ. Վենետիկն ավելի շահավետ արտոնություններ է ձեռք բերում Կահիրեից<sup>10</sup>, իսկ Ջենովան շարունակում էր Եգիպտոսի հետ մեծ ծավալների հասնող ստրկավաճառությունը: Հիշատակելի է մի դեպք, երբ ջենովացի առևտրականը մեղադրվում էր սուլթանությանը 10000 ստրուկների վաճառքի համար, այն դեպքում, երբ մանլուքյան բանակը համալրվում էր հենց այդ ստրուկներով<sup>11</sup>: Հաճախ են դեպքերը, երբ Արևմուտքի վաճառականները սուլթանության տիրույթներ մեծ ծավալի ռազմամթերք են ներկրել<sup>12</sup>: Խաչակրաց նոր արշավանքը լուր պատրվակ էր: Եվրոպայի առևտրական գերտերությունների ձեռքում արգելքներն ուղղակի լծակի դեր էին կատարում սուլթանության վրա ժամանակ առ ժամանակ ճնշում գործադրելու համար, որոնց խստացման պայմաններում Եգիպտոսում ապ-

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Михайлян Г., նշվ. աշխ., էջ 425: Stü u ևալ Heyd W., Histoire du commerce du Levant au moyen age, Amsterdam, 1967, t. 1, p. 416; Ashtor E., նշվ. աշխ., էջ 5, 17, 20.

<sup>9</sup> Ashtor E., նշվ. աշխ., էջ 18, 21:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 28-29:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 8, 20- 23:

րանքների, հատկապես՝ սննդամթերքի գներն աննախադեպ աճում էին<sup>13</sup>։ Բավական հաճախ սուլթանությունը հայտնվում էր համատարած սովի պայմաններում։ Օրինակ, 1296 թ. սովի արդյունքում՝ Ալեքսանդրիան, առանց արևմտյան վաճառականների կողմից ապօրինի ներկրվող հացահատիկի, կարող էր նույնիսկ ամայանալ<sup>14</sup>։ Հայտնի է, որ Կահիրեում մամլուքների տիրապետության շրջանում շուրջ տասը մեծ սով է եղել<sup>15</sup>։

Միջազգային առևտրական հարաբերություններում Կիլիկիայի Հայկական թագավորության ծանրակշիռ դերակատարման ժամանակաշրջանը գրեթե համընկնում է արգելքների շրջանի հետ։ Եվրոպայի ծովային գերտերությունների, հատկապես՝ Վենետիկի հանրապետության համար, Կիպրոսը, ինչպես և Կիլիկիայի թագավորությունը վերածվում են ակտիվ միջնորդների սուլթանության հետ առևտրական կապերում։ Այսը, կիպրոսյան Ֆամագուստան, ինչպես նաև Ալեքսանդրիան դառնում են դեպի Եվրոպա բամբակի, շաքարի և բազմաթիվ այլ ապրանքների արտահանման գլխավոր կենտրոններ<sup>16</sup>։ Ասորիքում և այլ վայրերում մշակված բամբակը բերվում էր Այաս, որտեղից այն վեներտիկցի, ֆլորենտացի, ինչպես նաև կատալոնյան Նարբոննա քաղաքի վաճառականների կողմից արտահանվում էր Եվրոպա<sup>17</sup>։ Հիշատակվում է Թավրիզից Այաս մեծ քանակի մետաքսի ներկրման մասին, որն անհամեմատ ավելի բարձր որակ ուներ<sup>18</sup>։ Կիլիկյան գլխավոր նավահանգիստը ստրկավաճառության կարևոր միջնորդ էր։ Սևծովյան ավազա-

<sup>13</sup> Muir S., նշվ. աշխ., էջ 49: Տե՛ս նաև Soderberg J., *Prices in the Medieval Near East and Europe*, Stockholm, 2004, [www.iisg.nl/hpw/papers/soderberg.odf](http://www.iisg.nl/hpw/papers/soderberg.odf), p. 3.

<sup>14</sup> Ashtor E., նշվ. աշխ., էջ 21: Տե՛ս նաև Muir S., նշվ. աշխ., էջ 49:

<sup>15</sup> Soderberg J., նշվ. աշխ., էջ 7:

<sup>16</sup> Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 387: Տե՛ս նաև Михаелян Г., նշվ. աշխ., էջ 382; Ashtor E., նշվ. աշխ., էջ 24, 54; Day. J., *The Levant Trade in the Middle Ages. An extract from the Economic History of Byzantium: From the Seventh through the Fifteenth Century*, Dumbarton Oaks Studies, Washington, 2002; [www.doaks.org/etexts.html](http://www.doaks.org/etexts.html), p. 808; Otten-Froux Catherine, *Le commerce cilicien du XII<sup>e</sup> au XIV<sup>e</sup> siècle, Arménie entre Orient et Occident*, Paris, 1996, p. 136.

<sup>17</sup> Ashtor E., նշվ. աշխ., էջ 43:

<sup>18</sup> Карпов С., *Трапезундская империя и западноевропейские государства в XIII-XV вв.*, изд. Моск. унив., 1981, с. 32. Տե՛ս նաև Карпов С., *Итальянские морские республики и Южное Причерноморье в. XIII-XV вв.: проблемы торговли*, Москва, 1990, с. 115.

նից բերված ստրուկներն այստեղից տարվում էին Եգիպտոսի գլխավոր նավահանգիստներ Ալեքսանդրիա և Դամիետտա<sup>19</sup>: Արդեն 1290-ականներից կիլիկյան նավահանգիստներում սկսում են ավելի աշխուժանալ միջնադարյան առևտրի այնպիսի խոշոր կենտրոններն, ինչպիսիք են իտալական՝ Պիզա, Ֆլորենցիա, Պիաչենցա, Մեսինա Անկոնա, Սիենա, Ռավեննա, Ամալֆի, ինչպես և լոմբարդական քաղաքները, Բարսելոնան, Նարբոննան, Սևիլիան, Մայորկան, Մարսելը, Նիմը, Մոնպելյեն ու Մալթան: Հիշատակվում են նաև առևտրական շփումներ Լոնդոնի և Ֆլանդրիայի (Բրյուգե, Անտվերպեն) քաղաքների հետ<sup>20</sup>:

Հուլյան Իրանի խան Ղազանի և մամլուքների ռազմական բախումներից հետո պարզ դարձավ, որ մոնղոլական գերակայությունը Մերձավոր Արևելքում անխուսափելի կործանման է դատապարտված: Ազատվելով մոնղոլական վտանգից և տեղի տալով եվրոպական պետությունների ճնշմանը՝ սուլթանությունն, ի վերջո, 1305 թ. խաղաղության պայմանագիր է կնքում Հայկական թագավորության հետ, որի հետևանքով վերջինս շուրջ տասնհինգ տարի գերծ է մնում ավերիչ արշավանքներից<sup>21</sup>: Հարաբերական խաղաղության այս շրջանն անհրաժեշտ էր ինչպես Կիլիկիային ու Արևմուտքի առևտրական տերություններին, այնպես էլ մամլուքյան սուլթանությանը, որը պետք է վերականգներ պատերազմների հետևանքով քայքայված տնտեսությունը:

1308 թ. Կղեմես V պապն (1305-1314) էլ ավելի խստացրեց արգելքի պայմանները՝ սպառնալով այն խախտողներին զրկել քաղաքացիական բոլոր իրավունքներից<sup>22</sup>: Իսկ 1311-1312 թթ. նա լիազորեց Յուրդնկալ Ասպետներին՝ բռնագրավել բոլոր այն քրիստոնյաների նավերը, որոնք առևտուր են իրականացնում Եգիպտոսի հետ<sup>23</sup>: Նշենք, որ 1307 թ. Լևոն Դ-ը մոր արտոնագիր է շնորհում վենետիկցիներին, որով նրանք ազատվում էին մաքսատուրքից: Ինչպես նախկին շնորհագրերում, այնպես էլ այստեղ վենետիկը կրկին շեշտում էր Պորտեւլայով

<sup>19</sup> Heyd W., նշվ. աշխ., հ. II, էջ 83, 555-556.

<sup>20</sup> Ալիշան Ղ., Սիսուան, էջ 363,315,376: Տես նաև Heyd W., նշվ. աշխ., հ. II, էջ 87-88; Ashor E., նշվ. աշխ., էջ 39,43,44; Otten-Froux Catherine, նշվ. աշխ., էջ 137:

<sup>21</sup> Михаелян Г., նշվ. աշխ., էջ 435:

<sup>22</sup> Ashor E., նշվ. աշխ., էջ 19:

<sup>23</sup> Նույն տեղում:

ազատ առևտրական կապի վրա, քանի որ վենետիկցիները Կիլիկիայի տարածքով առևտուր էին իրականացնում Դամասկոսի և Ասորիքի մյուս քաղաքների հետ<sup>24</sup>: Արգելքների խստացմանը զուգահեռ՝ կիլիկյան նավահանգիստներում իրականացվող առևտրի ծավալները բավական մեծ արագությամբ սկսում են աճել: Հաշվարկները ցույց են տալիս, որ 1301 թ. վենետիկյան նավերի կողմից միայն Այաս ներկրված ապրանքաշրջանառության գումարը կազմել է 90000 ոսկի դուկատ<sup>25</sup>: 1312 թ. Այասում նստող վենետիկյան պայլ Գրիգորիո Դոլֆին իր հպատակներից ստանում էր կես տոկոս մաքս, որը նրան բերում էր 7200 ֆրանկ (կամ՝ 600 ոսկի դուկատ) եկամուտ. ստացվում է, որ վենետիկցիների տարեկան շրջանառությունը կազմել է մոտ 1.5 մլն. ֆրանկ (կամ՝ 120000 ոսկի դուկատ)<sup>26</sup>: XIII դ. վերջում և XIV դ. սկզբներին Արևելյան Միջերկրածովում Կիլիկյան Հայաստանի դերը մահմեդական աշխարհի և հարավ-եվրոպական պետությունների միջև իրականացվող առևտրում շատ ավելի մեծ էր, քան Կիպրոսի ու Կրետեի<sup>27</sup>: Ըստ միջնադարյան առևտրի հայտնի ուսումնասիրող Գ. Բրատիանույի՝ Այասն իր ծաղկման շրջանում գերազանցել է Պերային, որը փաստորեն այդ ընթացքում Սևծովյան առևտրի գլխավոր դարպասն էր հանդիսանում<sup>28</sup>: Իսկ հայտնի միջնադարագետ է. Աշթորի կարծիքով, Այասը XIII դ. երկրորդ կեսի և XIV դ.

<sup>24</sup> Langlois V., *Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupenièns*, Venise, 1863, p. 166. Տե՛ս նաև Ashtor E., *Այլ.*, էջ 56:

<sup>25</sup> Պետք է ավելացնել նաև լրացուցիչ այլ վենետիկյան նավերի շրջանառությունը, որն այս գումարի մեջ չի մտնում: Համեմատական կարգով նշենք, որ 1367թ. եգիպտական բոլոր նավահանգիստներից ջենովական նավերի կողմից արտահանման ապրանքաշրջանառության ծավալը կազմել մոտ 167 հազ. ոսկի դուկատ, իսկ, օրինակ, 1364 թ. Ջենովայի արտաքին առևտրի ողջ ծավալը կազմել է շուրջ 1 մլն. 570 հազ. դուկատ (ոսկի դուկատն իր ժամանակի ամենաթանկարժեք միջազգային դրամական միավորներից էր: Այն հատվում էր մաքուր ոսկուց և կշռում 3.452 գր.): Տե՛ս Ալիշան Ղ., Սիսուան, էջ 379: Տե՛ս նաև Ashtor E., *Այլ.*, էջ 44, 101:

<sup>26</sup> Ալիշան Ղ., Սիսուան, էջ 386: Տե՛ս նաև Ալիշան Ղ., Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 60: Բոռնազյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկիայի Հայկական պետությունում, Ե., 1973, էջ 263-264:

<sup>27</sup> Ashtor E., *Այլ.*, էջ 43:

<sup>28</sup> Bratianu G., *Recherches sur le commerce Génois dans le mer Noire du XIII-me siècle*, Paris 1929, pp. 161-162.

առաջին կեսի Լևանտի<sup>29</sup> առևտրի գլխավոր կենտրոնն է եղել<sup>30</sup>։ Չկարողանալով դիմակայել Այասի տնտեսական ներուժին՝ մամլուքները ձեռնամուխ են լինում Լաթաքիայի վերականգնման Ասորիքում, որը դարձրեցվեց կիլիկյան նավահանգիստն 1322 թ. ավերելուց հետո<sup>31</sup>։

Պապական արգելքների մեղմացման մեջ շահագրգիռ կողմերից մեկը Վենետիկյան հանրապետությունն էր, որը Ջենովայի կողմից դուրս մղվելով Սևծովյան տարածաշրջանից, ամբողջովին կլանվել էր մամլուքների հետ առևտրական կապերի ընդլայնմամբ։ Հայտնի են շատ դեպքեր, երբ վենետիկյան իշխանությունները դիմում են պապին՝ խնդրելով մեղմել սահմանված արգելքները<sup>32</sup>։ Խաչակրաց նոր արշավանքի կազմակերպումն, իրականում, միայն քողարկում էր արևմտյան միապետերի և հռոմի պապի շահադիտական նկրտումները։ 1321 թ. միջնադարյան հեղինակ և քաղաքական գործիչ Մարինո Սանուտոն հռոմիցի, որի նպատակն էր վճռական քայլերի դիմել մամլուքյան սուլթանության դեմ պայքարում, որտեղ կարևոր ռազմավարական նշանակություն էր տրվում Հայկական կիլիկիային։ Երկու տարի պատասխան չստանալով՝ 1323 թ. նա կրկնում է իր դիմումը։ Միայն 1326 թ. ժրագիրը քննադատական պատասխան է ստանում<sup>33</sup>։ Անշուշտ, տնտեսական շահն աստիճանաբար իր ձեռքն էր վերցնում արտաքին քաղաքականության ղեկը։ Շատ հաճախ պապության դիրքորոշումն ուրվագծվում էր միմյանց հետ կատաղի մրցակցության մեջ գտնվող Վենետիկի, Ջենովայի, Արագոնի և մյուս առևտրական տերությունների հետ ունեցած հարաբերությունների բովում։ Մասնավորապես, եթե Վենետիկի հանրապետության առևտրական ներուժը XIV դ. կախված էր Եգիպտոսի հետ ունեցած առևտրական կապերով, ապա Ջենովան, որի գործունեության

<sup>29</sup> Լևանտ (թարգմ. Արևելք) աշխարհագրական տերմինը շատ հաճախ տարածվել է արևելյան Միջերկրածովի, Սև ծովի, հունական կղզիների, ինչպես նաև ծովափնյա մահմեդական երկրների վրա։ Steu Day. J., նշվ. աշխ., էջ 807։

<sup>30</sup> Ashtor E., նշվ. աշխ., էջ 104։

<sup>31</sup> Otten-Froux Catherine, նշվ. աշխ., էջ 135։ Steu նաև Labib S., Egyptian Commercial Policy in the Middle Ages, "Studies in the Economic History of the Middle East, From the Rise of Islam to the Present Day", Oxford Un. Press, 1978, p. 67.

<sup>32</sup> Ashtor E., նշվ. աշխ., էջ 27-28։

<sup>33</sup> Atiya S., The Crusade in the Later Middle Ages, New York, 1970, p. 125.

հիմնական դաշտը Սևծովյան տարածաշրջանն էր, ամեն կերպ փորձում էր խոչընդոտել իր գլխավոր հակառակորդին:

1323 թ. Յոզիանենս XXII պապը արգելք է դնում Եգիպտոսի և Ասորիքի բոլոր քաղաքների հետ ընթացող նավագնացության վրա (արգելվում էին նույնիսկ ճանապարհորդությունները): Օրինախախտները պետք է վճարեին տուգանք՝ իրենց ապրանքների արժեքի կեսի չափով<sup>34</sup>: Նույն Յոզիանենս XXII-ը շուրջ 30000 ֆլորին է ուղարկում 1320 թ. մամլուքյան արշավանքից հետո Այասի շուտափույթ վերականգնման համար, որի առաջումն իրականացվեց միայն մի քանի տարի հետո<sup>35</sup>: Պապի ձեռնարկած արմատական քայլերի արդյունքում՝ Ալեքսանդրիայում դադարեցվեց Վենետիկի հյուպատոսության աշխատանքը: Կայացվեց վճիռ, որի համաձայն վենետիկյան համայնքների բոլոր բնակիչները մինչև 1324 թ. ապրիլը պետք է թողնեն իրենց տարածքները, իսկ չհնազանդվողները պարտավորվում էին մեծ գումարի տուգանք վճարել<sup>36</sup>: 1338 թ. Բենեդիկտոս XII պապը (1334-1342) մերժում է Վենետիկի խնդրանքը՝ հանել սահմանված արգելքները, սակայն 1344 թ.-ից պապական Կուրիան սկսում է արտոնագրեր շնորհել Եվրոպայի ծովային պետություններին, որոնք պետք է դրա դիմաց մեծ գումարներ վճարեին պապության գանձարան<sup>37</sup>: Պապությունն արգելքներն ամբողջությամբ չի վերացնում, այլ, աստիճանաբար մեղմացնելով՝ փորձում առավելագույնս օգտվել այդ եկամտաբեր լծակից: Նույն՝ 1344 թ. վենետիկցիները հինգ տարվա պայմանագիր են կնքում սուլթանության հետ՝ ձեռք բերելով նոր, շահավետ արտոնություններ<sup>38</sup>: Հայտնի է, որ այդ շրջանում եվրոպական հասարակության վերին խավի համար Լևանտյան առևտրական կապերը կենսական նշանակություն ունեին, որի ամբողջական դադարեցումն անընդունելի էր<sup>39</sup>:

Նշենք, որ մինչև Այասի կորուստը (1337 թ.) Հայկական թագավորության տարածքում իրականացվող առևտրի ապրանքաշրջանառու-

<sup>34</sup> Ashtor E., նշվ. աշխ., էջ 44:

<sup>35</sup> Ալիշան Ղ., Սիսուան, էջ 390: Տե՛ս նաև, Микаелян Г., նշվ. աշխ., էջ 454.

<sup>36</sup> Ashtor E., նշվ. աշխ., էջ 45-47:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 66:

<sup>38</sup> Heyd W., նշվ. աշխ., հ. II, էջ 44-46: Տե՛ս նաև Ashtor E., նշվ. աշխ., էջ 66-69:

<sup>39</sup> Ashtor E., նշվ. աշխ., էջ 47:

յունը մեծ ծավալների էր հասնում: Այդ են վկայում 1330-ականներին վեներտիկի, Ֆլորենցիայի, Սիցիլիայի և Հայկական Կիլիկիայի միջև ընթացող ակտիվ քաղաքական ու տնտեսական հարաբերությունները: Ըստ Ֆլորենցիայի առևտրական ներկայացուցիչ Ֆրանչեսկո Պեգոլոտտիի՝ Այասի գրավումից ընդամենը 4 տարի առաջ, այնտեղ աշխույժ առևտուր իրականացնող վաճառականները զգալի թիվ էին կազմում<sup>40</sup>: Սակայն արդեն 1341 թ. մի փաստաթուղթ Այասում վեներտիկցիների մասին վերջին հիշատակությունն է հանդիսանում<sup>41</sup>: 1347 թ. Այասի վերջնական անկումը<sup>42</sup> լուրջ հարված էր իտալական հանրապետությունների առևտրական գործունեությանն Արևելքում: Կորցնելով ողջ Ասիայից Միջերկրական ծով դուրս եկող լավագույն այլընտրանքային դարպասը՝ արևմտյան տերությունները, անխուսափելիորեն, սկսում են ավելի զարգացնել իրենց առևտրա-տնտեսական հարաբերությունները Եգիպտոսի սուլթանության հետ:

Այսպիսով, Հայկական Կիլիկիայի պետության առևտրա-տնտեսական հարաբերությունների բուռն զարգացման արտաքին քաղաքական նախադրյալները մեկ ամբողջական համալիր են կազմում, որտեղ Հռոմի պապերի կողմից սահմանված արգելքները բավական ծանրակշիռ նշանակություն ունեցան: Ավելի քան հիսուն տարի իրականացված արգելքների քաղաքականությունը, որի գլխավոր խնդիրը Եգիպտոսի սուլթանությանը տնտեսական շրջափակման միջոցով ծնկի բերելն էր, չհասավ իր վերջնական նպատակին: Իսկ խաչակրաց նոր արշավանքն այդպես էլ մնաց լուկ պատրանք: Նպատակ ունենալով իրականացնել ռազմա-քաղաքական մեծ ծրագիր, արգելքները վերածվեցին յուրատեսակ գործիքի միջազգային տնտեսական ու քաղաքական հարաբերություններում: Այդ ժամանակահատվածում Արևելքի և Արևմուտքի տերությունների միջև ընթացող բազմակողմանի դիվանագիտական շփումների մանրազնին ուսումնասիրությունը, մասնավորապես, ռազմա-քաղաքական հարաբերություններին զուգահեռ կնքված առևտրական պայմանագրերի ժամանակային հաջորդականությունը, թույլ է տալիս առավել

<sup>40</sup> Պտուկեան Զ., Կիլիկեան Հայաստանի դրամները, Վիեննա, 1963, էջ 45-46:

<sup>41</sup> Ալիշան Ղ., Հայ-Վենետ, էջ 41:

<sup>42</sup> Михаелян Г., նշվ. աշխ., էջ 464:



Ճշմարտացի գնահատական տալ տիրող միջազգային իրադրությանը: Մերձավորարևելյան տարածաշրջանում ուժերի հարաբերակցության կտրուկ շրջադարձի արդյունքում, արգելքների միջոցով օգտագործվող քաղաքական լծակն, ի վերջո, սպառում է իրեն: 1320-ական թթ. իրանյան մոնղոլների գերակայության վերջնական անկումից հետո տնտեսական շրջափակումը Եգիպտոսի սուլթանությանը սանձելու միակ հնարավորությունն էր, որի իրականացման միջոցների կորստի պայմաններում մասլուքներն անցնում են վճռական քայլերի, որոնցում Կիլիկիայի հայկական պետության կործանմանն առաջնահերթ նշանակություն էր տրված:

*ՅՕԳՐԱԵ ԴԵՎՕՐԳՅԱՆ  
ՈՒ ՈՒՆ ՐԱ*

## ПАПСКИЕ ЗАПРЕТЫ И ТОРГОВЛЯ КИЛИКИЙСКОГО АРМЯНСКОГО ГОСУДАРСТВА (1291-1344)

### РЕЗЮМЕ

Развитие торгово-экономических отношений Киликийской Армении имеет целый комплекс предпосылок. После падения опорных пунктов крестоносцев на сирийско-палестинском берегу Средиземного моря, в частности Акки, Бейрута, Сидона и Тира, Киликийская Армения стала следующей станцией Западных государств для реализации своих политических и экономических планов. После падения Акки (1291 г.) папство установило запрет на торговлю с мамелюкским Египтом и его владениями на сирийском берегу. Главная целью было экономическая блокада Египетского Султаната и реализованне нового Крестового похода. Для итальянских и других европейских морских держав, киликийские порты, особенно Айас, совместно с Кипром стали главными посредниками в торговле с мамелюками и сирийскими городами. В течение короткого времени торговый товарооборот в Айасе достиг до огромных размеров. Хотя запреты были лишь инструментом в руках папы и европейских государств и не реализовали свою главную цель, но они стали одним из главных стимулов в развитии торговых отношений Киликийской Армении.

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ ՊԱՅՊԱՆԱԾ ԱՎԱՆԴԱՋՐՈՒՅՑՆԵՐԻ  
ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ստեփանոս Օրբելյանի (XIII դ. կես - XIV դ. առաջին կես) «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի աղբյուրները բազմազան են և բազմաբնույթ. հայ մատենագրություն, հոգևոր հայրերի ճառեր ու ներբողներ, վիմագրեր, թագավորական, իշխանական ու եկեղեցական վավերագրեր և այլն: Դրանց շարքում յուրահատուկ տեղ ունեն բանահյուսությունը և ավանդագրույցները՝ հոգևոր հրաշքների, սուրբ Գրիգորիսի Աջի և գավազանի, Խաչափայտի մասունքի, սրբուհի Շահանդուխտի մասին:

Հայ միջնադարյան պատմագրությանը բնորոշ էր պատմական իրադարձությունների շարադրանքին բանահյուսության և ավանդագրույցների զուգադրումը: Բացառություն չի կազմում նաև Ատեփանոս Օրբելյանի երկը: Որպես Սյունյաց մետրոպոլիտ և եպիսկոպոսապետ, Ստեփանոս Օրբելյանը ընդունել է Հայ եկեղեցու առաքելական հաստատության պատմականությունը: Պատմելով, որ հայերից առաջինը քրիստոնեությունը ընդունեցին սյունեցիները Ս. Բարդուղիմեոս առաքյալի միջոցով, նա պատմական փաստերը հագեցրել է մի ավանդագրույցով, որի համաձայն Որդվատ գյուղով ամեն տարի դաշտերն ու այգիները ոռոգող վնասակար ջուր էր հոսում, որը խափանվում է Սուրբ առաքյալի աղոթքներով:

Սյուն դրվագը Մանուկ Գրիգորիսի Աջի՝ Գանձասարի վանք տարվելու վերաբերյալ պատմության հետ մեկտեղ նրա գավազանի մասին հիշատակությունն է: Հնուց Գրիգորիսի գերեզմանն Ամարասի եկեղեցում էր, ուստի այնտեղ էր նաև նրա գավազանը: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ 1292 թ. Բայտու խանը, որը քրիստոնյա էր, սակայն խաբվելով իր զորագլուխներից դարձել էր մահմեդական, էլիկունի եղբոր՝ Տարսայիճի որդուն՝ Ջալալին ուղարկել էր Ամարաս, որպեսզի այնտեղից նա բերի Ս. Գրիգորիսի գավազանը, ինչպես նաև՝ 36 ակերով ոսկի խաչը: Ըստ պատմիչի՝ այդ ժամանակ այդտեղ էր գտնվում բյուզան-

դական արքայադուստր Դեսպինան՝ Աբաղա խանի կինը: Նա դաստիարակել էր Բայտուլին՝ որպես որդեգրի: Վերջինս, ընդառաջելով Դեսպինայի խնդրանքին, նրան է տալիս խաչը և գավազանը, իսկ նա էլ դրանք ուղարկում է կայսերական մայրաքաղաքը՝ Կոստանդնուպոլիս: Այսպիսով, Արցախ աշխարհը զրկվեց թանկագին այդ գանձից<sup>1</sup>:

Ստեփանոս Օրբելյանը Խաչափայտի մի մասունքի մասին արժեքավոր պատմական տեղեկություն է պահպանել: Պատմելով 839 թ. Սյունիքի հոգևոր կենտրոն դարձած Տաթևում Փիլիպպե իշխանի և տեր Դավիթ Բ եպիսկոպոսի (854-861) օրոք եկեղեցու կառուցման, Սյունյաց Սմբատ Բ թագավորի հրամանով՝ տեր Դավիթնե եպիսկոպոսի (1002-1054) օրոք վերականգնման, իսկ հետագայում իր իսկ՝ Ստեփանոս Օրբելյանի առաջնորդության ժամանակ կրկին վերաշինման մասին<sup>2</sup>, նա հիշատակել է, որ իրենք գտան Ս. Գրիգոր Լուսավորչի նշխարը՝ դրված մի փայտե փոքրիկ տուփի մեջ, փակված և կապարե կնիքով կնքված: Շինարարությունը ավարտելուց հետո, այն դրեցին Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու խորանի մեջ: 1297 թ. Արիտ գյուղը վերադարձվում է Տաթևի վանքին: Պատմիչը գրում է. «Դարձեալ յառաջ քան զայս բերեալ էին ի գաւառէն Արծախայ զհրաշագործ նշանն աստուածընկալ խաչի...»<sup>3</sup>: Այս սուրբ մասունքի պամության արմատները դարերի խորքում են:

Խաչափայտը, որի վրայ խաչել էին Քրիստոսին, ժամանակին գտել էր Կոստանդիանոս Ա Մեծ կայսեր մայրը՝ Դեղինե թագուհին: Խաչափայտի և նրա մասունքների մասին ժամանակի ընթացքում բազում ավանդություններ են հյուսվել:

VII դ. 20-ական թթ. սկզբներին Դերակ կայսրը Պարսկաստանի դեմ մղվող պատերազմի գաղափարական հիմքում դրել էր պարսիկների կողմից 614 թ. գերեվարված Խաչափայտի ազատագրման գաղափարը: 629 թ. Խաչափայտը ազատագրելուց հետո, Չայաստանի ճամ-

<sup>1</sup> Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վարդապետ Շահնազարեանց, հ. Բ, Փարիզ, 1859, էջ 218:

<sup>2</sup> Գրիգորյան Գր., Գալստիանյան Ս., Սյունիքի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Ե., 2001, էջ 118, 253:

<sup>3</sup> Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, հ. Բ, էջ 233:

փով կայսրն ուղարկեց Կոստանդնուպոլիս: Սերեոսը մանրամասն նկարագրել է Խաչափայտի վերադարձի հետ կապված այն հոգևոր վերելքը, որով, ըստ ժամանակակիցների, սրբագործվում էր Չերակլի հաղթանակը Պարսկաստանի հանդեպ<sup>4</sup>: 631 թ. սեպտեմբերի 14-ին Չերակլ կայսրը Խաչափայտը մեծ հանդիսավորությամբ վերադարձրեց Երուսաղեմ և կանգնեցրեց իր տեղում, որով հաստատվեց Վերացման Խաչի կամ Խաչվերացի տարեկան տոնը<sup>5</sup>: Խաչափայտի հետ կապված են հայկական մի շարք ավանդություններ: Վարագա հայտնության պատմության մասին ազգային ավանդությունը պահպանվել է Մովսես Խորենացու, Հովհան Մամիկոնյանի, Թովմա Արծրունու երկերում, Վարք սրբոցում և Հայսմավուրքում:

Ստեփանոս Օրբելյանը գրում է, որ Աստվածը նկալ Խաչի հրաշագործ նշանի «համբաւ մեծամեծ հրաշիցն եւ զարմանագործ սքանչելեացն սփռեալ էր ընդ ամենայն աշխարհս: Եւ էր նա ի Կենսակիր փայտէն, որ ունէր յինքեան նիշ արեան ներկեալ յաստուածային կողիցն հոսմանէ, եւ պնդեալ յոսկում դուզնաքեայ պահարանաւ: Եւ ունէին զնա հայրենեօք թողունքն Դլենայ իշխանի, այն որ ունին եկեղեցի եւ բազում միաբանութիւն ի Տաթեւ»: Պատմիչը գրում է, որ «զպատճառ զնալոյ Աստուածը նկալ Սուրբ Խաչին ի Խաչէն այսպէս լուաք ի ստուգագէտ արանց»<sup>6</sup>: Խաղբակի որդի Դլեն իշխանը Սյունյաց Սենեքերիմ թագավորի և նրա քրոջ՝ Շահանդուխտ թագուհու ժամանակակիցն էր<sup>7</sup>:

Գարեգին Ա Հովսեփյանը նշել է. «Խաղբակի որդի Դլենը թեև կալվածներ ունի Սյունյաց աշխարհում կամ Բաղաց թագավորության մեջ, բայց նրա և ժառանգների բնագավառը Արցախումն է, Ջալալ Դուլայի իշխանության մեջ: Ստեփանոս Օրբելյան այդ ցեղի հետագա սերունդ երեք եղբայրներից՝ որոնցից ավագը Հասան էր կոչվում, 1294 թ. զնել է նրանց հայրենական Աստուածը նկալ սուրբ նշանը»<sup>8</sup>:

<sup>4</sup> Պատմութիւն Սերեոսի, աշխ. Գ. Աբգարյան, Ե., 1979, էջ 131:

<sup>5</sup> Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Ե., 2001, էջ 798:

<sup>6</sup> Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, հ. Բ, էջ 233:

<sup>7</sup> Լույն տեղում, էջ 66:

<sup>8</sup> Գարեգին Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պողոշեանք Հայոց պատմութեան մեջ. Անթիլիաս, 1969, էջ 14-15:

Մի ճգնավոր ծնռանը գալիս է Դլենի գյուղը: Իր հետ բերած պարկում նա ունեւր «գայն աստուածեղէն եւ անկշիռ գանձ»: Ճգնավորը օթևանում է երեցի տանը, տանտիրուհուն խնդրում է պարկը դնել մի մաքուր տեղ մինչև իր գնալը: Քահանայի ընտանիքը վշտի մեջ էր, քանի որ գիշերն իրենց փոքր տղան մահացել էր, սակայն տոնի պատճառով նրա մարմինը դուրս չէին հանել: Երեխայի մայրը ճգնավորի մախաղը տանում դնում է նրա մոտ: Երեկոյան պաշտամունքի արարողութիւնից հետո, երբ մի փոքր քնցել էին, կենսատու փայտը վերակենդանացնում է տղային և նա ծայն է տալիս մորը: Մայրը քնից արթնանալով՝ զարհուրում է և արթնացնում երեցին: Նրանք իջնում են ներքնատուն և տեսնում վերակենդանացած երեխային՝ պարկի հետ խաղալիս: Երկար ժամանակ ապշած էին: Ճգնավորն իմանալով տեղի ունեցածի մասին, ծածուկ վերցնում է պարկն ու հեռանում: Երեցն ու նրա կինը ուշքի գալով գնում են գյուղապետի մոտ ու պատմում տեղի ունեցած հրաշքի մասին:

Լուրն անմիջապես տարածվում է գյուղում և բոլորը գալիս են մանկանը տեսնելու: Դլեն իշխանը, իր ծառաներն ու շինականները հետապնդում են ճգնավորին Աղավնո գետահովտով: Վերջինս տուփից հանում է փայտի շատ փոքրիկ մասը, դնում կնգուղի ծալվածքի մեջ, իսկ տուփը գցում մացառախիտ անտառի մի սալրի թփի մեջ և հեռանում: Հետապնդողները հասնում են այնտեղ և ծյան մեջ տեսնում են տուփը՝ փթթած գեղեցիկ ծաղիկներով ու կանաչած սաղարթներով: Բայց տուփը դատարկ էր: Ուստի նրանք շարունակում են հետապնդումը և ճգնավորին հասնում գետի եզրին: Տեսնելով նրանց, նա զայրանում է, կնգուղից հանում փայտը և գցում գետը: Հետապնդողները բռնում են ճգնավորին և պահանջում փայտն իրենց տալ: Սակայն տեսնում են, որ գետի ջուրը երկու մասի է ճեղքվել, իսկ մասունքը ցամաքած տեղում է, որից բորբոքված բոց էր ցոլանում դեպի վեր և թանձր ծխի նման զարմանալի բույր էր տարածվում շրջակայքում: Մարդիկ համակված ահով ու խնդությամբ, մտնում են ջուրը, վերցնում *փրկական փայտը* և դնում տուփի մեջ ու վերադառնում գյուղ: Իսկ ճգնավորը, ողբալով գնում է նրանց ետևից, սակայն հուսահատվելով, անիծում է Դլենի տունը և հեռանում այնտեղից:

Այդ օրվանից ի վեր մասունքը դառնում է Դլենի տոհմական սեփականությունը: Ստեփանոս Օրբելյանը շարունակում է. «Յետոյ աստուածասէր եւ բարեպաշտ մեծ իշխանաց իշխան Ջալալ<sup>9</sup> շինէ եկեղեցի մի Գիշերածոր անուն. եւ կազմէ պահարան յարծաթոյ. եւ անդ բնակեցուցանէ»: <sup>10</sup> XIII դ. վերջում, երբ Սյունիքի հոգևոր թեմի առաջնորդն էր Ստեփանոս Օրբելյանը, Դլենի թոռները՝ Հասանը իր երկու եղբայրներով, սարսափելի աղքատությունից վաճառեցին սուրբ մասունքը: Ստեփանոս Օրբելյանը նրանց վճարում է հինգ հարյուր դահեկան, նաև շատ ուրիշ պարգևներ է տալիս: Մասունքի համար նոր պահարանիկ են պատրաստում ոսկուց ու արծաթից, ինչպես նաև խաչ ոսկուց: Վրան ամրացվեցին «ակներ՝ չափազանց թանկագիններից...»: Սեջտեղի թանկագին քարի տակ դրեցին փրկչական փայտը, որը փոսիկների շուրջ ուներ մանրատառ գիր: Ստեփանոս Օրբելյանը հետևյալ մակագրությամբ էր արել. «Աստուածընկալ այս սուրբ նշանը՝ պատրաստուած Սիւնեաց եպիսկոպոս տէր Ստեփանոսի կողմից, յաւիտեմապէս հաստատուած պիտի մնայ Նորավանքի այս սուրբ եկեղեցում»<sup>11</sup>, 1294 թ. Հայոց Գրիգոր է Անավարզեցի կաթողիկոսի (1293-1307) օրոք:

Հաջորդ դրվագը իշխան Վարազ-Տրդատի դստեր Շահանդուխտի մասին է (IX դ. առաջին կես): Ավանդական պատմության ոճով է սկսվում այս շարադրանքը. «Ով եղբայրներ, ցանկանում եմ ձեզ պատմել այն զարմանալի հրաշքի մասին, որ այն ժամանակ եղավ աստվածային տնօրինությամբ»:

Ինչպես հաղորդում է պատմիչը, այդ ամենի մասին ինքը տեղեկացել էր Շահանդուխտի գրած մի նամակից: Վարազ-Տրդատի դուստր Շահանդուխտին հարս խնդրեցին Թորգոմյան տնից: Նա հայրենի տնից գնաց հարս դառնալու «հայկազուն իշխանացն»: Շահանդուխտի ճանապարհը անցնում էր Բաղաց գավառով, մի ապառաժտո վայրով, որտեղ մի քարածայռի փլվածք էր՝ ահռելի խորությամբ, որն անդունդի նման ուղղված էր դեպի Տաթևի մեծ հայրապետանոցի կողմը: Այնտեղ

<sup>9</sup> Ա. Աբրահամյանը այն կարծիքին է, որ խոսքը Հասան-Ջալալ Դուլայի մասին է (Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986, էջ 520, ծան. 1391, էջ 537, ծան. 1610):

<sup>10</sup> Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն մահանգին Սիսական, հ. Բ, էջ 234-236:

<sup>11</sup> Նույն տեղում:

դարանակալել էր Շահանդուխտի գեղեցկութեամբ գերված՝ Պարսկաստանից եկած, սուսերամերկ մահմեդականների մի զորախումբ, որը ցանկանում էր նրան հափշտակել: Նրանք հարձակվում ու անխնա կոտորում են Շահանդուխտին ուղեկցողներին: «Ապա տեսեալ զայն մեծահաւատ օրիորդին՝ գիտաց զպատճառն, եւ կնքեալ զինքն Տէրունեան նշանան, մտրակեաց զերիվարն եւ թռեաւ ընդ փրթուածս քարին»: Իր գրած նամակում պատմելով այս մասին, Շահանդուխտն ասում էր. «... լաւ համարեցայ քան ի ձեռն այլազգեացն զայլապատառ կորնչիլ, վասն Քրիստոսին իմոյ գահավէժ մեռանել. եւ յիշելով զսուրբ Աստուածածինն եւ զսուրբն Հռիփսիմէ՝ յանձնեցի զիս սուրբ Երրորդութեանն. եւ կնքեցի զողորմելի անձն իմ սուրբ խաչին. եւ դարձուցեալ զերասանակ երիվարին՝ թռեայ ընդ քարս. եւ ապա յահագին շնչմանէ հողմոյ եւ աներեւոյթ զօրութեամբ իջայ իբր կառօք ի խորութիւն ձորոյս ես եւ երիվարն իմ անվնաս... եւ իջեալ ի հեշտավայրն՝ նուիրեցի զանձն իմ Քրիստոսի. եւ ուխտեցի այլ ոչ ելանել աստի մինչ ցվախճան իմ»: Այլազգիների խումբն ապշահար հեռացավ այդտեղից, իսկ Շահանդուխտը մի մատուռ շինեց, «եւ խցիկ մի»: Ինչպես ինքը՝ Շահանդուխտն է ասում. «Եւ կոչեալ զերանելի եպիսկոպոսն Սիւնեաց՝ յանձնեցի նմա զիս, եւ զամենայն ինչս իմ ետու ի ձեռս նորա՝ զկէս մասն բաշխել ի կարօտեալս եւ զկէսն տալ ի սուրբ եկեղեցւոյն ամենայն ձորովս, որ ի Շնէրոյ սահմանէն ի վեր մինչ ի Գինական գետն»: Ստեփանոս Օրբելյանը շարունակում է. «Եւ կացեալ ինքն անդէն՝ այլ եւս կուսանս ժողովեաց առ ինքն. եւ մեծամեծ ճգնութեամբ կեցեալ ամս Լ՝ վախճանի: Եւ երթեալ եպիսկոպոսին՝ դնէ ի հանգստի ի նմին տեղուջ զերանելի նշխարս սրբոյն. որոյ բարեխօսութեամբ խնայեցէ Քրիստոս ի տունս յայս եւ ի վիճակեալ սեպիական հաւատ սորա»<sup>12</sup>:

Այսպիսով, հայ միջնադարյան պատմագրությանը, սկսած Սովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի երկերից, բնորոշ էր պատմական իրադարձությունների շարադրանքը բանախյուսության և ավանդագրույցների միջոցով հարստացումը: Ստեփանոս Օրբելյանը շարունա-

<sup>12</sup> Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Կ. Ա, Փարիզ, 1859, էջ 207-210:

Կել է այդ ավանդույթը՝ սերունդներին թողնելով ավանդազրույցների արժեքավոր նմուշներ:

*ЭДУАРД ДАНИЕЛЯН  
ИИ НАН РА*

## **ИСТОРИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ СКАЗАНИЙ СОХРАНЕННЫХ СТЕПАНОСОМ ОРБЕЛЯНОМ**

### **РЕЗЮМЕ**

“История Сюника” Степаноса Орбеляна (сер. XIII в. - первая пол. XIV в.) имеет богатую источниковедческую базу. Среди разнообразных источников (исторические сочинения, лашидарные надписи, официальные документы царских, княжеские и церковных архивов и др.) армянский историк приводит также сказания, которые обогащают повествование в духе исторической эпохи.



ՈւՐՎԱԳԾԵՐ ՍՅՈՒՆԻՔԻ ԶԱՆԱԹԱՂԻ ՄԵԼԻՔՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

XV դ. կեսերից պարսկական իշխանությունները հակասումանյան նկատառումներով նպաստեցին Սյունիքում չորս մելիքությունների ձևավորմանը: Դրանցից ամենահայտնին Չաբանդ գավառի հյուսիսարևելյան և Աղահեճք գավառի արևելյան տարածքում ստեղծված Քաշաթաղի Մելիք-Չայկազյանների մելիքությունն էր: Այն ճանաչված է Քաշաթաղի կամ Խանածախի մելիքություն անուններով: Այդ ժամանակներից սկսած ձեռագրերի հիշատակարաններում Չաբանդ գավառանունն այլևս չի հիշատակվում, փոխարենը հաճախ ենք հանդիպում Քաշաթաղ անունը: Դ. Ալիշանը գրում է. «Չաբանդ որ մասամբ կամ բոլորով կոչի և Քշաթաղ և մաս համարի Ձանկեագորի»<sup>1</sup>: Նա Չաբանդի ամբողջովին մտած լինելը Քաշաթաղի մեջ հավանական չի համարում: Այդ կասկածն անհիմն չէ: Չաբանդ գավառի հյուսիս-արևմտյան տարածքները չեն մտել Քաշաթաղի մեջ: Որոտան գետի միջին հոսանքի մի քանի տասնյակ կիլոմետր ձգվող կիրճի գյուղերում (Խոտ, Շինուհայր, Չալիձոր, Երիցաթումբ և այլն) գրված ձեռագրերում շեշտվում է Կապան երկրանունը կամ Որոտան գավառանունը<sup>2</sup>: Լեոն գտնում է, որ Քաշաթաղի մելիքությունը գտնվում էր Չագարի (Աղավնո) գետի ավազանում<sup>3</sup>: Անշուշտ, Լեոն նկատի ունի գետի միջին և վերին հոսանքի ավազանը: Մելիքության արևմտյան մասն ընդգրկում էր Աղավնո գետին զուգընթաց դեպի հարավ հոսող Օիծեռվանից (Ձաբուղ) գետի ավազանը՝ ներառելով նաև գետի աջակողմյան բարձրադիր տարածքները և այնտեղ գտնվող գյուղերը (Խանածախ, Վաղատուր, Խոզնավար և այլն): Վերջիններս մտնում էին Չաբանդ գավառի մեջ: Քաշաթաղի մելիքության սահմանները վերջնականապես ճշգրտված չեն: Ամեն դեպքում այն

<sup>1</sup> Ալիշան Դ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 8:

<sup>2</sup> Ժամանակի պարսկական վավերագրերն օգտագործում են Դափանաթ և Օրոտն վարչական անվանումները:

<sup>3</sup> Լեո, Չայոց պատմություն, հ. Գ, Ե., 1946, էջ 504:

եղել է փոքրածավալ իշխանություն՝ նրանում հաշվվում էին գրեթե մեկ տասնյակ գյուղեր:

Քաշաթաղ տեղանունը սկզբնաղբյուրներում հիշատակվում է տարբեր տառադարձություններով. Առաքել Ղավրիժեցին այն անվանում է Քշտաղս, Քշաթաղ<sup>4</sup>, իսկ Լեոն՝ Քեշթաղ, Խշտաղ և Քշթաղ<sup>5</sup>: Հետաքրքիր է, որ պարսկական վավերագրերում այդ երկրամասն անվանվում է Գուշթասիֆ կամ Քուշթասիֆ<sup>6</sup>: Ատ. Օրբեյանը թվարկելով Սյունիքի գավառները՝ գրում է. «Հինգերորդը՝ Աղահեճ գավառը, որ այժմ կոչվում է Քաշաթաղ և Խոժոռաբերդ»<sup>7</sup>:

Խոժոռաբերդի տեղադրությունը ճշգրտված չէ: Քաշաթաղին հանգամանալից անդրադարձել է Ա.Ղարազյոզյանը<sup>8</sup>: Ըստ նրա Քաշաթաղ տեղանունը ստեղծվել է աշխարհագրական գործոնի ազդեցությամբ: Քաշաթաղ կամ Քաշի-թաղ տեղացիների խոսքով նշանակում է ցածրադիր տեղանքում գտնվող բնակատեղի: Որպես կռվան Ա. Ղարազյոզյանը նշում է Վերին-շեն բնակավայրի գոյությունը նույն տարածքում՝ Քաշաթաղի հարևանությամբ: Վերին-շեն կոչել են բարձրադիր տեղանքում գտնվող բնակավայրը, Քաշաթաղ կոչել են «քաշի»՝ ցածր վայրում գտնվող բնակավայրը<sup>9</sup>: Սակայն Ա.Ղարազյոզյանը Քաշաթաղը նույնացնում է Ղարաղշլաղ գյուղի հետ: Ա. Ղուլյանի կարծիքով Քաշաթաղը նախկին քրդաբնակ Սուլթանքենդն է ու դա հաստատում է այդտեղ Սելիք-Հայկազ Ա-ի ապարանքի ավերակների առկայությունը<sup>10</sup>:

<sup>4</sup> Առաքել Ղավրիժեցի, Պատմություն, թարգմ., առաջ. և ծանոթագր. Վ. Առաքելյանի, Ե., 1988, էջ 25, 206:

<sup>5</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 54, 523:

<sup>6</sup> Սատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրովարտակներ, կազմող՝ Հ. Փափազյան, պրակ 2-րդ, Ե., 1959, էջ 89-90: Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Ե., 1972, էջ 251:

<sup>7</sup> Օրբեյան Ստ., Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծանոթագր. Ա. Արահամյանի, Ե., 1986, էջ 70, 399: Պետք է կարծել, որ Քաշաթաղ կոչվում էր Աղահեճք գավառի հարավ-արևմտյան մասը, իսկ Խոժոռաբերդ կոչվում էր Աղահեճքի հյուսիս-արևելյան հատվածը:

<sup>8</sup> Ղարազյոզյան Ա., Սյունիքի Բաղք և Քաշունիք գավառանունների ստուգաբանության շուրջը, ԼՀԳ, 1978, թիվ 12: Տե՛ս նաև Карагезян А., Сюник, Нахчиван и Гохтин, Е., 2002:

<sup>9</sup> Карагезян А., նշվ. աշխ., էջ 81:

<sup>10</sup> Ղուլյան Ա., Արցախի և Սյունիքի մեկիքական ապարանքները, Ե., 2001, էջ 19-21:

Մ. Չասրաթյանը ևս նման կարծիք է արտահայտել: Բնակատեղին գտնվում է Աղավնո գետի աջակողմյան Օիծեռվանից վտակի ծախ ափին՝ Օիծեռնավանքից քիչ հարավ:

Մինչև օրս հարատևող համաժախ բնակավայրը գտնվում է Սյունիքի պատմական Չաբանդ և Աղահեճք գավառների սահմանագլխին, Գորիսից 30 կմ հեռավորության վրա<sup>11</sup>: Այստեղ XV-XVII դդ. իրենց գործունեությունը ծավալեցին Քաշաթաղի Մելիք-Չայկազյան տոհմի ներկայացուցիչները: Խանածախը մելիքանիստ է դառնում XVI դ. առաջին կեսին և դա, հավանաբար, արվել է պաշտպանական նկատառումներով: Քաշաթաղի հարավ-արևելյան սահմաններում մահմեդական իշխանությունները սկսել էին բնակեցնել քրդական քոչվոր ցեղերի, և հայ մելիքները նստավայր ընտրեցին Քաշաթաղից 10-12 կմ հեռու գտնվող անառիկ դիրք ունեցող Խանածախը: Խանածախ տեղանվան ստուգաբանության փորձեր եղել են: Խանածախ, Խոնածախ թե՛ Խնածախ: Ներկայումս ճանաչում է ստացել Խնածախը: Բայց չէ՞ որ Օրբելյանն օգտագործել է Խանածախը: Խանածախ է գրվել նաև 1647 թ. գյուղի կուսանաց անապատի միանձնուհի Մարիամի ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում<sup>12</sup>: Անընդունելի է նաև Խոնածախ ձևը, որն օգտագործել են Ղ. Ալիշանն ու Մ. Չասրաթյանը: Տեղանունը կապ չունի խունկ ծխելու կամ ծախելու հետ: Խանածախ տեղանունը կապ չունի նաև «խանին ծախված» կեղծ ու պարզունակ բացատրության հետ: Չին ու տոհմիկ Խանածախից բարբառային Խնածախին անցման լեզվական օրինաչափությունը համոզիչ ներկայացրել է Ալ. Մարգարյանը<sup>13</sup>: Բառը *ա* հոդակապով բարդություն է, որի առաջին բաղադրիչը խան-խոն՝ «ափսե, սինի, սեղան» բառն է, որը Չր. Աճառյանը գտնում է պահլավերենից փոխառյալ և որը կապ չունի հետագա դարերի թուրքերեն դանխան բառի հետ<sup>14</sup>: Բնակավայրը հնուց եղել է արհեստագործական

<sup>11</sup> Ստ. Օրբելյանի հարկացուցակում նշվում է որպես խոշոր՝ 20 միավոր հարկ վճարող բնակավայր:

<sup>12</sup> Ժ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Գ, Ե., 1984, էջ 256:

<sup>13</sup> Մարգարյան Ալ., Մի քանի տեղանունների ծագման մասին, ՊԲՅ, 1988, թիվ 4, էջ 126: Չետաքրքիր է, որ ծայրավորները սղված են նաև բնակիչների ինքնանվան մեջ. *խնծխեցի*:

<sup>14</sup> Աճառյան Չր., Չայերեն արմատական բառարան, հ. Թ, Ե., 1973, էջ 327:

կենտրոն: Այդ են վկայում պեղումներից հայտնաբերված բազմազան իրերը<sup>15</sup>:

Մելիքանիստ Քաշաթաղ ավանն իր անունը տվեց ողջ գավառին և մելիքությանը, թեպետ Քաշաթաղ երկրանունն ավելի վաղ ևս գործածական էր՝ ինչպես Ստ. Օրբելյանի մոտ: Տարածքի նախկին Աղահեճք անվանումն անցավ պատմության գիրկը: Մ. Հասրաթյանը Քաշաթաղի Մելիք-Հայկազյան մելիքական տունը սերած է համարում Սյունիքի Պռոշյան իշխանական տոհմից: Վերջիններս Վայոց Ձոր էին եկել Արցախից: Քաշաթաղի մելիքական տան հիմնադիրը համարվում է պարոն Հայկազը: Նա բնակություն հաստատեց Քաշաթաղ ավանում, որը թեպետ փոքր բնակավայր էր, սակայն ուներ գերադասելի կենտրոնական դիրք, մեղմ ու տաք կլիմա: Պարոն Հայկազը հաղթակյան Պռոշ Մեծ իշխանի ծոռն էր, «երևելի իշխանաց իշխող» և «ասպարապետ Հայոց» Ջուռ Պռոշյանի եղբոր որդին<sup>16</sup>: Մ. Օրմանյանը, նրանց սերած է համարում Ջուղայից<sup>17</sup>:

Մելիք-Հայկազ Ա-ն իշխել է 1450-1515 թթ. և թաղվել Քաշաթաղ ավանում: Նրա շինարարական գործունեությունից մեզ են հասել մելիքական ապարանքի ավերակները: 1950 թ. ապարանքն ուսումնասիրել է Մ. Հասրաթյանն ու գրել. «Հռչակավոր Ծիծեռնավանքից ոչ հեռու գտնվող Քաշաթաղ ավանի մեջ պահպանված երկհարկանի քարաշեն

<sup>15</sup> Խնկիկյան Օ., Պեղումներ Գորիսի շրջանում, ՊԲՀ, 1985, թիվ 3, էջ 164-176:

<sup>16</sup> Տես Կարապետ եպիսկոպոս, Նիւթեր հայ մելիքութեան մասին, պրակ Բ (Պօփեանք եւ Շահնագրեանք), Ա. Էջմիածին, 1914, էջ 94-95: Խաչենցի Վասակ խաղբակյանը XIII դարասկզբին Ջաքարյաններից որպես կալվածք է ստանում Վայոց Ձորի մի մասը և, Օրբելյանների պես, հիմնում ժառանգական իշխանություն: Պռոշ Մեծը (1223-1284) Վասակի որդին էր: Ի դեպ, Ջուռ անունը խանածախում հարատևել է, գյուղում հայտնի է Ջուռունց մեծ տոհմը:

<sup>17</sup> Նշելով պարոն Հայկազի և նրա հոր անունները՝ Մ. Օրմանյանը գրում է. «Անապատին (Հարանց Մեծ - Ա. Հ.) հիմնարկողներուն կարգին պիտի յիշենք նաեւ ոչ կրօնաւոր մէկ մը, Ջուղայեցի Հախնազարի որդի Հայկազն իշխանը»: (Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 2731): Գտնում ենք, որ սխալվում էր և Լեռն, երբ խոսելով Ն. Մոկացու ներքողի մասին, շեշտում է, որ Հայկազը և իր հայր Հախնազարը եղել են ջուղայեցի. «Այսպես նա տալիս է Նոր-Ջուղայի պատմության մի շատ հետաքրքրական էջը հանձնի Հախնազարի, որ Շահ-Աբբասի ծեռքով քվածներից մեկն էր, անշուշտ՝ վաճառական, և նրա որդի Հայկազնի, որ Շահ-Աբբասի սիրելին է դառնում արդեն ոչ թե իր վաճառական անվան այլ զինվորական ընդունակություններով և քաջությամբ» (Լեռ, նշվ. աշխ., էջ 372):

դրյակ-ամարաթի կառուցումը անտարակույս պատկանում է Մելիք-Յայկազ Ա-ին՝ XV դ. վերջերին»<sup>18</sup>: Քաշաթաղի, ինչպես նաև Խանածախի մելիքական ապարանքները ուսումնասիրել է Ա. Ղուլյանը<sup>19</sup>: Մելիքության կենտրոնը Խանածախ տեղափոխվելուց հետո էլ Քաշաթաղ ավանի դերը չի նվազում՝ այն շարունակում էր մնալ մելիքական նստավայրերից մեկը: Գյուղը ներկայումս վերակոչվել է Մելիքաշեն անունով:

Մելիք-Յայկազ Ա-ի հաջորդ Մելիք-Յախնազարը (1515-1551) թողվել է Խանածախում: Ուրեմն Խանածախը մելիքանիստ է դառնում Յախնազարի օրոք: Խանածախում կառուցվում է մելիքական դամբարան, իսկ Մելիք-Յախնազարի գերեզմանին կանգնեցվում է հուշակոթող: Մ. Յասրաթյանը գրում է. «Բարձրաճաշակ արվեստագետ-վարպետ ոմն Մտեփանոս արեղա 1551 թ. "կազմել էր" (կառուցել էր) Յախնազար իշխանի գերեզմանը, մի անօրինակ ձևով և շքեղությամբ: Հորիզոնական վիճակով դրված էր 7 աստիճանների վրա: Միայն քանդակներից ազատ երեսի (վերին մասի) հարթության վրա գրված էր հետևյալը. «Ես Սերավս կնգ սբ Խաչս: Կողակցին իմ Յախնազարին: Որ մեծ իշխան էր ի մեջ թագօրաց: Եվ որդին իմ Յայկազ կնցօ գեղիս առաջնորդ թվ. Ռ: Ես Մտեփանոս հպեղաս: Կազմեցի այս տապանեղ»:

Այս հոյակապ կոթողը շրջապատի հուշարձանների հետ պահպանվել էր անվթար մինչև 1930-1931 թթ. (ես տեսել էի 1926 թ. աշնանը)<sup>20</sup>:

Հուշարձանն այսօր ամբողջական չէ: Մատուռ-դամբարանի շինությունը մնում է, բայց չկան 7 աստիճաններն ու տապանաքարը, կառույցի պատերի արտաքին սրբատաշ քարերը պոկոտած են: Այն գտնվում է գյուղի Ս. Հռիփսիմե եկեղեցուց 35-40 մ արևելք՝ Վարդան Թունանյանի այգում: 2,35 մ x 4, 60 մ x 2,70 մ ներքին չափեր ունեցող թողակապ մատուռն անդուռ է: Երբ մատուռին կից տան բնակիչներին հարցրեցինք, թե ու՞մ դամբարանն է, նրանք պատասխանեցին, թե դա Մելիք-Շահնազարի գերեզմանի տեղն է: Թերևս շփոթել են Յախնազար-

<sup>18</sup> Յասրաթյան Մ., Պատմա-ինագիտական ուսումնասիրություններ, Քաշաթաղ-Խանածախ, Ե., 1985, էջ 158:

<sup>19</sup> Ղուլյան Ա., նշվ. աշխ., էջ 17-22:

<sup>20</sup> Յասրաթյան Մ., նշվ. աշխ., էջ 162:

Շահնագար անունները: Շահնագար-Նագար եղել է Սելիք-Յայկազ Բ-ի երկրորդ կնոջից ծնված երեք որդիներից միջնեկի անունը: Մատուռ-դամբարանից հյուսիս նույնպես եղել են մելիքական գերեզմաններ, որոնց մեջ և հավանաբար Սելիք-Յայկազ Բ-ինը, սակայն դրանք հիմա չկան:

Սելիք-Յայկազարը գյուղի հյուսիսային բարձր բլրասարի վրա իր հորեղբոր պատվին կանգնեցրել է 1,5 մ x 0,75 մ x 0,25 մ չափերով խաչքար: Խաչքարը խիստ վնասվել է: Գյուղի դպրոցի աշխարհագրության ուսուցիչ Ալեքսանդր Մուսայեյանի ջանքերով 1987 թ. ընկած խաչքարը կանգնեցվել է: Կողքին դրվել է կոտրված հին խաչքարի գլխամասը: Նորից տեղադրված քարարձանի կողքին փորագրված է 1581 թ., որը, կարծում ենք, հին խաչքարի վրա սխալ կարդացված թվականի արդյունք է: Այդ թվականին Սելիք-Յայկազարն արդեն հանգուցյալ էր:

Սելիք-Յայկազարից հետո Քաշաթաղի կամ Խանածախի մելիքության ղեկն անցնում է Յայկազ Բ-ին (1551-1621): Նրա օրոք օսմանյան թուրքերը Արցախի և Սյունիքի միջև ընկած ձորերում բնակեցնում են ռազմատենչ քրդական ցեղերի: Դա տեղի ունեցավ այն ժամանակ, երբ թուրք-պարսկական պատերազմի ընթացքում՝ 1586-1607 թթ. Արաքս գետի ձախ ավազանին տիրեցին թուրքերը:

Սելիք-Յայկազ Բ-ն չէր կարող անտարբեր մնալ մահմեդական ցեղերի բնակեցմանը: Նա երկար ու համառ կռիվներ է մղել: Սակայն թուրքական պետության դեմ կռվող մելիքի ուժերն անհատնում չէին: Նա նույնիսկ գերի ընկավ օսմանցիներին, տարվեց Գանձակ: Այդ մասին պատմվում է 1495 թ. գրված ավետարանի վերագնման ժամանակ արված հիշատակարանում. «...Դարձեալ յիշեցէք զպարոն Յայկազ աղէն, որ ազգն օսմանցու(ւո)ց նեղացուցին՝ բազում գանձս առին՝ ոսկի, եւ արծաթ, եւ հանդերձ, եւ ըմբռնեցին տարան (ի) Գանջայ, եղին ի գբին եւ ի բանդի, եւ անտի ազատեալ, թողեալ զտուն իւր, եւ գնացեալ զԱլախահան, եւ անկեալ (առ) շահ Ապասն: Եւ շահ Ապասն խիստ սիրեալ տուեալ խալաթ եւ պարոնութիւն երկրիս Քաշաթաղոյ որպես ինքն կամ էր զտասանորդն եւ զհարկն»<sup>21</sup>: Ուրիշ հայ մելիքների հետ Սելիք-Յայկազի Պարսկաստան հեռանալու մասին, վերոհիշյալ հիշատակարանից զատ,

<sup>21</sup> Յայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դար, հ. Ա, ե., 1974, էջ 206-207:

նշում է նաև Առաքել Դավրիժեցիմ<sup>22</sup>: Մելիք-Չայկազը Շահ Աբասի կողմից արժանանում է առանձնահատուկ ուշադրության և ստանում «Գոջա ասլան»՝ «Ծեր առյուծ» պատվավոր մականունը: Շահը Մելիք-Չայկազին մի հրովարտակով շնորհում է սադրիմիշին տիտղոսը, որը նշանակում է թագավորի մոտ առաջին տեղում նստող, գահերեց<sup>23</sup>: Մելիք-Չայկազի պարսից արքունիքում երևելի լինելու մասին է խոսում նաև Առաքել Դավրիժեցիմ<sup>24</sup>: Մելիք-Չայկազ Բ-ի հրամանատարությամբ պարսկական զորքերը շատ հաղթանակներ են տոնել թուրքերի դեմ:

XVII դ. սկզբին Սյունիքը Պարսկաստանի տիրապետության տակ անցնելուց հետո Մելիք-Չայկազ Բ-ն արքունիքից վերադառնում է իր ծննդավայրը և ձեռնամուխ լինում հայրենի եզերքի շենացմանը: Մակայն երկրի շենացման համար խաղաղ պայմաններ էին անհրաժեշտ, և իշխանը հասնում է այն բանին, որ Շահ Աբասը «աշխարհասաստ» հրաման է արձակում Մելիք-Չայկազ Բ-ի թե՛ քրիստոնյա, թե՛ մահմեդական հակառակորդների դեմ: 1609 թվակիր արքայական հրովարտակով Շահ Աբաս Ա-ն «լավագույն քրիստոնյա» Մելիք-Չայկազի հակառակորդներին նախազգուշացնում է. «...Ուստի, որոշեցինք, որ ոչ մի արարած չհամարձակվի օսմանցիների չարաբաստիկ ժամանակներում կատարված գործերի պատճառով հիշյալ մելիքին նեղություն տալ և անհանգստություն պատճառել, և թող զգուշանան անհնազանդությունից. այդպիսիք ենթակա են պատժի»<sup>25</sup>: Նա հովանավորչական գործունեություն է ծավալում իր մելիքության սահմաններից դուրս գտնվող հոգևոր-մշակութային կենտրոններում, ինչպես օրինակ, Չալիժորի Չարանց Մեծ անապատում: Եվ ի՞նչն է ուշագրավ. նա իր եռամյուս գործունեությունը սկսում է Շահ Աբասի վերոհիշյալ հրովարտակից հետո, մոտ 80 տարեկան հասակում: Նրա կյանքի վերջին տասնամյակի բարեգործությունների շարքում հիշատակվում են Չալիժորի Չարանց Մեծ անապատի հիմնարկումը (1608-1610), Ծիծեռնավանքի վերանորոգումը և պարսպի ամբողջացումը (1613), Յոջանցի անապատի հիմնարկումը (1615): Տե-

<sup>22</sup> Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 25:

<sup>23</sup> Րաֆֆի, երկեր հ. 10, Ե., 1964, էջ 371:

<sup>24</sup> Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 176:

<sup>25</sup> Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 2-րդ, էջ 89-90:

դին է մեջբերել Ն. Ակինյանի խոսքը նրա մասին. «Մելիք Հայկազն ինչպես բազկով քաջարի, նույնպես հոգևով ազնիւ էր, երկիւղած եւ աստուծապաշտ»<sup>26</sup>:

Նա հոգ է տանում իր մելիքության հոգևոր կենտրոն Ծիծեռնավանքի մասին ու կառուցում վանքը շրջափակող բարձր պարիսպը: Վանքի միակ՝ արևմտյան, դարպասի դրսի պատին Մելիք-Հայկազ Բ-ն թողել է 1613 թ. նորոգման չորս տողանոց արձանագրություն.

«Նորոգ

եցաւ պարիսպս ի ձեռն Հայ

կազի շխանիս ի առջնդու

թի Սկտչեպս թվ ՌԿԲ»<sup>27</sup>:

Մելիք Հայկազ Բ իշխանն է կառուցել նաև Խանածախի մինչև օրս կանգուն Ս. Հռիփսիմն եկեղեցին: Եկեղեցու երկարությունը 20 մետր է, լայնությունը՝ 11, թաղակապ է, տանիքը՝ քարաշար, առանձնանում է սպիտակ քարի գեղակիր խորաքանդակներով կամարակապ մուտքով, նույն քարով են շարված նաև պատուհանների եզրերը<sup>28</sup>:

Մելիք-Հայկազ Բ-ի օրոք է կառուցվել նաև Խանածախ գյուղի ջրատարը: Ջուրը բավականին հեռվից է բերվել, գյուղի ողջ երկարությամբ այն հատուկ ջրահավաք թունելով հասցվել է մինչև գյուղի հարավային ծայրը՝ մելիքի բաղնիքի կարիքները հոգալու համար: Բաղնիքի շինության պատերը նշմարվում են: Իսկ Մելիք-Հայկազ Բ-ի կառուցած ջրառատ աղբյուրից (քյահրիզ) մինչև օրս օգտվում են գյուղացիները: Մելիքի օգտագործած ընդարձակ տարածքը՝ ներառյալ աղբյուրը, առնված է եղել հաստ ու բարձր պարիսպի մեջ: Խանածախ գյուղի ջրամատակարարման համակարգն ուսումնասիրած Ն. Պապուխյանը գրում է. «Երբեմն իբրև բնակատեղ ընտրվել են այնպիսի վայրեր, որտեղ ջուր բերելու համար զգալի աշխատանք է կատարվել: Ուշագրավ օրինակ է Գորիսի շրջանի Խնածախ գյուղը՝ Մելիք-Հայկազյանների ուստանը, որ-

<sup>26</sup> Հ. Ներսէս վ. Ակինեան, Մովսէս Գ. Տաթևացի, Վիեննա, 1936, էջ 184:

<sup>27</sup> Հասարայան Ս., նշվ. աշխ., էջ 236:

<sup>28</sup> Սպիտակ քարը բերվել է բավական հեռվից: Եկեղեցու զանգակատունը կառուցվել է 1905 թ.: Պահպանվել է նաև եկեղեցու զանգը՝ 1859 թ. Թ. Թադևոսյանի նվիրատվական արձանագրությամբ:



տեղ խմելու ջուրը բերվել է բավական հեռվից, հողով ծածկված քարաշեն առվի միջոցով»<sup>29</sup>:

Մելիքության շրջանից խանածախ գյուղում պահպանված ամենից երևելի հուշարձանը մելիքական ամարաթ բնակելի տունն է կամ ինչպես գյուղացիներն են կոչում՝ բալախանան<sup>30</sup>: Ամարաթից 25-30 մետր դեպի ծորն իջնող զառիթափի վրա, ճանապարհի տակ եղել են մելիքական բանտ-քարանձավները<sup>31</sup>: Խանածախի մելիքական ապարանքի կառուցումը տարբեր ուսումնասիրողների կողմից վերագրվում է Մելիք-Յայկազ Բ-ին<sup>32</sup>: Կասկածանք է հայտնել միայն Մ. Չասրաթյանը. «Սա (Մելիք-Յախնազարը - Ա.Չ.) (ունեցել է) գուցե նույն վարպետների ձեռքով կառուցված, դարձյալ հարակից շենքով (ապարանք) խոնածախ - խնածախում, (որը) պահպանվել և հասել է մեզ»<sup>33</sup>:

Մելիքական առաջին ապարանքը Մելիք-Յայկազ Ա-ի կողմից կառուցվել է Քաշաթաղ ավանում: Այն ներկայումս խիստ վնասված վիճակում է, թեպետ որոշակի տպավորություն է թողնում: Ապարանքի վերակազմությամբ, շինության ուսումնասիրության գործով զբաղվել է Ա. Ղուլյանը:

Խանածախում XVI դ. երկրորդ կեսին Մելիք-Յայկազ Բ-ի կառուցած ապարանքը մեզ է հասել համեմատաբար ավելի լավ վիճակում: Յետագա փոքր-ինչ կառուցումներով կամ լրացումներով հանդերձ ապարանքից պահպանվել են երկու շինություն՝ կրկնահարկ դահլիճները և մի քանի մետր հեռու գտնվող գլխատունը: Առաջին հարկի դահլիճի չափերն են 3,9 մ x 6,2 մ x 3,9 մ, իսկ երկրորդ հարկինը՝ 3,9 մ x 6,6 մ x 3,65 մ: Գերանածածկ «հազարաշեն» առաստաղ ունեցող գլխատան չափերն են 6,0 մ x 7,0 մ:

<sup>29</sup> Պապուխյան Ն., Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Ե., 1972, էջ 16:

<sup>30</sup> Բալախանա պարսկերեն բառ է, թարգմանվում է վերնատուն: Բալախանան հարստության խորհրդանիշ էր: Խանածախում առ այսօր գործածական է բալախանի կարաս-անհատում կարաս արտահայտությունը:

<sup>31</sup> Խանածախ գյուղից ոչ հեռու կա Դատ-Մելիք անունով մի լեռ: Ըստ պահպանված բանավոր զրույցների, այդ լեռան վրա էր մելիքը պատժում օրինազանցներին:

<sup>32</sup> Ղուլյան Ա., նշվ. աշխ., էջ 23:

<sup>33</sup> Չասրաթյան Մ., նշվ. աշխ., էջ 158, 162:

Մելիք-Յայկազ Բ-ն ձեռնարկում և 1615 թ. ավարտում է Յոչանց գյուղի եկեղեցու և անապատի կառուցումը, ապահովում դրանց գործունեությունը: Յոչանցն (Յոչագ, Ղոչագ) անշուշտ մտնում էր Քաշաթաղի մելիքության մեջ: Գյուղը Ստ. Օրբեյանի հարկացուցակում նշված է Աղահեճ գավառում՝ Յունչաք անունով, որը 12 միավոր հարկ էր վճարում Տաթևի վանքին<sup>34</sup>: Նշանավոր մելիքի հորդորով է, որ Յալիժորի Յարանց Մեծ անապատից այստեղ են տեղափոխվում անապատական շարժման երկու երևելի գործիչներ՝ Կիրակոս Տրապիզոնցին ու Թումաս (Թումա) Տաթևացին:

Կիրակոս Տրապիզոնցին թաղվել է Յոչանցի անապատում, այդ մասին Առաքել Ղավրիժեցին գրում է. «Իսկ տեր Կիրակոսը, որ զնաց Յոչանց, այնտեղ մնաց կրոնական ժուժկալությամբ, նույն տեղում, Յոչանց գյուղի մոտ, իր անապատում վախճանվեց մեր թվարկության 1070 (1621) տարում...»<sup>35</sup>: Իսկ Թումա եպիսկոպոսը եղել է հայոց եկեղեցու Շամախու թեմի առաջնորդը (1660-1664): Մելիք-Յայկազ Բ-ի հովանավորությամբ կառուցված Ս. Սիմաս եկեղեցին կանգուն է<sup>36</sup>: Իսկ անապատը: Յնավայրն ուսումնասիրած Ա. Ղուլյանը նշում է, որ Առաքել Ղավրիժեցու հիշատակած անապատի հետքերը չեն մնում և «մնում է ենթադրել, որ այդ անապատի կառույցը հիմնովին ավերվել է և մեզ չի հասել»<sup>37</sup>: Բայց ազատագրված տարածքների հայկական հուշարձաններն ուսումնասիրող արշավախումբը Յոչանց գյուղից մեկ կիլոմետր հյուսիս գրանցել է XVII դ. կիսավեր ժայռափոր վանք: Կարծում ենք հենց այս ժայռափոր վանքն է (որպիսին կա և Խանածախում) եղել պատմիչի նշած «Յոչանց գյուղի մոտի» անապատը: Անապատի նավակատիկը տեղի է ունեցել 1615 թ.: Այդ իրադարձության առթիվ Ն. Ակինյանը գրում է. «Անապատին նաւակատիքը խմբուեցաւ 1615-ին, ի ներկայութեան բազմաթիւ եկեղեցականներու. Սովսես վարդապետը կը յիշէ զայն իւր առ Գրիգոր Կեսարացի թղթին մէջ այսպէս. «Սուրբ Խաչին տօնին նաւակատիս եղել նորակերտ եկեղեցւոյ, զոր շինեալ է բարե-

<sup>34</sup> Օրբեյան Ստ., նշվ. աշխ., էջ 399:

<sup>35</sup> Առաքել Ղավրիժեցի, նշվ. աշխ., էջ 207:

<sup>36</sup> Ժամանակին այնտեղ եղել է պահեստ, հացի փուռ:

<sup>37</sup> Ղուլյան Ա., նշվ. աշխ., էջ 164:

պաշտ աստուածատէր իշխանն Յայկազ ի իւր սեփական գիւղն»։ թեպէտ գիւղը յանուանէ չի յիշատակուիր, բայց-ինչպէս ինձ կը թուի-պէտք է նոյնացնել Յօջանց գիւղին հետ»<sup>38</sup>։ 1960 թ. Յոջանցի հնություններն ուսումնասիրելիս Ս. Բարխուդարյանը գյուղի եկեղեցու արևմտյան պատի սալ քարի վրա տեսել ու գրառել է 8 տողանոց մի արձանագրություն, որի վերջին երկու տողը եղել է եղծված. «ՅԱՆՈՒՆ ԱՅ. ԵՍ ՅԵԿԱԶՂ ԱՐԱՆՈՑԻՆ ՅԱՅՐԷՆԻ ԻՔՆ: Դ : ԲԱԺԻՆԻ : Ա: ԻՄ ԷՐ. ԵՏԻ ՎԻ ՎԱԽՍ ԸԱՏԻ ԵՓԱՆՈՍ...|...|»<sup>39</sup>։ Մակայն դժվար թե արձանագրության մեջ հիշատակված «ՅԵԿԱԶ»-ը նշանավոր մելիքի անունը լինի:

Մելիք-Յայկազ Բ-ի կյանքի ամենակարևոր ու մեծագույն գնահատանքի արժանի գործը անտարակույս եղել է Յալիձորի Յարանց Մեծ անապատի հիմնարկումին սատարելը:

Յալիձորի Յարանց Մեծ անապատը կառուցվել է 1608-1610 թթ.՝ հին Յալիձոր գյուղի դիմաց, Որոտան գետի աջ ափի հարթության վրա՝ թեպետ 1658 թ. ավերիչ երկրաշարժը ստիպել է անապատկաններին տեղափոխվել նոր վայր<sup>40</sup>։ Մելիք-Յայկազ Բ-ն ոչ միայն հովանավորել է համալիրի շինարարությունը, այլև մշտապես հոգացել է անապատականների կարիքները, սերտ կապերի մեջ է եղել անապատի առաջնորդների, մասնավորապես՝ կիսել Մովսես Խոտանանցու (ապագա կաթողիկոսի) գաղափարները, աջակից եղել բոլոր ձեռնարկներին: Նշանավոր մելիքի անապատի կայացման գործում խաղացած դրական դերը շեշտել են ինչպես ժամանակակիցները, այնպես էլ հետազոտողները: Ահա թե ինչ կարծիք է հայտնում Ն. Ակինյանը. «Մելիք Յայկազն իւր հովանաւորութեան տակ առած ըլլալով Մեծ Անապատն եւ անոր միաբանները, պաշտպանեց զանոնք կաթողիկոսներու եւ անոնց համախոհներու ոտնձգութիւններու առաջ: Առանց այդպիսի պաշտպանութեան կարելի չէր յուսալ, որ Անապատն ծաղկէր եւ բարգաւաճէր այն բազմաշփոթ դարուն»<sup>41</sup>: Յայրենասեր իշխանի գործունեությանը սիրով անդրադարձել նրա ժամանակակից, XVII դ. նշանավոր հայ բանաստեղծ Ներսես Մո-

<sup>38</sup> Յ. Ներսէս վ. Ակինեան, նշվ. աշխ., էջ 184:

<sup>39</sup> Բարխուդարյան Ս., Դիվան հայ վիճագրության, պրակ 5-րդ, Ե., 1982, էջ 194:

<sup>40</sup> Նոր անապատը կառուցվեց մի քանի կմ հեռու՝ Տաթև գետակի և Որոտան գետի միախառնման վայրից ոչ հեռու:

<sup>41</sup> Յ. Ներսէս վ. Ակինեան, նշվ. աշխ., էջ 187:

կացին (Բեդլու-բեխավոր մականունով): Նա Հալիժորի Հարանց Մեծ անապատի ամենաերևելի անապատականներից է, ծնունդով Մոկք գավառի Ասկնջավս գյուղից: Նա 1617-1621 թթ. անապատում դասավանդել է փիլիսոփայություն, ապա իր հետևորդ ու աշակերտ Մելիքսեթի հետ հեռացել Վանա լճի Լիմ կղզի, հիմնել անապատ և վեց տարի այն ղեկավարելուց հետո՝ մահացել: Մոկացու գրական ժառանգության մեջ կենտրոնական տեղ է գրավում Հալիժորի Հարանց Մեծ անապատի չորս հիմնադիրներին նվիրված երկարաշունչ ներբողը, ուր առանձնակի գովեստով, կենդանի շնչով է ներկայացված Հայկազ իշխանը՝ որպես «Անապատի սին»: Ներբողի բանաստեղծական արժեքի, նրանում արժարժված հայրենասիրական գաղափարների մասին դրվատանքի խոսքեր են ասել Լեոն, Ղ. Ալիշանը, Ն. Ակինյանը, Հր. Աճառյանը և ուրիշներ<sup>42</sup>: Ներբողում ներկայացված անուններից առաջինը Մելիք-Հայկազ Բ-ն է՝ Շահ Աբասի սիրելի ու քաջարի զորականներից մեկը: Քաջաթաղում Շահ Աբասի կողմից տրված իր անսահմանափակ իշխանությունը մելիքն օգտագործել է անապատի հիմնադիրներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար և այդ պատճառով նա համարվում է անապատի սյուն:

«Անապատի սին լինէր  
Եւ գրգեր գթով հայրական  
Մինչ յիշխանութեան միջին  
Ջանք դնէր անապատական...»

Ներբողում հայրենասիրությունն արտահայտված է հատկապես Մելիք-Հայկազ Բ-ի կերպարի միջոցով: Եվ ինչպես նկատել է Ա. Դուխանյանը. «Մելիք-Հայկազնի կերպարը ժողովրդի ազատագրման համար պայքարի ելած մարդու կերպար է՝ նման մեր միջնադարյան գրա-

<sup>42</sup> Ներբողն առաջին անգամ հրատարակել է Ղ. Ալիշանը: Այն ընդօրինակված է շուրջ տասը ձեռագրերում, և գրվել է Հալիժորի անապատի սան, ապագա կաթողիկոս Փիլիպոս Աղբակեցու պատվերով: Ներբողն հայտնի է երկու վերնագրերով. «Ներբողեան գովեստից չորեցունց արանցն» և «Օրհնեալ Տեր Յիսուս փրկիչ» և գրվել է 1621 թ.՝ հենց Սյունյաց կամ Հալիժորի Մեծ անապատում:

կանության մեջ կերտված հայրենասեր իրական-պատմական հերոսների կերպարներին»<sup>43</sup>:

Չետաքրքիր է, որ Հալիծորը չէր մտնում Քաշաթաղի մելիքության մեջ: Անկասկած այն պատկանում էր Տաթևի մելիքությանը, ուր իշխում էին Օրբեյանները: Անշուշտ որոշակի քաղաքական համաձայնություն է եղել երկու հայկական մելիքությունների միջև և Մելիք-Հայկազը Տաթևի մելիքության սահմաններում ազատ գործելու հնարավորություն է ունեցել: Գերադասվել է համազգային շահը:

Ներսես Մոկացիին ներքողի մեջ մեծ վշտով, բայց և հուսադրու՜մով է նկարագրել ժողովրդի սիրելի հերոս իշխանի մահը.

«Ահա ծեղ ծայն աւետեաց,  
Մփոփանաց և յուսադրական,  
Թէպէտ սերմանողքն անկան,  
Սերմանեալքն յոյժ արդիւնացան...»

Տգիտության ու խավարի մեջ խարխափող մարդկանց համար փրկության շող էր ոգու վերակենդանացման համար վառած այն խարույկը, որը բոցկլտաց Հարանց Մեծ անապատում: Այստեղ ձգնած և դաստիարակություն ստացած կրոնավորներն էին, որ անապատներ հիմնեցին Վանա լճի Լիմ և Կտուց կղզիներում, Շամքորի Չարեքագետում, Մևանա կղզում, Բարկուշատի Տանձափարախում, Քաշաթաղի Յոջանցում: «...Այս անապատը (Հարանց Մեծ անապատն - Ա.Հ.) եղավ բոլոր անապատների մայր և ծնող և հայ ազգիս լուսավորության առիթ», - հավաստում է պատմիչը<sup>44</sup>: Կուսանաց և հարանց անապատներ են ստեղծվում նաև Սյունիքի խնձորեսկ, Շինուհայր, Խանածախ, Գորայք-Գորիս բնակավայրերում:

Քաշաթաղի մելիքության հովանու ներքո Սյունիքի հոգևոր-մշակութային կենտրոնները ծավալում են աշխույժ, կրթական, մտավոր-մշակութային գործունեություն: XVI-XVII դդ. մեզ են հասել այդ կենտրոններում գրված ու նկարագարողված տասնյակ ձեռագրեր: Մելիք-Հայկազն ինքը գրի պաշտամունք ուներ և ինչպես արդեն նշել ենք, մեզ է

<sup>43</sup> Ներսես Մոկացի, Բանաստեղծություններ, աշխ.՝ Ա. Դուխանյանի, Ե., 1975, էջ 14:

<sup>44</sup> Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 201:

հասել անծամբ մելիքին պատկանող (հետին ստացող) 1495 թ. գրված մի «Ավետարան»:

XVII դ. բուն Քաջաթաղի տարածքի վանքերում, անապատներում ու եկեղեցիներում ձևավորվում են նաև գրչության կենտրոններ, գրվում բազում ձեռագրեր: Մեզ հասած ձեռագրեր են գրվել Խանածախում, Խոզնավարում: Խանածախում 1647 թ. կուսանաց անապատի միանձնուհի Մարիամի կողմից ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ զսայ ի յերկիրս Քաջթաղու, ի գուղս Խանածախս»: Ու նաև թե ինչ էր խնդրում միանձնուհին. «Ով ոք զսա կարդայ եւ արիմակէ, մի բերան զմեզ յիշե եւ ողորմի ասէ՝ Աստուած իւրն ողորմեսցի»<sup>45</sup>: Միքայել սարկավագի կողմից 1652 թ. մի ձեռագիր է գրվում Խանածախից մոտ 7 կմ հյուսիս գտնվող բարձրադիր Խոզնավար գյուղում, որին գրիչը կոչում է Քաջաթաղի աստվածաբնակ և անառիկ դղյակ ելուզակների նկրտումների հանդեպ: Հետաքրքիր է այդ ձեռագրի ստեղծման պատմությունը: Դրա պատվիրատուներն էին անգավակ Ջաքար և Նաներ ամուսինները, որոնք ձեռագիրը պատվիրել են «ոչ ունելով իւրեանց զաւակ մարմնաւոր և կամ յիշատակ ի վերայ երկրի, այլ ի միտ առան զբանն Աւետարանին որ ասէ. «Գանձեցէք ձեր գանձ յերկինս, ուր ոչ գող մերձենայ...»»<sup>46</sup>: Հարանց Մեծ անապատում ձևավորվեց նաև մանրանկարչական լիարժեք դպրոց<sup>47</sup>:

Մ. Հասրաթյանի հաշվարկներով Մելիք-Հայկազ Բ-ն ապրել է շուրջ 90 տարի և մահացել 1623 թ.: Մ. Օրմանյանը գտնում է, որ հայտնի իշխանը մահացել է 1621 թ.<sup>48</sup>: Նշանավոր մելիքի տապանաքարը եղել է համեստ՝ առանց գրի ու թվականի: Տապանաքարի երեսին պատկերված են եղել միմյանց դեմ ծառացած երկու օձեր: Տապանաքարը ներկայումս չկա:

Մելիք-Հայկազ Բ-ի մահից հետո Քաջաթաղի մելիքությունը թուլանում ու անկում է ապրում: Պատճառն, անշուշտ, անմիաբանությունն էր: Քաջաթաղի մելիքության հանդեպ ոտնձգություններ էին դրսևորում

<sup>45</sup> Ժ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Գ, Ե., 1984, էջ 256:

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 256:

<sup>47</sup> Փևրոզյան Ա., Վայոց Ձորի և Որոտանի մանրանկարչությունը 13-17-րդ դարերում, Ե., 2003, էջ 147-168:

<sup>48</sup> Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Բ, Ս. էջմիածին, 2001, էջ 2735-2736:

ոչ միայն մահմեդականները: Շահ Աբասի հաջորդ Շահ Սեֆիի օրոք (1628-1642) Գանձասարի կաթողիկոսը փորձում է իրեն հարկատու դարձնել Քաշաթաղի քրիստոնյաներին և միայն Շահ Սեֆիի 1634 թ. հրովարտակի միջամտությամբ ստիպված է լինում Քուշթասիֆի (Քաշաթաղի) քրիստոնյաներից բռնի «թալիբանե» չպահանջել, քանի որ նրանք առաջվա պես պետք է շարունակեն ենթարկվել էջմիածնին<sup>49</sup>: Տվյալ հարցում, անտարակույս, որոշակի դերակատարություն է ունեցել ամենայն հայոց կաթողիկոսը՝ Հալիծորի Հարանց Սեծ անապատի սան Փիլիպոս Ա Աղբակեցին (1632-1655):

Շահ Սեֆիի իշխանության տարիներին Չաքարիա Քանաքեռցին հիշատակություն ունի Քաշաթաղ երկրի Հօչէս (Հոչանց) գյուղի մասին: 1635 թ. օսմանյան սուլթան Սուրադ 3-րդի հարձակումից խուսափելով Կարբի գյուղի բնակիչները փախչում, գալիս իջևանում են Քաշաթաղի Հոչանց գյուղում: Սոտակայքում գտնվող քոչվոր քրդերը հարձակվում են փախստականների վրա: Կարբեցիներին կողոպտում են, կանանց անարգում, երեխաներին գերեվարում: Թավրիգում գտնվող կարբեցի մի վաճառական, իմանալով այդ մասին, խնդրագիր է ուղարկում պարսից ղեկավարությանը: Շահ Սեֆին զորագունդ է ուղարկում Քաշաթաղ՝ հրամայելով քրդական ցեղի հետ վարվել այն կերպ, ինչ նրանք արել էին դժբախտ փախստականների նկատմամբ և ավարն էլ տալ նրանց<sup>50</sup>: Այդ իրադարձությունը ևս վկայում է, որ Քաշաթաղի մեկիքությունը խիստ թուլացել էր:

Նշանավոր մեկիքն երկու անգամ ամուսնացել է: Առաջին կնոջից ունեցել է Աղան կամ Աղաջան անունով որդի: Խանածախ գյուղի արևելյան ծայրամասում, ցածրիկ բլրի վրա կանգնեցված է 1,45 մ x 0,75 մ x 0,20 մ չափերով խաչքար, որն իր վրա կրում է երկլեզվյան՝ հայերեն ու պարսկերեն արձանագրություններ: Հայերեն արձանագրության մեջ կարդում ենք. «Ի թագաւորութեան Շահ Աբասին ես Աղան որդի Պարոն Հայկազին կանկնեցի խաչս անուանըն Պողոս վարդապետին բարեխօս Այ. Քրիստոնէից ի թվկս հաոց: ՌԿԹ: (1620) երկրին մուլքն պար-ն Հայ-

<sup>49</sup> Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ 2-րդ, էջ 109:

<sup>50</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 299-300:

կազմին է»<sup>51</sup>: Մելիք-Յայկազ Բ-ի երկրորդ կնոջ անունը Գուլաբ էր, որից ունեցել է երեք արու զավակներ՝ Գասպար, Շահնազար և Բեկնազար անուններով: Այդ մասին տեղեկանում ենք Գուլաբ խանումի տապանաքարի արձանագրությունից, որը գրառել է Մ. Յասրաթյանը: 1651 թ. Մելիք-Յայկազ Բ-ի որդիները թաղել են իրենց մորը և տապանաքարի արևելյան ճակատին թողել արձանագրություն. «Մեք որդիք Պարոն Յայկազին, Գսբրս, Շնզրս, Բեկնազարս, կնկէ ցուցաք սբ. խաչս փըրկութիւն հոգյ մաւրն մեյր ... լաբի խնին, որ բզմ երախտիս»<sup>52</sup>:

XVII դ. երկրորդ կեսից պատմական աղբյուրները և մասնավորապես տոհմական դամբարանի արձանագրություններն այլևս հստակ պատկերացում չեն տալիս մելիքական տան ժառանգների մասին: Քաշաթաղի մելիքների մասին չի խոսվում նաև Դավիթ-Բեկի ազատագրական պայքարն արտացոլող սկզբնաղբյուրներում: Մնում է ենթադրել, որ Մելիք-Յայկազյան մելիքական տունը անկում է ապրել: Բայց ինչպե՞ս: Ս. Խանզադյանն իր «Յայրենապատում» գրքում բերում է մի տեղեկություն, որ նա քաղել է Խանաճախ գյուղում և ըստ որի Մելիք-Յայկազի հետնորդներն ընդունել են մահմեդականություն.

«Յարցնում են Մելիք-Յայկազի մասին:

- Յը՞, - սրվում է նա (Բոզի ապերը - Ս. Յ.), - Մելիք էգյա՞զը:

Յա՛, գիտեմ, ոնց չէ: Նրա թոռը էլ էգյազ է, թուրքացել ա, դարձել Ալլահ-վերդի: Մի մզկիթ ա շինել, փլվածքը գյուղի մեջ կա»<sup>53</sup>:

Իսկ ի՞նչը կարող էր ստիպել կրոնափոխ լինելու հայտնի մելիքական տան հետնորդներին: Նախ նկատենք, որ Մելիք-Յայկազ Բ-ի մահից հետո մելիքության զորությունն կտրուկ անկում է ապրում: Տարբեր մայրերից ծնված նրա որդիները հավանաբար միաբան չէին և բաժան-բաժան էին արել իրենց հոր տիրույթը, այդ տիրույթին ձեռք էին մեկնել և օտարները: Եվ միայն նշանավոր իշխանի կնոջ՝ արիական Գուլաբի ջանքերով է, որ Խանաճախ, Բայանդուր (Վաղատուր) և Խոզնավար գյուղերի մուլքը նորից անցնում է Յայկազյաններին: Այդ մասին

<sup>51</sup> Խաչքարը մասնակի վնասված է, որոշ տառեր գնդակոծությունից դարձել են անընթեռնելի:

<sup>52</sup> Յասրաթյան Մ., նշվ. աշխ., էջ 164: Այս տապանաքարը ևս չկա:

<sup>53</sup> Խանզադյան Ս., Յայրենապատում, հ. 1, ե., 1980, էջ 120: Ի դեպ, Ս. Խանզադյանը Խանաճախում աշխատել է որպես ուսուցիչ:



գրված է Գուլար խանունի գերեզմանաքարին. «Գնաց եւ մեր հյրենիք մըքերն անկել էր ի ձեռք թ(ա)զ(աւո)րեն՝ ՂԲԼՅ էառ այսքն գեղի: ԽՆԾԽ: Պյինդր: Խզնվր»<sup>54</sup>: Այս երեք իրար հարևան գյուղերը, որոնք գտնվում են Գորիսի ենթամարզում, տարածքով ներկայացնում էին Քաշաթաղի մելիքության արևմտյան հատվածը, Օիծեռնավանից (Ձաբուղ) գետի բարձրադիր աջ ափը միայն:

Մելիք-Չայկազ Բ-ի հետնորդների ստիպողական հավատափոխության համար կարող էր պատճառ լինել մի դիպված, որի մասին պատմում է Րաֆֆին: Նա «Խամսայի մելիքությունները» ուսումնասիրության մեջ տալով Արցախի հինգ մելիքությունների ծագումնաբանությունը, նշում է, որ տարածքով ամենափոքր՝ Ջրաբերդի Մելիք-Իսրայելյանները ծագում են Սյունիքից. «Մի գրչագիր պատմությունից քաղում ենք այսքանը միայն, թե Մելիք-Իսրայելի որդի Մելիք-Եսային Սյունյաց աշխարհի գլխավոր խանին (՝) սպանելու համար, որը անբարոյական նպատակներ ուներ նրա քրոջ վերաբերությամբ, 1687 թ. գաղթում է Ղարաբաղ՝ բերելով իր հետ բազմաթիվ ընտանիքներ»<sup>55</sup>: Յիմնվելով Ջրաբերդի ավանդությունների վրա՝ Լեոն ևս Մելիք-Իսրայելյաններին սերած է համարում Սյունիքից<sup>56</sup>: Իսկ Մելիք-Իսրայելի Սյունիքի որ մասից գաղթած լինելու հարցի պատասխանը գտնում ենք տեղանունների բառարանի Արցախի Խանածախ գյուղին վերաբերող Ստ. Մելիք-Բախշյանի հեղինակած հոդվածից. «XVII-XVIII դդ. եղել է Խաչեն գաւի Զաշաթաղի մելիքության կենտրոնը: Բնակչության մասնիկները գաղթել են Սյունիքի Խանածախ (այժմյան Գորիսի շրջ. Խնածախ) գ-ից, որոնք 1686 թ. (ըստ Րաֆֆու՝ 1687 թ. - Ս. Չ.) նախ բնակություն են հաստատել Ջրաբերդում, ապա՝ այս գ-ում»<sup>57</sup>:

Արցախի Խանածախը ի տարբերություն Սյունիքի Խանածախի նաև կոչվել է Նոր Խանածախ: Պահպանվեց նաև հին երկրանունը, ստեղծվեց Քաշաթաղ անունով մելիքություն: Այսպիսով հնարավոր է

<sup>54</sup> Չասրաթյան Ս., նշվ. աշխ., էջ 164:

<sup>55</sup> Րաֆֆի, նշվ. աշխ., էջ 170:

<sup>56</sup> Լեո, նշվ. աշխ., էջ 751:

<sup>57</sup> Չակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Չ., Չայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ 2, Ե., 1988, 641: Տես նաև Ս. Եպս. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 52:

դառնում ենթադրել, որ քրոջ պատիվը պաշտպանելով պարսկական խանին սպանող Մելիք-Եսային Սյունիքի Խանածախի Մելիք-Յայկազյան իշխանական տան ներկայացուցիչներից է և, ամենայն հավանականությամբ, եղել է Մելիք-Յայկազ Բ-ի ծոռը: Արցախ տեղափոխված Մելիք-Եսայու հոր անունն էր Իսրայել, որը կարող էր լինել նշանավոր մելիքի չորս արու զավակներից մեկի ժառանգը: Պետք է կարծել, որ ոչնչացման սպառնալիքի տակ կրոնափոխ են եղել Մելիք-Յայկազ Բ-ի այն հետնորդները, որոնք չեն հասցրել կամ չեն կամեցել տեղափոխվել Արցախ: Պատմական վավերագրերը վկայում են, որ Իսրայել Օրու կողմից 1699 թ. Անգեղակոթում հրավիրված գաղտնի ժողովին մասնակցել է նաև Խշթաղի (Քաշաթաղի) մելիք էմիրբեկը: Նրա հոր անունն էր Մարտիրոս: Բայց արդյո՞ք մելիք էմիրբեկը ներկայացնում էր Մելիք-Յայկազյան տոհմը: էմիրբեկը ազգությամբ հայ էր, հավատով՝ քրիստոնյա, և եթե շառավիղն էր հին մելիքական տան՝ ապա մնում է ենթադրել, որ Մելիք-Յայկազ Բ-ի ոչ բոլոր հետնորդներն են հավատափոխ եղել, կամ՝ նրանց հավատափոխությունն եղել է կարճ ժամանակով: XVIII դ. վերջին Սյունիքի Քաշաթաղի մելիքությունը բավականին հզոր էր: Պետրոս Մեծին ուղղված զեկուցագրի մեջ Իսրայել Օրին հայտնում է, որ Քաշաթաղի նահանգը թշնամու դեմ կարող է հանել 10000 զինվոր<sup>58</sup>: Մելիք էմիրբեկի անունը Ամիրբեկ ձևով հիշատակվում է նաև Օրու կողմից 1703 թ. Գանձասարում ռուսաց ցարին ուղղված դիմումի տակ. «Ես Մարտիրոսի որդի Ամիրբեկ դրի իմ մօրին եւ ձեռագիր ինձ դապուլ է»<sup>59</sup>: Այնուամենայնիվ վստահաբար չենք կարող պնդել, թե էմիրբեկը և նրա հայր Մարտիրոսը Յայկազյան մելիքական տոհմի շառավիղներից են: Այդ ժամանակաշրջանում հայտնի մելիքական տոհմի ներկայացուցիչների մասին ակնարկ ունի միայն Բաֆֆին. «Յիշյալ երկրներում կային հզոր մելիքություններ, որոնք 1722 թ. ապստամբության ժամանակ մասնակցում էին Դավիթ Բեկի Ղարաբաղի մելիքների կռիվներին: Օրինակ. Չանգեզուրի վիճակում հայտնի էին Մելիք-Յայկազյանները...»<sup>60</sup>: Բայց մենք գիտենք, որ Դավիթ Բեկի ապստամբությունն արտացոլող

<sup>58</sup> Լեո. Նշվ. աշխ., էջ 540:

<sup>59</sup> Նույն տեղում, էջ 578:

<sup>60</sup> Բաֆֆի, Նշվ. աշխ., էջ 377:

պատմական աղբյուրները Մելիք-Յայկազյաններին չեն հիշատակում, նրանց մենք չենք տեսնում պատերազմական գործողություններում, թեև կուզ նրանց գոյությունն ամուր թիկունք կարող էր լինել Դավիթ Բեկին, քանի որ նրանց տիրույթի տարածքը կապող օղակ էր Արցախի ու Սյունիքի միջև:

1795 թ. Աղա-Մահմեդ խանի արշավանքի ժամանակ Շուշիի բերդը գրոհող պարսկական գործի հրամանատարը Յովհաննես անունով և Մելիք-Յայկազյան ազգանունով գնդապետն էր<sup>61</sup>: Մակայն հիմքեր չկան պնդելու, թե դա հայտնի մելիքական տոհմի ներկայացուցիչն է: Այդպես պնդելու կռվան չի կարող լինել նույնիսկ այն հանգամանքը, որ գնդապետը կռվի ընթացքում սերտ կապերի մեջ է մտնում Արցախի Խանածախ գյուղի բնակիչների հետ, որոնք ընդամենը մի հարյուրամյակ առաջ էին գաղթել հին Խանածախից, և եթե ինքն էլ Մելիք-Յայկազյան տոհմի ժառանգներից էր, ապա նշանակում է, որ հանդիպել է իր հայրենակիցներին ու ազգականներին:

Ռուսական բանակի հայազգի նշանավոր գեներալ-ադյուդանտ Իվան (Յովհաննես) Դավիթի Լազարևը (1820-1879) սերում է Քաշաթաղի մելիքական տոհմից<sup>62</sup>: XIX դ. առաջին կեսին Մելիք-Յայկազյան տոհմի շառավիղների հետքերը երևում են Անդրկովկասի տարբեր վայրերում<sup>63</sup>:

Գորիսի Խանածախ գյուղից սերվող ազնվական ծագում ունեցող անձիք ապրում էին ընդհուպ XX դ. 20-30-ական թթ.: Այդ ժամանակ խորհրդային իշխանության կողմից Գորիս քաղաքում հաշվառված շուրջ մեկուկես տասնյակ բեկերի թվում հիշատակվում է և խանածախցի Յայրապետ-բեկը:

---

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 452-454:

<sup>62</sup> Բանբեր Յայաստանի արխիվների, 1991, թիվ 3, էջ 218:

<sup>63</sup> Կարապետյան Ս., Յայ մշակույթի հուշարձանները խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, գիրք 3, Ե., 1999, էջ 126:

**ОЧЕРКИ ИЗ ИСТОРИИ СЮНИКСКОГО  
КАШАТАГСКОГО МЕЛИКСТВА**

**РЕЗЮМЕ**

В XV-XVI вв. персидские власти с антиосманскими стратегическими намерениями в Сюнике одобрили создание четырёх полузависимых княжеств, которые назывались меликствами. Самое знаменитое среди них было Кашатагское меликство Мелик-Айказянов, центром которого в начале было селение Кашатаг, а потом Ханацах. Это меликство достигает своего расцвета во время правления Мелик-Айказ II (1551-1621). Он был близким придворным и любимым воином персидского царя Шах-Аббаса I. Мелик-Айказ отличился патриотическими деяниями: помогал строению и существованию Аладзорского монастыря Аранц Мец апатат, реставрировал Цицернаванк, оставил ценные строения в Ханацахе и т. д.

Под покровительством меликств Сюник пережил подъем духовно-культурной жизни общенационального значения.

В конце VII в. одна ветвь Мелик-Айказянов переходит в Арцах, где они основывают поселение Нор Ханацах и одноимённое меликство Кашатаг.

**ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՆԹԱՅՈՒ  
ՇԱՄԱԽԻ ՔԱՂԱՔՈՒՄ (XIX դ.)**

Շամախի քաղաքը տարածված է Կովկասյան լեռնապարի հարավարևելյան ճյուղերի ստորոտին, փոքրիկ ըլրաշարի վրա՝ փռված Սբ. Սահակ (Փիրսահաթ) և Զագալավա գետակների միախառնման տեղում: Քաղաքին ամենամոտ սարերն են դեպի հյուսիս-արևմուտք ձգվող Ղզղարասին և Փեդրաքունը<sup>1</sup>. «Խոր ծորեր են Շամախու արևելեան և արևմտեան կողմերն: Արևմտեան ծորով հոսում է Մեյսարու վտակն և արևելեան ծորով մի փոքրիկ առու: Երկու ջրերս միանում են պարսից թաղի ստորոտում և խառնւում Փիր-Սահաթ գետակին: Քաղաքիս վերնամասն հարթ է, միջնամասն՝ լանջ, ստորին մասն՝ հովտահարթ»<sup>2</sup>: Շամախին իր աշխարհագրական դիրքով գտնվել է հին աշխարհի առևտրական մեծ ճանապարհների վրա: Այս կարևոր գործոնից բացի նրա բնաշխարհագրական պայմաններն ինքնին թելադրել են քաղաքական ու մշակութային աչքի ընկնող վայր դառնալու անհրաժեշտությունը: Այս հատկանիշներով Շամախին ունեցել է երկրամասի հարմարավետ վայրի դերը, որի շուրջը հիմնականում խմբավորվել են հայկական գյուղերը:

Շամախիում վաղնջական ժամանակներից սկսած՝ կենտրոնացած էր նահանգի հայության մի զգալի մասը, և միջնադարում ու հետագայում ևս այն համարվել է շիրվանահայության կրթական, մշակութային, քաղաքական կյանքի և վաճառականության հիմնական կենտրոնը, առավել ևս՝ հայության շրջանակներում այն դիտվել է իբրև հայկական

<sup>1</sup> «Մշակ», Թիֆլիս, 1872, հուլիսի 20, N 28:

<sup>2</sup> Բարխուդարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Ղաղստան), Թիֆլիս, 1893, էջ 156:

քաղաք<sup>3</sup>: Այսպես օրինակ՝ 1828 թ. երբ Ռուսաստանը ստեղծում էր Հայկական մարզը, Լազարյաններն իրենց առաջադրած ծրագրով, հայկական թագավորության սահմաններում ընդգրկել էին նաև պատմական Հայաստանից դուրս գտնվող Շամախին և Շաքին: «Շատ մարզեր, - ասված է ծրագրում, - ինչպես հին Նախիջևանի, Երևանի, Ղարաբաղի, Շաքու և Շամախու մարզերը՝ Էջմիածնի նախագահ վանքով կազմում են Հայաստանի վաղեմի թագավորության ընդհանուր կորիզը և գլխավոր հիմքը»<sup>4</sup>:

Տեղաբնիկ հայերից գատ, պատմական ճակատագրի բերումով, Շամախիում բնակություն էր հաստատել նաև հեռավոր Էգեյան ծովի մերձափնյա շրջանից՝ Ջմյուռնիայից գաղթած հայության մի հատված: «Մադրասեցի» (Ավետիս Կողբաշյան) ծածկանունով հեղինակը գրում է, որ Շամախու շրջակայքում թափառական կյանքով ապրելիս են եղել Ջանումյան, Թավաքայան<sup>5</sup> և Օսմանյան ազգանվամբ «հայրենազուրկ հայ» ընտանիքները, որոնք, ըստ ավանդության, գաղթել էին Ջմյուռնիայից<sup>6</sup>: Հայտնի է, որ Էգեյանի ծովամերձ շրջանների (Ջմյուռնիա, Մանի

<sup>3</sup> Շամախին ծննդավայր է հայ մեծանուն մի շարք մտավորականների: Այդտեղ են ծնվել երեք քույրերի զավակներ Ալ. Շիրվանզադեն, Կոստան Ջարյանը և Հովհ. Աբեյանը: Շամախիում են ծնվել նաև գրող, գրականագետ և թարգմանիչ Սեդրակ Թառայանը, պարուհի, դերասանուհի, գրող և գրականագետ Սոֆիա Փիրբուդադյանը (Արմեն Օհանյան, 1887-1976 (Բախչինեան Ա., Մատթեոսեան Վ., Շամախեցի պարուհին (Արմեն Օհանեանի կենանքն ու գործը), Ե., 2007, էջ 9), գեղեցկատես հայ դերասանուհի Եվգինե Աբբարը (հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Մակինցյանի կինը), որը 1927 թ. Փարիզում հաղթող է ճանաչվել աշխարհի տարբեր երկրների (ԱՄՆ, Գերմանիա, Անգլիա, Իտալիա, Հունաստան, Թուրքիա) միջև գեղեցկուհի կինոդերասանուհու համար կայացած մրցույթում (Եվգինե Աբբար, Հարազատ անուններ, Ե., 1970, էջ 94-95) և շատ այլ նշանավոր գործիչներ:

<sup>4</sup> Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայրուսական հարաբերությունները, Ե., 1989, էջ 308:

<sup>5</sup> Ենթադրում ենք, որ Թավաքայան տոհմի մի ճյուղը հաստատվել է Դերբենդում, և այդտեղի շառավիղներից է եղել հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ Բագրատ վրդ. Թավաքայանը (1850, Դերբենդ-1902, Բաքու):

<sup>6</sup> Մադրասեցի, Ուլքե՛ր են մադրասեցիները, «Նոր-դար», Թիֆլիս, 1903, փետրվար 17, N 37:

սա, Այդըն, Նագիլի և այլն)<sup>7</sup> հայ գաղթավայրերի կազմավորման մասին փաստական վկայությունները չեն անցնում XVI դ. առաջ<sup>8</sup>: Ձմյուռնիայի հայկական գերեզմանատան ցայժմ հայտնի ամենահին տապանագիրը թվագրված է 1551 թ.<sup>9</sup>: Շամախիում և նրա շրջակայքում զմյուռնիահայերի հաստատվելը, ամենայն հավանականությամբ, կապվում է հարկադրաբար գաղթելու իրողության հետ, որի պատճառ կարող էին համարվել Ձմյուռնիայում մեկը մյուսին հետևող տարերային աղետները (1632 թ. հրդեհը, 1681 թ. սովը և երաշտը, 1688 թ. կործանիչ երկրաշարժը և այլն)<sup>10</sup>: Կարելի է ենթադրել, որ Ձմյուռնիայից հայերի մի հատվածի դուրս գալու հավանական պատճառը 1812 թ. բռնկված ժամատախտն էր, որին զոհ գնացին տասնյակ հազարավոր մարդիկ, իսկ շատերն էլ հեռացան քաղաքից: Գ. Քոսյանը վկայում է. «...սակայն մաղձայոյզն եւ ուրիշ հիւանդութիւններ երբեմն երբեմն հոգսերու մէջ կը ձգեն զմիւռնացին եւ գիւղերը կամ այլուր փախչելու կը ստիպեն բնակիչները»<sup>11</sup>: Այսպիսով, տարբեր տարիներին, աղետներից խուսափելով՝ զմյուռնիահայերը հեռացել են կից հայաբնակ շրջաններ և կամ ավելի հեռու վայրեր<sup>12</sup>:

Շամախիում հաստատված զմյուռնիահայերի թվում, առևտրականներից բացի, եղել են նաև արհեստավորներ, որոնք իրենց մասնակցությունն են բերել քաղաքի կառուցապատման աշխատանքներին: XIX դ. վերջերին Շամախի այցելած Գ. Քաջբերունին, գրում է, որ քաղաքի մոտ, գետի վրայով ձգվող միաթռիչք և սրբատաշ կամարով կամուրջի հյուսիսային ծայրի արևելյան ճակատի վրա արձանագրված է եղել.

<sup>7</sup> XVII դ. առաջին քառորդին Ձմյուռնիա և շրջակայք գաղթած բազմությունների մեջ մեծամասնություն են կազմել Մեղրու, Կապանի, Սիսիանի և Արարատյան դաշտի հայերը (Քոսեան Գ., Դայք ի Ձմիւռնիա եւ ի շրջակայս, հ. Բ, Վիեննա, 1899, էջ 25, 69-70 և հտ.):

<sup>8</sup> Խառատյան Ա., Դայ գաղթականությունը Էգեյանի մերձափնյա շրջանում (XIV-XVIII դդ.), ՊԲԳ, 1988, N 4, էջ 31:

<sup>9</sup> Քոսեան Զ., Դայք ի Ձմիւռնիա եւ ի շրջակայս, հ. Ա, Վիեննա, 1899, էջ 82:

<sup>10</sup> Խառատյան Ա., Դայ գաղթականությունը Էգեյանի մերձափնյա շրջանում (XIV-XVIII դդ.), էջ 39:

<sup>11</sup> Քոսեան Զ., Դայք ի Ձմիւռնիա եւ ի շրջակայս, հ. Ա, էջ 24:

<sup>12</sup> Դայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հ. Բ, Ե., 2003, էջ 182-183:

«Վարպետ Յակոբ Օսմանցի 1828»<sup>13</sup>: Քաջբերունու մեկ այլ վկայությամբ, քաղաքի կենտրոնական փողոցի վրա, հայ բնակիչներից մեկը բացել էր դեղատուն, որը կրում էր նրա ազգանունը՝ Օսմանցով<sup>14</sup>:

Շամախի քաղաքը XIX դ. առաջին կեսին համարվում էր Արևելյան Այսրկովկասի զարգացած և աչքի ընկնող առևտրական կենտրոնը և ուներ մոտ 4000 հայ ազգաբնակչություն<sup>15</sup>: Թիֆլիսից հետո, Կովկասում համարվելով երկրորդ քաղաքը, Շամախին ապրում էր բավական աշխույժ տնտեսական ու մշակութային կյանքով: Քաղաքը, ունենալով լեռնային հատուկ բնակլիմայական պայմաններ, զարգացել է յուրատեսակ քաղաքաշինական մշակույթով: Ցավոք, ժամանակի ընթացքում և հատկապես XVIII դ. վերջին, տեղի ունեցած ասպատակությունների և քաղաքը տեղից տեղ փոխադրելու հետևանքով, արդեն ավերվել էր շինությունների մեծ մասը: Այլ Շիրվանզադեհն իր հուշերում զմայլանքով է նկարագրել ծննդավայրի բնությունը. «Անդրկովկասի մի անկիւնում կայ մի քաղաք, անունը Շամախի կամ Շիրվան: Ահ, հրաշալի է այդ քաղաքի բնութիւնը: Այնտեղ երկինքը կապոյտ է, ինչպէս փիրուզա, երկիրը բոյսերով, ծաղիկներով փարթամ, ինչպէս մի սքանչելի պարտէզ: Այնտեղ ձմեռը եղանակը մեղմ է, դուրեկան, ոչ քամի, ոչ փոթորիկ: Իսկ գարնանը և ամառը բարձրագագաթ ծառերի վրայ գիշեր-ցերեկ երգում են անթիւ սոխակներ: Եւ ինչ համեղ մրգեր կան այնտեղ, եթէ գիտենաք, ինչ հոտաւետ պտուղներ»<sup>16</sup>:

Հնագույն ժամանակներից հայաշատ այս քաղաքում, 1832 թ. տվյալներով, ծխերի թիվը հասնում էր 2233-ի, որից արական բնակիչների թիվը կազմում էր 5566<sup>17</sup>: Նույն թվականի տվյալներով, քաղաքում հայապատկան տների թիվը հասնում էր 279-ի<sup>18</sup>: Սարգիս արք. Ջալալ-

<sup>13</sup> Քաջբերունի, Բազմամիլիոն ժառանգութիւն, ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 439, թ. 3 (այսուհետև՝ Քաջբերունի, Բազմամիլիոն ժառանգութիւն):

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Ջալալեանց Ա., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփլիս, 1858, էջ 400:

<sup>16</sup> Շիրվանզադէ Ալ., Իմ կեանքից, «Հասկեր», N 11, Թիֆլիս, 1910, էջ 320-321:

<sup>17</sup> *Обозрение российских владений на Кавказе в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях* (Ширванская провинция), ч. III, СПб, 1836, с. 155.

<sup>18</sup> Նույն տեղում:



յանցի հաղորդած տվյալների համաձայն՝ Շամախիում հայերին պատկանող տների թիվը 1848 թ. արդեն հասնում էր 600-ի<sup>19</sup>:

1851 թ. տվյալներով, Շամախի քաղաքն ուներ 5512 տուն և 20.386 (11.307 ար., 9079 իգ.) ազգաբնակչություն, որից հայերի թիվը 6238 (3287 ար., 2951 իգ.) էր<sup>20</sup>: Աղյուսակի տեսքով, ըստ ազգային կազմի և դավանանքի այսպիսին էր քաղաքի պատկերը<sup>21</sup>.

### ԱՂՅՈՒՍԱԿ N 1

N	ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄՆ ԸՍՏ ԴԱՎԱՆԱՆՔԻ	ԱՐ.	ԻԳ.	ՄԻԱՍԻՆ
1	Մահմեդական	6256	5492	11 748
2	Հայ	3287	2951	6238
3	Լյութերական <sup>22</sup>	11	13	24
4	Ուղղափառ	1276	309	1585
5	Սյոլկան	276	212	488
6	Հնածիսադավան	3		3
7	Սկոպեց (ներքինի)	96	38	134
8	Վրացի	67	43	110
9	Կաթոլիկ	25	15	40
10	Հրեա	10	6	16
	ԸՆԴԱՄԵՆԸ	11.307	9079	20 386

<sup>19</sup> Զալալեանց Ա., Ճանապարհորդություն ի Սեծն Հայաստան, մասն Բ, էջ 400:

<sup>20</sup> Черпановъ П., Шемаха, Кавказский календарь на 1852 г., Тифлисъ, 1851, с. 429.

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> Շամախի քաղաքի հայության մեջ լուսավորչականներից բացի եղել են նաև բողոքական կամ ավետարանական եկեղեցու հետևորդներ: Ավետարանական քարոզչությունը Շամախի ներթափանցեց 1828 թ. սկսած՝ Շվեյցարիայի Բազել քաղաքից եկած քարոզիչներ Ֆ. Զարենբայի, Ավգուստ Դիտրիխի և Սիրգա Ֆարուխի (Հարություն Գալստյան) միջոցով (Քասունի Ե., Լուսաշաւիղ, Պատմութիւն Հայ Աւետարանական շարժման (1846-1966), Պէյրուք, 1947, էջ 230): Շամախիում ավետարանականների առաջնորդն էր Մարգիս Համբարձումյանը, որի անվան հետ է կապված Շամախիում նրանց հետագա զործունեության բեղուն ժամանակաշրջանը: Ավետարանական քարոզչությունը, որն ինքնին եկեղեցական-բարեկարգչական բնույթ ուներ և համապատասխան մպատակ էր հետապնդում, այնքան ընդլայնվեց նահանգում, որ դարի 40-60-ական թթ. Շամախին և Բաքուն դարձան արևելահայ ավետարանականության կենտրոններից: Եկեղեցին կոչվում էր լյութերական (Ղուկասեանց Հ., Բողոքականութիւն Կովկասու Հայոց մէջ, Թիֆլիս, 1886, տե՛ս նաև Զամինեան Ա., Հայոց եկեղեցու պատմութիւն, Բ մաս, Նոր Նախիջևան, 1909, էջ 217: Տե՛ս նաև Դազարյան Ա., Որնե՛ս Ներսես Լևոնյան, Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Ե., 1999, էջ 95-113:

Աղյուսակից հետևում է, որ ռուս վիճակագիրները մարդահամարն անցկացրել են կրոնական պատկանելության սկզբունքով՝ քրիստոնյանների և մահմեդականների միջև: Այսրկովկասում կրոնական պատկանելությունը հաճախ վճռորոշ էր էթնիկ դիմագիծը բնութագրելու համար: Ուստի, մարդահամարի նյութերում «մահմեդական» անվանման մեջ կովկասյան թաթարներից բացի, ներառվում էին նաև իրանցիները, լեզգիները, թալիշները, թաթերը և այլն: Իսկ «յուրթերական» անվանման մեջ նկատի էին առնվում այն հայերին, որոնք հարում էին կրոնական այդ ուղղությանը: Ընդհանուր առմամբ, լուսավորչական և յուրթերական հայերի թիվը կազմում էր 6262: Ղ. Ալիշանի տեղեկացմամբ, 1850-ական թթ. սկզբներին քաղաքն ունեցել է 18.000 (պաշտոնական աղբյուրներով՝ 19.558)<sup>23</sup> խառն ազգաբնակչություն և 1000 ծուխ հայ. «Բն. 18.000, յորս 1000 երդ Չայ...»<sup>24</sup>: Չետագա ժամանակահատվածում հայ ազգաբնակչության թիվը նվազել է: 1855 թ. դրությամբ, 3113 տնից, հայերն ունեցել են 469, ռուսները՝ 164, շիա մահմեդականները՝ 1320 և սուննի մահմեդականները՝ 1130 տուն<sup>25</sup>: 1861 թ. տվյալներով՝ քաղաքն արդեն ուներ հայապատկան 876 տուն<sup>26</sup>: 1863 թ. ընտանեկան ցուցակագրության տվյալներով՝ քաղաքն, ընդհանուր առմամբ, ուներ 4972 տուն, իսկ ազգաբնակչության ընդհանուր թիվը 25.087 (13.999 ար., 11.088 իգ.) էր<sup>27</sup>: 1865 թ. դրությամբ քաղաքն արդեն ուներ քարաշեն՝ 5192, փայտաշեն՝ 19 տուն և 29.027 ազգաբնակ-

<sup>23</sup> Կորկոտյան Ջ., Երևան քաղաքի ժողովրդագրությունը: Հարյուրամյա ածման պատկերը (1830-1930)՝ համադրված Անդրկովկասի մեծ քաղաքների հետ, Ե., 1931, էջ 37:

<sup>24</sup> Ալիշան Ղ., Տեղագիր Չայոց Սեծաց, Վենետիկ, 1855, էջ 93:

<sup>25</sup> Кавказский календарь на 1856 г., Тифлиси, 1855, с. 272.

<sup>26</sup> Սմբատեանց Ս., Նկարագիր Աուրբ Ստեփաննոսի վանաց Մադիանի եւ միս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ի Շամախույ թեմի, Տիֆլիս, 1896, էջ 138:

<sup>27</sup> Списки населенных мест Российской империи по Кавказскому краю, LXV, Бакинская губерния. Список населенных мест по сведениям 1859 по 1864 годъ. Составленъ глав. редакторомъ комитета Н. Зейдлицемъ, Тифлиси, 1870, с. 100.

չություն<sup>28</sup>: Այդ շրջանում քաղաքն ունեցել է 47 փողոց, 3 հրապարակ և 7 կամուրջ<sup>29</sup>:

Նկատենք, որ Շամախի քաղաքի ազգաբնակչության բնական աճի վրա խիստ բացասական ազդեցություն էին թողնում հաճախակի կրկնվող ավերիչ երկրաշարժերը: Քաղաքը, գտնվելով ակտիվ սեյսմիկ շրջանում, բազմիցս վնասվել էր (1668, 1669<sup>30</sup>, 1806, 1828<sup>31</sup>, 1847, 1848, 1849 թթ.) երկրաշարժերից<sup>32</sup>: Այսպես, 1859 թ. մայիսի 31-ին, Շամախիում, տեղի ունեցած աղետալի երկրաշարժի հետևանքով, փլատակների տակ մնաց 400 մարդ, որոնց մեջ նաև հայեր<sup>33</sup>: Միայն 1859 թ. մայիսին տեղի ունեցած կործանարար երկրաշարժերի վերաբերյալ էջմիածնի սինոդին թեմի կոնսիստորիայի հունիսի 3-ի ժամուցման մեջ ասված է. «Ի կոնսիստորիիս յայսմիկ լուան զգեկուցումն յ30-րդ աուուր անցելոյ մայիսի ի 6-րդ ժամու յետ կիսաուուր ի Շամախի քաղաքի եղև երկիցս շարժումն մեծ, յորմէ ամենայն շինութիւնք քաղաքին գրեթէ քայքայեալ և յերկիր տապալեալ կործանեցան, որպիսին և կրկնեցաւ յ31-րդն նոյն ամսոյ յ8-րդ ժամու առաւօտուն այնպիսի սաստկութեամբ և ահարկու ուժգնութեամբ, մինչև չմնաց ի Շամախի և ոչ մի բնակութիւն առանց զգալի վնասաւորութեան...»<sup>34</sup>: Նահանգային վարչութիւնը Բաքու տեղափոխվելու հետ մեկտեղ շամախեցիներից շատերը տեղաշարժվեցին այլ վայրեր, իսկ հիմնական հատվածը դարձյալ մնաց հարազատ օջախներում. «Ճիշտ է, շատերը հեռացան քանդված քաղաքից, բայց համեմատած մնացողների հետ՝ այդ հեռացողները մի

<sup>28</sup> Свод статистических сведений о Кавказе, издаваемый Кавказским отделом императорского русского географического общества, т. I, Тифлиси, 1869, отд. II, с. 62, 67.

<sup>29</sup> Кавказский календарь на 1856 г., с. 273.

<sup>30</sup> 1669 թ. հունվարին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի հետևանքով, փլատակների տակ էին մնացել շուրջ 8000 մարդ (Описание города Шемаха. Составил С. Зелинский, Тифлиси, 1896, с. 7):

<sup>31</sup> 1828 թ. հուլիսի 9-ին և 28-ին տեղի ունեցած երկրաշարժերի հետևանքով փլվել էր 247 տուն և 30 խանութ (Բարխուտարեանց Մ., Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 158):

<sup>32</sup> Շամախու աղետը, Բազու, 1902, էջ 11:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 12:

<sup>34</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 3844, թ. 1:

աննշան փոքրամասնութիւն էին կազմում»<sup>35</sup>: Աղբյուրների հաղորդած տեղեկությունների համաձայն՝ մինչև 1860 թ. քաղաքն ունեցել է 1200 տուն հայ բնակչություն<sup>36</sup>: 1869 թ. օգոստոսի 21-ի երկրաշարժի հետևանքով փլվում է 5000 տուն<sup>37</sup>: Երկրաշարժից երեք տարի անց՝ 1872 թ. հունվարի 16-ին, տեղի ունեցավ ավելի մեծ ուժգնության երկրաշարժ, որի պատճառով զոհվեցին 118 հոգի, վիրավորների թիվը հասնում էր 44-ի<sup>38</sup>: Չոկվածների թվում հայ լուսավորչականները կազմում էին 30 հոգի<sup>39</sup>: Երկրաշարժի մասին էջմիածնի սինոդին թեմի կոնսիստորիայի հունվարի 21-ի ծանուցման մեջ ասված է. «Ի բնակչաց քաղաքիս ըստ այժմեայ լրոյ յանկարծամահ եղեն ընդ փլատակօք աներակաց անձինք իբրև երկերիւր և բազունք վնասաւորեալ և գրեթէ կիսամահ հազիւհազ կարացին գերծանել ի տարածամ մահուանէ, ընդ յանկարծամահ մեռելասն գտանին հայք լուսաւորչականք մինչ ց30»<sup>40</sup>: Այլ Շիրվանզադեի հուշագրության մեջ կարդում ենք. «Վերջին զարհուրելի երկրաշարժից այնտեղ քար քարի վրա չէր մնացել, բայց դարձյալ գեղեցիկ էր նա արտաքուստ, ինչպես գեղեցիկ է գեղեցկուհին նոյնիսկ ցնցոտիների մեջ: Նրա փլատակներն անթիվ բարդիների, կաղամախիների ու թթենիների միջից նայում էին որպես միջնադարյան շքեղ դրյակներ: Նրա խորտակված եկեղեցիների ու մզկիթների կանգուն պատերը նմանվում էին հոյակապ աշտարակների, ուր, կարծես, գերված էին առասպելական գեղեցկուհիներ իրանց ողբերգական ճակատագրով»<sup>41</sup>: Երկրաշարժի պատճառով կրկին սկսեց նվազել քաղաքի ազգաբնակչության թիվը: Տնտեսական անկման ու ավերումների հետևանքով հազարավոր անգործ մնացած արհեստավորներ և տուրքերից խեղճացած գյուղացիներ թողնում են հայրենի եզերքը և գաղթում Բաքու, ուր շուտով գոյանում է շամախահայերի մի ամբողջ թաղամաս: Սկսված արտագաղթի հետևանքով հայ ազգաբնակչության թիվը աս-

<sup>35</sup> Շամախու աղետը (ժողովածու), էջ 12:

<sup>36</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1921, ք. 70: Տե՛ս նաև «Մշակ», Թիֆլիս, 1902, մարտի 21, N 62:

<sup>37</sup> «Արարատ», սեպտեմբեր, 1869, էջ 104:

<sup>38</sup> Описание города Шемаха, с. 9.

<sup>39</sup> ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 6041, ք. 1:

<sup>40</sup> Նույն տեղում:

<sup>41</sup> Շիրվանզադե, Կյանքի րովից, Եժ, հ. 8, Ե., 1961, էջ 9:

տիճանաբար սկսում է նվազել: Այս պայմաններում Շամախիում արագորեն ընկնում է արհեստների ու առևտրի կշիռը, բազմաթիվ վաճառականներ սնանկանում են, արհեստավորները մնում են անգործ, աստիճանաբար փակվում են գործարանները, որի հետևանքով Շամախին կորցնում է երբեմնի փառքը և նյութական բարեկեցությունը: Շամախի քաղաքի տնտեսական անկումը հետևյալ կերպ է նկարագրել «Նոր-դարը». «Պատմական Շիրվանը, որ մի ժամանակ իւր առատ արդիւնաբերութեամբ Անդրկովկասի մէջ գրեթէ առաջին տեղն էր բռնում, այսօր շատ կոյր բախտի զօրութեամբ, երկրաշարժի շնորհիւ, մի տխուր և յոյժ ցաւալի տեսարան է ներկայացնում: Այլևս չկան այն հոյակապ շինութիւնները, որոնց նայելիս մարդ զմայլւում էր: Չկան նոյնպէս այն մետաքսի գործարանները, որոնց իւրաքանչիւրի մեջ գտնուողների թիւը հասնում էր առնուազն 300-400-ի»<sup>42</sup>:

Այսպիսով, XIX դ. երկրորդ կեսերից սկսած՝ Բաքու քաղաքի արագ զարգացումն իր խիստ բացասական ներգործությունն ունեցավ Շամախի քաղաքի հետագա առաջընթացի վրա, որն արդեն դարի 70-ական թթ. սկզբներից սկսել էր տնտեսական և բարոյական անկում ապրել: Այդուհանդերձ, Բաքվի հետ անհավասար մրցակցության պայմաններում Շամախին փորձում էր պահպանել իր հնամենի շուքն ու փայլը՝ երկրամասի հայության համար նախկինի պես մնալով որպես հոգևոր-եկեղեցական և մշակութային կենտրոն: «Մշակում» տպագրված մի թղթակցությունից հայտնի է դառնում, որ Շամախին, 1872 թ. դրությամբ, ունեցել է 24.000 խառն ազգաբնակչություն: Դրա մեծագույն մասը՝  $\frac{5}{7}$ -ը, կազմել են սուլննի և շիա աղանդին հարող թաթարները, իսկ  $\frac{1}{7}$  մասը՝ հայերը, մուսուլմանները կազմել են 500 տուն<sup>43</sup>: 1873 թ. ընտանեկան ցուցակների տվյալներով արդեն, քաղաքի հայ ազգաբնակչության թիվը կազմում էր 5177 (2940 ար., 2237 իգ.)<sup>44</sup>, իսկ 1886 թ. տվյալներով, քաղաքի ազգաբնակչության թիվը կազմում էր 22.139

<sup>42</sup> «Նոր-դար», Թիֆլիս, 1891, նոյեմբերի 2, N 159:

<sup>43</sup> «Մշակ», Թիֆլիս, 1872, հուլիսի 20, N 28:

<sup>44</sup> Список населенныхъ местъ по сведениямъ 1873 г., Бакинская губерния. Составлень глав. редакторомъ комитета Н. Зейдлицомъ, Тифлисъ, 1879, (б. с.).

(13.286 ար., 8853 իգ.)<sup>45</sup>, որից հայազգաբնակչության թիվը արտագաղթի նվազման հետևանքով կազմում էր՝ 3962 (2690 ար., 1272 իգ.) մարդ<sup>46</sup>, տեսակարար կշիռը՝ 17,90%<sup>47</sup>: Նույն թվականի տվյալներով, ռուս բնակչության թիվը հասնում էր 668-ի (512 ար., 156 իգ.), իսկ մահմեդականներինը՝ 17.509-ի (10.084 ար., 7425 իգ.)<sup>48</sup>: 1890 թ. դրությամբ, հայերի ծխերի թիվը հասնում էր 415-ի<sup>49</sup>, իսկ բնակչության թիվը 3573 էր (1846 ար., 1727 իգ.)<sup>50</sup>: Շամախու գավառային վարչության կողմից 1894 թ. անցկացված վիճակագրության համաձայն, քաղաքի ընդհանուր բնակչության թիվը կազմում էր 22.293 (13.552 ար., 8741 իգ.), որից հայերի թիվը հասնում էր 4042-ի (2924 ար., 1418 իգ.)<sup>51</sup>: Ըստ դավանանքի՝ հայ բնակչությունից լուսավորչական էին 3641 (2369 ար., 1272 իգ.), լուսբերական՝ 401 (255 ար., 146 իգ.) հոգի<sup>52</sup>: Ռուս ազգաբնակչության թիվը 690 (494 ար., 196 իգ.) էր<sup>53</sup>:

Շամախի XIX դ. վերջերի քաղաքային կյանքի վերաբերյալ ճամփորդական նոթերում ուշագրավ տեղեկություններ է հաղորդում քաղաք այցելած Գ. Քաջբերունին, ըստ որի՝ Շամախի քաղաքը XIX դ. վերջերին հիմնականում բաժանված է եղել երկու մեծ թաղերի<sup>54</sup>: Դրանցից յուրաքանչյուրն ունեցել է իր անվանումը, ինչպես օրինակ՝ «Красная» և «Соборная» կամ «Почтовая»<sup>55</sup>: Հայերից բացի, այդ թաղամասերում ապրել են նաև ռուս պետական պաշտոնյաներ<sup>56</sup>: Քաղաքի այդ հատվածում է գտնվել քաղաքային վարչությունը: Քաղաքի կառուցապատման համար զգալի աշխատանք են կատարել հայ արհեստավոր-

<sup>45</sup> Сводъ статистическихъ данныхъ о населении Закавказскаго края, извлеченныхъ изъ посемейныхъ списковъ 1886 г., Издавъ по распоряженію главноначальствующаго гражданскою частию на Кавказе, Бакинскоѣ губерніи, Тифлисъ, 1893, (6. с.).

<sup>46</sup> Նույն տեղում:

<sup>47</sup> Նույն տեղում:

<sup>48</sup> Описание города Шемаха, с. 21.

<sup>49</sup> Սմբատեանց Ս., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի, էջ 138:

<sup>50</sup> Բարխուտարեանց Ս., Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 159:

<sup>51</sup> Описание города Шемаха, с. 22.

<sup>52</sup> Նույն տեղում:

<sup>53</sup> Նույն տեղում: Տե՛ս նաև «Մուրճ», Թիֆլիս, N 10-11, էջ 1388:

<sup>54</sup> Քաջբերունի, Բազմամիլիոն ժառանգութիւն, թ. 5-6:

<sup>55</sup> Описание города Шемаха, с. 10.

<sup>56</sup> Նույն տեղում:

ներն ու ճարտարապետները: Քաղաքի հայերի բնակելի տները եղել են միահարկ, երկհարկ ու եռահարկ, սյունաշար պատշգամբներով ու նախասրահներով. հաշվի էին առնված բնակլիմայական պայմաններն ու շրջակա տարածքների համեմատ համապատասխանությունը: Քաջբերունու վկայությամբ. «Այնուհետև դեպի վեր, լանջի վերայ շարունակւում են քաղաքի հայկական թաղը և բազարի մի մասը իրենց տներով, փողոցներով, աղբյուրներով և այլն: Իսկ վերի՝ երկրորդ հարթավայրի վերայ տարածուած է քաղաքի նոր մասը, ավելի գեղեցիկ և կանոնաւոր մասը, հայոց և խառն ռուսների հետ քրիստոնեայ թաղը, լայն՝ խաչածև փողոցներով: Այդտեղ են ռուս ուղղափառ եկեղեցին, հայոց եկեղեցին, հայ լիւտերականաց և ռուս մոլոկանների ժողովարանները, քաղաքի այգին, պետական գանձարանը, բանտը, հասարակաց կլուբը, պետական վառօդատունը, պոստ-հեռագրատունը, զօրանոցը, հաշտարար դատարանը և այլ հիմնարկութիւնները: Քաղաքի բոլոր փողոցները ծածկուած են քարով, միայն մի փողոց խճածածկ է և համարւում է առաջին փողոց, և նա սկիզբն է Շամախի-Աղսու-Քիւրդամիր խճուղու: Նոր թաղումն են հայ և ռուս բնակչութեանց աչքի ընկնող տները. զոր օրինակ հանգուցեալ Ալեքսանդր Լալաևի տունը իւր պարտեզով որ խիստ բարձրութիւնից նայում է ներքի բազարի՝ թաթարներ թաղի և մեջիտների վերայ: Նա շինած է պետութեան կողմից Շամախին նահանգական քաղաք եղած շրջանում և այդ տան մէջ բնակւում էր նահանգապետը: Հայոց եկեղեցուց քիչ ցած բարձրանում է Նազարեանների եռայարկ սրբատաշ ամուր տունը, որ իրեն գոյութիւնը անսասան պահել է երկրաշարժերի դեմ: Ապա գալիս են խճածածկ փողոցի վերայ Քալանթարեանների երկյարկանի քարաշէն տունը, Սարգսեանի և այլոց տները: Միւս փողոցների վերայ Տեր-Ատեփանեանի, Արզումանեանի, Եգանեանի, Գեանջեցեանի և այլոց բազմաթիւ տներ: Ապա գալիս են փողոցների վերայ հայոց խանութներ...»<sup>57</sup>: Քաղաքում հայապատկան տներն իրենց ճարտարապետական հորինվածքով և շքեղությամբ զգալիորեն տարբերվել են թաթարների տներից: «Շամախու հայ և թուրքի հին բնակարանը միմեանց նման է, - գրում է «Մշակը», - իսկ նոր շինութիւնների մէջ հայինը գերազանց է: Վերջին ժամանակներս անհատների տան

<sup>57</sup> Քաջբերունի Գ., Բազմամիլիոն ժառանգութիւն, ք. 5-6:

կտուրները ծածկվում են կուպրով, որ բերվում է Բաքուից: Բոլոր թէ հին և թէ նոր տները քարաշէն են»<sup>58</sup>:

Շամախի քաղաքի ժողովրդագրության մեջ կարևոր տեղ է գրավում XIX դ. երկրորդ կեսին՝ տարբեր տարիների ընթացքում կատարված հայ ազգաբնակչության բնական աճի՝ ծնունդների, ամուսնությունների, ըստ տարիքի և սեռի մահացությունների վիճակագրության ուսումնասիրությունը: Այս առումով առաջին փորձը կատարել է Ատ. Ջելինսկին (Սկրտչյան), որը 1895 թ. Շամախու Չայոց թեմական կոնսիստորիայի տրամադրած նյութերի ու եկեղեցական չափաբերական մատյանների հիման վրա ուսումնասիրել է քաղաքի հայ ազգաբնակչության 10 տարվա՝ 1885-1894 թթ. շարժընթացը: Նշված ժամանակահատվածում հայ ազգաբնակչության շրջանում մահացությունների թիվը կազմել է 785 հոգի<sup>59</sup>: Ըստ տարեթվերի՝ պատկերը հետևյալն է.

## ԱՂՅՈՒՄԱԿ N 2

ՏԱՐԻՔԸ	1885	1886	1887	1888	1889	1890	1891	1892	1893	1894	ԸՆԴ.
0-5	39	29	20	37	46	32	40	48	37	40	368
5-10	3	4	4	5	2	2	1	9	3	3	36
10-20	4	3	1	2	4	7	5	14	3	5	48
20-30	3	3	2	4	6	6	2	14	6	8	54
30-40	4	4	6	5	4	3	3	20	1	5	55
40-50	4	3	3	2	3	5	7	8	5	3	43
50-60	4	6	5	5	8	2	8	11	7	4	60
60-70	6	8	-	3	8	6	3	9	5	3	51
70-80	5	7	1	5	3	5	8	9	2	2	47
80-90	-	2	1	1	2	-	3	2	1	-	12
90-100	-	2	1	-	1	-	-	-	-	4	8
100-	-	-	-	-	-	-	-	-	2	1	3
ԸՆԴԱՄԵ- ՆԸ	72	71	44	69	87	68	80	144	72	78	785

Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, մահացությունն առավել բարձր թիվ է կազմել մինչև 5 տարեկանների շրջանում: Նկատենք, որ աղետներից բացի (երկրաշարժ, հրդեհ և այլն), մահացությունների պատճառ են եղել նաև բժշկական սպասարկման բացակայությունը, սոցիալ-տնտեսական ծանր պայմանները և պարբերաբար կրկնվող տարափոխիկ հիվանդությունները: Դրանով է բացատրվում

<sup>58</sup> «Մշակ», Թիֆլիս, 1874, օգոստոսի 3, N 30:

<sup>59</sup> Описание города Шемаха, с. 16.



մահացությունների (հատկապես երեխաների) մեծ չափով աճը և բնակչության միջին երկարակեցության նվազումը: Երեխաների շրջանում մահացությունը մեծ թիվ է կազմել մասնավորապես ծաղիկ կոչված հիվանդության բռնկման ժամանակ: Մահացության թիվն առավել բարձր՝ 144 հոգի է եղել 1892 թ., որը պայմանավորված էր խոլերայի համաճարակի բռնկմամբ<sup>60</sup>: Սեզոնային տեսակետից, մահացությունները շատ են եղել մայիս, հունիս և հատկապես հուլիս, օգոստոս ամիսներին, ինչը պայմանավորված էր այդ ամիսներին բռնկված խոլերայի համաճարակով<sup>61</sup>: Ուսումնասիրությունների արդյունքներից պարզվում է նաև, որ, ըստ տարեթվերի, մարդկանց երկարակեցությունը տալիս է զգալի տատանումներ: Այդուհանդիպ հետևում է, որ հայ ազգաբնակչության կյանքի տևողությունը Շամախիում մոտավորապես կազմել է 75-80 տարի, իսկ երկարակյաց մարդկանց տարիքը չի անցել 100-ից<sup>62</sup>: Սեռատարիքային խմբերի վերլուծությունը ցույց է տալիս, որ 1885-1894 թթ. ընթացքում տղամարդկանց մահացությունը ավելի էր, քան կանանց, ինչը պայմանավորված էր տղամարդկանց համեմատությամբ կանանց ավելի բարձր կենսունակությամբ: Ըստ տարեթվերի՝ պատկերը հետևյալն էր<sup>63</sup>.

### ԱՂՅՈՒՍԱԿ N 3

1885		1886		1887		1888		1889	
ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.
34	38	29	42	24	20	35	34	46	41

1890		1891		1892		1893		1894	
ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.
36	32	38	42	86	58	35	37	43	35

Այժմ անդրադառնանք քաղաքի հայ բնակչության բնական աճի ընթացքին, որի առաջին նախապայմանն ամուսնությունն էր: Ատ. Ջելինսկու կողմից անցկացված վիճակագրության համաձայն, 1885-1894 թթ. ընթացքում ընտանիք են կազմել է 347 հոգի, ինչը, ըստ տարվա,

<sup>60</sup> Նույն տեղում, էջ 19:

<sup>61</sup> Նույն տեղում:

<sup>62</sup> Բարխուտարեանց Ս., Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 159:

<sup>63</sup> Описание города Шемаха, с. 16.

կազմում է 32 հոգի<sup>64</sup>: Սեզոնային տեսակետից՝ ամուսնությունների թիվն առավել մեծ է եղել 1892 թ. (խոլերայի տարի, 42 հոգի)<sup>65</sup>, համգամանք, որը պայմանավորված էր բնակչության վերարտադրության գործոնով: Այստեղ ուշագրավ է այն իրողությունը, որ 1885-1894 թթ. զբանցվել է ամուսնալուծության ընդամենը մեկ դեպք<sup>66</sup>: Նահապետականությունը եղել է շամախահայ ընտանիքների ամենաբնորոշ գիծը, և նշված դեպքը եղել է խիստ բացառիկ: Ամուսնությունները, ըստ տարեթվերի, ունեն հետևյալ պատկերը.

#### ԱՂՅՈՒՍԱԿ N 4

1885	1886	1887	1888	1889
26	30	35	25	30

1890	1891	1892	1893	1894
33	34	42	32	32

Ըստ բնական աճի՝ 1885-1894 թթ. քաղաքում ծնվել է 1413 հոգի (738 ար., 675 իգ.)<sup>67</sup>: Ըստ տարեթվերի՝ պատկերը հետևյալն է.

#### ԱՂՅՈՒՍԱԿ N 5

1885		1886		1887		1888		1889	
ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.
95	69	76	75	69	75	91	74	66	64
1890		1891		1892		1893		1894	
ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.	ԱՐ.	ԻԳ.
59	60	64	66	84	65	67	66	67	61

Աղյուսակի վերլուծությունը ցույց է տալիս, որ ծնելիությունը բարձր է եղել 1885 և 1888 թթ., իսկ ցածր՝ 1890 թ.: Այսպես, օրինակ՝ 1886 թ. վիճակագրական տվյալների համաձայն, քաղաքի 3962 հայ բնակչության հարաբերությամբ, յուրաքանչյուր 1000 շնչի հաշվով, 10 տարվա ընթացքում մահացել է 223 հոգի, իսկ ծնվել են 353-ը<sup>68</sup>: Տարվա կտրվածքով՝ հայ ազգաբնակչության յուրաքանչյուր 1000 շնչի

<sup>64</sup> Նույն տեղում, էջ 18, 20:

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>66</sup> Նույն տեղում:

<sup>67</sup> Նույն տեղում, էջ 17:

<sup>68</sup> Նույն տեղում, էջ 20:

հաշվով մահացել է 22 հոգի, իսկ ծնվել են 35-ը<sup>69</sup>: Հետևաբար՝ ծնվածների և մահացածների հարաբերակցությունը, յուրաքանչյուր 1000 շնչի հաշվով, կազմել է 13 հոգի: 10 տարվա ընթացքում ծնվածների թիվը 519-ով գերազանցել է մահացածների թիվը, ուստի քաղաքի հայ երկսեռ բնակչության բնական աճը, ըստ տարվա, կազմել է 52 հոգի<sup>70</sup>: Հետագայում ևս Շամախի քաղաքի հայ ազգաբնակչության թվի տատանումները շարունակվում են: Բնակչության շարժընթացի ոչ հաստատուն բնույթը բացատրվում է թե՛ քաղաքական ու տնտեսական անկայուն պայմաններով, թե՛ ակտիվ տեղաշարժերով: 1895 թ. դրությամբ, քաղաքում հայ լուսավորչական ընտանիքների թիվն անցնում էր 500-ից<sup>71</sup>:

1886 թ. մարդահամարից հետո 1897 թ. հունվարի 28-ին (հին տոմարով), Ռուսաստանում իրականացվեց համառուսաստանյան առաջին մարդահամարը, որն իր տեսակի մեջ եզակի էր: Դա հնարավորություն ընձեռեց մանրամասնորեն ներկայացնելու հայ ազգաբնակչության սեռատարիքային, դասային բաշխվածությունը, տեղաբաշխումն ըստ մայրենի լեզվի, դավանանքի, զբաղվածության և այլ հատկանիշների: 1897 թ. տվյալներով, քաղաքի ազգաբնակչությունը կազմում էր 20.007 (10.463 ար., 9544 իգ.) մարդ<sup>72</sup>: Նախորդ հաշվառումից հետո, անցած 11 տարիների ընթացքում, նկատվում է քաղաքի հայ ազգաբնակչության թվի աստիճանական նվազում: Մարդահամարի ժամանակ ազգությունը որոշելիս հիմք է ընդունվել մայրենի լեզուն, ուստի, 1897 թ. տվյալներով, քաղաքում մայրենի լեզվով խոսող հայ բնակչությունը կազմում էր 2515 (1274 ար., 1241 իգ.) մարդ<sup>73</sup>: Ընդ որում, ըստ դավանանքի, հայ լուսավորչականները<sup>74</sup> կազմել են 2362

<sup>69</sup> Նույն տեղում:

<sup>70</sup> Նույն տեղում:

<sup>71</sup> «Արձագանք», Թիֆլիս, 1895, հունվարի 11, N 4:

<sup>72</sup> Первая всеобщая перепись населения Российской империи, 1897, LXI. Бакинская губерния. Издание центрального статистического комитета министерства внутренних дел, под ред. Н. Тройницкаго, СПб, 1905, т. 61, с. 1 (այսուհետև՝ ПВПНПИ-1897).

<sup>73</sup> Նույն տեղում, տաբлица XIII, с. 53.

<sup>74</sup> Ռուսական պաշտոնական վիճակագրական տեղեկագրերում հայ լուսավորչական հանրությունը ներկայացված է «Գրիգորյաններ» ձևով:

(1203 ար., 1159 իգ.)<sup>75</sup>, իսկ 145 (66 ար., 79 իգ.) մարդ նշված են իբրև հայ կաթոլիկներ<sup>76</sup>: Սակայն, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Շամախի քաղաքում երբևէ չեն բնակվել մեծաթիվ կաթոլիկ հայեր: Ենթադրելի է, որ 1897 թ. մարդահամարի վիճակագրական տեղեկագրում «հայ-կաթոլիկներ» սյունակում նկատի է առնված լյութերական հայությանը, որը դարավերջին Շամախիում արդեն ձևավորված լուրջ համայնք էր<sup>77</sup>: Ըստ դավանանքի և մայրենի լեզվի՝ քաղաքում հայախոս լուսավորչականների թիվը կազմել է 2362 (1203 ար., 1159 իգ.), քրիստոնյա այլ հավատքի հետևորդներինը 140 (65 ար., 75 իգ.), ուղղափառ և միաբնակներինը 13 (6 ար., 7 իգ.) մարդ<sup>78</sup>:

Այսպիսով, ամփոփելով Շամախի քաղաքի հայ ազգաբնակչության՝ XIX դ. պատմաժողովրդագրական տվյալների վերլուծությունը, պետք է արձանագրել, որ նշված ժամանակահատվածում հայ ազգաբնակչությունը համարվում էր ազգային դիմապատկեր ունեցող խոշոր ազգություններից և էթնիկ կազմով՝ առաջատար ժողովուրդներից մեկը: Բնակչության թվով հայերը գրավում էին երկրորդ տեղը՝ զիջելով կովկասյան թաթարներին:

*ГЕВОРГ СТЕПАНЯН*  
*Горисский гос. университет*

## ПЕРЕДВИЖЕНИЕ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ В ГОРОДЕ ШЕМАХА (XIX в.)

### Р Е З Ю М Е

По свидетельству летописных рукописных, клинописных источников армянское население г. Шемаха имело древнюю историю. Анализ историко-этнографических данных XIX в. об армянском населении г. Шемаха показывает, что в указанный период армянское население по этническому составу считалось одним из ведущих народов.

<sup>75</sup> ԳՎԳՈՒՄԻ-1897, տափաշա XIII, ս. 53.

<sup>76</sup> Նույն տեղում, տափաշա XII, ս. 50.

<sup>77</sup> «Մշակ», Թիֆլիս, 1880, օգոստոսի 15, N 142: 1880 թ. դրությամբ Շամախիում արդեն կար 100 տուն հայ ավետարանական (Ղազարյան Ա., Ռընե Ներսես Լևոնյան, Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի, էջ 108):

<sup>78</sup> ԳՎԳՈՒՄԻ-1897, տափաշա XIV, ս. 68-69.

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՓԱՄԲԱԿԻ ԳԱՎԱՌԱԿՈՒՄ  
XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌԱՍՆԱՄՅԱԿԻՆ

XIX դ. շեմին նպաստավոր ռազմաքաղաքական իրադրություն էր ստեղծվել Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու համար, և ցարիզմը «ազատագրական առաքելության» դրոշի ներքո, խնամքով թաքցնելով իր արևելյան քաղաքականության նվաճողական բնույթը, չհապաղեց ձեռնամուխ լինել դրա իրագործմանը, մանավանդ որ Անդրկովկասի միացումը Ռուսաստանին օբյեկտիվորեն համապատասխանում էր նաև տեղի ժողովուրդների, մասնավորապես, հայերի՝ օտարի դարավոր ստրկական լծից ազատագրվելու վաղեմի ձգտումներին:

Արդեն 1801 թ. Ռուսաստանին միացվեց Արևելյան Վրաստանը: Վերջինիս կազմում, ի թիվս Արևելյան Հայաստանի հյուսիսային որոշ շրջանների, Ռուսաստանին անցավ նաև սույն ուսումնասիրության առարկա Փամբակի գավառակը<sup>1</sup>: Չնայած քայլի առաջադիմական էությանը՝ միավորմանը հաջորդած առաջին երկու տասնամյակները, պայմանավորված մի շարք արտաքին ու ներքին հանգամանքներով, նշանավորվեցին գավառի բնակչության թվի կտրուկ անկումով: Ռուսական կայսրությանը միավորվելու պահին Փամբակի գավառակն ուներ 30 գյուղ՝ 1032 ընտանիք կամ 5160 մարդ բնակչությամբ<sup>2</sup>: Սա, ըստ էության, բնակչության ամենաբարձր ցուցանիշն է, որ գրանցվել է գավառում մինչև XIX դ. 30-ական թթ. սկիզբը:

Սիավորմանը հաջորդած առաջին տասնամյակում նկատվում է գավառի բնակչության թվի կտրուկ նվազում, որ շարունակվում է մինչև 1817 թ.: Ընդ որում, եթե առաջին չորս տարիներին այն տեղի էր ունենում համեմատաբար դանդաղ (1805 թ. գավառակն ուներ արդեն 28 գյուղ՝ 910 ընտանիք կամ 4750 մարդ բնակչությամբ)<sup>3</sup>, ապա 1805-1817

<sup>1</sup> Ստեփնադարան, Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 157, վավ. 9: Պողոսյան Ա., Ռուս-հայ բարեկամության պատմությունից, Ե., 1974, էջ 22:

<sup>2</sup> ԱԿԱԿ, Կ. 3, Тифлис, 1868, с. 714.

<sup>3</sup> ԱԿԱԿ, Կ. 6, Կ. 1, Тифлис, 1874, с. 691-692.

թթ. այդ գործընթացն այսպես ասած՝ «ազատ անկման» վիճակում էր: 1808 թ. կայսրին ներկայացված մի զեկուցագրում նշվում էր, թե Փամբակի գավառակում կա 514 ընտանիք կամ 3886 մարդ, որից 401 ընտանիքը կամ 3297 մարդը՝ գավառի բնակչության 78,1%-ը՝ հայեր էին, իսկ մնացած 21,9%-ը՝ 113 ընտանիքը կամ 589 մարդը, մահմեդականներ<sup>4</sup>: Սա նշանակում է, որ Ռուսաստանի հետ միավորման պահից հետո անցած 7 տարիների ընթացքում գավառի բնակչության թիվը պակասել էր 518 ընտանիքով կամ 1274 շնչով: 1810 թ. գավառի բնակչության թիվը նվազում է մինչև 466 ընտանիք կամ 2330 մարդ<sup>5</sup>, իսկ 1817 թ. հասնում նվազման իր կրիտիկական կետին, երբ Փամբակում մնացել էր ընդամենը 326 ընտանիք կամ 2330 մարդ<sup>6</sup>: Ի դեպ, հարևան Շորագյալի գավառակում, ուր Ռուսական կայսրության հետ միավորման պահին հաշվվում էր 24 գյուղ՝ 808 ընտանիք կամ 4877 մարդ, 1817 թ. մնացել էր ընդամենը 174 ընտանիք կամ 870 մարդ<sup>7</sup>:

Այսպիսի աղետալի վիճակը խուճապային տրամադրություններ ծնեց նույնիսկ ռուսական բարձրաստիճան զինվորականության շրջանում: 1811 թ. սեպտեմբերի 30-ին գեներալ-մայոր Ստալ Բ-ն Կովկասի կառավարչապետ մարկիզ Ֆ. Պաուլուչչիին ներկայացրած զեկույցում գրում էր, թե ռուս-պարսկական և ռուս-թուրքական երկարատև պատերազմների պատճառով Փամբակի և Շորագյալի գավառները մարդաթափ են եղել, բնակչության մեծ մասն արտագաղթել է, շատերին գերի են տարել, և այժմ այդ երկու շրջաններում կա ընդամենը 500 ընտանիք<sup>8</sup>: Բնակչության թվի հետզհետե նվազումը Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատարությանը նույնիսկ հաշտեցրեց այն մտքի հետ, թե արժե ամայի ու անմարդաբնակ գավառակները հետ վերադարձնել

<sup>4</sup> АКАК, т. 4, Тифлис, 1870, с. 953.

<sup>5</sup> Броневский С., Новейшие географические и исторические известия о Кавказе, М., 1823, с. 60.

<sup>6</sup> АКАК, т. 6, ч. 1, с. 691.

<sup>7</sup> Սենք միտումնավոր հիշեցինք Շորագյալի կամ Արևելյան Շիրակի մասին, քանի որ Ռուսաստանի միանալուց հետո այս երկու գավառները միավորվելով կազմեցին մեկ առանձին վարչական միավոր՝ Փամբակ-Շորագյալի դիստանցիան (Սանրամասն տե՛ս Գայրապետյան Ա., Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Գյումրի, 2005):

<sup>8</sup> АКАК, т. 5, ч. 1, Тифлис, 1873, с. 115.

պարսիկներին<sup>9</sup>: Բարեբախտաբար, Փամբակ-Շորագյալի դիստանցիան շնորհիվ իր կարևոր ռազմաստրատեգիական դիրքի մնաց Ռուսական կայսրության կազմում:

Ազգաբնակչության թվի անընդհատ կրճատումն ու տնտեսության քայքայումը գավառում, անշուշտ, պայմանավորված էին ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոններով: Արտաքին գործոնների տակ նկատի ունենեք գրեթե քառորդ դար մղվող պատերազմները, ավերը, թալանն ու գերեվարումները, իսկ ներքին գործոնների տակ՝ տեղական չինովնիկների անպատմելի կամայականություններն ու չարաշահումները, անընդհատ բարձրացող հարկերը, դրանցից բխող աղքատությունը և այլն: Ստեղծված իրավիճակից դուրս գալու, ինչպես նաև Փամբակի և Շորագյալի գավառակների ազգաբնակչության տնտեսական պայմանները բարելավելու համար<sup>10</sup> 1817 թ. փետրվարի 28-ին Կովկասի նոր կառավարչապետ գեներալ Ա. Երմոլովը վերոհիշյալ գավառակները ազատեց հարկերից<sup>11</sup>, իսկ հետագա արտագաղթը դադարեցնելու նպատակով երկու գավառակների սահմանագլխին ամրոց կառուցեց՝ ժողովրդի ապահովությունը թուրք-պարսկական հարձակումներից երաշխավորելու համար: «Նույնիսկ այժմ, - գրում էր գեներալ Ա. Երմոլովը Դ. Գուրևին 1819 թ. փետրվարի 12-ին, - երբ պատերազմ չկա, բավականին վտանգավոր է այստեղ հողագործությամբ զբաղվելը, քանի որ լինելով սահմանամերձ, այս տարածքը մշտապես ենթարկվում է թուրք-պարսկական թալանչիական հարձակումների: Իսկ որպեսզի այլևս արտագաղթ չլինի, ես նվազագույնին եմ հասցրել տեղի հարկերը, քանի որ միայն այս պայմանով է կարելի ստիպել փախած փամբակցիներին ու շորագյալցիներին հետ վերադառնալ»<sup>12</sup>: Գեներալը համոզված էր, որ եթե այս քայլերը չձեռնակվեն, ապա նոր պատերազմի դեպքում Փամբակն ու Շորագյալը կմնան ամայի, ու թշնամու համար հեշտ կլինի դրանց գրավումը:

<sup>9</sup> АКАК, т. 6, ч. 2, Тифлис, 1874, с. 142.

<sup>10</sup> АКАК, т. 3, с. 228.

<sup>11</sup> Присоединение Восточной Армении к России, Сб. док., т. 2, ред. Ц. Агаян, Е., 1978, док. 8, с. 33-34.

<sup>12</sup> АКАК, т. 6, ч. 1, с. 19-21.

Ազգաբնաչության թվի տատանումների վրա մեծ ազդեցություն էր թողնում նաև գաղթը Երևանի խանության և Կարսի փաշայության տարածքներից դեպի Փամբակի գավառակ և հակառակը: 1805 թ. մարտին գրավելով Շորագյալը ռուսական զորքերը գեներալ-մայոր Նեսվետակի գլխավորությամբ առաջանալով հասնում են մինչև Էջմիածին, գրավում այն, իսկ հետ վերադառնալիս իրենց հետ վերցնում վանքի գանձերն ու շրջակա 12 գյուղերի բնակչությանը<sup>13</sup>: Մայիսի 12-ին Նեսվետակը Պ. Ցիցիանովին զեկուցում էր, թե ընդհանուր առմամբ Երևանի գյուղերից ռուսական տարածքներ է գաղթեցրել 357 ընտանիք, որից 200 տեղավորել է Փամբակում և Շորագյալում: «92 ընտանիք աշտարակցիներ, - գրում էր Նեսվետակը, - ուղարկել են Շորագյալ,...68 ընտանիք տեղավորել են Փամբակի Ղարաքիլիսայում»<sup>14</sup>: 1805 թ. օգոստոսի վերջերին Փամբակ են վերադառնում նաև Երևան փախած 400 ընտանիք թաթարները<sup>15</sup>: Շուտով սկսված ռուս-թուրքական պատերազմը (1806-1812 թթ.) սկիզբ է դնում դեպի Փամբակի գավառակ արևմտահայերի ներգաղթին:

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվող մի անվանացանկի համաձայն՝ 1807 թ. միայն Կարսի փաշայությունից Մեծ Ղարաքիլիսա գյուղում բնակություն էր հաստատել 21 ընտանիք կամ 95 մարդ, Համանլուում՝ 8 ընտանիք կամ 41 մարդ, Մեծ Բեքանդում հաստատվել էին 350 հոգուց բաղկացած 58 ընտանիքներ, ընդհանուր առմամբ՝ 87 ընտանիք կամ 486 մարդ<sup>16</sup>: Այլ փաստեր վկայում են, որ դեպի ռուսական տարածքներ ներգաղթին զուգահեռ՝ տեղի է ունեցել նաև հակառակ գործընթացը: 1801 թ. հուլիսի 13-ին գեներալ-մայոր Լազարևը գեներալ-լեյտենանտ Կնորրինգին գրում էր, թե Երևանի Մամադ խանն ու Ջյալբալի խանը 400 հոգանոց զորաջոկատով տեղավորվել են Շորագյալում և «խանին հաջողվել էր իր կողմը գրավել և տանել Փամ-

<sup>13</sup> Присоединение Восточной Армении к России, Сб. док., т. 1, ред. Ц. Агаян, Е., 1972, док. 229, с. 299-300.

<sup>14</sup> Նույն տեղում, տ. 1, док. 234, с. 307.

<sup>15</sup> Աղայան Ծ., Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, Ե., 1981, էջ 202:

<sup>16</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թթ. 22ա, վավ. 86:



բակի և Շորագյալի 14 թաթարական գյուղերի բնակիչների»<sup>17</sup>: Այսպիսի տեղաշարժեր նկատվեցին նաև Պ. Ցիցիանովի երևանյան առաջին արշավանքի ժամանակ: Ն. Դուբրովինը գրում է, թե վրաց արքայորդիներ Ալեքսանդրի, Յուլիանի և Փարնավազի հետ պայմանավորվածության համաձայն՝ Փամբակի գավառի 27 գյուղերի բնակիչներ իրենց աղալարների գլխավորությամբ փախան Կարսի փաշայության տարածք<sup>18</sup>: Արևմտահայերի գաղթը Կարսի և Ախալցխայի փաշայություններից Փամբակի ու Շորագյալի գավառակներ շարունակվեց նաև հաջորդ տարիներին: 1812 թ. հունվարի 17-ին մարկիզ Պաուլուչչին գրում էր. «Կան 57 ընտանիք ջավախքցիներ՝ տեղավորված Լիլոյում, Ախալքալաքից դուրս եկածներ՝ տեղավորված Բորչալուում, 100 ընտանիք Կարսի թաթարներ՝ տեղավորված Փամբակում և 38 ընտանիք հայ-կաթոլիկներ տեղավորված Փամբակում և Շորագյալում»<sup>19</sup>:

Իր նահանգի տարածքից դեպի ռուսական տիրույթներ արտագաղթի ուժեղացումից անհանգստացած՝ 1814 թ. Կարսի Ասիանո փաշան և Կարա բեկը, հիմք ընդունելով Բուխարեստի պայմանագրի այն կետը, որն արգելում էր հպատակների ազատ երթևեկության իրավունքը, զեներալ Ն. Ռոտչևսկից պահանջում են հետ վերադարձնել Փամբակ և Շորագյալ փախած իրենց փաշայության բնակիչներին: Իսկ գաղթածները քիչ չէին: Ըստ ռուսական պաշտոնական փաստաթղթերի՝ Մեծ Ղարաքիլիսայում դրանք 110 ընտանիք էին, Գյումրիում՝ 20, Մեծ Բեքանտում՝ 50, Համամլիում՝ 10, Փոքր Ղարաքիլիսայում՝ 20, Լոռիում՝ 60, Օծուևում՝ 6, Ճոճկանում՝ 14, Թիֆլիսում՝ 30, Ղազախում և Շամշադինում՝ 150, Կախեթում և Քարթլիում՝ 133, ընդամենը՝ 603 ընտանիք<sup>20</sup>: Թուրքական կողմի պահանջը հաղորդվում է Փամբակի և Շորագյալի գյուղերում հաստատված կարսեցիներին: Գեներալ-մայոր Սիմոնովիչը 1815 թ. մարտի 20-ին զեներալ Ն. Ռոտչևսկին ներկայացրած զեկուցագրում հայտնում էր, թե ընդհանուր առմամբ հետ վերադառնալու ցան-

<sup>17</sup> АКАК, т. 1, Тифлис, 1866, с. 599.

<sup>18</sup> Дубровин Н., Закавказье 1803-1806 гг., СПб., 1866, с. 358; Присоединение Восточной Армении к России, т. 1, док. 258, с. 323-324.

<sup>19</sup> АКАК, т. 5, с. 18.

<sup>20</sup> Մուրադյան Հ., Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Ե, 2006, էջ 141:

կություն ունեն 37 ընտանիքներ, իսկ մնալ ցանկացել են 22 ընտանիք Ղարաքիլիսայում, 22 ընտանիք Լոռիում, 13 ընտանիք Գյումրիում, 5 ընտանիք Համամլիում, 18 ընտանիք՝ Սեծ Բեքանտում և 75 ընտանիք Փոքր Ղարաքիլիսայում<sup>21</sup>: Այսինքն ռուսական հպատակություն էին ընդունում 155 ընտանիքներ: Թուրքիայից, մանավանդ՝ Կարսի փաշայությունից դեպի Փամբակ և Շորագյալ հայերի ներգաղթը նոր թափ ստացավ 1822 թ., երբ պարսկական 12000-ոց բանակը պաշարեց Կարսը: Այս պատերազմի օրերին շատ կարսեցիներ, երզրումցիներ և բայազետցիներ անցան ռուսական տարածքներ<sup>22</sup>:

1823 թ. միառժամանակ վերջ դրվեց հայերի զանգվածային գաղթին դեպի ռուսական տիրույթներ: Շուրջ քառորդ դար տևած գաղթի շնորհիվ Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջանների և մանավանդ Փամբակի գավառակի ազգաբնակչությունը զգալի համալրում ստացավ: Արդյունքում, գրեթե անմարդաբնակ Փամբակի գավառակը 1824-1825 թթ. արդեն ուներ 760 ընտանիք բնակչություն (547 ընտանիքը՝ հայկական, 213-ը թաթարական)<sup>23</sup>, ինչը գավառակի ազգաբնակչության 1801 թ. ցուցանիշից՝ 1032 ընտանիքից պակաս էր ընդամենը 272 ընտանիքով:

XIX դ. 20-ական թթ. վերջը նշանավորվեց նոր ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներով, որոնց արդյունքում 1828-1831 թթ. ընթացքում հաջորդաբար ռուս-պարսկական, ապա նաև ռուս-թուրքական սահման անցան և Ռուսաստանի հովանավորության տակ մտան թուրք-պարսկական բռնակալների լծից ազատված ավելի քան 20606 պարսկահպատակ և արևմտահայ ընտանիքներ: Սրաց մի փոքր մասը՝ հիմնականում արևմտահայեր, հաստատվեցին նաև Փամբակի գավառակում:

Այժմ անդրադառնանք մի այնպիսի կարևոր հարցի, ինչպիսին է Փամբակի գավառակում հաստատված արևմտահայ գաղթականության

<sup>21</sup> АКАК, т. 5, с. 816.

<sup>22</sup> Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 105, գործ 13, վավ. 192, էջ 2-3: Սելբոնյան Ա., Էրզրում, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Ե., 1994, էջ 127:

<sup>23</sup> Коцебу М., Описание вторжения персиян в Грузию в 1826 г., Кавказский сборник, т. XXII, Тифлис, 1901, с. 19.

թվաքանակի պարզաբանումը: Ինքնին դժվարին այս խնդրի իրագործումն էլ ավելի է բարդանում գոյություն ունեցող պատմական աղբյուրների սակավաթիվ և մեծամասամբ թերի լինելու պատճառով:

Ձեռքի տակ եղած թերևս միակ աղբյուրը, որ կարող էր պատասխանել վերոբերյալ հարցին՝ Հայաստանի Ազգային արխիվում պահվող «Проверка камерального описания Бамбакского участка Александропольского уезда Грузино-Имеретинской губернии составленная в 1842 году ("О Турецких переселенцах")<sup>24</sup>: վերնագրով ստվարածավալ աշխատությունն է: Սակայն փաստաթուղթը կազմողները, որոնք պարտավոր էին անդրադառնալ Փամբակում հաստատված արևմտահայության թվաքանակի հարցին, ժամանակին մեզ անհայտ պատճառներով շրջանցել են այն և ներկայացրել միայն գավառակի 1832 թ. ժողովրդագրական դրությունը: Փաստորեն, աղբյուրի թերիության պատճառով Փամբակի գավառակում հաստատված արևմտահայության թվաքանակի հարցը առայսօր մնում է ոչ լիարժեք պարզաբանված:

Ըստ պաշտոնական վարկածի՝ արևմտահայերի մեծ ներգաղթերից հետո Փամբակ-Շորագյալի դիստանցիայում ապրում էր 4901 ընտանիք կամ 16641 մարդ (այս և ստորև բերվող թվային տվյալները վերաբերում են միայն արական սեռին), այդ թվում 214 ընտանիք կամ 620 մարդ հոգևորականներ, 3 ընտանիք կամ 20 մարդ մելիքներ, 1536 ընտանիք կամ 5425 մարդ բնիկներ և 3148 ընտանիք կամ 10575 մարդ արևմտահայ գաղթականներ<sup>25</sup>:

Այն, որ Փամբակ-Շորագյալի դիստանցիայի բնիկ և նորեկ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ պաշտոնական տվյալները թերի են և չեն համապատասխանում իրականությանը արդեն մշել ենք

---

<sup>24</sup> 1842 թ. Փամբակի գավառակում նոր աշխարհագիր չի անցկացվել և «Проверка камерального описания Бамбакского участка Александропольского уезда Грузино-Имеретинской губернии» վերնագրով ձեռագիրն առանձին աշխարհագրեր չէ: Ուղղակի 1842 թ.-ից առաջ կատարվել է «*Կամերալ ցուցակագրման վերստուգում*», որի արդյունքները, հատոր առ հատոր հավաքվելով, կազմվել են 1842 թ. (Սամրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 82, ք. 1-552):

<sup>25</sup> *Обозрение российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях*, ч. 2, СПб., 1836, с. 303-304.

2005 թ. մեր հրատարակած աշխատության մեջ<sup>26</sup>: Եվ հետո ինչպես կարող էր մինչանց հաջորդած ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ավարտին Փամբակ-Շորագյալի դիստանցիայում ապրել 1536 ընտանիք, եթե 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի սկզբին Երևանի Յուսեփն խանի հանկարծակի հարձակման, խաղաղ բնակչության շրջանում գերեվարությունների, թալանի, բնակչության զանգվածային արտագաղթի հետևանքով դիստանցիայի մի հատվածում Շորագյալի գավառակում բնակչության ընդհանուր թիվը 1826 թ. գրանցված 496 ընտանիքի փոխարեն նվազել էր մինչև 175 ընտանիք: Այս դեպքում ինչպես կարող էր դիստանցիայի մյուս հատվածում՝ Փամբակի գավառում, որ մեր կարծիքով կրած պիտի լիներ նույն զրկանքները, 1828-1831թթ. գաղթերի նախօրեին ապրել 1361 ընտանիք (եթե տեղաբնակների թիվը իրոք 1536 ընտանիք է, ապա դրանից 175 ընտանիք շորագյալցիներին հանելու դեպքում փամբակցիների թիվը կկազմի 1361 ընտանիք): Եթե նույնիսկ ընդունենք, որ Փամբակի գավառակում արևմտահայերի գաղթերի նախօրեին կար 1361 ընտանիք, ապա կստացվի, որ 1828-1831 թթ. զանգվածային ներգաղթի պայմաններում հարևան Շորագյալի գավառակ գաղթել են 3591 ընտանիքներ՝ բնակչության ընդհանուր թիվն այս գավառակում հասցնելով 3866 ընտանիքի,<sup>27</sup> մինչդեռ Փամբակի գավառակ՝ միայն 19 ընտանիք, որովհետև 1842-ով թվագրված «Կամերալ ցուցակագրման վերստուգում» ձեռագրերի համաձայն՝ 1829-1831 թթ. գաղթերից անմիջապես հետո այստեղ ապրում էր ընդամենը 1379 ընտանիք<sup>28</sup>: Այսպիսով, եթե սխալ են պաշտոնական տվյալները Փամբակ-Շորագյալի դիստանցիայի բնիկ ազգաբնակչության թվի մասին, ապա ինքնըստինքյան ընդունելի չեն դրանք

<sup>26</sup> Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 145-147:

<sup>27</sup> 1829-1831 թթ. Արևմտյան Հայաստանի տարբեր փաշայություններից Շորագյալի գավառակ գաղթեցին շուրջ 3480 ընտանիքներ: Արդյունքում, նախկին 20 կիսաավեր ու գրեթե անմարդաբնակ գյուղերի փոխարեն 1832 թ. գյուղերի թիվը հասավ 76-ի, իսկ բնակչությունը՝ 3866 ընտանիքի կամ 21695 մարդու, ընդ որում 1350 ընտանիքը կամ 7250 մարդը (3980-ը արական, 3270-ը իգական սեռի) բնակվում էր Գյումրիում, իսկ 2516 ընտանիքը կամ 14445 մարդ՝ գավառի 76 գյուղերում (Հայրապետյան Ա., Արևմտահայ գաղթականության տեղաբաշխումը Շորագյալի գավառում (Արևելյան Շիրակ) 1829-1831 թթ., ԳԳ ԳԱԱ ՇԳԳԿ Գիտական աշխատություններ, հ. 5, Գյումրի, 2005, էջ 153-168):

<sup>28</sup> ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 82:

նաև 1829-1832 թթ. դիտանցիա և մասնավորապես Փամբակ գաղթած արևմտահայության թվի տեսակետից:

Արխիվային նյութի սակավությունը հնարավորություն չի տալիս փոքրիշատե պատկերացում կազմելու ժողովրդագրական այն գործընթացների մասին, որ կարող էին տեղի ունենալ Փամբակի գավառակում 1825-1829 թթ., այնուամենայնիվ, ձեռքի տակ եղած աղբյուրների<sup>29</sup> և մանավանդ «Կամերալ ցուցակագրման վերստուգում» ձեռագրերի մանրակրկիտ ուսումնասիրությամբ կարելի է գալ այն համոզման, որ 1828-1831 թթ. գաղթերի նախօրեին վերոհիշյալ հարցում լուրջ փոփոխություններ 1824-1825 թթ. տվյալների համեմատ չեն եղել: Վերոբերյալից ելնելով հարկ է ենթադրել, որ 1829-1831 թթ. Արևմտյան Հայաստանի տարբեր փաշայություններից Փամբակի գավառակ գաղթածների թիվը հասել է նվազագույնը 600-700 ընտանիքի: Բնակչության թվի կտրուկ աճի շնորհիվ 1829-1832 թթ. կամերալ ցուցակագրման տվյալներով Փամբակի գավառակի գյուղերի թիվը հասավ 37-ի, բնակչությանը՝ 1379 ընտանիքի կամ 5010 մարդու (արական սեռի), որից 1302 ընտանիքը կամ 4760 մարդը՝ գավառի բնակչության 94.4%-ը՝ հայեր էին, 4.9%-ը՝ 68 ընտանիքը կամ 213 մարդը՝ թաթարներ, իսկ մնացած 0.7%-ը՝ 9 ընտանիքը կամ 37 մարդը՝ քրդեր<sup>30</sup>:

### Փամբակի գավառակի 1832 թ. կամերալ ցուցակագրում

գյուղերը	ընտ.	ար.	սգգ.	դասիա ճանաչ.	կուրդեր	մոտ.	ար.	սգգ.	յավանանք
1. Աղբյուր	37	152	այ	հայ ստաբել	20. Դարթազ	13	56	հայ	այ ստաբել
2. Դառատույս	12	36	-/-	-/-	21. Դյալ	51	223	-/-	-/-
3. Դալբախի	81	184	-/-	-/-	22. Սիճ Լարթաբլիսա	141	181	-/-	-/-
4. Անլիթեկ	36	126	-/-	-/-	23. Վարդանի	27	12	թաթար	լուծի մահմ.
5. Սեճ Բեքավո	133	505	-/-	-/-	24. Տարաբլի	22	105	այ	այ ստաբել
6. Դարա	32	108	-/-	-/-	25. Բրդիթեմ	48	112	-/-	-/-
7. Լաթամո	42	181	-/-	-/-	26. Ըստալի	20	113	-/-	-/-
8. Դուլուջա	17	36	այ	այ կաթոլիկ	27. Դարթան	14	39	-/-	-/-
9. Գոգարան	22	59	-/-	-/-	28. Դուրան	37	187	-/-	-/-
10. Համանի	125	186	այ	այ ստաբել	29. Վարդաբուր	23	75	-/-	-/-
11. Վարդունո	82	185	-/-	-/-	30. Գրդաբլի	11	32	-/-	-/-
12. Դալադան	20	36	-/-	-/-	31. Գուլագարակ	38	108	-/-	-/-
13. Դուրալի	23	30	թաթար	չիտ մահմ.	32. Գերիեղ	35	109	-/-	-/-
14. Սարալ	18	51	թաթար	լուծի մահմ.	33. Տելաթլի	39	149	-/-	-/-

<sup>29</sup> Обзорение российских владений за Кавказом..., ч. 2-4, СПб., 1836.

<sup>30</sup> ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 82:

15. Գալստիական	32	137	--	--	34 Ազատակ	11	30	--	--
15. Գալստի	8	29	--	--	36 Գալստի	30	145	--	--
17. Գալստի	35	114	--	--	38. Աճ Դարձրի/հաս 2-րդ	24	78	--	--
18. Արտու	15	36	--	--	37. Կահնգատ	48	123	--	--
19. Գալստի	9	37	չուր	չիս սեռ					
Ը Ն Գ Ս Ք Ե Ն Ը						1370	3010		

Հայաստանի գործընթացը Հյուսիսային Հայաստանի այս հատվածում շարունակվեց նաև հաջորդ տասնամյակի ընթացքում, երբ ըստ պաշտոնական տվյալների՝ շուրջ 145 գաղթական ընտանիքներ, չհամակերպվելով իրենց նոր բնակավայրերում ստեղծված պայմաններին, նորից բռնեցին գաղթի ճամփան ու հաստատվեցին Փամբակի գյուղերում<sup>31</sup>:

Սեր կարծիքով, 1830-ական թթ. կեսերին գրանցված այս նոր ներգաղթը ընդունել է շատ ավելի մեծ մասշտաբներ, որովհետև 1842-ով թվագրված «Կամերալ ցուցակագրման վերստուգում» ձեռագրերի համաձայն՝ XIX դ. 30-ական թթ. վերջին գավառական ունեցել է նախկին 1379 ընտանիքի փոխարեն 1738 ընտանիք կամ 6097 մարդ (այս և ստորև բերվել բոլոր թվային տվյալները վերաբերում են միայն արական սեռին - Ա.Յ.) բնակչություն: XIX դ. առաջին երեսնամյակի ժողովրդագրական վիճակին վերաբերող սկզբնաղբյուրների և հատկապես արխիվային նյութի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1832-1842 թթ. ընթացքում շուրջ 359 ընտանիքներ կամ 1087 մարդ, այդ թվում՝ 284 ընտանիք կամ 859 մարդ Արևմտյան Հայաստանից, 29 ընտանիք կամ 71 մարդ Հայկական մարզից, 34 ընտանիք կամ 111 մարդ Տամբուլի երկրամասից և 12 ընտանիք կամ 46 մարդ Շորագյալի գավառակից, գաղթել ու հաստատվել է Փամբակի 39 գյուղերում: Ընդ որում, նորեկներից 183 ընտանիքը կամ 602 մարդը հաստատվելով գավառակում, հիմնել է 12 գյուղ (Թափանլի, Ղզըլորան, Տուրմակատուր, Ղարամամադ, Լոռի, Լեջան, Ուռուտ, Աարչապետ, Շիշթափա, Փոքր Ղարաքիլիսա, Սովուղբուլաղ, Նիկիտինո), իսկ մնացած 176 ընտանիքը կամ 485 մարդը համալրել է արդեն գոյություն ունեցող գյուղերի բնակչության թիվը:

<sup>31</sup> Կորկոտյան Զ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931 թթ.), Ե., 1932, էջ XXIX-XXX:

**1833-1842 թթ. ընթացքում Հայկական մարզի ու Շորագյալի գավառակի գյուղերից, ինչպես նաև Թուրքիայից Փամբակի գավառակ տեղափոխվածներ**

ուր են նկն	տրք	դուռերից	յնա.	տր.	իգ.	մը.	տգ.	դավա- մանց
1. Դարարոյա	1833թ.	Թուրքիայից	8	40	-/-	40	հայ	հայ առաքել.
	1838թ.	Երևանի գավառից	2	3	-/-	3	չուրդ	չիա մահմեդ.
2. Դայթսխյալի	1833թ.	-/-	10	32	-/-	32	հայ	հայ առաքել.
3. Ափրիսեկ	1840թ.	-/-	3	18	-/-	18	-/-	-/-
4. Սեմ Բեքառ	1840թ.	-/-	18	50	-/-	50	-/-	-/-
5. Դարալ	1830թ.	-/-	10	22	-/-	22	-/-	-/-
6. Ասքրան	1840թ.	Թուրքիայից	8	17	-/-	17	հայ	հայ առաքել.
	1838թ.	Երևանի գավառից	1	2	-/-	2	չուրդ	չիա մահմեդ.
7. Դելդրան	1841թ.	Երևանի գավառից	2	9	-/-	9	չուրդ	չիա մահմեդ.
8. Դուլուջա	1842թ.	-/-	1	2	-/-	2	-/-	-/-
8. Գոգարան	1840թ.	Թուրքիայից	4	13	-/-	13	ույ	հայ կաթոլիկ
	1838թ.	Երևանի գավառից	1	2	-/-	2	չուրդ	չիա մահմեդ.
10. Գամանլի	1840թ.	Թուրքիայից	20	46	-/-	46	ույ	հայ առաքել.
11. Վարդուլ	1840թ.	-/-	18	25	-/-	25	-/-	-/-
12. Դաչաղան	1840թ.	-/-	7	17	-/-	25	-/-	-/-
13. Դուրալի	1840թ.	-/-	2	8	-/-	8	-/-	-/-
14. Աարալ	1838թ.	Երևանի գավառից	5	18	-/-	18	աքար	սունի մահմ.
15. Գաջիդարա	1840թ.	Թուրքիայից	2	6	-/-	8	ույ	հայ առաքել.
	1841թ.	Երևանի գավառից	2	6	-/-	6	աքար	սունի մահմ.
16. Սեմ Դարաքիլիսա	1834թ.	Թուրքիայից	6	28	-/-	28	ույ	հայ առաքել.
17. Շահսլի	1838թ.	-/-	5	15	-/-	15	-/-	-/-
18. Դուրսան	1838թ.	-/-	8	17	-/-	17	-/-	-/-
19. Վարդարուր	1840թ.	-/-	4	18	-/-	18	-/-	-/-
20. Գեղեղ	1840թ.	-/-	8	18	-/-	18	-/-	-/-
21. Սեմ Դարաքիլիսա 2-րդ	1841թ.	Թուրքիայից	18	26	-/-	26	ույ	հայ առաքել.
	1840թ.		3	6	-/-	6	չուրդ	չիա մահմեդ.
22. Գայլարեկ	1841թ.	Երևանի գավառից	2	4	-/-	4	չուրդ	չիա մահմեդ.
23. Շահնազար	1840թ.	-/-	4	8	-/-	8	չուրդ	չիա մահմեդ.
24. Դանցուդազ	1840թ.	Երևանի գավառից	2	4	-/-	4	չուրդ	չիա մահմեդ.
25. Գայլալի	1841թ.	Երևանի գավառից	1	3	-/-	3	աքար	սունի մահմ.
26. Արբուտ	1840թ.	-/-	2	8	-/-	8	աքար	սունի մահմ.
27. Դարբազ	1841թ.	-/-	1	2	-/-	2	չուրդ	չիա մահմեդ.
ԸՆԴԱՄՈՆԸ			178	485		185		

Վերոբերյալ ժողովրդագրական տեղաշարժերի արդյունքում նորաստեղծ Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի գավառակը «Կամերալ»

**ցուցակագրման վերստուգում»** ձեռագրերի համաձայն 1842 թ. արդեն ուներ 49 գյուղ 1738 ընտանիք կամ 6097 մարդ բնակչությամբ: Ընդ որում, գավառակի 49 գյուղերից 30-ը ամբողջությամբ, իսկ 11-ը մասամբ բնակեցված էին 1500 ընտանիք (5304 մարդ) հայերով, որ գավառի բնակչության 86.3%-ն էր: Հայերից հետո քանակով երկրորդը՝ 175 ընտանիք (605 մարդ) թաթարներն էին: Ապրելով 6 գյուղերում ամբողջությամբ և 2-ում հայերի հետ խառը՝ սրանք կազմում էին գավառի բնակչության 10.1%-ը: Մինչդեռ 1 գյուղում ամբողջությամբ և 9-ում հայերի հետ խառը ապրող 29 ընտանիք (77 մարդ) քրդերը կազմում էին միայն 1.7%, իսկ 34 ընտանիք (111 մարդ) ռուսները՝ 1.9%:

Ըստ դավանանքի՝ նույն 49 գյուղերում ապրող 1738 ընտանիքները բաժանվում էին հինգ խմբերի: Հայ առաքելականներ էին Փամբակի գավառակի բնակչության 82.3%-ն ու հայ ազգաբնակչության 95.3%-ը (1430 ընտանիք կամ 5396 մարդ): Հայ կաթոլիկներ էին բնակչության 4%-ը կամ հայերի 4.7%-ը: Շիա մահմեդականներ էին բնակչության 1.7%-ը կամ մահմեդական ազգաբնակչության 14.2%-ը (29 ընտանիք կամ 77 մարդ), իսկ սունիներ՝ բնակչության 10.1%-ը կամ մահմեդականների 85.8%-ը (175 ընտանիք կամ 605 մարդ): Վերջապես, մուսուլմաններ էին գավառակի բնակչության 1.9%-ը:

### Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի տեղամասի 1842 թ. կամերալ ցուցակագրում

Գյուղ	Գյուղացիներ	Սուլթաններ	Մուսուլմաններ	Քրդեր	Ռուսներ	Ինչ	Ընդամենը	Գյուղացիներ	Սուլթաններ	Մուսուլմաններ	Քրդեր	Ռուսներ
1. Ալյուրտա	17	82	—	—	—	—	—	27. Բաղիբնի	22	108	—	—
2. Դաղարտա	202	383	—	—	—	—	—	28. Կոնյուկ	48	112	—	—
3. Դաղբաղի	71	338	—	—	—	—	—	29. Կոնյուկ	28	328	—	—
4. Անիկոնի	42	44	—	—	—	—	—	30. Դաղարտա	14	38	—	—
5. Անիկոնի	148	366	—	—	—	—	—	31. Դաղարտա	43	54	—	—
6. Դաղարտա	42	131	—	—	—	—	—	32. Դաղարտա	37	37	—	—
7. Ասլաբնի	401	782	—	—	—	—	—	33. Դաղարտա	11	32	—	—
8. Անիկոնի	10	73	—	—	—	—	—	34. Կոնյուկ	8	30	—	—
9. Դաղարտա	182	418	—	—	—	—	—	35. Կոնյուկ	36	108	—	—
10. Դաղարտա	171	382	—	—	—	—	—	36. Կոնյուկ	41	28	—	—
11. Դաղարտա	261	522	—	—	—	—	—	37. Կոնյուկ	38	48	—	—
12. Կոնյուկ	148	312	—	—	—	—	—	38. Կոնյուկ	7	18	—	—
13. Կոնյուկ	78	318	—	—	—	—	—	39. Կոնյուկ	4	20	—	—
14. Կոնյուկ	27	78	—	—	—	—	—	40. Կոնյուկ	11	26	—	—
15. Կոնյուկ	223	380	—	—	—	—	—	41. Կոնյուկ	24	72	—	—
16. Կոնյուկ	21	37	—	—	—	—	—	42. Կոնյուկ	38	48	—	—
17. Կոնյուկ	234	518	—	—	—	—	—	43. Կոնյուկ	2	3	—	—
18. Կոնյուկ	8	18	—	—	—	—	—	44. Կոնյուկ	17	48	—	—
19. Կոնյուկ	38	114	—	—	—	—	—	45. Կոնյուկ	23	36	—	—
20. Կոնյուկ	17	2	—	—	—	—	—	46. Կոնյուկ	12	38	—	—
								47. Կոնյուկ	8	33	—	—



21. Գաղափարական շրջան	12	81	հայեր	քիս ժամ	В 1840-1850-ական	13	98		
22. Կաթնալի	131	182	հայեր	իս ժամ	47 Արև Գործարարական 2-րդ	403	1000	հայեր	հայ առաջին իրա ժամ
23. Դեղակ	61	223	հայեր	հայ առաջին	48. Շահնազար	484	1230	հայեր	հայ առաջին իրա ժամ
24. Արև Գործարարական	147	507	հայեր	հայ առաջին	49 Կիկի տիմ	34	111	ստե	մոլորակ
25. Գաղափարական շրջան	37	98	հայեր	իս ժամ		738	1597		

Այսպիսին էր Փամբակի գավառակի ժողովրդագրական վիճակը Ռուսական կայսրության հետ միավորումից մինչև Ալեքսանդրապոլի գավառի ստեղծման պահին ընկած ժամանակահատվածում:

*АРМЕН АЙРАПЕТЯН  
ИИ НАН РА*

## ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В БАМБАКСКОМ УЕЗДЕ В ПЕРВОМ СороКОЛЕТИИ XIX в.

### РЕЗЮМЕ

В 1801 г. в составе Восточной Грузии к России присоединился и Бамбакский уезд со своими 30-ю селами и 1032 семьями. Следующие два десятилетия после присоединения обусловленные некоторыми внешними и внутренними обстоятельствами знаменовались резким снижением численности населения в уезде (в 1817 г. в Бамбаке осталось 326 семей).

В 1829-1831 гг. после русско-турецкой войны из разных частей Западной Армении в Бамбак переселились около 600-700 семей, в следствие чего в 1832 г. в уезде число сел дошло до 37-и, население - 1379 семей. В середине 30-ых гг. XIX в. началось новое переселение западных армян, так что в момент создания Александропольского уезда (1840 г.) Бамбакский участок уже имел 1738 семей.

## ՄԻ ԴՐՎԱԳ ԶԻՆԱՏԱՐ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ ազատագրական շարժման տարեգրության մեջ բացառիկ դրամատիկ ու հերոսական կերպար է Վարդան Գոլոշյանը, որն իր մատակցած սիրով և անկեղծությամբ հայրենիքի զոհասեղանին:

Վ. Գոլոշյանը ծնվել է 1867 թ. հոկտեմբերի 28-ին Թիֆլիսում: Մի համեստ ընտանիքի զավակ էր և ընտանիքի սիրելին: Գոլոշյանների ընտանեկան հարկի ներքո խոր արմատներ էին նետել ազգային և քաղաքական ծեսերն ու սովորույթները:

Տասներկու տարեկան հասակում՝ 1877-1879 թթ. Վարդանը ուսումնառում է հանրահռչակ Ներսիսյան դպրոցում: Այնուհետև ուսումնառությունը շարունակում է Թիֆլիսի ազդեցիկ գիմնազիաներից մեկում, ուր մնում է մինչև 1882 թ.: Դեռևս պատանի էր Գոլոշյանը, բայց անգամ այդ հասակում նա արդեն կրեց իր ժամանակի քաղաքական ու հոգևոր-բարոյական խոր ազդեցությունը:

Իսկ ապրած ժամանակաշրջանը այնքան հարուստ էր ռուս-թուրքական հերթական պատերազմից և բալկանյան ժողովուրդների հերոսաշունչ ապստամբություններից եղած ցնցող տպավորություններով ու վեսն իդեալներով: Այդ տարիներին մի անսովոր ոգևորություն էր տիրում Կովկասի հայ գրական-հասարակական ու քաղաքական շրջաններում: Այդ օրերին «...գրական ասպարեզում փայլում էր Րաֆֆին. այդ համակրելի մարդու գործունեությունը ղեկավարում էր մի մեծ գաղափար՝ Հայաստանի ազատութեան գաղափարը: Նրա ընթերցանությունը ներշնչեց ինձ վառ ու ազնիւ սէր դէպի ազգ ու հայրենիք, դէպի տառապեալ հայութիւնը»<sup>1</sup>, - իր նամակում գրել է Վ. Գոլոշյանը:

Տասնհինգամյա Վ. Գոլոշյանը դուրս է գալիս Կովկասից և ուսանելու է մեկնում Մոսկվայի Լազարյան Ճեմարանը, որի հայրենասիրական ոգին բարենպաստ ազդեցություն է թողնում նրա վրա: Պատանին

<sup>1</sup> Նիրվանեան Ա., Յեղափոխականներ, Ժնև, 1905, էջ 6:

տարվում է հայրենիքի ազատության վսեմ գաղափարներով, գրում ոտանավորներ և պիեսներ: Սակայն շուտով նրա համար նեղ ու սահմանափակ դարձավ ճեմարանը և մի քանի անգամ փորձեց փախչել այնտեղից:

Ի վերջո, իր մեծ նպատակը՝ մեկընդմիջտ մեկնել Արևմտյան Հայաստան, հայտնեց ճեմարանի վարչությանը, որը տղայի ծնողներին տեղյակ պահեց այդ մասին: Հայրը եղավ Մոսկվայում և որդու հետ միասին վերադարձան Թիֆլիս: Ծնողները ձգտում էին նրան հեռու պահել այդ մտադրություններից և նրանց համառ ջանքերով Վարդանին կրկին ընդունեցին Թիֆլիսի գիմնազիայում:

Բայց զուր էին այդ ջանքերը: 1883 թ. Գուլոշյանը կրկին անհայտացավ և այս անգամ բավական երկար ժամանակով: Թողած երկտողում ծնողներին հայտնում է իր նպատակը՝ գնալ Տաճկահայաստան և մվիրվել հայոց ազատագրական շարժմանը:

Տասնվեց տարեկան պատանին ներքին խոր համոզմունքներից դրդված զինվորագրվում է ազգի ազատության համար մղվող պայքարին: Լինում է ռուս-պարսկական սահմանի վրա գտնվող մի շարք բնակավայրերում, այնուհետև հասնում է Սալմաստ գավառը և հաստատվում Հաֆթվան գյուղում, որը դառնում է նրա սիրած կայանը ու ապաստարանը:

Մի քանի ամիս այնտեղ մնալուց հետո, նա պատրաստվեց առաջին անգամ ոտք դնել այն երկիրը, ուր մշտնջենական արյան հոտ է բուրում: Ճանապարհին հազար ու մեկ վտանգ հաղթահարելով, մտնում է Վան, ուր սկսում է իր քարոզչական գործունեությունը: Վանից ծնողներին գրած նամակում կային այսպիսի խռովահույզ տողեր. «...Ես ուրիշ թանկագին և հազուագիտ բան չունիմ, որ ուղարկեմ ձեզ. ընդունեցե՞ք, ուրեմն, ձեր թշուառ Հայաստանի տխրագին աւերակների ողջոյնը»<sup>2</sup>:

Վանում նա մնաց ոչ երկար և նորից ուղևորվեց դեպի Սալմաստի Հաֆթվան գյուղը, ուր կարողանում է ազգային-հայրենասիրական ոգով վարակել շուրջբոլորը: Այստեղ նա երկրորդ անգամ հանդիպում է Մ. Փորթուգալյանին և երկար, հանգամանալից զրուցում վերջինիս

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 13:

հետ, որն այդ պահին Վանից Սալմաստ էր ժամանել<sup>3</sup>։ Գոլոշյանը հայտնում է իր նպատակը. զինվորական խումբ կամել և շրջել ամբողջ Արևմտահայաստանով, կռվել և զարթնեցնել նիրհած հայությանը։ Փորթուզյանը անչափ հավատում է երիտասարդ հեղափոխականի գաղափարական անդրդվելի նվիրվածությանը և խոստանում օժանդակել իրեն։

Գոլոշյանը խրախուսված այդ խոստումներից, որոշ ժամանակ անց մեկնում է Վան, սակայն չի գտնում Փորթուզյանին, որն արդեն վտարված է լինում։ Հուսահատ Գոլոշյանը ուղևորվում է դեպի Մուշ, որից հետո կրկին վերադառնում է Հաֆթվան և մի տարի լիովին նվիրվում է կրթական գործին։ 1886 թ. աշնանը նրա ջանքերով բացվում է Հաֆթվանի գրասիրաց ընկերությունը և կենտրոնական գրադարան-ընթերցարանը։

1887 թ. Գոլոշյանը ժամանում է Թիֆլիս։ Սակայն շատ չանցած նա նորից մեկնում է Արևմտահայաստան՝ այս անգամ ընդմիջտ։ Հետագայում հորը ուղարկած նամակում գրում է. «ես անկարող եմ զգում անտես անել հայրենիքի շահերը, իսկ այդ շահերին անձնատուր լինելովս ձեզ մեծ դժբախտություն եմ հասցնում...ես որոշեցի ձեզ մեծ դժբախտություն տալ, որպեսզի շատ ընտանիքների արտասուքը սրբել կարողանամ»<sup>4</sup>։

Իր կյանքի այս շրջանում Գոլոշյանը հանդիպում է Հովհաննես Ազրիպասյանի և Կարապետ Գուլագոսյանի հետ, որը բախտորոշ նշանակություն է ունենում հետագա ձեռնարկների համար։ Հ. Ազրիպասյանը ծնվել է Վանում, մոտավոր տվյալներով՝ 1866 թ.։ Հայրը բավական հարուստ ու ազդեցիկ անձնավորություն էր, հայտնի իր անկեղծ բնավորությամբ։ Մի օր Արծակից Վան վերադառնալիս նա բռնվում է քրդերի կողմից և բարբարոսաբար սպանվում։ Փոքրիկ Հովհաննեսի, իր երկու եղբայրների ու քույրերի խնամքի հոգսը ընկնում է մոր ուսերին։ Ընտանիքին աջակցում էր իրենց հոր լավագույն բարեկամը՝ Խրիմյան Հայրիկը, որը չթերացավ կատարելու իր բարեկամական պարտավորությունները։

<sup>3</sup> Պողոսյան Հ., Վասպուրականի պատմությունից (1850-1900), Ե., 1988, էջ 235։

<sup>4</sup> Նիրվանեան Ս., նշվ. աշխ., էջ 20։

Հովհաննեսը եղբայրներից ամենից կրտսերն էր, բայց ամենա-  
քաջն ու խիզախը: Մեծ եղբայրը՝ Կարապետ Ագրիպասյանը նույնպես  
դարձավ հեղափոխական և մեռավ թուրքական ու ռուսական բանտե-  
րում ստացած թրջախտից:

3. Ագրիպասյանը կրթություն ստացավ Վարազի և Հանկոյսների  
թաղի դպրոցներում: Այնուհետև դարձավ Փոթթուզայանի Վարժապե-  
տանոցի անդրանիկ սաներից մեկը, որի փակումից հետո Խրիմյանի  
հանձնարարությամբ ուղարկվեց Մուշ՝ Առաքելոց վանքում շարունակե-  
լու իր կրթությունը: Բայց շուտով ետ վերադարձավ և ընդունվեց «Կեդ-  
րոնական» վարժարանը: Այդ տարիներին նա բազմիցս ենթարկվեց  
թուրքական իշխանությունների հալածանքներին և օսմանյան բանտե-  
րից լավագույն համարելով պանդխտությունը, թողեց հայրենի Վանը,  
ուղևորվելով Կովկաս: Որոշ ժամանակ անց վերադառնալով Էրզիր,  
չրջեց ու գործեց Վանի գյուղերում, Բաղեշում, Աասունում, Մուշում, Բու-  
լանխում, Ալաշկերտում, Կարինում:

4. Գուլագսոյանը ծնվել է 1867 թ., Վանում: Սովորել է ծննդա-  
վայրի բողոքականների վարժարանում, ապա կրթությունը շարունակել  
էջմիածնի Գևորգյան ճեմարանում<sup>5</sup>: Հինգ տարի անց՝ 1885 թ. հեռացել  
է ճեմարանից:

Խռովահույզ ճակատագիրը Գուլոշյանին, Գուլագսոյանին և Ագ-  
րիպասյանին միմյանց կապեց որպես անանձնական մեծ գաղափարնե-  
րի զինակիցներ, դարձնելով նաև կյանքի և մահվան ընկերներ: Գուլոշ-  
յանն ու Ագրիպասյանը միմյանց հանդիպեցին Հաֆթվան գյուղում: Հան-  
դիպումը շատ հուզիչ էր ու բարեկամական: Նրանք ուխտեցին  
արևմտահայկական գավառներում կազմել հայդուկային խմբեր և զեն-  
քով պայքարել արևմտահայության իրավունքների պաշտպանության  
համար:

Իսկ 1880-1890-ական թթ. հայ հեղափոխականների համար մե-  
ծագույն դժվարությունը զենքի ու զինամթերքի հայթայթումն էր, որը  
կապված էր մեծ ռիսկի հետ: Հարկավոր էր ապագա ձեռնարկների հա-  
մար զենք ունենալ և «...բոլորի մտածածը, բոլորին զգացածը մէկ էր.  
զինուիլ... Ձինուիլ, բայց ինչպէ՛ս, ուրկէ՛՞ ճարել զենքը: Եւ բնագոյաբար

<sup>5</sup> Պողոսյան Հ., նշվ. աշխ., էջ 237:

ամենուն աչքը կուղղուէր դէպի արտասահման - դէպի Պարսկաստան ու Կովկասը մանաւանդ»<sup>6</sup>։

Դեպի Էրզիր գեւք տեղափոխելու ճանապարհին հայ հեղափոխականները ունեցան իրենց, այսպես կոչված, արյան մկրտությունը։ Այդպիսի ընդհարում թուրքական ժանդարմական ուժերի հետ տեղի ունեցավ 1889 թ. մայիսի 26-ին, որն իր ունեցած ընդհանուր նշանակությամբ դարձավ խորհրդանշական իրադարձություն Էրզրում գործող հեղափոխական երիտասարդության համար։ Երեք ուխտյալ զինակիցներ՝ Գոլոշյանը, Ագրիպասյանն ու Գուլագսոյանը 1889 թ. մայիսի 25-ին դուրս են գալիս Զաֆթվանից և ուղղություն վերցնում Վան։ Մեկ օր անց Չուխ-Կետուկ հայտնի կիրճում դեմ առ դեմ հանդիպում են մի խումբ լավ զինված ժանդարմների։ Սկսվում է անհավասար ու հերոսական մարտը։ Զայ քաջերը դիմադրում են ու կռվում մինչև արյան վերջին կաթիլը։ Թիկունքից մահացու վերք է ստանում Ագրիպասյանը և գետին տապալվում։ Վիրավոր, արյունաքամ վիճակում գտնվող Գոլաշյանը շարունակում է մաքառել, մինչև ևս մեկ վերք ստանալով ընկնում է գետնին, իսկ Գուլագսոյանին հաջողվում է կռվով ճեղքել և ազատվել թուրք ժանդարմների ճիրաններից։

Զաջող օրը սույն ընդհարման մասին լուր է ուղարկվում և՛ մոտակա իշխանություններին, և՛ Վանի նահանգական մարմիններին։ Ռստիկանությունը մեծ խմբով ժամանում է դեպքի վայրը՝ կռվին մասնակցած նույն զապթիաների հետ՝ հետաքննելու և դիակները որոնելու։ Գոլոշյանը, որն արդեն հրաշքով ուշքի էր եկել, սակայն անկարող էր տեղից ելնել, հուսահատական շարժումով ժանդարմներից մեկին տեղում սրով վիրավորում է։ Գազազած զապթիաները հարձակվում և բզկտում են անվեհեր մարտիկի մարմինը։

Այս դեպքը ժամանակին մեծ աղմուկ հանեց և բազմազան արձագանքներ գտավ թուրքական և կովկասյան լրագրերի էջերում։ Վանի կուսակալ Խալիլ բեյը հեռագրով սուլթանին տեղեկացրեց Չուխ-Կետուկի ընդհարման մասին, իսկ հեռագիրը տպագրվեց Կ. Պոլսի թերթերում։ Այնտեղ հայ քաջարի երիտասարդների մասին ասված է, որ

<sup>6</sup> Յուզեր Արմ. Եկարեանի, Գահիրե, 1947, էջ 10։

«...իրենց նպատակն է մերթ ընդ մերթ մեծ ու փոքր դեպքեր առաջ բերել և ի վերջո յեղափոխութիւն մը հարուցանել»<sup>7</sup>:

Ձոռվածների իրերի մեջ հայտնաբերվեց Յոզի. Ագրիպասյանի հիշատակարանը, որն այսպես էր բացատրում խմբի կազմության պատճառը. «Տասն և իններորդ դարում ապրող հայ մարդու համար ազատութիւնից զատ ուրիշ մթնոլորտ չկայ, որի մէջ կարելի լինի շնչել»<sup>8</sup>: Յետո՞ւ ասված է. «Ուրախութեամբ կերթամ մեռնելու, իսկ դու, քաղցր հայրենիք, սրբիր արցունքդ և ինձ համար սուգ մի բռնիր»<sup>9</sup>:

«Արյան մկրտութիւն» անվանված այս դեպքը ցնցող տպավորութիւն թողեց արևմտահայ և հատկապես Վանի երիտասարդության վրա, որը «մինչ այն յեղափոխութիւնը ուսած տեսականօրէն, Ռաֆֆիի եւ Ծերենցի վեպերէն... թերեւս հազիւ թէ խորհած էր անոր վտանգաւոր կողմերուն եւ արեան զոհաբերութեան անհրաժեշտութեան վրայ»<sup>10</sup>: Ագրիպասյանի և Գոլոշյանի եղբրական նահատակութիւնը պատճառ հանդիսացավ, որ զինակից ընկերները դիմեն փոխվրեժի «...աւելի եւս լայնցնելով Վանայ թուրք իշխանութեան և հայերու միջեւ պեղուած խրամատը, որ այլեւս երթալով մեծօցաւ»<sup>11</sup>:

Արյան մկրտութիւնից հետո հայ ազգային-քաղաքական կուսակցութիւնների Վանի պատասխանատուները, մասնավորապես՝ արմենական կուսակցության ղեկավարութիւնը նպատակադրվեցին կարելիութեան սահմաններում զինել ազատամիտ ու քաջակորով երիտասարդությանը մարտահրավերներին դիմագրավելու համար:

Վ. Գոլոշյանի խումբը եղավ նախակարապետը զինատար խմբերի կազմակերպման և դրսից դեպի էրզիր զենքի ու զինամթերքի փոխադրութեան:

Շատ չանցած արմենականները, հնչակյանները և առավել չափով դաշնակցականները մեծ ուժերով ու միջոցներով հետամուտ եղան հայ ազգային-ազատագրական շարժման ճանապարհին ծառայած այդ

<sup>7</sup> «Արծազանք», 25 հունիսի, 1899, թիվ 24:

<sup>8</sup> Նիրվանեան Ա., մշվ. աշխ., էջ 30:

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Նաթանեան Մ., Արմենական կուսակցութիւնը, Գահիրէ, 1990, էջ 22:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 23:

Կարևորագույն հիմնահարցի կարգավորմանը, քանի որ ներսում գեներ  
դժվար էր ծարվում:

*АРМЕН КАРАПЕТЯН  
ИИ НАН РА*

## СТРАНИЦА ИСТОРИИ АРМЯНСКОЙ ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ

### РЕЗЮМЕ

В истории армянского национально-освободительного движения ярким образом является Вартан Голошян. Он одним из первых организовал группу бойцов (фидаинов), которые тайно перевозили оружие и боеприпасы в Западную Армению. Соратниками В. Голошяна были Карапет Гулагсзян и Ованес Агрипаян. Группа бойцов под руководством В. Голошяна 26-го мая 1889 г. совершила вооруженный поход в Ван. Этот день стал роковым для Голошяна и его соратников, которые погибли в ожесточенном бою против турецких полицейских.

Этот случай долгое время был вдохновляющим фактором для бойцов армянского освободительного движения и попал в историю под названием "боевое крещение".



ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱԿԵՏՆԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
(XIX դարի կես – XX դարի սկիզբ)

Ճարտարապետական տարբեր ոճերի խառնարան հանդիսացող Ատամբուլ քաղաքում իրենց հետքն են թողել նաև հայ կառուցողները: Թուրքիայի ազգային ճարտարապետության հիմնադիր՝ հայազգի Սիման ճարտարապետը, որը ծնվել է 1489 թ. Կեսարիայի Աղոնաս գյուղում, ապրելով 86 տարի Պոլսում կառուցել է 334 շենք, որոնցից 34-ը պալատներ են<sup>1</sup>: Պոլսի ճարտարապետության մեջ իրենց անջնջելի կնիքը դրեցին նաև հայ ճարտարապետների հռչակավոր գերդաստանի՝ Պալյանների բոլոր ներկայացուցիչները, որոնք շքեղաշուք ու գեղակերտ կառույցներով նոր ոճ հաղորդեցին Օսմանյան կայսրության մայրաքաղաք Ստամբուլին: Ստամբուլի համբավավոր շենքերի կարևոր, թերևս մեծ մասը նրանք են կառուցել<sup>2</sup>: Սինչև Պալյանները, արքունի ճարտարապետությունը հանձնված էր Սերվերյան ճանիկ ամիրային<sup>3</sup>:

Սուլթան Ֆաթիհ Սեհմեդ II-ը (1545-1581) իմանալով հայ ժողովրդի շինարար կարողությունները բազմահազար հայ ընտանիքներ տեղափոխեց և բնակեցրեց Պոլիսում: Սուլթանն այս քայլն անելով հուսախաբ չեղավ, քանի որ հայ ժողովրդի մասնակցությունը թուրք մշակութային զարգացման և բարգավաճման ուղղությամբ եղավ անգնահատելիորեն օգտակար<sup>4</sup>:

Նրանց մի մասը ծառայության մտան օսմանյան արքունիքում և արժանացան կայսերական շնորհների: Պալյանները, որոնք ստանձնեցին արքունի ճարտարապետի պատվավոր և պատասխանատու պաշտոնը,

<sup>1</sup> Խաչատրյան Հ., ճարտարապետների 300-ամյա գերդաստանը, «Հայրենիքի ծայն», 1967, 2 ապրիլի (N 14), էջ 5-6:

<sup>2</sup> Հայ ճարտարապետների թագավոր Պալյան գերդաստանի մատուցած ծառայություններն ու Ստամբուլի մեջ կառուցված համբավավոր շենքերը, Քուլիս, Ստամբուլ, 1960, N 326, էջ 12:

<sup>3</sup> Աճառյան Հ., Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ, «Բանբեր Երևանի Համալսարանի», 1967, N 1, էջ 158:

<sup>4</sup> Tuğlacı P., Osmanlı Mimariğinde Batılılaşma Dönemi ve Balyan Ailesi, İstanbul, 1981, s. 1.

մեկ ու կես դարի ընթացքում իրենց գործունեությամբ և մեծ ներդրում ունեցան Օսմանյան կայսրության ճարտարապետության զարգացման մեջ: Պալանների գերդաստանին է պատկանում Բեյազըթի երկնասլաց Յրդեհի աշտարակը, Բեյլերբեյիի, Դոլմաբահչեի ու Չրադանի պալատները, որոնք զարդարում են Բոսֆորի զույգ ակիերը, իսկ Գյոքսույի, Ըիլամուրի, Այազադայի ապարանքները և Յըլդըզի պալատը համարվում են ճարտարապետական գոհարներ:

Թուրքիայի և առհասարակ համաշխարհային արվեստի պատմության մեջ բացառիկ երևույթ է Պալանների ընտանիքը: Այդ գերդաստանի ինն անդամներ սերնդե սերունդ ճարտարապետ լինելով իրենց դրոշմն են թողել Օսմանյան կայսրության ճարտարապետության բնագավառում: Այս ընտանիքի անդամներն են՝ Պալի Քալֆա (?-1803), Գրիգոր ամիրա (1764-1831), Սենեքերիմ ամիրա (?-1833), Կարապետ ամիրա (1800-1866), Նիկողոս բեյ (1826-1858), Յակոբ բեյ (1837-1875), Սարգիս բեյ (1831-1899), Սիմոն բեյ (1846-1894), Լևոն բեյ (1855-1925):

Օսմանյան կայսրությունը հաստատել էր Եվրոպայի հետ մշակութային և տնտեսական հարաբերություններ դեռևս Ահմեդ III օրոք (1703-1730): XVIII դ. սկսած արևմտյան ոճն աստիճանաբար մուտք էր գործում Թուրքիա: Մասնավորապես իտալացի նկարիչների գործունեությունը մեծ ազդեցություն է ունեցել տեղի ճարտարապետության, որմնանկարչության և նկարչության վրա: Այն ավելի զգալի դարձավ Մահմուդ II-ի (1808-1839) ժամանակաշրջանում, երբ արևմտականացման համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին: Եվ այդ ժամանակվանից ի վեր Պալանները, իրենց տաղանդն ու հմտությունները ժառանգաբար փոխանցելով XVIII և XIX դդ.: օսմանյան ճարտարապետությանը, մեծ նպաստ բերեցին: Նրանք իրենց կառուցած բազմաթիվ շինությունների՝ պալատների, ապարանքների, զորանոցների, հիվանդանոցների, թատրոնների մեջ կիրառել են Բարոկկո և Ամպիր ճարտարապետական ոճերի սկզբունքները<sup>5</sup>: Արևելյան ճարտարապետական ոճը միաձուլելով արևմտյանին՝ Պալանները ստեղծեցին մի յուրահատուկ ոճ: Այս կառույցները եզակի են ոչ միայն իրենց ճարտարապետական լուծումներով ու գեղարվեստական արժեքով, այլ նաև ամրությամբ, որի շնոր-

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 2:

հիվ դրանք կարողացել են դիմակայել բնական աղետներին: Կառույցների մեծ մասը մինչև այսօր էլ կանգուն է և պարբերաբար վերանորոգվելով՝ ծառայում են որպես հիվանդանոց, դպրոց, համալսարան, վարժարան, թանգարան և այլն:

Այժմ համառոտ ներկայացնենք Պալյան ընտանիքի անդամների կենսագրականները և կառուցած շինությունները:

Պալի Քալֆա՝ Պալյան ընտանիքի առաջին անդամն է, 1683 թ. Կեսարիայի Դերեվանք գյուղից եկել է Պոլիս:<sup>6</sup> Նա Ահմեդ I մոտ աշխատել է որպես «Մերամեթքի» (շենքեր նորոգող): Այդ ժամանակ օսմանյան ճարտարապետությունը միայն այդ տիտղոսն ուներ<sup>7</sup>:

Գրիգոր Պալյան՝ (1767-1831) իր հոր Պալիի անվամբ ստացավ Պալյան ազգանունը, Պալյան ընտանիքի առաջին նշանավոր ներկայացուցիչն է: Սելիմ III-ը (1789-1807) նրան նշանակեց արքունի ճարտարապետ և խորհրդատու: Գրիգորն այս պաշտոնում մնաց Մուստաֆա IV-ի (կառավարել է մի քանի ամիս) և Մահմուդ II-ի (1808-1839) օրոք: Մահմուդ II-ի տված մենաշնորհի համաձայն, նա և իր զավակներն ազատվեցին տուրքերից և ստացան բազմաթիվ արտոնություններ (նա կարող էր ուզած ձևով հագնվել, ձի հեծնել, մորուք թողնել, զույգ թիե-րով նավակ նստել, օգտվել դատական իրավունքից)<sup>8</sup>: Գրիգոր Պալյանի բազմաթիվ կառույցներից մինչև մեր օրերը կանգուն են մնացել 20 շենք: Նրա բեղմնավոր գործունեության շրջանը Աելիմ III-ի իշխանության օրոք էր: Սելիմ III-ը և Մահմուդ II-ը հատկապես կարևորում էին բանակի վերափոխումը և վերակառուցումը: Գրիգոր ամիրայի վարպետությունը կայանում է զորանոցների կառուցման մեջ: Նրա զլխավոր գործերից են՝ Սելիմիյեյի, Դավուդ փաշայի, Սալթեփեյի, Ռամիի զորանոցները, Նուսրեթիեի (Թոփհանե) մզկիթը, Սարայբուրնույի, Բեշիքթաշի պալատները<sup>9</sup>:

<sup>6</sup> Սիրունի Հ., Պոլիս և իր դերը, Անթիլիաս, 1988, հ. III, էջ 107:

<sup>7</sup> Թեոդիկ, Ամենուն տարեցույց, Պոլիս 1916-1922 թթ, 1921, էջ 256:

<sup>8</sup> Tuğlacı P., նշվ. աշխ., էջ 9:

<sup>9</sup> Մրմրյան Հ., Մասնական պատմություն հայ մեծատուններու 1400-1900 թթ., Պոլիս, 1909, էջ 99:

Սենեքերիմ ամիրա՝ (?-1833) Գրիգոր ամիրայի կրտսեր եղբայրը, նրա հայտնի միակ և ամենակարևոր գործը 85մ Բեյազըթի Յրդեհի աշտարակն է<sup>10</sup>:

Կարապետ ամիրա՝ (1800-1866) Գրիգոր ամիրայի կրտսեր զավակը: Մահմուդ II-ի կողմից նշանակվել է արքունի ճարտարապետ: Ամենահայտնի գործը Դոլմաբահչեի պալատն է, որը համարվում է Պոլսի ամենագեղեցիկ կառույցը: Աշխատել է Մահմուդ II-ի, Աբդուլ Մեջիթի (1839-1861) և Աբդուլ Ազիզի (1861-1876) օրոք: Կառուցել է 7 պալատ, 5 գործարան, 2 զորանոց, 1 մզկիթ, 7 եկեղեցի, 2 հիվանդանոց, 3 դպրոց, 4 ջրի ամբարտակ, 2 դամբարան և այլն<sup>11</sup>: Այս շինությունների մեծ մասը այսօր էլ կանգուն են և գտնվում են պետության պաշտպանության տակ՝ որպես պատմական հուշարձաններ<sup>12</sup>:

Կարապետ ամիրան իր շրջանի ամենանշանավոր ճարտարապետներից մեկն էր, միայն Դոլմաբահչեն բավական է սա հաստատելու համար: Նրա շինությունները կառուցված են դասական Ամպիր ոճով: Օառայելով երեք սուլթաններին՝ արժանացել է նրանց գնահատանքին: Ստացել է իր ֆեսի վրա Աբդուլ Մեջիթի թուղթան կրելու արտոնությունը, իսկ ամենակարճ ժամանակում Ձեյթինբուրնույի երկաթի գործարանը կառուցելու համար արժանացել պատվո նշանի<sup>13</sup>: Կարապետ Պալյանը արքունի ճարտարապետի պաշտոնը վարել է իր փեսա՝ ամիրա Յուսուֆի հաննես Սերվերյանի հետ համատեղ:

Նիկողոս բեյ՝ (1826-1858) Կարապետ ամիրայի կրտսեր զավակը: Ավարտել է Փարիզի Գեղարվեստական Բարձրագույն Վարժարանի ճարտարապետության բաժինը: Ստամբուլ վերադառնալով՝ աշխատանքի է անցել հոր մոտ: 22 տարեկանում Աբդուլ Մեջիդի հրամանով Չրաղանի պալատի մեջ եվրոպական ոճով կառուցել է գրադարան: Սա նրա առաջին գործն էր և բարձրակարգ վարպետություն ցուցաբերելու համար արժանացել է սուլթանի ուշադրությանը՝ նշանակվելով արքունի

<sup>10</sup> Туğlacı P, նշվ. աշխ., էջ 49:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 51-53:

<sup>12</sup> Ջարդարյան Յ., Յիշատակարան Ա-ե հատոր, Դ հատոր, 1933-1939 թթ., Ստամբուլ, էջ 40-43:

<sup>13</sup> Գեղունի, Որբունի կամ պատկերազարդ բացառիկ բազմավեպ, Վենետիկ, 1900, էջ 11:

ճարտարապետ: Նիկողոս բեյի կյանքը կարճատև էր, բայց շատ արդյունավետ: Նրա բոլոր կառույցներում ակնհայտ էր իր գերդաստանի՝ Պալյանների ինքնատիպ ոճը՝ նրբորեն միաձուլված տեղականի հետ: Նիկողոս բեյը դարձավ սուլթան Աբդուլ Մեջիդի խորհրդատուն արվեստի գծով, և արժանացավ բազմաթիվ շքանշանների: Իր հեղինակությամբ վայելում էր մտավորականների համակրանքն ու հարգանքը: Մահացավ երիտասարդ հասակում ժանտախտից: Սուլթանի հրամանով պալատում երեք օր սուգ հայտարարվեց: Նրա կառուցած շինություններն են՝ Դոլմաբահչե պալատի թագադրության սրահը, Արքայական դռները, Դիվանհանեն, Բեյքոզի, Գյոքսուի, Ըհլամուրի պալատները, Չրաղանի պալատի հատակագիծը, Օրթաքյոյի, Չրաղանի, Դոլմաբահչեի մզկիթները, Թոփհանեի ժամացույցի աշտարակը, Դոլմաբահչե պալատի թատրոնը<sup>14</sup>:

Հակոբ բեյ՝ (1837-1875) Կարապետ ամիրայի զավակը. կրթությունն ստացել է Փարիզում: Նիկողոս բեյի մահվան լուրն ստանալուց հետո վերադառնում է Ատամբուլ՝ հոր և եղբոր՝ Սարգիս բեյի հետ աշխատելու համար: Նշանակվում է արքունի ճարտարապետ և ստանում իր ֆեսի վրա ոսկի եռանկյուն և կարկին կրելու իրավունքը: Պարգևատրվել է զանազան շքանշաններով և տիտղոսներով, պետության կողմից արժանացել է «Ուլա էվվելի» (առաջիններից առաջինը) և «Սյուրեմայիզ» (նշանավոր) աստիճանների:

Նրա կառույցներն են՝ Բեյքոզի թոքաթի, Սկյուտարի Քոշույուլուի Մայր Թագուհու, Չուբուքլու Հտիվ Իսմայիլ փաշայի, Մերջանի Ալի փաշայի ապարանքները, Աքսարայի Փերթենիյալ Մայր Թագուհու մզկիթը, Չրաղանի, Բեյլերբեյիի պալատները<sup>15</sup>:

Սարգիս բեյ՝ (1831-1899) Կարապետ ամիրայի զավակը. Փարիզում կրթություն ստանալուց հետո վերադառնալով Ատամբուլ՝ աշխատել է հոր հետ: Սարգիս Պալյանը հոր մահից հետո, իր եղբոր Հակոբի հետ աշխատել է որպես արքունի ճարտարապետ: Լավ ճարտարապետ լինելուց բացի, նաև երկու գյուտի հեղինակ էր, որի շնորհիվ իր համբավը տարածվել էր ամբողջ Եվրոպայով մեկ: Դրանք ներկայացվել էին Լոն-

<sup>14</sup> Туѓіасі Р, նշվ. աշխ., էջ 171-172:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 205-206:

դոնի միջազգային ցուցահանդեսին և արժանացել մրցանակի: Երկուսի համար էլ Սարգիս Պալյանը մենաշնորհ էր ստացել անգլիական կառավարությունից (1862): 1867 թ. նա արժանանում է «Ուլա Էվելլի» աստիճանի<sup>16</sup>: Այդ գյուտերի շնորհիվ նրա շինությունները որքան արագ էին կառուցվում, այնքան էլ ամուր էին: Այդ կառույցների հատակագծերը պատրաստում էր նրա եղբայր Հակոբը: Սուլթան Աբդուլ Մեջիդի հետ Ալլոնիկ գնալով մեկ գիշերվա մեջ կառուցել է մարմարյա մի ավազան, որի շուրջ սուլթանն ընդունել էր քաղաքի ավագանուն: Բեյլերբեյիի պալատը կառուցել է երկու տարում, Յըլդըզի պալատը վեց ամսում: Նա իր Քուրուչեշմեի կղզում մի քիմիական լաբորատորիա էր հիմնել և աշխատանքներ էր տանում նորանոր գյուտերի հայտնագործության համար<sup>17</sup>: Սարգիս Պալյանի մոտ աշխատում էր վեց հազար բանվոր: Հիմնել էր «Շիրքեթի Նաֆըայի Օսմանի» անունով մի ընկերություն և ստանալով 35 տարվա մենաշնորհ՝ սկսել էր կամուրջների և երկաթուղիների շինարարություն: 1874 թ. տեղի ունեցած ուժեղ երկրաշարժի հետևանքով Պոլսում բազմաթիվ շենքեր էին քանդվել, ու, երբ սուլթան Աբդուլ Համիդ II-ը՝ (1876-1909) տեսնելով, որ պալատների կառույցները զերծ են մնացել փլուզումից, Սարգիս բեյին շնորհեց երկրորդ կարգի «Օսմանիե» շքանշան: 1875 թ. նրան վստահվեց Բաղդադի երկաթուղու շինության մենաշնորհը: Նույն տարում պարզևատրվեց առաջին կարգի «Սեջիդիե» շքանշանով: Վերջապես, նկատի ունենալով իր երկարամյա ծառայություններն Օսմանյան կայսրությանը, 1878 թ. մարտի 31-ին Սարգիս բեյին շնորհվեց ճարտարապետական բարձրագույն կոչում՝ «Սեր Սիմարը Դեվլեթ» (պետության ճարտարապետ): Օսմանյան կայսրության ճարտարապետության մեջ առաջին անգամ էր, որ ոչ մահմեդականին տրվում էր նման կոչում<sup>18</sup>: Նրա կառուցած շինություններն են՝ Բեյլերբեյիի, Չրաղանի, Քյաղըթանեի պալատները և մզկիթը, Բեյքոզի, Թոքատի, Ալեմդաղի, Յըլդըզի, Քալենդերի, Ձինջիրլիքուլուի, Թոփթափըի, Իզմիթի, Սերդարի, Այազաղայի ապարանքները, Գյումուշ-

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 237:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 238:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 239:

սույի զորանոցը, Մաչքայի զորանոցը և ոստիկանատունը, Մաչքայի Ազիզիե մզկիթը, Մեջիդիե զորանոցը (Թաշքըշլա)<sup>19</sup>:

Սիմոն բեյ՝ (1846-1894) Կարապետ ամիրայի զավակը. կրթությունն ստացել է Եվրոպայում: Մանրանկարել է այն բոլոր շինությունները, որոնք կառուցվել են իր ընտանիքի անդամների կողմից: Հակոբ բեյի մահից հետո նշանակվել է արքունի ճարտարապետ և պարզևատրվել երկրորդ կարգի «Մեջիդիե» շքանշանով<sup>20</sup>:

Լևոն Պալյան՝ (1855-1925) Նիկողոս բեյի որդին, կրթությունն ստացել է Փարիզում, Ստամբուլ վերադառնալուց հետո, երկար տարիներ աշխատել է իր հորեղբոր՝ Մարգիս Պալյանի մոտ<sup>21</sup>:

Պալյանների կառույցներն արտացոլում են Օսմանյան կայսրության ճարտավեստում դեպի արևմտականացում կատարած ճարտարապետական առանձնահատկությունները: Որոշ ռուս պատմաբաններ, նսեմացնելով Պալյանների վաստակը, գրում են, թե նրանք աղավաղել են թուրքական ճարտարապետական ոճը, շինությունների զարդաքանդակները զցում են նրանց գեղարվեստական արժեքը, անճաշակ են և խորհրդանշում են Օսմանյան կայսրության անկումը, Օսմանյան ճարտարապետության դեգրադացիան<sup>22</sup>: Միանգամայն անընդունելի համարելով ռուս պատմաբանների այս գնահատականը՝ նշենք, որ այդ շրջանում նման զարդաքանդակները ճարտարապետական կառույցների անխուսափելի մասն էին կազմում, բացի այդ, Պալյանները նույնությամբ չէին ընդօրինակում եվրոպական ճարտարվեստի ոճերը, այլ շատ հմտորեն հարմարեցնում էին արևելյանին: Իսկ ինչ վերաբերվում է թուրք պատմաբաններին, ապա նրանք, հավատարիմ մնալով իրենց վարած քաղաքականությանը, շարունակում են աղավաղել և խեղաթյուրել պատմական փաստերը:

Էրզրումի Աթաթուրքի անվան համալսարանի Գեղարվեստական ֆակուլտետի դասախոսական կազմը դոկտոր Մելման Ջանի գլխավորությամբ 2007 թ. ապրիլի 28-ին անցկացրեց մի գիտաժողով՝ «XIX դ.

<sup>19</sup> Պարոնյան Հ., Երկեր, Ազգային ջոջեր, Ե., 1979, էջ 178-179:

<sup>20</sup> Туѓіасі Р., նշվ. աշխ., էջ 321-322:

<sup>21</sup> Սույն տեղում, էջ 324:

<sup>22</sup> Еремеєв Д., На стыке Азии и Европы, Москва, 1980, с. 208; Юсупов А., Стамбул, Москва, 1970, с. 85-86.

ճարտարապետներն ու հայերը» խորագրով: Այդ կազմակերպել էր «Թուրք աշխարհի հետազոտություններ» հիմնադրամը: Բացման խոսքով հանդես եկավ հիմնադրամի նախագահ դոկտոր Թուրան Յազկանը: Իր զեկույցում՝ Յազկանը նախ նշում է թուրքերի «մեծ ու կարևոր» ազգ լինելը՝ ջանալով որպես ապացույց զանազան «փաստեր» բերել: Այնուհետև հայտարարում է, որ «պատմության մեջ ազգերը երկու մասի են բաժանվում՝ ազգեր և «masa» ազգություններ (masa թուրքերեն նշանակում է անպիտան, հին): Ըստ նրա հայերը պատմության «masa» ժողովուրդների առաջնորդներից են: «Թուրքերի մեծ քաղաքակրթության մոտ նրանց ծայրը նմանվում է դատարկ թիթեղի»: Ազգայնամուլ արտահայտություններով լեցուն բացման խոսքից հետո դոկտոր Սելման Ջանը անցել է բուն թեմային և հայտարարել, որ Ստամբուլի ամենագեղեցիկ կառույցների ճարտարապետ համարվող Պալյան ընտանիքի անդամներն իրականում ճարտարապետ չեն եղել, այլ «mütehhit»-են (պայմանագրով վարձված աշխատողներ): Սելման Ջանի կարծիքով XIX դ. ճարտարապետական բոլոր նախագծերը պայմանագրով հանձնվել են «վարձու աշխատողներին» և բոլոր պաշտոնական փաստաթղթերում նրանք գրանցվել են որպես «kalfa» (ճարտարապետի օգնական): XIX դ. նմանատիպ հանձնարարություններ անող ամենաճանաչվածը Պալյանների ընտանիքն է եղել: Թուրք պատմաբանների կեղծ պնդումով՝ Սենեքերիմ Պալյանի կառուցած Բեյազըթի Հրդեհի աշտարակը, Գրիգոր Պալյանի Ռամիի զորանոցը, Կարապետ Պալյանի Զրահանի, Նիկողոս Պալյանի Դոլմաբահչե պալատները և Օրթաքյոյի մզկիթը Օսմանյան պետական արխիվներում գտնվող փաստաթղթերի համաձայն ճարտարապետ Սեյիդ Աբդյուլհալիմ էֆենդու ստեղծագործություններն են: Ըստ Ջանի՝ Պալյան ընտանիքին վերագրվող մյուս կառույցները ևս օտար ազգի ճարտարապետներին են պատկանում՝ Մեջիդիե զորանոցի (Թաքըջլա) հեղինակը ոչ թե Սարգիս Պալյանն է, այլ անգլիացի ճարտարապետ Վիլիամ Ջեյմս Սմիթը: Յըլդըզ Համիդիե մզկիթը դարձյալ Սարգիս Պալյանինը չէ, այլ ազգությամբ հույն Նիքոլաքիին է կառուցել, Սարայբուրնույի պահեստները ոչ թե Սիմոն Պալյանն է հեղինակել, այլ Ավգուստ Ջասմունդիինը: Թուրք պատմաբանի հայտարարությամբ Օսմանյան կայսրության վերջին գլխավոր ճարտար-



րապետ Մարգիս Պալյանը Աբդուլ Չամիդ II-ից գործարան կառուցելու համար Քուրուլեշնե կղզում տարածք է ստացել և հողամասը սեփականացնելով՝ իր համար մի առանձնատուն է կառուցել: Նրան տրված «Պետության գլխավոր ճարտարապետ» կոչումն էլ չի նշանակում, որ նա ճարտարապետ էր, և վերջինս այս տիտղոսն իր անձնական կապերի շնորհիվ է ձեռք բերել և այլն<sup>23</sup>:

Պալյան ճարտարապետները հաջորդաբար շարունակել են իրենց արդյունավետ և ներգործուն աշխատանքը: Բազմաքանակ ու վիթխարի կառույցներով, պրոֆեսիոնալ կարողություններով, բավարարել են իրենց ժամանակաշրջանի պահանջները: Տևականությունը, որը Պալյաններին մի տեսակ արքայատոհմի է վերածել և մյուս ճարտարապետների գործունեությունը հետին պլանում թողել, ճարտարապետության պատմության մեջ հազվադեպ երևույթ է: Օսմանյան կայսրությունում Պալյանների ձեռք բերած հեղինակությունը, անկասկած, հիմնվել է նրանց ունեցած գիտելիքների և կարողության վրա: Պալյաններն իրենց կառույցներում օգտագործել են արևմտյան ճարտարապետության տարրեր, սակայն օրվա նորամուծություն ու պահանջ լինելով, այդ օգտագործված տարրերը մեկնաբանվել և ներկայացվել են յուրովի<sup>24</sup>:

Օսմանյան կայսրության ճարտարապետության զարգացմանը նպաստել են նաև այլ հայ ճարտարապետներ:

Բաղդասար Միրանշահյանը շատ հայտնի ճարտարապետ էր: Որպես արքունի ճարտարապետ՝ կառուցել է Կապան Մատենի արծաթի հանքի գործարանը, իր գծած հատակագծով կառուցվել են բազմաթիվ կամուրջներ և պետական շենքեր: 35 տարեկանում անցել է պետական ծառայության և 50 տարի անընդմեջ ծառայել պետությանը, գնահատվել է կառավարության կողմից, 1869 թ. արժանացել պատվո նշանի և աստիճանի<sup>25</sup>:

Գևորգ Ասլանյանը կրթությունն ստացել է Փարիզում: Պոլիս վերադառնալով՝ անցել է պետական ծառայության և վարել տարբեր պաշ-

<sup>23</sup> Özlem Ertan, Bilim soslu Ermeni dîşmanlığında son nokta, «Agos», 4 mayıs, 2007, s. 6.

<sup>24</sup> Tuğlacı P., նշվ. աշխ., էջ 335-336:

<sup>25</sup> «Լույս», Պոլիս, 1908, թիվ 25, 14 հուլիսի, էջ 838:

տոններ: Նրա ղեկավարությամբ կատարվել են բազմաթիվ հանրային շինություններ՝ Իզմիրի, Սկյուտարի ջրաբաշխության և Դեդեաղաչ-Սելանիք երկաթուղու նախնական գծագրերը, Սելանիքի և Հայդար փաշայի նավահանգիստների շինությունը<sup>26</sup>:

Հովսեփ Ազնավուրն ավարտել է Հռոմի թագավորական ճեմարանը, պարգևատրվել 1877 թ. «Վալադիե» շքադրամով, որը շնորհվում էր Հռոմում ճարտարապետական ուսումն ավարտող և վկայական ստացող լավագույն ուսանողներին: Պոլսում կառուցած նրա շինություններն են՝ Թեփե Բաշըի թաղապետական թատրոնը և Նոր ֆրանսիական թատրոնը, Ֆեների բուլղարական երկաթյա եկեղեցին, Սանասարյան, Գյուլբենկյան, Թոփալյան, Նուսրեթ Բեյի առանձնատները, Բերայի անգլիական երկսեռ վարժարանները, արքայազն Աբբաս Հալիմ փաշայի եգիպտական ոճով ապարանքը և այլն<sup>27</sup>:

Հայտնի ճարտարապետներ էին Հաջը Սկրտիչ Չարքյանը (1799-1899), Գաբրիել Սկրտչյանը (1857-1941), Պետրոս Նեմցեն (1830-1913), Նշան Քալֆան, որը Կարապետ Պալյանի ղեկավարությամբ մասնակցել է արքունական շինությունների կառուցմանը<sup>28</sup>, Սելքոն Աստվածատուրյանը (?-1857), Սարգիս Սարգմանյանը (1817-1897), արքունի ճարտարապետներ Պողոս Օտյանը (1795-1862), Կիրակոս Օտյանը (1804-1866), Գրիգոր Ներսիսյանը (1827-1890) և Ներսես Ներսիսյանը (1856-1890)<sup>29</sup>:

Այսպիսով, հայ ճարտարապետների նպաստն անհերքելի է օսմանյան կայսրության քաղաքաշինության, գեղարվեստի, լուսավորչության, տնտեսության և հասարակական կյանքի զարգացման մեջ:

<sup>26</sup> Ջարդարյան Հ., նշվ. աշխ., էջ 12-13:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 84-85:

<sup>28</sup> Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, Կահիրե, 1937, էջ 1538:

<sup>29</sup> Ջարդարյան Հ., նշվ. աշխ., էջ 51:

**АРМЯНСКИЕ АРХИТЕКТОРЫ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ**  
(вторая половина XIX - начало XX вв.)

**РЕЗЮМЕ**

Армянские архитекторы внесли большой вклад в дело развития архитектуры Османской империи.

Девять членов выдающейся династии Палянов, являясь придворными архитекторами, из поколения в поколение на протяжении полутора веков, соединив западный стиль с восточным и создав своеобразный архитектурный стиль, воспроизвели неповторимые шедевры, украсившие столицу Османской империи Стамбул.

ԱՐԱՐԿԻՐԻ ՄԱՆՁԱԿԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ  
XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍՎՁԲԻՆ

Արաբկիրի սանջակը գտնվում է Փոքր Հայքի հարավում, Եփրատ գետի աջ ափին: XVII դ. կցված է եղել Սեբաստիայի էյալեթին, այնուհետև անցել է Մալաթիայի իրավասության ներքո, ավելի ուշ՝ 1880-ական թթ. այն մտցվել է Խարբերդի (Մամուրեթ-ուլ-Ազիզ) վիլայեթի մեջ: XIX դ. վերջին և XX դ. սկզբին Արաբկիրի սանջակը բաժանված էր Արաբկիր (կենտրոնական), Պոտուրկե և Ակն կազաների:

Արաբկիրի կազան գտնվում էր Խարբերդի սանջակի հյուսիսային, Սեբաստիայի սանջակի հարավարևելյան և Երզնկայի սանջակի հարավարևմտյան մասում: Կազայի կենտրոնը համանուն քաղաքն էր, որը հիմնադրվել էր XI դ. Վասպուրականի հայոց թագավոր Սենեքերիմ Արծրունու կողմից: Քաղաքում հայերը XIX դ. վերջին էթնիկ տարրերից կարևորագույնն էին և այդպիսին մնացին մինչև 1915 թ. Մեծ եղեռնը:

Ըստ «Մասիս» օրաթերթի հաղորդած տվյալների 1881 թ. Արաբկիր քաղաքի հայ արական սեռի բնակիչների թիվը հասնում էր 4782-ի, որից 403-ը բողոքականներ<sup>1</sup>, 104-ը կաթոլիկներ<sup>2</sup>: Այս տվյալը կարելի է ճշմարտությանը մոտ ընդունել, քանի որ 1885 թ., նույն «Մասիս» օրաթերթի մեկ այլ հաղորդման համաձայն, Արաբկիր քաղաքը ուներ 9000 շունչ արական և իգական սեռի հայ բնակչություն, որից 700-ը բողոքական դավանանքի, 125-ը՝ կաթոլիկ, մինչդեռ թուրքերի թիվը կազմում էր 8500 շունչ<sup>3</sup>: 1870-ական թթ. վերջի հետ համեմատելով նկատում ենք, որ այս կենտրոնում հայ բնակչությունը նվազել էր: Դա երևում է պետական փաստաթղթում տեղ գտած մի փաստարկից, ըստ որի Արաբկիր

<sup>1</sup> Բողոքականները քաղաք մուտք էին գործել 1854 թ.: Այդ մասին տես Փլաւտեան Ա., Պատմութիւն Հայոց Արաբկիրի, Նիւ Եորք, 1969, էջ 641:

<sup>2</sup> «Մասիս», Կ.Պոլիս, 1881, հոկտեմբերի 19:

<sup>3</sup> «Մասիս», Կ.Պոլիս, 1885, հունվարի 15:

քաղաքը 1888 թ. 12 տարի առաջ ունեցել է 1400 տուն հայ բնակչությու-  
նը<sup>4</sup>:

Հայ բնակչությունը նվազեց մաս կապված 1895 թ. այստեղ տե-  
ղի ունեցած կոտորածների հետ: 1895 թ. հոկտեմբերի 24-ին 500-600  
հոգանոց թուրք և քուրդ խուժանը հարձակվում է Արաբկիր քաղաքի  
վրա<sup>5</sup>: Սակայն ժողովուրդը արիությանը դիմագրավեց թշնամուն և  
բարձր պահեց իր պատիվը: Թուրքական կառավարությունը, դժգոհ  
մնալով, որ հայերի ինքնապաշտպանությունը ձախողում է իրենց ծրա-  
գրերը, հրամայում է քուրդ ցեղապետերին և 2 թուրք գյուղապետերին  
ոչնչացնել Արաբկիրի հայ բնակչությանը: Հոկտեմբերի 27-ի լուսաբա-  
ցին թշնամին ավելի քան 1000 հոգուց բաղկացած հրոսակախմբով  
սկսեց իր հարձակումը<sup>6</sup>: Ժողովրդի մի մասը չկարողանալով դիմադրել  
թշնամուն դիմեց արտագաղթի, շատերն էլ ենթարկվեցին դաժան կոտո-  
րածի: Այս կոտորածի դաժանության մասին է խոսում 1895 թ. նոյեմբե-  
րին Արաբկիրից ստացված մի նամակը<sup>7</sup>, որում մասնավորապես ասված  
էր. «Կոտորեցին, թալանեցին, հրդեհեցին ու՞ր օր շարունակ. չլսուած  
ժխոր մը կայ, դժոխային ձայներ, փոքր երեխաներու ճիչը որ կը գոչեն.  
– Ո՛հ Աստուած, մայրի-կ ...Գնդակները մեր վրայ կը տեղան կարկուտի  
պես, անոնք կուգան թուրը ձեռքերնին: Հիմայ մենք կը գտնուինք թրքա-  
կան թաղը, եոթ սենեականոց տան մը մէջ, մենք 100 հոգի էնք, կին, աղ-  
ջիկ, երեխայ եւ քանի մը մարդ, բոլորը վիրաւորած. ամէնքը կուլան եւ  
կը հեծէժեն, բան մը չունինք որ անոնց վէրքերուն կապենք վրայ դնենք,  
ոչինչ գանոնք կապելու համար: Փոխնորդ ալ չունինք: Կ'արթնանանք  
երեխաներու ձայներէն, որ երազներէ սարսափած կը գոչեն. – Կուգա՛ն,  
կուգա՛ն... կ'ուզեն մեզ մորթել, կրակին մեզ նետել...օգնութիւն»:

Արաբկիր քաղաքի այս սարսափազդու կոտորածին զոհ գնա-  
ցին 3000 հայեր<sup>8</sup>:

<sup>4</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 476, ց. 1, գ. 116, թ. 13  
շրջ.:

<sup>5</sup> Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝  
ԳԱԹ), Արշակ Չոպանյանի ֆ., բաժ. 2, գ. 247, թ. 1 շրջ.:

<sup>6</sup> Նույն տեղում, թ. 2 շրջ.:

<sup>7</sup> Փոլատեան Ա., նշվ., աշխ., էջ 699:

<sup>8</sup> ԳԱԹ, Արշակ Չոպանյանի ֆ., բաժ. 2, գ. 247, թ. 4 շրջ.:

1914-1915 թթ. սկզբին Արաբկիր քաղաքի հայ բնակչության քվաքանակի մասին հայկական աղբյուրները տալիս են տարբեր տվյալներ: Մ. Օոցիկյանը նշում է, որ Արաբկիր քաղաքը 1914 թ. ուներ 20000 բնակչություն, որից 6000-ը կազմում էին հայերը<sup>9</sup>:

Փոլատյանը և Բախտիկյանը<sup>10</sup> գտնում էին, որ 1915 թ. սկզբին քաղաքը ուներ 20000 բնակիչ, որից 9000 հայ և 11000 մահմեդական (ընդ որում 8565 հայ առաքելական դավանանքի, 200-ը՝ կաթոլիկներ, 235-ը՝ բողոքականներ):

Թեոդիկը և համահեղինակներ Փաուլ Փաբուջյանը և Ռայմոնդ Գևորգյանը հայերի թիվը հասցնում են 9500-ի<sup>11</sup>:

Իսկ Ս. Էփրիկյանը նույնիսկ հայերի թիվը հասցնում է 10000-ի<sup>12</sup>:

Այս տվյալներից ընդունելով միջինը, ստացվում է, որ 1914-1915 թթ. Արաբկիր քաղաքը ունեցել է մոտ 9000 շունչ հայ բնակչություն:

Բացի Արաբկիր քաղաքից հայերը իրենց բնակությունն էին հաստատել կազալի 4 գյուղերում՝ Ամպրկա, Վանք, Շեփիկ և Անջրդի: Շեփիկ և Անջրդի գյուղերը գտնվում են Արաբկիր քաղաքի հյուսիսային և հյուսիսարևելյան հատվածներում, իսկ Ամպրկան և Վանքը՝ Արաբկիր քաղաքի հարավային և հարավարևելյան մասում:

Շեփիկ գյուղը նախքան 1895 թ. կոտորածը իրենից ներկայացնում էր 80 տնով<sup>13</sup> լիովին հայաբնակ գյուղ (յուրաքանչյուր տան շնչերի միջին մեծությունը ընդունելով 8 շունչ ստացվում է շուրջ 640 շունչ, հաշվարկն իմն է - Ա. Ս): Ցավոք, այս գյուղը մյուս հայկական գյուղերի նման 1895 թ. ենթարկվեց անլսելի կոտորածի: Զուրդ հրոսակապետ Բադալ աղան իր քուրդ և թուրք զինվորներով արշավում է այս գյուղի վրա և ավերում ու այրում է հայկական տները: 18 տուն է միայն փրկվում հրդեհից: Ողջ մնացած բնակչությունը թաքնվում է այգիների

<sup>9</sup> Օոցիկեան Մ., Արեւմտահայ աշխարհի, Նիւ Եորք, 1947, էջ 93:

<sup>10</sup> Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 63: Բախտիկեան Ա., Արաբկիր եւ շրջակայի գիւղերը, Պէյրուս, 1934, էջ 22:

<sup>11</sup> Թեոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին արդեալի 1915 տարին, Նիւ Եորք, 1985, էջ 233: Kevorkian R., Paboudjian P., Les Armeniens dans l'empire ottoman la veille du Genocide, Paris, 1992, p. 375.

<sup>12</sup> Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903-1905, էջ 279:

<sup>13</sup> ԳԱԹ., Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 37, թ. 8:

մեջ: Ակնի կազայից օգնություն ստանալով՝ թշնամին նոր գրոհ է ձեռնարկում և շուրջ 38 հայ անմեղ մարդ սպանում<sup>14</sup>:

1914 թ. գյուղի հայ բնակչությունը կազմում էր 96 տուն, 468-470 շունչ<sup>15</sup>:

Անջրդի գյուղը ևս անմասն չմնաց 1890-ական թթ. կոտորածներից: Գյուղն ամբողջովին ավերված էր, բնակչության մեծ մասը բռնի կերպով մահմեդականացվեց<sup>16</sup>: Հետաքրքրաշարժ է, որ թեև բնակչությունը կոտորվեց և շատերը մահմեդականացան, բայց այնուամենայիվ նախքան առաջին համաշխարհային պատերազմը հայ բնակչության թիվը ավելացավ և կազմեց 118 տուն, 510 շունչ<sup>17</sup>:

Նկատենք, որ բնակչության այս աճը ոչ միայն բնականոն հետևանք պետք է համարել, այլև բնակչության նոր ներհոսքի: Հարևան Ակն կազայի Աաղմկա գյուղում թուրքերը 1895 թ. կազմակերպեցին բնակչության կոտորած և այրեցին հայերի տները: Ժողովուրդը գրեթե մերկ և բոկոտն հասնում է Անջրդի գյուղ<sup>18</sup>:

Ամարկա գյուղը 1895 թ. 60 տուն ունեցող հայաբնակ բնակավայր էր, որը նույն թվականին վերածվեց մոխրակույտի, և 75 հայեր դարձան նահատակներ: 1914-1915 թթ. միջոցում գյուղը բաղկացած էր 256 շունչ հայ բնակչությունից<sup>19</sup>:

Փաստերի բացակայության պատճառով հնարավոր չեղավ ճշտել Վանք գյուղում նախքան 1895 թ. հայ բնակչության թվաքանակը, և արդյոք այստեղ կոտորածներ տեղի ունեցել են, թե ոչ: Բայց կարծում ենք, որ ոչ: Վանք գյուղը աչքի չի ընկել իր հայաշատությամբ, քանի որ Մեծ եղեռնի նախօրեին հայերի թիվը այստեղ հասնում էր 20 տան, 129 շնչի<sup>20</sup>:

---

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 376 (շնչերի թիվը նշվում է 468): Տե՛ս նաև Թեոդիկ, նշվ., աշխ., էջ 238 (շնչերի թիվը նշվում է 470):

<sup>16</sup> ՊԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 37, թ. 5:

<sup>17</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ., աշխ., էջ 376: Տե՛ս նաև Թեոդիկ, նշվ., աշխ., էջ 237:

<sup>18</sup> ՊԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 37, թ. 8:

<sup>19</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 376: Տե՛ս նաև Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 238:

<sup>20</sup> Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 238:

Այսպիսով, ընդհանրացնելով Արաբկիրի կազայի հայ բնակչության մասին մեր խոսքը, նշենք, որ հայերը XIX դ. վերջին և XX դ. սկզբին բնակվում էին Արաբկիր քաղաքում և Շեփիկ, Անջրդի, Ամարկա և Վանք գյուղերում, որոնց ընդհանուր թիվը 1914-1915 թթ. միջոցում կազմում էր մոտ 10365 շունչ:

Ակնի կազան XIX դ. վերջին և XX դ. սկզբին Արաբկիրի սանջակի հյուսիսային կազան էր: Հյուսիսից սահմանակից էր Սեբաստիայի և էրզրումի վիլայեթներին, արևելքից՝ Դերսիմի սանջակին, հարավից՝ Արաբկիրի կազային, արևմուտքից՝ Սեբաստիայի վիլայեթին: Կազայի կենտրոնը Ակն քաղաքն էր, որը գտնվում է Եփրատ գետի աջ ափին: Քաղաքը բաժանված էր 2 գլխավոր թաղերի՝ Վերի թաղ և Վարի թաղ, որոնք միմյանցից բաժանված էին լայն առվով: Թե՛ Վերի թաղը, և թե՛ Վարի թաղը բաղկացած էին 15-20 տներից, որոնք միմյանցից բաժանված էին պարտեզներով: Դեռ 1878 թ. Ակն քաղաքում բնակվում էին 1008 հայ տուն, 5284 շունչ, 50 շունչ բողոքական դավանանքի հայ, 4310 շունչ թուրք<sup>21</sup>: Մեր կարծիքով ուռճացված են Օճցիկյանի բերած տվյալները, որոնց համաձայն Ակն քաղաքի բնակչությունը XIX դ. վերջին կազմում էր 20000 մարդ, որից 10000-ը հայեր էին, մնացածը թուրքեր և փոքր մասը հույներ<sup>22</sup>:

Բողոքականները Ակն մուտք էին գործել 1870-ական թթ. սկզբին<sup>23</sup>: Արդեն 1885 թ. Ակնում բողոքականների թիվը հասնում էր 70 տան<sup>24</sup>:

Ցավոք, 1880-ական թթ. այստեղ տեղ գտած արտագաղթը և 1895-1896 թթ. կոտորածները կտրուկ ազդեցին հայ ազգաբնակչության ընդհանուր թվաքանակի վրա: XIX դ. ընթացքում Ակնից Կ. Պոլիս գաղթածների թիվը մոտ 100 տուն էր կազմում: Ակնից 40-50 տուն գաղթել էին նաև Խարբերդ, իսկ այլ վայրեր՝ 5-10 տուն<sup>25</sup>: 1883-1884 թթ. կատար-

<sup>21</sup> ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 35, թ. 1:

<sup>22</sup> Օճցիկեան Ա., նշվ. աշխ., էջ 11:

<sup>23</sup> ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 35, թ. 1:

<sup>24</sup> «Մասիս», Կ. Պոլիս, 1885, ապրիլի 20:

<sup>25</sup> Քէչեան Ա., Ակն եւ Ակնցիք, Փարիզ, 1952, էջ 147:



ված մարդահամարի համաձայն, վերջին 30 տարվա ընթացքում Ակնից գաղթածների թիվը 400-500 շնչի էր հասնում<sup>26</sup>:

Այս արտագաղթի հիմնական պատճառը սոցիալ-տնտեսական ծանր դրությունն էր, որում հայտվել էին ակնցիք: Բնակչության արտագաղթի և Ակն քաղաքում տիրող ծանր սոցիալ-տնտեսական դրության մասին է վկայում Գ. Սրվանձտյանցը, որն անձամբ շրջել էր Արևմտյան Հայաստանի շատ քաղաքներում և գյուղերում, նշում է. «Ակն ո՛չ առեստուր ունի եւ ո՛չ երկրագործութիւն ունի, ասոր համար բոլոր Ակնածինները սփռուալ են այլ եւ այլ քաղաքներ ու աշխարհները, շատերը անդարձ գաղթականութեամբ, բայց շատերուն ալ մեծածախ տունէր եւ Ակնա ջուրն ու օդը չէր ձգած մեկնել, ուր որ շրջեցա Ակնցիներու պատահեցա»<sup>27</sup>:

Այս ժողովրդագրական տեղաշարժերով հանդերձ 1884 թ. Ակն քաղաքի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 10000 մարդ, որից կեսից քիչ ավելի հայ և մնացածը թուրք<sup>28</sup>: Պարզ է դառնում, որ ճշմարտությունից հեռու է Խարբերդ նահանգի համար պատրաստված 1887-1888 թթ. համար պատրաստված սալնամեն (պաշտոնական տարեգիրքը), որն իր աշխատության մեջ վկայակոչում է Առաքել Քեչեյանը<sup>29</sup>: Վերջինումս նշվում է, որ ողջ Ակնի կազայում նշված ժամանակահատվածում բնակվում էր 8233 տուն բնակչություն, որից 12700 շունչ մահմեդական, 5507-ը՝ ոչ մահմեդական:

Այս հայաշատ քաղաքը 1896 թ. ենթարկվեց համիդեական կոտորածի, որի հետևանքով ընդհանուր կազայի 3000 զոհերից 2000-ը բաժին էր ընկնում Ակն քաղաքին<sup>30</sup>: Պետք է ենթադրել, որ Ակն քաղաքի հայ բնակչության ծնելիության ցուցանիշն այդքան էլ բարձր չի եղել, քանի որ այս ամենով հանդերձ 1914 թ. հայ բնակչության թիվը հասնում էր 1300 տան, 7720 շնչի, միևնույն թուրքերի թիվը 6000 շունչ էր<sup>31</sup>:

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. Բ, Ե., 1982, էջ 277:

<sup>28</sup> Շանիկեան Յ., Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 32:

<sup>29</sup> Քեչեյան Ա., նշվ. աշխ., էջ 35:

<sup>30</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 379: Տե՛ս նաև Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 245:

<sup>31</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 379:

Բացի այս հայաշատ կենտրոնից հայերը բնակություն էին հաստատել նաև մի շարք գյուղերում և գյուղաքաղաքներում:

Ակնի կազայի հայաբնակ գյուղերը հիմնականում մտնում էին Աղն նահիբի (գյուղախումբ) մեջ: Նահիբի կենրոնը Աղն գյուղաքաղաքն էր, որը անվանվում էր նաև Վաղավեր: Վերջինս գտնվում է Ակնից հարավ-արևելք, Եփրատ գետի աջ ափին: 1896 թ. դրությամբ, նախքան համիդեական կոտորածները, Աղնը ուներ 80 տուն, 500 շունչ հայ բնակչություն<sup>32</sup>: Կոտորածների և արտագաղթի հետևանքով XX դ. սկզբին հայ բնակչությունը նվազեց: 1914 թ. հայերի թիվն այստեղ կազմում էր ընդամենը 52 տուն, 319 շունչ<sup>33</sup>: Փաստորեն 1896-1914 թթ. միջոցում հայերի թիվը այստեղ նվազել էր 28 տնով:

Այս նահիբի գյուղերը իրենց աշխարհագրական դիրքով բաժանվում էին 3 խմբի: Գյուղերի առաջին խումբը՝ Նարվեր, Ապուշեղ, Կանրկապ, Մաշկերտ, Սաղմկա, Կարուշլա գտնվում էին Ակն քաղաքի մոտ, մասնավորապես նրա հարավային մասում, իսկ երկրորդ խումբը՝ Լիճք, Շրգու, Վանք, Չորակ, Աուշաղկա, Վաղաշեն, Բինկյան գյուղերը գտնվում էին Եփրատ գետի ձախ ափին, իսկ երրորդ խումբը՝ Ծագ, Էհնեցիկ, Ծապլվար, Զուշնա, Կռանի, Խոռոջ, Հասկնի գյուղերը գտնվում էին Ոսկեգետակ գետի ձախ և աջ ափերին:

Նարվեր գյուղը 1878 թ. ուներ 32 տուն, 174 շունչ հայ և 76 շունչ թուրք բնակչություն<sup>34</sup>: Պետք է ենթադրել, որ 1878-1885 թթ. ընթացքում եղել են բնակչության լուրջ տեղաշարժեր, քանի որ 1885 թ. դրությամբ հայերի թիվը կազմում էր 25 տուն<sup>35</sup>: Թեև տեղաշարժերը և 1895-1896 թթ. ջարդերը զգալիորեն ազդեցին Նարվեր գյուղի հայ բնակչության ընդհանուր թվի վրա, բայց 1914 թ. դրությամբ գյուղը ուներ 38 տուն, 207 շունչ հայ և 92 շունչ թուրք բնակչություն<sup>36</sup>:

<sup>32</sup> ՊԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 37, թ. 1:

<sup>33</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380: Տե՛ս նաև Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 237:

<sup>34</sup> ՊԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 35, թ. 3:

<sup>35</sup> Ճանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 51:

<sup>36</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 379: Տե՛ս նաև Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 245:

Ապուշեղը Ակնի հարավային մասում գտվող գյուղերից ամենամեծն էր: Դեռ 1878 թ. գյուղը ուներ 180 տուն, 1000 շունչ հայ, 938 շունչ թուրք բնակչություն<sup>37</sup>:

Ըստ 1880 թ. վիճակագրության, գյուղը 1066 շունչ հայ բնակչություն ուներ<sup>38</sup>: Հետևելով գյուղի բնակչության աճի դինամիկային՝ պետք է նկատենք, որ XX դ. սկզբին հայերի թիվը այստեղ աճել էր՝ հասնելով 1914 թ. 320 տան, 1920 շնչի<sup>39</sup>:

Ակնի հարավային մասում գտնվող գյուղերից էր նաև Մաշկերտը: XIX դ. սկզբին գյուղն ունեցել է 250 տուն հայ բնակչություն<sup>40</sup>: Հետագայում բնակչության ստվար հատվածը գաղթում է Հալեպ և այլ վայրեր պանդխտության, ու այդ պատճառով 1889 թ. նրանց թիվն այստեղ կազմում էր ընդամենը 85-90 տուն<sup>41</sup>: Պետք է ենթադրել, որ այդ գաղթը շարունակվել է նաև XX դ. սկզբին, քանի որ 1914 թ. Մաշկերտում կար 67 տուն, 496 շունչ հայ բնակչություն<sup>42</sup>: Չպետք է մոռանալ նաև 1895-1896 թթ. կոտորածների մասին, որոնք ևս խեղաթյուրեցին գյուղի ժողովրդագրական նկարագիրը: Ի պատիվ մաշկերտցիների, նշենք որ զոհերի թիվը այդ կոտորածի ընթացքում կարող էր շատ ավելի մեծ լիներ, եթե չլիներ հայտնի քաղաքական գործիչ Արմեն ճանճիկյանի կազմակերպած ինքնապաշտպանությունը<sup>43</sup>: Փաստորեն, 25 տարվա ընթացքում հայ բնակչությունը նվազել էր մոտ 20 տնով:

Կամրկապ գյուղում ևս XIX դ. վերջին բնակչություն հաստատած հայ բնակչությունն իր թվաքանակով գերակշռում էր թուրքերին: 1872 թ. գյուղն ուներ 160 տուն հայ բնակիչ<sup>44</sup>, իսկ 1878 թ. այստեղ բնակվում էին 170 տուն, 808 շունչ հայ և 212 շունչ թուրք բնակչություն<sup>45</sup>: XIX դ. վերջին ժողովրդագրական տեղաշարժերը ևս տեղ են գտել այս գյուղում: 1880 թ. և 1895 թ. շատ ընտանիքներ գաղթել էին Պուլսի Սկյուտար

<sup>37</sup> ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 37, թ. 1:

<sup>38</sup> Էփրիկեան Ա., նշվ. աշխ., էջ 83:

<sup>39</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:

<sup>40</sup> «Արևելք», Կ.Պուլիս, 1889, ապրիլի 13:

<sup>41</sup> Նույն տեղում:

<sup>42</sup> Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 238: Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:

<sup>43</sup> Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 117:

<sup>44</sup> Քէչեան Ա., նշվ. աշխ., էջ 73:

<sup>45</sup> ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 35, թ. 2:

և Կետիկ Փաշա թաղամասերը<sup>46</sup>: Այս ամենով հանդերձ 1914 թ. դրութեամբ գյուղի հատերի թիվը կազմում էր 250 տուն, 1260 շունչ<sup>47</sup>:

Սաղմկա գյուղում հայերը ևս բնակություն էին հաստատել, որոնց ընդհանուր թիվը 1914-1915 թթ. դրութեամբ կազմում էր 36 տուն, 279 շունչ<sup>48</sup>:

Կարուշլան XX դ. սկզբին իրենից ներկայացնում էր խառը բնակչություն ունեցող մի գյուղ, և նախքան Մեծ եղեռնը հայ բնակչության թվաքանակն այստեղ կազմում էր 50 տուն<sup>49</sup>: Եվ եթե ընդունենք յուրաքանչյուր տան շնչերի միջին մեծությունը 8-ով, ապա ստացվում է, որ գյուղը ունեցել է մոտ 400 շունչ հայ բնակչություն:

Այսպիսով, Ակն կազայի այս հատվածում XX դ. սկզբին, նախքան Մեծ եղեռնը բնակվում էր մոտ 4553 շունչ հայ:

Եփրատ գետի ձախ ափին գտնվող գյուղերի շարքում Շրգու, Վանք, Սուշեղկա, Չորակ գյուղերը առանձնանում էին նրանով, որ այստեղի հայ բնակչությունը դավանանքով կաթոլիկ էր:

Շրգու գյուղում Մեծ եղեռնի նախօրյակին բնակվում էին 320 շունչ կաթոլիկ հայեր<sup>50</sup>:

Կաթոլիկական գյուղերի մեջ ամենանշանավորը Վանք կոչվող գյուղն էր: 1892 թ. դրութեամբ գյուղը ուներ 50 տուն հայ բնակիչ<sup>51</sup>: Ցավոք, 1895-1896 թթ. կոտորածները և բնակչության արտագաղթը իրենց կնիքը թողեցին նաև Վանք գյուղի հայ բնակչության թվաքանակի վրա, և արդեն 1914 թ. գյուղում բնակվում էին ընդամենը 150 շունչ կաթոլիկ հայեր<sup>52</sup>:

Չորակ կոչվող գյուղում 1878 թ. դրութեամբ բնակվող կաթոլիկ հայ ազգաբնակչության թիվը հասնում էր 154 շնչի, մինչդեռ թուրքերի թիվը նույն ժամանակ կազմում էր ընդամենը 66 շունչ<sup>53</sup>:

<sup>46</sup> Քէչեան Ա., նշվ. աշխ., էջ 74:

<sup>47</sup> Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 243: Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:

<sup>48</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:

<sup>49</sup> Նույն տեղում:

<sup>50</sup> Նույն տեղում:

<sup>51</sup> Շանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 55: Տե՛ս նաև Քէչեան Ա., նշվ. աշխ., էջ 121:

<sup>52</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:

<sup>53</sup> ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 35, թ. 2:

Պետք է նկատենք, որ այս գյուղում, թեև շատ քիչ քանակով, բայց բնակություն էին հաստատել նաև լուսավորչական դավանանքի հայեր: 1878 թ. նրանց թիվը գյուղում կազմում էր 3 տուն, 18 շունչ<sup>54</sup>: 1895-1896 թթ. կոտորածներից մազապուրծ փախչելով՝ հայերն ապաստան էին գտնում Կ. Պոլսում և այլուր, ու դրա հետևանքով XX դ. սկզբին գյուղում հայերի թիվը կիսով չափ պակասել էր՝ կազմելով 70 շունչ<sup>55</sup>:

Կաթուղիական հաջորդ գյուղ Սուշեղկայում 1878 թ. դրությամբ բնակվում էին 118 կաթուղի հայ<sup>56</sup>: Նկատենք, որ նույն ժամանակ գյուղում բնակություն էին հաստատել նաև 1 տուն (6 շունչ) լուսավորչական դավանանքի հայեր: Արտագաղթը և կոտորածները ևս այս գյուղում հավանաբար տեղ էին գտել, քանի որ 1914 թ. գյուղում հայերի թիվը կազմում էր 164 շունչ<sup>57</sup>:

Այսպիսով, Ակն կազայում կաթուղի հայ բաշնակչության թիվը XX դ. սկզբին կազմում էր 704 շունչ:

Լիճք հայաբնակ գյուղը 1882 թ. տվյալներով ներառում էր 130 տուն, որից 2/3-ը (մոտ 86 տուն, հաշվարկն իմն է - Ա. Ա.) հայ, իսկ 1/3-ը (մոտ 43 տուն, հաշվարկն իմն է - Ա. Ա.) մահմեդական<sup>58</sup>: Եթե յուրաքանչյուր տան անձերի միջին մեծությունը ընդունենք 8-ը, ապա ստացվում է, որ հայերի թիվը գյուղում կազմում էր մոտ 688 շունչ:

Փաստերի բացակայությունը թույլ չի տալիս մեզ նշել, եղե՞լ է արդյոք արտագաղթ և 1890-ական թթ. կոտորածներ, թե՞ ոչ: Սակայն քանի որ 1914-1915 թթ. դրությամբ գյուղի հայ բնակչությունը կազմում էր 80 տուն<sup>59</sup> (ընդունելով յուրաքանչյուր տան ժխերի միջին մեծությունը 8 շունչ՝ կազմում է 640 շունչ, հաշվարկն իմն է - Ա. Ա.), պետք է ենթադրել, որ ժողովրդագրական տեղաշարժերը գյուղում առկա են եղել, և փաստորեն հայերի թիվը XIX դ. վերջին ոչ միայն չէր ավելացել, այլև XX դ. սկզբին նվազել էր մոտ 40 շնչով:

<sup>54</sup> Նույն տեղում:

<sup>55</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:

<sup>56</sup> ՉԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժ. 3, գ. 35, ք. 2:

<sup>57</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:

<sup>58</sup> «Մասիս», Կ. Պոլիս, 1882, օգոստոսի 27:

<sup>59</sup> Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 244:

Վաղաշեն հայկական գյուղում եղեռնի նախօրեին ստվարացել էր 56 տուն հայ բնակչություն<sup>60</sup> (մոտ 448 շունչ, հաշվարկն իմն է - Ա. Ս.):

Բինկյան գյուղում հայերը XIX դ. վերջին իրենց թվով գերակշռում էին թուրքերին: 1878 թ. հայերի թիվը կազմում էր 170 տուն, 980 շունչ, թուրքերինը՝ 50 շունչ<sup>61</sup>: Համլիդեական կոտորածները ծանր էին անդրադարձել գյուղի հայ բնակչության վրա: Գյուղը հրդեհվել էր, իսկ հայերից շատերը արտագաղթել էին: 1915 թ. գյուղը ուներ 140 տուն հայ բնակիչ (մոտ 1120 շունչ, հաշվարկն իմն է - Ա. Ս.):

Այսպիսով, Եփրատ գետի ձախ և Կիփն գտվող հայկական գյուղերի հայ բնակչությունը թիվը նախքան Մեծ Լ՛ղեռնը կազմում էր 2912 շունչ, որից 704-ը կաթուղի դավանանքի:

Ոսկեգետակ գետի ափին գտնվող գյուղերից Զուշնան հայաբնակ էր, ուր Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին կար 150 տուն հայ<sup>62</sup> (մոտ 1200 շունչ, հաշվարկն իմն է - Ա. Ս.):

Օապվարում նույն ժամանակ հայերը սակավ սթիվ էին՝ ընդամենը 16 շունչ<sup>63</sup>:

Օագ հայաբնակ գյուղը XIX դ. վերջին ենթարկվեց ժողովրդագրական տեղաշարժերի, և ըստ ակննատեսների տուն չկար, որտեղից հայերը չգաղթեին այլ երկրներ<sup>64</sup>: Փաստերի սակավությունը թույլ չի տալիս մեզ ճշտելու հայերի թիվը նախքան արտագաղթը և նրա կազմի փոփոխությունները կապված այդ արտագաղթի հետ, բայց կարող ենք թույլ տալ մեզ ասելու, որ XX դ. սկզբին Օագ գյուղը շարունակում էր հայաբնակ լինել, քանի որ 1914 թ. այստեղ կար 82 տուն, 687 շունչ հայ<sup>65</sup>:

Հասկնի գյուղը 1895 թ. առաջ ուներ 30 տուն բնակչություն, որից 25 տունը հայ և 5-ը թուրք<sup>66</sup>: Դարավերջի ոճրագործությունը իր ծանր

<sup>60</sup> Նույն տեղում, էջ 238:

<sup>61</sup> ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., քաժ. 3, գ. 35, թ. 2:

<sup>62</sup> Բախտիկեան Ա., Արաբկիր եւ շրջակաիւ գիւղուղերը, Պէրուք, 1934, էջ 134:

<sup>63</sup> Kevorkian R., Paboudjian P., էջ 380:

<sup>64</sup> Բախտիկեան Ա., նշվ. աշխ., էջ 134:

<sup>65</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380: Տե՛ս նույնը Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 238:

<sup>66</sup> Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 130:

անդրադարձը ունեցավ նաև այս գյուղի վրա: 1914 թ. գյուղում հայերի թիվը նվազել էր՝ կազմելով 14 տուն, 70 շունչ<sup>67</sup>:

Խոռոչ գյուղի<sup>68</sup> բնակչությունը ևս հայեր ու թուրքեր էին XX դ. սկզբին: Նախքան Մեծ եղեռնը գյուղը ուներ 30 տուն, որոնցից 21-ը հայ, 9-ը թուրք<sup>69</sup>: Եթե յուրաքանչյուր տան շնչերի միջին մեծությունը ընդունենք 8 շունչ, ստացվում է 168 շունչ:

Օապլվարը այս գյուղերի շարքում ուներ ամենասակավաթիվ հայ բնակչությունը: 1915 թ. սկզբին այն ուներ 16 հայ շունչ<sup>70</sup>:

Կռանի գյուղում հայ բնակչության արտագաղթը ևս տեղ էր գտել XIX դ. վերջին և XX դ. սկզբին: Հայերը գաղթում էին Կ.Պոլիս և այլ քաղաքներ պանդխտությամբ: Դրան գումարվեց նաև 1890-ական թթ. կոտորածները, որոնք ևս խեղաթյուրեցին ժողովրդագրական պատկերը: Առաջին համաշխարհային պատերազմի նախաշեմին Կռանի գյուղում բնակվում էր 20 տուն հայ<sup>71</sup> (մոտ 160 շունչ, հաշվարկն իմն է - Ա. Ա.):

Էհնեցիք հայկական գյուղում նույն ժամանակ հայերի թիվը հասնում էր 26 տան, 231 շնչի<sup>72</sup>:

Այսպիսով, մեր հաշվարկների համաձայն, Ոսկեգետակ գետի ափին բնակվող հայերի թիվը XX դ. սկզբին, նախքան Մեծ եղեռնը հասնում էր մոտ 2548 շնչի:

Ընդհանրացնելով մեր խոսքը նշենք, որ XIX դ. վերջին և XX դ. սկզբին Ակնի կազան Արաբկիրի սանջակի հայաշատ կազաններից էր, ուր 1914-1915 թթ. բնակվում էր մոտ 15525 շունչ հայ բնակչություն:

Պոտուրկեի կազան Արաբկիրի հյուսիսարևելյան կազան էր, որն ուներ ընդամենը մեկ հայկական գյուղ՝ Վարթենիքը (Պաշ Վարթենիք), ուր 1914-1915 թթ. ապրում էին մոտ 679 շունչ հայ բնակչություն<sup>73</sup>:

<sup>67</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:

<sup>68</sup> Խոռոչ գյուղի անվանումը համապատասխանում է իր դիրքին, քանի որ վերջինս գտնվում է 4 լեռների ստորոտին:

<sup>69</sup> Փոլատեան Ա., նշվ. աշխ., էջ 130:

<sup>70</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380:

<sup>71</sup> Բախտիկեան Ա., նշվ. աշխ., էջ 137:

<sup>72</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380: Տե՛ս նաև Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 238:

<sup>73</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 377:

Այսպիսով, Արարկիրի սանջակը XX դ. սկզբին իրենից ներկայացնում էր հայաշատ մի կենտրոն, ուր նախքան Մեծ եղեռնը բնակվում էր մոտ 26569 շունչ հայ բնակչություն:

*АРМАН СААКЯН  
ИИ НАН РА*

## ЧИСЛЕННОСТЬ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ АРАБКИРСКОГО САНДЖАКА В КОНЦЕ XIX - НАЧАЛЕ XX ВВ.

### РЕЗЮМЕ

Арабкирский санджак до 2-ой половины XIX века являлся южным санджаком Себастьянского вилайета. 1880-ых гг. он был присоединен к вилайету Харпут /Мамурет-ул-Азиз/. В конце XIX - начале XX вв. Арабкирский санджак был подразделен на 3 казы: Арабкир, Акн, Потурке. Каза Арабкир являлась центральным из перечисленных каз. Центром как всего санджака, так и упомянутой казы был город Арабкир. Основную часть населения города составляли 9000, а во всей казе 10365 армян. До геноцида армян 1915 г. в казе Акн проживало 15525 армян, а в Потурке — 679 армян.

Во всем Арабкирском санджаке в тоже время проживало в общей численности 26569 армян.



**ԺՈՂՈՎՐԴԱԳՐՎԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ,  
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԽԱՐԲԵՐՂԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ XIX ԴԱՐԻ ՎԵՐՁԻՆ  
ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿՁԲԻՆ**

Դարեր շարունակ Օսմանյան կայսրության վարած հայահալած քաղաքականության բաղկացուցիչ մասն է եղել տարածքի ժողովրդագրական պատկերի փոփոխությունը՝ ի նպաստ թուրք և քուրդ էթնիկ տարրի: Դեռևս XVI-XVIII դդ. ընթացքում ողջ կայսրության տարածքում իրականացվել է հայերի բռնի մահմեդականացման քաղաքականություն: Մյուս կողմից, կայսրության կիրառած ազգային, սոցիալական, կրոնական խտրականության քաղաքականությունը ժամանակի ընթացքում հանգեցնում էր երբեմնի հայաբնակ տարածքների հայաթափմանը: XIX դ. վերջերին ժողովրդագրական մեծ փոփոխությունների բերեցին Օսմանյան կայսրության գրեթե բոլոր հայաբնակ վայրերում իրականացված ջարդերը:

Դարավերջին հայության շրջանում նկատվեց մի նոր շարժ. բազմաթիվ բնակավայրերի, հատկապես փոքր բնակչություն ունեցող գյուղերից արտահոսք սկսվեց դեպի ավելի խոշոր բնակավայրեր: Այս շրջանում է նաև, որ սկսվեց գաղթ դեպի արտասահման՝ հիմնականում ԱՄՆ: Արտագաղթը մեծ չափերի հասավ հատկապես ջարդերից հետո: Ստորև փորձել ենք ներկայացնել ժողովրդագրական փոփոխությունների հիմնական միտումները Խարբերղի նահանգում XIX դ. վերջին և XX դ. սկզբին: Անդրադառնա՞նք նախ մինչև XIX դարի 80-ականները տեղի ունեցած այն փոփոխություններին, որոնց հետևանքներն արդեն վիճակագրական տվյալների ձևով արտացոլված Գ. Սրվանձտյանցի, Հ. Ջանիկյանի, Ս. Էփրիկյանի, Պ. Նաթանյանի և այլոց աշխատություններում:

Խարբերղի նահանգը Արևմտյան Հայաստանի վեց նահանգներից մեկն էր: Այն բաղկացած էր Խարբերղի, Դերսիմի ու Մալաթիայի գավառներից, մեկ տասնյակից ավել գավառակներից: Խարբերղի (Մամուրեթ-ուլ-Ազիզ) նահանգը կազմավորվել է 1879-1880 թթ., երբ Խարբերղի գավառին կցվեցին Մալաթիայի և Արղանայի գավառները: 1888

թ. նահանգին կցվեց մինչ այդ առանձին նահանգ կազմող և հիմնականում քրդերով բնակեցված Դերսիմը: Խարբերդի նահանգին կցվեցին նաև Մալաթիայի մի շարք բնակավայրեր, ինչպես օրինակ՝ Դյուսնի-Մանսուրը, Աղջա-Դաղը, Քյախտան, որոնք մեծամասամբ բնակեցված էին քրդերով ու թուրքերով: Այս վերածնունդներով թուրքական իշխանությունները փոխեցին նաև նահանգի ընդհանուր ժողովրդագրական պատկերը. այժմ զուտ հայաբնակ բազմաթիվ գյուղերի կողքին նահանգի ենթակայության տակ հայտնվեցին նաև զուտ քրդաբնակ ու թուրքաբնակ հարյուրավոր գյուղեր: Վերջիններիս մի ստվար մասը՝ Ակնի, Արաբկիրի, Չնչկածագի, Չարսամճագի գավառակների, Մալաթիայի բազմաթիվ գյուղեր նախկինում բնակեցված էին եղել հայերով, որոնք նախորդ հարյուրամյակների ընթացքում մահմեդականացվել էին կամ գաղթել այլ բնակավայրեր: Ողջ նահանգի առումով բացառություն կարելի է համարել Խարբերդի գավառակի գյուղերը, որոնցից շատերը մինչև XX դ. սկզբները առանձնանում էին որպես զուտ հայաբնակ գյուղեր: Խարբերդի դաշտի 360 գյուղերից 107-ը, ըստ Պ. Նաթանյանի, հայաբնակ էին, որից 62-ը՝ զուտ հայաբնակ, իսկ 45-ում հայերը խառն ապրում էին թուրքերի հետ: Նրա տվյալներով Խարբերդի դաշտի գյուղերում 1878 թ. ապրում էր 55065 հայ, որոնց թիվը քաղաքում ապրող հայերի հետ կազմում էր 60000<sup>1</sup>:

Ա. Եփրիկյանը հիշատակում է Խարբերդի վիճակին ենթակա 61 գյուղեր, Խարբերդ ու Մեզրե քաղաքները՝ ընդհանուր առմամբ 40210 հայությամբ<sup>2</sup>. հեղինակը բերում է տվյալներ, որոնք հիմնականում հանրեցնում են Գ. Սրվանձտյանցի բերած թվերին<sup>3</sup>:

Այլ էր վիճակը Խարբերդի գավառի մյուս գավառակներում՝ Ակնում և Արաբկիրում: Խոսելով Ակնի մասին՝ Ղ. Ինճիճյանը նշում է, որ «Ժ՛ է և ԺԸ-րդ դարուց մեջ քաղաքիս հայերէն բազում անձինք կրօնափոխ եղած են. ինչպէս կան ցարդ թուրք տուներ որոց ազգանունը հայե-

<sup>1</sup> Նաթանեան Պ., Արտօսը Դայաստանի, Կ.Պօլիս, ա.թ. էջ 129:

<sup>2</sup> Եփրիկեան Ա., Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. 2, Վենետիկ, 1907, էջ 163:

<sup>3</sup> Սրվանձտյանցը Խարբերդի առաջնորդության ենթակա 61 գյուղերի ու Մեզրե քաղաքի հայ բնակչությունը հաշվում է 5250 տուն: Տե՛ս Սրուանձտեանց Գ., Թոռոս Աղբար, Կ.Պոլիս, 1884, էջ 103-104:

րեն են»<sup>4</sup>: Ակնու՛մ բազմաթիվ էին հայկական անու՛ններով գյուղերը, որտեղ այլևս ոչ մի հայ չէր ապրում, ինչպես օրինակ, Ապրանք, Միջին գեղ, Վան գեղ, Ուռեկ, Ավերակ, Արտոս, Սերկևիլ և այլ գյուղերը: XIX դ. վերջերին Ակնի գավառակի շուրջ հինգ տասնյակ գյուղերից հայեր էին ապրում խառը թուրքերի հետ Ակն քաղաքում և Ապուչեխ, Կամարկապ, Կարուշլա, Նարվեր, Լիճք, Բինկա, Չորակ, Մուշեղկան, Վանք ու Շրզու գյուղերում, որոնցից վերջին 4-ում ապրում էին հիմնականում հայ կաթուղիկներ: Ընդհանուր առմամբ, Ակնի վիճակում, որ Խարբերդի նահանգի վերջնական ձևավորումից հետո ընդգրկեց Ակնի գավառակի սահմանները, համաձայն 1880 թ. մարդահամարի, ապրում էր 9967 հայ, որից 5442-ը՝ Ակն քաղաքում<sup>5</sup>:

Հայերի մահմեդականացման դեպքեր գրանցվել էին նաև Արաբկիրում. XIX դ. վերջերին Արաբկիրի բազմաթիվ գյուղերից հայաբնակ էին միայն 15-ը, որոնցում ապրում էր 4255, քաղաքում՝ 10000 հայ<sup>6</sup>:

XIX դ. վերջերին ինչպես Ակնի ու Արաբկիրի բազմաթիվ բնակավայրերում, այնպես էլ Դերսիմին ենթակա քրդաբնակ բազմաթիվ գյուղերում պահպանվել էին հայկական եկեղեցիների ավերակներ, իսկ հին ու նոր գերեզմանների վրա փորագրված էին խաչեր, որոնք ևս վկայում են նախկինում այդ բնակավայրերում հայ բնակչության գոյության փաստի մասին: Այս գյուղերի հայ բնակիչները ժամանակին կամ հեռացել էին ու բնակություն հաստատել այլ վայրերում, կամ՝ մահմեդականացվել:

Դերսիմի Չմշկածագ գավառակում զուտ հայաբնակ գյուղեր գրեթե չկային: Բազմաթիվ էին այն գյուղերը, որտեղ ապրում էին աննշան թվով հայեր: Չմշկածագի առաջնորդության 29 հայաբնակ գյուղերում, Կապան Մաղեն ավանում ու Չմշկածագ քաղաքում, ըստ Գ. Սրվանձտյանցի՝ հայ բնակչությունը կազմում էր 935 տուն<sup>7</sup>, որից 280 տունը՝ Չմշկածագում, 100-ը՝ Կապան Մաղենում: Վերջինս հետո միացվեց Խարբերդ գավառին: Մի քանի գյուղերում ապրում էին 20-40 տուն

<sup>4</sup> Ճանիկեան Յ., Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 14:

<sup>5</sup> Էփրիկեան Ս., նշվ. աշխ., էջ 82-83:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 279:

<sup>7</sup> Սրուանձտեանց Գ., նշվ. աշխ., էջ 117-118:

հայեր, մյուսներում՝ 1-10 տուն: Նախկինում մի քանի հարյուր տուն հայ բնակիչ ունեցող Չմշկածագի Ազարակ գյուղում 1870-ականներին ապրում էր 9 տուն հայ<sup>8</sup>: Նամնապես Բրաստիք, Թակե, Չնձոր, Մանկուճակ, Աշգանի, Խաչտուն, Ագրակ, Չմշկածագի ենթակայության մի շարք այլ գյուղերից յուրաքանչյուրում նույն 70-ականներին ապրում էին մի քանի տուն հայեր: Հետաքրքիր է, որ այստեղ ևս քիչ չէին հայկական անվանումներով բնակավայրերը, որոնց բնակչությունը ենթադրվում է՝ հայկական ծագում է ունեցել, հետո՝ ընդունել մահմեդականություն: Ջանիկյանը ևս հիշատակում է նման գյուղեր. «Աղուանիս գիւղի բնակչաց համար, որ ամբողջովին քուրդ են՝ կըսուի, թէ հայէն դարձած են, բայց ազգային սովորութիւնքն պահած են, և եթէ ստոյգ է՝ համակիր են իրենց նախնեաց կրօնին»<sup>9</sup>: Գ. Սրվանձտյանցը հիշատակում է այս մարդկանց ինչ-ինչ սովորություններ, որոնք ևս վկայում են նրանց հայկական ծագման մասին: Հեղինակը առանձնացնում է Ս. Թորոս գյուղախմբի բնակիչ թուրքերին, որոնցից շատերը հասել են պաշտոնների և բարեկիրք են ու ազնիվ: Շուրջ 20 գյուղերից բաղկացած Ս. Թորոս գյուղախմբում XIX դ. կեսերին հայեր չկային, թեև այս դեպքում ևս դեռևս հնչում էին բնակավայրերի զուտ հայերեն ծագում ունեցող անվանումները, ինչպես օրինակ՝ Խնձոր, Կծու, Դրնիկ, Վանք, Վարդենիք, Ագրակ և այլն<sup>10</sup>:

Չարսանճագում ևս քիչ էին 10 տուն հայ բնակչից ավել հայություն ունեցող բնակավայրերը: Վերոնշյալ ժամանակահատվածում այս գավառակի հայերը հիմնականում կենտրոնացված էին Բերրի, Մեծկերտ, Խոզաթ ավաններում: 1872-1873 թթ. Ազգային Կենտրոնական վարչության հրատարակած գավառական վիճակագրության մեջ տեղ գտած Չարսանճագի առաջնորդարանի մասին մի արձանագրության համաձայն՝ Չարսանճագի 60 գյուղերում կար 1254 տուն հայ և 998 տուն թուրք ու քուրդ<sup>11</sup>: Գ. Սրվանձտյանցը հիշատակում է Չարսանճագի առաջնորդության ենթակա 71 գյուղ, երեք քաղաք՝ 1565 տուն հայ բնակչությամբ<sup>12</sup>: Նաթանյանի տվյալներով՝ 1878 թ. Չարսանճագի 62

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 118:

<sup>9</sup> Ճանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 75:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 15:

<sup>11</sup> Երեւանեան Գ., Պատմութիւն Չարսանճագի հայոց, Պետրոս, 1956, էջ 173:

<sup>12</sup> Արուանձտեանց Գ., նշվ. աշխ., էջ 149-151:

գյուղերում և Բերրի քաղաքում ապրում էր 1592 տուն հայ՝ 13293 բնակչով<sup>13</sup>։ Տվյալները համեմատելիս երևում է, որ ըստ էության դրանք շատ չեն տարբերվում և հիմնականում համապատասխանում են իրականությանը։

Նույն վիճակն էր և Մալաթիայի գավառում։ Նախկինում, եթե Մալաթիայի գավառում 50 հայի դիմաց կար 1 մահմեդական, ապա արդեն XIX դ. վերջում 150 գյուղերից քչերն էին հայաբնակ։ 1915 թ. Մալաթիայի հայ առաջնորդությունը բաղկացած էր մի քանի ոչ մեծ քաղաքներից ու մոտ 50 գյուղերից<sup>14</sup>։ Նման իրավիճակի պատճառը նաև վերոնշյալ բնակավայրերից հայերի մեծ հոսքն էր այլ՝ ավելի խոշոր ու բարենպաստ պայմաններ ունեցող բնակավայրեր։ Նախ, գյուղաբնակ վայրերից տարբեր ժամանակներում միշտ էլ նկատվել է դեպի գավառակի կենտրոնական քաղաքներ, ավաններ հոսքը։ Սրա մասին են վկայում նման բնակավայրերում ավելի մեծ թվով հայ բնակչության կենտրոնացված լինելու փաստերը, այն դեպքում, երբ հարակից գյուղերն արագորեն հայաթափվում էին։ Գաղթի մյուս ուղղությունը տարիներ շարունակ եղել է Պոլիսը, ուր միայն XIX դ. ընթացքում «գաղթող ակնեցի և գիւղացի ազգայինք հաւանորէն քանի մը հարիւր տուն և գուցէ աւելի են»<sup>15</sup>։ Ընդհանուր առմամբ, Պոլիս գաղթած հայության մեջ ակնցիները մեծ թիվ էին կազմում։ Ակնցիները բացի Պոլսից, տարիներ շարունակ գաղթում էին նաև Խարբերդ-Սեզրե, ուր ևս, ինչպես Պոլսում, նրանք բարձր դիրքեր էին զբաղեցնում։ Մեզրեում հաստատված եկվորների մեծ մասն ակնցի էր՝ մեծամասամբ մեծահարուստներ։ Սակավահողության, տնտեսվարման անհավասար պայմաններում հայերն ունեին սեփական գոյությունը պահելու սահմանափակ հնարավորություններ։ Միայն Խարբերդի գավառակում հողազուրկ էր հայ գյուղացիության 74.1%-ը, մինչդեռ թուրքերի՝ 23.2%-ը<sup>16</sup>։ Սա ստիպում էր բազմաթիվ հայերի դիմելու պանդխտության։ Սրա մասին է հավաստում այն հանգամանքը, որ արտագաղթն առավել մեծ չափերի էր հասնում հատկապես գյուղերում։

<sup>13</sup> Նաթանեան Պ., նշվ. աշխ., էջ 105-107։

<sup>14</sup> Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէրյուք, 1961, էջ 465։

<sup>15</sup> Ճանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 16։

<sup>16</sup> Համբարյան Ա., Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում 1856-1914 թթ., 1965, Ե., էջ 77։

Ավելին, շատ գյուղաբնակ հայեր հաստատվում էին քաղաքներում, որտեղ փորձում էին գտնել թե ապրուստի միջոցներ, թե կյանքի անվտանգության երաշխիքներ: Կամարակապ գյուղում, որ XIX դ. վերջերին ուներ 150 տուն հայ բնակիչ և Ակնի ամենահայաշատ գյուղն էր, XIX դ. կեսերին ապրում էր 200 տնից ավել հայություն, նրանց մի մասը տարիների ընթացքում գաղթեց Պոլիս, Ամասիա և այլ վայրեր<sup>17</sup>: Նույնքան էլ պակասել էր Ակնի մյուս մեծ գյուղի՝ Ապուլեխի հայությունը, որը գաղթել էր Խարբերդ, Մարզվան և այլ բնակավայրեր. դարավերջին այստեղ ապրում էր շուրջ 200 տուն հայություն<sup>18</sup>:

Նման շարժ էր նկատվում նաև Չմշկածագի, Չարսամճագի գավառակներում, Մալաթիայի գավառում:

XIX դարավերջին քիչ չէին այն ակնցիները, որոնք հաստատվելով օտար երկրներում, ձեռնամուխ էին եղել սեփական գործի, առևտրի ծավալմանը: Բազմաթիվ էին այնպիսիք, ովքեր ողջ տարին աշխատելով այլ բնակավայրերում, ապահովում էին իրենց ընտանիքների տանելի կյանքը ծննդավայրում: Սրանով սկիզբը դրվեց գաղթի մեկ այլ ուղության՝ արտագաղթին արտասահման՝ հիմնականում ԱՄՆ:

Չայերը ԱՄՆ սկսեցին անցնել դեռ 1830-ականներից, բայց դրանք հատուկեմտ մարդիկ էին, իսկ 1870-ականներից նրանց թիվն սկսեց աճել: Այս շրջանում ԱՄՆ-ում հաստատված հայերը հիմնականում կրթված, առաջադեմ մարդիկ էին, որ գալիս էին ուսումը շարունակելու կամ արհեստների, առևտրի մեջ հմտանալու համար. որոշ հայեր էլ քաղաքական ապաստան էին գտնում այստեղ<sup>19</sup>: ԱՄՆ հայերի արտագաղթի պատճառների մասին խոսելիս նշենք ևս մեկը: Նախ, արձանագրենք, որ ԱՄՆ հայերի հոսքը սկսեց Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի՝ Օսմանյան կայսրության ողջ տարածքում ծավալած գործունեության հետ: Այս առաքելության հիմնական և ամենամեծ կայաններից մեկը հիմնվեց հենց Խարբերդում: Միսիոներների կատարած աշխատանքը դրական արձագանքներ գտավ բնակչության շրջանում. սա նաև նշանակում էր վստահություն, հա-

<sup>17</sup> Ճանիկեան Յ., նշվ. աշխ., էջ 48:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 45:

<sup>19</sup> Malcom Vartan, The Armenians in America, Boston - Chicago, 1919, p. 60-61.

մակրանք այն երկրի նկատմամբ, որը ներկայացնում էին նրանք: Ուստի, տարօրինակ չէ, որ արտագաղթում էին մեծ մասամբ բողոքական եկեղեցու հետևորդ դարձած արևմտահայերը: Օրինակ, «խարբերդի եկեղեցին մի տարի ուներ 3107 հետևորդ, հաջորդ տարի՝ 2413. մյուսները գնացել էին Ամերիկա»<sup>20</sup>:

1880-ականներին ԱՄՆ հասան առաջին խարբերդահայերը, որոնք եկել էին այստեղ աշխատելու և իրենց վաստակով ապահովելու հայրենիքում թողած իրենց ընտանիքներին: Նրանք հիմնականում խարբերդի դաշտի գյուղերից էին, խարբերդ ու Մեգրե քաղաքներից: խարբերդի դաշտի գրեթե բոլոր գյուղերից ԱՄՆ մեկնած հայրենակիցների ջանքերով XIX դ. 90-ականներին ԱՄՆ տարբեր քաղաքներում հիմնվեցին միություններ: Մեծ Եղեռնից հետո արդեն այս կազմակերպությունները վերածվեցին Հայրենակցական, Վերաշինաց միությունների: Շատ խարբերդցիներ արտասահմանում աշխատող իրենց ընտանիքի անդամների ուղարկած գումարների շնորհիվ արդեն XX դ. սկզբներին կարողացան մեծ քանակությամբ հողեր գնել ու դառնալ խոշոր հողատերեր: Եթե «XIX դ. վերջին քառորդում նահանգի հողերի 3/4-ը պատկանում էր թուրք աղաներին, ապա մինչև 1908 թ. ավելի ու ավելի շատ հայեր դարձան ունևոր սեփականատերեր»<sup>21</sup>: Սա իր դրական հետևանքներն ունեցավ խարբերդի նահանգի տնտեսության զարգացման վրա:

խարբերդահայերի մի ստվար զանգված արդեն XIX դ. 80-ականների կեսերից աշխատում էր ԱՄՆ-ի Ուորչեստր քաղաքում: 1888 թ. այստեղ հայերը հաշվվում էին շուրջ 400 հոգի՝ մեծ մասը խարբերդի նահանգից: «Ուորչեստրը երբեմն անվանվում էր «Փոքրիկ խարբերդ»<sup>22</sup>: 1891 թ. հրատարակված Ուորչեստրի բառարանում նշվում է, որ այստեղ ապրում է 700 հայ<sup>23</sup>: Եթե հաշվի առնենք, որ նախորդող տարիներին այստեղ բանկություն հաստատած հայերի շուրջ 80%-ը խարբերդի նահանգից էին, ապա պետք է ենթադրել, որ այս աճը տեղի էր

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 77:

<sup>21</sup> Krikorian M., *Armenians in the Service of the Ottoman Empire 1860-1908*, London, Henley and Boston, 1977, p. 72.

<sup>22</sup> Deranian H., *Worcester is America*, Worcester, MA, 1998, p. 43.

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 41:

ունեցել հենց նրանց հաշվին. երեք տարիների ընթացքում նրանց թիվը միայն մի բնակավայրում աճեց գրեթե կրկնակի անգամ: Եվ սա միայն մի բնակավայրի կտրվածքով, մինչդեռ XIX դ. վերջերին հայեր էին ապրում նաև ԱՄՆ-ի Նյու-Յորք, Նյու Ջերսի, Բոստոն, Ֆիլադելֆիա քաղաքներում:

1880-ականներից սկսեց մալաթիացիների գաղթն արտասահման, մասնավորապես ԱՄՆ: Մինչև 1912 թ. մալաթիացի շուրջ 3500 երիտասարդ մեկնել էր արտասահման<sup>24</sup>:

Հայաշատ քաղաքների, գյուղերի համար արտագաղթողների այս թիվը, թվում է, եական ազդեցություն չէր կարող թողնել հայության ընդհանուր ժողովրդագրական պատկերի վրա, բայց երբ արձանագրում ենք, որ հեռացողների գերակշիռ մասը երիտասարդներ էին, պարզ է, որ նրանց հեռանալը զգալի պետք է լիներ նույնիսկ հայաշատ քաղաքների, գյուղերի հայության համար: Ավելին, մի քանի տասնյակ տուն հայություն ունեցող գյուղի համար սա արդեն ուներ իր զգալի հետևանքները: Շուրջ 1200 հայ բնակիչ ունեցող Խուլագյուղից 1876-1895 թթ. Ամերիկա էր գաղթել 80-100 մարդ՝ գյուղի բնակչության մոտ 8%-ը<sup>25</sup>: 1915 թ. Չմշկածագի Հազարի գյուղից, որը 1915 թ., ուներ 406 շունչ հայ բնակիչ, 66-ը պանդուխտներ էին<sup>26</sup>, որը կազմում է հայ բնակչության 16,2%-ը: Նման օրինակները բազմաթիվ են: Շատ հայեր արտագաղթեցին նաև Արաբկիր քաղաքից. սրանք ևս հիմնականում տղամարդիկ էին, որ աշխատելու էին մեկնում արտասահման:

1894-1896 թթ. Օսմանյան կայսրությունն ընդգրկած հայերի զանգվածային կոտորածներից անմասն չմնաց և Խարբերդի մահանգը. այստեղ ևս սպանվեցին հազարավոր հայեր, հրդեհվեցին ամբողջ թաղեր, գյուղեր, ավերվեցին եկեղեցիներ ու վանքեր: Պատվելի էդվին Բլիսը ներկայացնում է Խարբերդի մահանգի բնակավայրերի ողջ վնասները: Ըստ նրա՝ միայն 1895 թ. հոկտեմբերի ջարդերից հետո մահանգի բնակավայրերում սպանվել է 24724 մարդ, սովից, ցրտից ու վախից մահացել 3119 հոգի, ևս 3860-ը սպանվել կամ մահացել էին բնակավայ-

<sup>24</sup> Սելիտինեցի Գեորգ, Նախճիրներ /1915-1918/, Պոստոն, 1929, էջ 74:

<sup>25</sup> Հայկ Վահե, Խարբերդ եւ անոր ոսկեդէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 860:

<sup>26</sup> Գասպարեան Հ., Չմշկածագ եւ իր գիւղերը, Պոստոն, 1969, էջ 188:



րերից դուրս: Ընդամենը Խարբերդի նահանգում կոտորածներին զոհ էր գնացել 32801 մարդ: 3750-ը առևանգվել էին, 14844-ը բռնի մահմեդականացվել<sup>27</sup>: Փաստորեն, Խարբերդը այն նահանգներից էր, որտեղ 1894-1896 թթ. կոտորածների շրջանում բռնի մահմեդականացումը մեծ ծավալներ էր ընդունել:

Ջարդերի հետևանքով ոչ միայն նվազեց հայ բնակչության թիվը, այլ ծայր առան բնակչության նոր տեղաշարժեր, որոնց հետևանքով արդեն XX դ. սկզբներին շատ բնակավայրեր ունեին բնակչության այլ կազմ, քան նախկինում: Կոտորածներից հետո քրիստոնյաները զգուշացվում էին, որ բոլոր նրանք, ովքեր չեն ընդունել մահմեդականություն, պետք է կոտորվեն<sup>28</sup>: Փաստորեն, ջարդերից հետո ևս շարունակվեց մահմեդականացման քաղաքականությունը:

1895 թ. ջարդերից հետո հայաթափվեցին Չմշկածագի մի շարք հայաբնակ գյուղեր: Միատուն գյուղի 80 տուն հայությունը ջարդից հետո ապաստանեց քաղաքում, ուր մնաց երկու տարի, որից հետո գյուղ վերադարձան 25 տունը, մյուսները բնակություն հաստատեցին այլ վայրերում: 1898 թ. գյուղ վերադարձածների մի մասն էլ գաղթեց. Միատունում մնաց 12 տուն հայություն<sup>29</sup>. մի քանի տարվա ընթացքում, փաստորեն գյուղի հայ բնակչությունը նվազեց 85%-ով: Այսպես, Չմշկածագի մյուս գյուղերից (Սիսնա, Մորշխան, Բազաբոն, Պրեխի, Մուռնայի, Պարտիզակ, Թումա Մեզրե) ևս հեռացան ջարդերից փրկված հայերը. նրանք ապաստանեցին քաղաքում ու շրջակա մեծ գյուղերում, և երկար ժամանակ հրաժարվում էին վերադառնալ իրենց բնակավայրեր:

Ջարդից հետո առավել մեծ թվով գյուղեր հայաթափվեցին Մալաթիայի գավառում: Երբեմնի զուտ հայաբնակ Ջրմխտի գյուղը, որ 1895 թ. ուներ 25 տուն հայ բնակիչ, ամբողջությամբ հայաթափվեց նույն 1895 թ., և գյուղի հայերն անցան Մալաթիա<sup>30</sup>: Խաչատուր վարդապետ Տեր Ղազարյանի տվյալներով՝ նույն ճակատագրին արժանացավ

<sup>27</sup> Bliss Rev. Edwin, *Turkey and The Armenian Atrocities*, Fresno, 1982, p. 445.

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 495:

<sup>29</sup> Գասպարեան Դ., նշվ. աշխ., էջ 382:

<sup>30</sup> Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 467:

և Օրտուզի (Հորտեոզ) գյուղը. 1895 թ. 40 տուն հայություն ունեցող գյուղում մնաց 4 տուն հայ<sup>31</sup>: 1895թ. Էսկիշեհիրն (Հին Մելիտինե) ուներ մոտ 35 տուն հայ, եկեղեցի, դպրոց: Ջարդի ժամանակ հայերից շատերը սպանվեցին, մյուսներն անցան Մալաթիա. 1902 թ. այստեղ կար 5 տուն հայ բնակիչ<sup>32</sup>: Փաստորեն, XIX դ. վերջում որպես հայաբնակ հիշատակվող Մալաթիայի գավառին կցված շատ գյուղեր XX դ. սկզբին արդեն զուրկ էին հայ բնակիչներից և հիշատակվում էին որպես զուտ թրջաբնակ կամ քրդաբնակ գյուղեր: Քիչ չեն նաև այն գյուղերը, որոնք հիշատակում է միայն մեկ հեղինակ: Սրանք հիմնականում այն գյուղերն են, որ հայաթափվել էին XIX դ. վերջերին և որտեղ, լավագույն դեպքում մնացել էր 1- 5 տուն հայ:

1894-1896 թթ. ջարդերի տարիներին և դրանից հետո շեշտակիրեն աճեց Թուրքիայից ԱՄՆ մեկնողների քանակը: Միայն 1896 թ. Թուրքիայից ԱՄՆ եկավ 4139 մարդ, հաջորդ տարի՝ 4732, 1898 թ.՝ 4275<sup>33</sup>: Սրանք անկասկած ջարդերի հետևանքով երկիրը լքող հայեր էին: Հետագա տարիներին արտագաղթողների թիվը նվազեց, իսկ 1907 թ. կրկին սկսեց աճել՝ 1910 թ. հասնելով 5508-ի, 1914 թ.՝ 7785-ի<sup>34</sup>: Նախկինում, եթե արտասահման գաղթողների մեծ մասը տղամարդիկ էին, որ արտագնա աշխատանքի միջոցով ապահովում էին իրենց ընտանիքներին ապրուստի միջոցներով, ապա ջարդերից հետո հայրենիքից մեկնողների մեջ քիչ չէին ընտանիքներով մեկնողները: XX դ. սկզբներին արդեն ԱՄՆ-ում հաստատված բազմաթիվ հայեր իրենց մոտ ապաստան տվեցին նորեկ ընտանիքներին: Եղած տեղեկությունների համաձայն՝ 1910 թ. ԱՄՆ-ում ապրում էր արդեն 26498 հայ,<sup>35</sup> որոնց մեջ զգալի թիվ էին կազմում խարբերդի նահանգից գաղթած հայերը:

Այսպիսով, XX դ. սկզբներին խարբերդի նահանգի բնակչության էթնիկ կազմը բավական փոփոխություններ էր կրել: Վերոնշյալ գործընթացների արդյունքում XX դ. սկզբներին խարբերդի նահանգի հայ բնակչությունը նախկինի համեմատ ոչ թե աճել էր, այլ՝ նվազել: Եթե

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 468:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 470:

<sup>33</sup> Malcom Vartan, նշվ. աշխ., էջ 65:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 65:

<sup>35</sup> Deranian H., նշվ. աշխ., էջ 179:

պատրիարքարանի ներկայացրած 1882 թ. վիճակագրության համա-  
ձայն, որի տվյալները ներկայացվեցին նաև Բեռլինի վեհաժողովին,  
Խարբերդի նահանգում ապրում էր 270000 հայ<sup>36</sup>, ապա 1912 թ. պատ-  
րիարքարանի տվյալներով նույն վարչամիավորման տարածքում՝  
չհաշված Մալաթիայի հարավային հատվածը՝ 168000 հայ<sup>37</sup>: Թեոդիկն  
իր «Ամենուն Տարեցոյց»-ում Խարբերդի նահանգի հայ բնակչության  
թվաքանակը տալիս է 204000, որից 36000-ը՝ Մալաթիայի գավառում<sup>38</sup>:  
Ինչ վերաբերում է թուրքական տվյալներին, ապա սրանք ակնհայտոր-  
են նվազեցնում էին հայերի քանակը: Այսպես, 1894-1895 թթ. նահան-  
գային տարեգրքի համաձայն Խարբերդի նահանգի հայ բնակիչների  
թվաքանակը հաշվվում էր 75416 մարդ, որից՝ 52407-ը Խարբերդի,  
9933-ը՝ Մալաթիայի, 13076-ը՝ Դերսիմի գավառներում<sup>39</sup>: 1914 թ. դրու-  
յամբ՝ Օսմանյան պաշտոնական տվյալների համաձայն Խարբերդի նա-  
հանգի հայ բնակչության քանակը հաշվվում է 87864 մարդ<sup>40</sup>: Ակնհայտ  
է, որ այս տվյալները որևէ կապ չունեն իրականության հետ: Սրանց հա-  
մաձայն՝ հայերի թիվը պատրիարքարանի ու Թեոդիկի տվյալների հա-  
մեմատ նվազեցված է մոտ 57%-ով:

Չարկ է արձանագրել, որ 1882 թ. պատրիարքարանի տվյալնե-  
րը ևս թերի էին ու լիովին չէին արտացոլում արևմտահայերի իրական  
թվաքանակը: «Գործուղված անձինք չկարողացան այցելել բոլոր հայա-  
բնակ վայրերը, մի շարք շրջաններում քրդական ցեղապետերը, որոնք  
տիրացել էին հայերի գույքին ու անձին, խոչընդոտեցին նրանց, ուրիշ  
վայրերում էլ գյուղացիները, վախենալով հարկերի ու տուրքերի բարձ-  
րացումից, իրենց ընտանիքների անձանց թիվը ցույց էին տալիս շատ  
ավելի քիչ, քան կար իրականում: Եվ վիճակագիրները ստիպված էին  
շատ հաճախ բավարարվել թեմական հոգևոր առաջնորդների կամ տե-  
ղական հոգևորականների հաղորդած կիսատ-պռատ տեղեկություննե-

<sup>36</sup> «Արարատ», 1914, թիւ Թ, սեպտեմբեր, Ս. Էջմիածին, էջ 811:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 809:

<sup>38</sup> Թեոդիկ, Ամենուն տարեցոյց, ԺՁ տարի, 1922, էջ 261-263:

<sup>39</sup> Krikorian M., նշվ. աշխ., էջ 71:

<sup>40</sup> Gurun Kamuran, The Myth of Innocence Exposed, London, Nicosia, Istanbul, 1985, p. 98.

րով»<sup>41</sup>: Բայց նույնիսկ, եթե դրանք հիմք ընդունենք, պետք է արձանագրենք, որ հայ բնակչությունը Խարբերդի նահանգում 1912-1913 թթ. դրությամբ նկատելիորեն նվազել էր: Նման պատկերը հետևանք էր նահանգի տարածքում ընթացող ժողովրդագրական հետևյալ միտումների.

1. Նահանգի տարածքում ընդգրկված բազմաթիվ բնակավայրերի (Արաբկիրի, Ակնի, Չարսանձագի, Չմշկածագի գավառակների, Մալաթիայի գավառի) հայ բնակչության դեռևս նախորդ դարերում սկսած մահմեդականացման քաղաքականությունը շարունակվեց և XIX դ. ընթացքում:

2. XIX դ. կեսերից սկսեց ու դարավերջին լայն թափ առավ արտագաղթը՝ հիմնականում ԱՄՆ, ինչը շարունակվեց և XX դ. սկզբներին:

3. 1894-1896 թթ. ողջ Օսմանյան կայսրությունում իրագործվեցին հայերի զանգվածային ջարդեր, որոնց միայն Խարբերդի նահանգում զոհ գնացին տասնյակ հազարավոր հայեր:

4. Ջարդերի ընթացքում և դրանցից հետո շարունակվեց բռնի մահմեդականացման քաղաքականությունը:

Այս գործընթացների արդյունքում Խարբերդի նահանգում մինչև 1915 թ. ապրում էր շուրջ 200 հազար հայ: Փաստորեն, 1878-1912 թթ. հայ բնակչությունը Խարբերդի նահանգում նվազել էր 24.5%-ով: Չնայած դրան, հայերը այս նահանգում դեռևս զգալի տոկոս էին կազմում. եթե վստահենք 1912 թ. պատրիարքարանի տվյալներին, ապա նահանգի 450 հազար բնակչից<sup>42</sup> 45.3%-ը հայեր էին, այն դեպքում, երբ գումարում ենք Մալաթիայի հայությանը (հակառակ դեպքում՝ 37.3%):

1915-1922 թթ. Օսմանյան կայսրության իրագործած ցեղասպանության հետևանքով Խարբերդի նահանգն ամբողջովին հայաթափվեց:

<sup>41</sup> Համբարյան Ա., Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, թիվ 2, էջ 101

<sup>42</sup> «Արարատ», 1914, թիւ Թ, սեպտեմբեր, Ա. Էջմիածին, էջ 809:

**ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ ДЕМОГРАФИЧЕСКИХ ИЗМЕНЕНИЙ  
В ХАРБЕРДСКОМ ВИЛАЙЕТЕ В КОНЦЕ XIX И  
НАЧАЛЕ XX ВЕКОВ**

**РЕЗЮМЕ**

В статье рассматриваются основные тенденции демографических изменений, по причине которых армянское население Харбердского вилайета уже в начале XX в. значительно уменьшилось. В конце XIX в. многие селения Харбердского вилайета лишились своего армянского населения: часть армян переселились в города, некоторые насильно приняли ислам, началась эмиграция, в основном в США. Эти тенденции продолжились и после армянских погромов 1894-1896 гг. Несмотря на это, около половины населения Харбердского вилайета до 1915 г. было армянским.

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
 ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) հիմնադրվել է 1906 թ. ապրիլի 15-ին Կահիրեում, հայտնի ազգային գործիչ Պողոս Նուբարի և եգիպտահայ համայնքի ականավոր ներկայացուցիչներ Յագոբ Արթնի, Երվանդ Աղաթոնի, Նազարեթ Տաղավարյանի, Գրիգոր Եղիայանի, Մկրտիչ Անդրանիկյանի և այլոց կողմից՝ հայրենաբնակ հայ ժողովրդի հոգևոր, մշակութային ու տնտեսական զարգացմանը նպաստելու նպատակով<sup>1</sup>:

Սիրիայում առաջին ՀԲԸՄ կազմավորվեց չորս տարի անց՝ 1910 թ. մարտի 10-ին: Հետագայում այստեղ հիմնվեցին մոտ 40 մասնաճյուղեր<sup>2</sup>

	<i>հիմնադրվել է</i>	<i>դադարել է գործել</i>
Ալեքսանդրեթ	1911	1939
Դամասկոս	1913	-
Քեսափ	1924	1964
Լաթաքիա	1927	-
Համա	1928	1946
Հոմս	1928	1967
Տեր Ջոր	1930	1950
Գամիշլի	1932	-
		և այլն

1946-1947 թթ. ներգաթիկ և այլ տեղափոխությունների հետևանքով, ինչպես նաև հայկական շրջանների նոսրացման պատճառով մասնաճյուղերից շատերը դադարեցին գործել:

Այսօր Սիրիայում գործում է վեց մասնաճյուղ, որոնցից չորսն ունեն իրենց պետական արտոնությունները<sup>3</sup>:

<sup>1</sup> Քեչիշյան Վ., ՀԲԸՄ կազմավորումը և հիմնադրության նախադրյալները, «Հայացք», թիվ 1, Հալեպ, 2000, էջ 2:

<sup>2</sup> Պերդոտյան Լ., Ուրվագիծ Սիրիայ ՀԲԸՄ պատմության, «Գեղարդ», Հալեպ, 1975, էջ 474:

<sup>3</sup> «Միությունը գործություն է», Հալեպ, 2006, էջ 12:

Հալեպ	847 անդամ
Դամասկոս	128 անդամ
Գամիշլի	161 անդամ
Լաթաքիա	93 անդամ
Եագուպե	81 անդամ
Թարթուս	13 անդամ

1915 թ. եղեռնից և պատերազմի զինադադարից անմիջապես հետո Թրքահայաստանի քաղաքների և Կահիրեի կարևոր հանգույցը դարձավ Հալեպը, որտեղ նկատելի նպաստներ էին բաշխվում պատերազմից և գաղթից տուժածներին: Հալեպում ստեղծվեցին որբանոցներ և արհեստանոցներ: 1920-1931 թթ. Միությունը Հալեպում ուներ հետևյալ հաստատությունները<sup>4</sup>.

1. Կիլիկյո Արհեստանոց-որբանոց՝ 102 որբերով
2. Ապաստարան-աշխատանոց՝ կանանց և աղջիկների համար, 150 հոգի
3. Գաղթակայան՝ 500 հոգի
4. Ձեռնարկ՝ չքավոր կանանց և փոքրիկների ամենօրյա սննդի համար:

Միությունը լայնորեն օժանդակում էր նաև գաղթականների տեղավորման խնդրի լուծմանը: Սկզբում միայն հայությանը լուսավորելու, հայ գյուղացու համար արոր և սերմ հայթայթելու առաքելությամբ հիմնված Միությունը դժբախտ պարագաների բերմամբ շուտով դարձավ շատ նպաստավոր և կարևոր մարմին:

ՀԲԸՄ-ն գործունեությունը Սիրիայում լավագույնս ներկայացնելու համար անհրաժեշտ է այն բաժանել երեք շրջանների, որոնք տարբեր գործոնների ազդեցության պաճառով իրենց էությամբ և ընդհանուր երևույթներով առանձնանում են միմյանցից:

<sup>4</sup> Պերդուտյան Լ., նշվ. աշխ., էջ 475:

### 1. Նախաաատեոագմական շրջան (1910-1914)

Այս շրջանի գործունեությունը բավական սահմանափակ ու կարճ էր: Եղեռնի և պատերազմի հետևանքներով ավարտվեց նաև ստեղծված մասնաճյուղերի աշխատանքը:

### 2. Հետաաատեոագմական շրջան (1918-1945)

Ազատ պայմանների բերումով Միությունը հետզհետե ընդարձակեց իր գործունեության ծավալը: Նրա հիմնական նպատակը դարձավ կրթական, մշակութային և բարեսիրական ծրագրերի միջոցով պահպանել և տարածել հայ լեզուն, ինքնությունը և ժառանգականությունը:

### 3. Կենտրոնացման շրջան (1945-2006)

Այս ժամանակահատվածում կազմավորվեց Սիրիայի Շրջանակային հանձնաժողովը: Միության գործունեությունը դարձավ ավելի արդյունավետ և ծավալուն: Կրթական գործը վերելք ապրեց: Միությունն ամեն կերպ օժանդակում է որբանոցներին և գաղթականներին: Վարչության որոշմամբ 1945-ին, հաշվի առնելով Միության գործունեության ոլորտի ընդլայնումը, Սիրիայի և Լիբանանի մասնաճյուղերը, որոնք մինչ այդ սերում էին Եգիպտոսի Կենտրոնական հանձնաժողովից, վերածվեցին ուրույն Շրջանակային Հանձնաժողովների: Հանձնաժողովի ողջ կազմը փոխվում է երկու տարին մեկ՝ ընտրությունների միջոցով:

1920-1951 թթ. ՀԲԸՄ նյութապես նպաստում ու օժանդակում էր Սիրիայի տարածքում գործող բոլոր հայկական վարժարաններին, որոնց թիվը հասնում էր 50-ի՝ 7500 աշակերտով: Կարոտյալ սաներին տրամադրվում էին գրքեր, գրեմական պիտույքներ և սնունդ: 1945 թ. վարժարանների թիվը կազմում էր 50, 1983 թ.՝ 15, իսկ այսօր՝ 9<sup>5</sup>:

1954 թ. ամերիկահայ Լազար Նաճարյանի և ՀԲԸՄ Նյու Յորքի մասնաճյուղի Տիկնանց Մարմնից տրամադրված նվիրատվությունամբ հիմնադրվեց «Լ. Նաճարյան-Գ. Կյուլպենկեան» վարժարանը: Ավելի ուշ՝ 1956 թ. Գ. Կյուլպենկյանի հիմնարկության օժանդակությամբ հիմնվեցին վարժարանի միջնակարգ և երկրորդական բաժինները: «Լ. Նաճարյան - Գ. Կյուլպենկեան» վարժարանը դարձավ և մինչև օրս էլ մնում է

<sup>5</sup> Ճեպեճյան Լ., Տառտիի արվարձանի պատմություն, «Գեղարդ», հ. 3, Հալեպ, 1985, էջ 300:



կրթական հանձնախմբի ամենօրյա հոգածության առարկան և ունի լայն ճանաչում սփյուռքում գործող վարժարանների շարքում: 2005-2006 թթ. տարեշրջանի աշակերտների թիվը կազմում է 1523<sup>6</sup>:

Կրթական հանձնախումբը, տարբեր շրջանների վարժարաններին օգնելու նպատակով ոչ միայն տրամադրում է նյութական նպաստներ և հատկացնում կրթաթոշակ համալսարանական սաներին, այլև հաճախ կազմակերպում է դասախոսություններ անհրաժեշտ նյութերի շուրջ, և ստեղծել է նաև շարժական գրադարաններ: Կրթական հանձնախումբը կազմակերպում է հատուկ դասընթացներ ուսուցիչների համար, ինչպես նաև հարգանքի տուրքի երեկոներ՝ սաների պաշտպան բարերարների պատվին և այլն:

ՀԲԸՄ Միրիայի Շրջանակային Հանձնաժողովը, հավատարիմ մնալով Միության հիմնադիր Պողոս Նուպար Փաշայի և իր համախոհների ազգօգուտ և խորապես մարդկային տեսակետին, ձեռնամուխ եղավ Առողջապահական Հանձնախմբի ստեղծմանը, որը երկրորդ կարևորագույն տեղը զբաղեցրեց Միության գործունեության մեջ: Միրիայի Առողջապահական Հանձնախմբի մեջ ընդգրկվեցին տարբեր մասնագիտության տեր մարդիկ, որոնք ծառայում են Միությանն ու ազգին:

Առողջապահական բնագավառում ամենամեծ ձեռքբերումը հանդիսանում է Հալեպի Կյուլպենկյանի անվան հիվանդանոցը, որը հիմնադրվել է 1935 թ.: Մկզբում այն միահարկ կառույց էր, որը ծառայում էր միայն որպես ծննդատուն: Հիվանդանոցն անվանակոչվել է ի պատիվ Կյուլպենկյանի քրոջ՝ Վերժինեի, որը մահացել է ծննդաբերության ժամանակ 32 տարեկան հասակում: Թերևս մինչև օրս ժողովուրդն այս հիվանդանոցը կոչում է «Վերժին Կյուլպենկեանի Մայրանոց»<sup>7</sup>:

Այստեղ հիմնականում աշխատում էին հայ բժիշկներ, որոնցից շատերին (Ալթունյան, Ժան Օհանյան, Ռոմիզդուխտ Օհանյան (Դուխիկ)) մինչև օրս էլ հիշում են Հալեպում:

<sup>6</sup> «Հայացք», թիվ 3, 2006, էջ 5:

<sup>7</sup> Ոսկեմատեան Վերժին Կյուլպենկյան Մայրանոցի 1935-1985, Հալեպ, 1985: Տես նաև Շ. Նուռյան, Ազգային Վ. Կյուլպենկյան Մայրանոց, «Գեղարդ», Հալեպ, 1975, էջ 458-467:

Առողջապահական ոլորտում կարևոր տեղ է զբաղեցնում Քեսապի կազդուրման կայանը: Այնտեղ հանգստանում են երեխաներ Չալեպից, Դամասկոսից, Լաթաքիայից, Գամիշլիից և այլն: Ամեն տարի շուրջ 200 երեխա 3 խմբերով 3 շաբաթ տևողությամբ մնում է Քեսապի վերոհիշյալ կազդուրման կայանում<sup>6</sup>: 1954 թ. կառուցված ոչ մեծ շինությունն այսօր դարձել է երեխաների սիրած հանգստավայրը, որն արդեն ունի բոլոր անհրաժեշտ հարմարությունները, ուր բուն հանգստից, խաղերից և զվարճություններից բացի անցկացվում են նաև ուսումնական պարապմունքներ: 1988 թ. Սպիտակի երկրաշարժից հետո Միության հրավերքով 65 երեխա Չայաստանից իրենց հանգիստն անցկացրեցին այստեղ:

Տարիներ շարունակ Չալեպում կարիքավոր երեխաներին և ծերերին ամիսը երկու անգամ Միությունից տրվում էր 2 կգ կաթի փոշի: Կաթի փոշին բաժավնում էր նաև Դամասկոսում, Գամիշլիում, այն տրվում էր նաև Չալեպի հայ ծերանոցին: Բաժանված կաթի ընդհանուր քանակը տարեկան կազմում էր 2-2,5 տոննա:

ՀԲԸՄ-ը Սիրիայում նյութապես և դեղորայքով օգնում էր բոլոր անապահով հիվանդներին: Չայ բժիշկների կողմից ընթերցվում էին դասախոսություններ ՁիվՅ-ի, հայկական հիվանդության մասին և այլն: Առողջապահական հանձնախմբի անդամներն ամեն տարի այցելում են Չոմս և ստուգման ենթարկում երեխաների ատամներն ու աչքերը:

ՀԲԸՄ-ն Չալեպի մասնաճյուղը կրթական և առողջապահական գործունեությունից բացի զբաղվում է նաև խնամատարական, անդամական, ընկերային, մշակութային և հրատարակչական խնդիրներով, որոնք առաջ են տարվում Տեղական Մասնաժողովի, Տիկմանց Չանձնախմբի, Սարյան Ակադեմիայի վարչության, Սրահի հանձնախմբի և Մատենագիտական Չանձնախմբի կողմից:

1955 թ. հունվարի 15-ը հալեպահայ արվեստասեր երիտասարդության համար դարձավ շրջադարձային տարեթիվ՝ նշանավորվելով արվեստի յուրահատուկ օջախի հիմնադրմամբ՝ Մարյան Նկարչական ակադեմիա անվամբ: Արվեստի երկու սիրահարներ՝ ճարտարապետ-

<sup>6</sup> Նազարյան Պ., ՀԲԸՄ կազդուրման կայան, «Գեղարդ», Չալեպ, 1975, էջ 490-495:

նկարիչ Ջարեհ Գափլյանի և հետագայում ականավոր ակնաբույժ Ռոպեր ճեպեճյանի գլխավորությամբ մի խումբ երիտասարդներ հիմնադրեցին գեղարվեստի դարբնոց, որը նպատակ ուներ գաղութի երիտասարդության շրջանում արվեստի նկատմամբ սեր և հետաքրքրություն արթնացնելու, ինչպես նաև՝ ծառայելու նրանց հոգիների ազնվացման վեհ գաղափարին:

Անհնար է առանձին չանդրադառնալ մեծ հայրենասեր, մտավորական, բժիշկ Ռոպեր ճեպեճյանի անձին, որը մեծ համբավ ունի ոչ միայն Հայկեպում, այլև Հայրենիքում, Եվրոպայում, Ամերիկայում: Գործնական բժշկությունից զատ, նա զբաղվում էր նաև գիտությամբ: Ճեպեճյանը ոչ միայն բժիշկ էր, այլ նաև պատմաբան, գրականագետ, արվեստագետ, նկարիչ: Նա մեծ դեր խաղաց Հայաստան-Սփյուռք հարաբերություններում, հիմնեց Հայեպի Ռ. Ճեպեճյանի անվան ակնաբուժարանը, ինչպես նաև հրաշալի մի գրադարան:

Ակադեմիայում կազմակերպվում էին հերթական դասախոսություններ, լուսանկարների ցուցահանդեսներ, արվեստի երեկոներ և հավաքություններ: Այս ակադեմիայի որոշ սաներ հետագայում դարձան նկարիչներ, քանդակագործներ, լուսանկարիչներ: Ակադեմիայի 50-ամյակը տոնվեց նոր շենքում՝ ՀԲԸՄ Կյուլպենկյան նորակառույց կենտրոնի շքեղ հարկի տակ: Ակադեմիան ունի արդի հարդարանք և լավագույն հարմարություններ:

ՀԲԸՄ հովանավորության տակ է գործում «Պետրոս Աղամյանի» անվան թատերախումբը, որը երկար տարիներ ղեկավարել է Պետրոս Քելիշյանը: Թատերախմբի ստեղծման ժամանակաշրջանը կարելի է հաշվել 1961 թ., սակայն 1970 թ. «Աղամյան» թատերախումբը ձեռք բերեց նոր մակարդակ: Նրա ղեկավարը դարձավ Երևանում մասնագիտական կրթություն ստացած Գրիգոր Քելեյանը: Վերջին տասնամյակում «Աղամյանի» բեմադրիչն է վաստակավոր արվեստագետ պրոֆ. Նիկոլայ Ծատուրյանը<sup>9</sup>: 1972 թ. «Աղամյան» թատերախումբը ձեռնամուխ եղավ մանկապատանեկան թատրոնի ստեղծմանը:

1993 թ. թատերախումբը Երևանում կայացած փառատոնին պարգևատրվեց հատուկ վկայականով՝ որպես սփյուռքի ամենաերկարա-

<sup>9</sup> «Հայացք», թիվ 2, Հայեպ, 2000, էջ 9:

կյաց թատերախմբի: Թատրոնը հյուրախաղերով հանդես է եկել ոչ միայն Սիրիայում, Երևանում, այլ նաև՝ Լիբանանում և Բուլղարիայում:

Ինչպես թատերական, այնպես էլ երաժշտական կյանքը Սիրիայում, ավելի ստույգ՝ Հալեպում, եղել և մնում է ՀԲԸՄ հովանու ներքո: Առաջին նվագախումբ-երգչախումբը ստեղծվել է դեռևս 1933 թ.: 1953 թ. կազմավորվել է «Սպենդիարյան» երգչախումբը, որը ելույթներով բազմիցս հանդես է եկել նաև Սիրիայի սահմաններից դուրս: Հ. Թումանյանի 100-ամյակի առթիվ այն հաջող ելույթներ ունեցավ Երևանում: 1960-ական թթ. գործում էր «Young Stars» էստրադային համույթը, իսկ վերջերս ստեղծվել է «The Big Band» նվագախումբը:

1992 թ. գործում է «Արամ Խաչատրյան» երաժշտական դպրոցը, որտեղ մասնագետ ուսուցիչների կողմից դասավանդվում են դաշնամուր, ֆլեյտա, ջութակ: Այսօր Միությունը կարող է հպարտանալ իր ստեղծած «Անդրանիկ» պարի համույթով և արվեստի դպրոցով:

Սիրիայի ՀԲԸՄ-ը մեծ ներդրում ունի պարբերական մամուլի հրատարակման հարցերում: Դրանք են ՀԲԸՄ Մատենագիտական Հանձնախմբի «Գեղարդ» տարեգիրքը, որի խմբագիրն է Հայկ Պարիկյանը, ՀԲԸՄ հայ երիտասարդ ընկերակցության խմորատիպ ամսաթերթը՝ «Պարբերաթերթ» անունով, ՀԲԸՄ Լ. Նաճարյանի - Գ. Կյուլպենկյանի կենտրոնական վարժարանի «Բարձունք» տարեգիրքը և ՀԲԸՄ «Տեղեկատու» պարբերաթերթը:

1970-ական թ.-ից ՀԲԸՄ շնորհիվ հալեպահայ գաղութում գործում է իր տեսակի մեջ աննախընթաց երևույթ՝ հանդիսացող Մատենագիտական հանձնախումբը՝ բժիշկ Ռոպեր Ճեպեճյանի հիմնադրությամբ, որի գործունեության նպատակն է հայ մշակութային արժեքների (հնատիպ գրքեր, պարբերական հրատարակություններ, ձեռագիր աշխատանքներ, հայ կյանքը ներկայացնող հուշանկարներ և այլն) պահպանումը<sup>10</sup>:

Սկիզբահայ իրականության մեջ զուցե միակը ՀԲԸՄ Վիոլեթ Ճեպեճյանի գրադարանն է՝ հարուստ սիրիահայության պատմությունով, տարբեր արժեքավոր գրքերով, պարբերական հրատարակությամբ, ալ-

<sup>10</sup> Ճեպեճյան Ռ., 90-ամյա տարեդարց, Հալեպ, 1999, էջ 104:

բոմներով, հուշանկարներով և այլն: Այն բաց է բոլոր մտավորականների առջև: Այնտեղ մեծ հետազոտական աշխատանք են տարել նաև Հայաստանի գիտնականները:

1921 թ. ՀԲԸՍ Հալեպի մասնաճյուղը կազմավորեց Օրիորդաց Միություն՝ որպես կրթական մասնաժողովի օժանդակ մարմին: Այն նպատակ ուներ օժանդակելու հայ մանուկների մտավոր, բարոյական, ֆիզիկական զարգացումն ու աճը: Չքավորությունը համատարած էր Հալեպի արվարձաններում հաստատված գաղթականների մեջ և նրանց թշվառությունն ամոքելու նպատակով էլ ստեղծվեց Տիկմանց Օժանդակ Մարմինը, որն ստանձնեց պատսպարանի և որբուհիների աշխատանոցների հոգատարությունն ու մատակարարումը: Տարիների ընթացքում Տիկմանց Մարմնի գործունեության ոլորտն ավելի ընդլայնվեց: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ՀԲԸՍ ազգանվեր ծառայության հիմնաքարը դարձավ որբախնամ գործունեությունը: Ստեղծվեցին Կանանց Ապաստարան-Աշխատանոց, Գաղթատուն, Կիլիկիայի Որբանոց Արհեստանոց, Հոգետան Ապուրի Ձեռնարկ, Աշխատավոր Սաների Կայան և այլն<sup>11</sup>:

Արդեն շուրջ 75 տարի է, ինչ Հայ երիտասարդական ընկերությունը՝ ՀԵԸ, գտնվում է ՀԲԸՍ հովանավորության ներքո: Այն իր հիմնադրման օրից ծավալել է բեղուն գործունեություն՝ իրականացնելով իր հիմնական նպատակներն ու ծրագրերը իմացական, բարոյական, մարզական, մշակութային և այլ մարզերի մեջ՝ սատարելով նոր սերնդի դաստիարակությանն ու կազմավորմանը:

ՀԵԸ-ի Օրիորդաց բաժինն իգական սեռի համար կազմակերպում է առտնին տնտեսության, կար ու ձևի դասընթացներ, բազմաբովանդակ դասախոսություններ: Գործում են նաև գիշերային դասընթացներ՝ տարագրության կամ այլ պատճառներով անուս մնացած պատանիներին ու երիտասարդներին հայերեն, արաբերեն, ֆրանսերեն և թվաբանություն ուսուցանելու նպատակով: ՀԵԸ-ը ստեղծել է նաև զանազան մարզաձևերի խմբեր, օրինակ՝ «Ուրուայա» բասքետի խումբը, լող: Սկսուտական շարժումն ունի իր սեփական բնակավայրը՝ Քեսապը: Ուսանո-

<sup>11</sup> Քեչիշյան Վ., Պատմական, «Հայացք», Հալեպ, 2000, էջ 2:

ղականը նպատակ ունի օտար երկրորդական վարժարաններ հաճախող հայ ուսանողությանը համախմբել հայկական մթնոլորտի մեջ:

Այսօր ՉԲԸՄ շքեղ քառահարկ նորակառույց Գ. Կյուլպենկյան կենտրոնում գործում է «Միքայել Եսայանի» մանկապարտեզը, «Նարեգ Եսայանի» փակ մարզադաշտը, «Սարյան» արվեստանոցը, ՉԲԸՄ և ՅԵԸ գրասենյակները, «Դվին» ճաշարանը, կառատուն՝ ստեղծված Կյուլպենկյան Հիմնարկության Հայկական Բաժնի Տնօրինության իշխանական նվիրատվությամբ և օժանդակությամբ:

Սիրիահայության շրջանում աչքի ընկնող մեծահարուստներ չեն եղել, սակայն միշտ գտնվել են օրինակելի նվիրատվություններ ընծայողներ, որոնցից հարկ է հիշատակել հետևյալներին<sup>12</sup>.

- Միության Պատվո անդամ Համբարձում Պերպերյանը, որը 12 հազար Ա. ոսկի է հատկացրել Լ. Նաճարյանի մանկապարտեզի երեք դասարանների շինության համար
- Ուրֆայի Տիկնանց Միությունը նվիրել է 12 հազար Ա. ոսկի, որի տարեկան եկամուտը հատկացվում է որպես ուրֆացի չքավոր սաների կրթաթոշակ
- Հակոբ Համալյանը նվիրել է 25 հազար Ա. ոսկի, որի տարեկան եկամուտը հատկացվում է խղճամիտ ուսուցչի
- Բժիշկ Ռոպեր ճեպեճյանը նվիրել է 10 հազար Ա. ոսկի, որի տարեկան եկամուտը ծախսվում է մշակութային նպատակների համար
- Յագուպյան ընտանիքի նվիրած 90 հազար Ա. ոսկով գնվել է Դամասկոսի Միության «Նազարեթ Եագուպեան» ակումբը:

Սիրիայի ՉԲԸՄ մեծ ընտանիքի մեջ քիչ չէ այն անդամների թիվը, որոնք իրենց նվիրատվություններով մշտապես զորավիգ կանգնած են եղել Միությանն՝ իր ստեղծման առաջին իսկ օրից: Այս ավանդույթը մինչև այսօր էլ շարունակվում է նրա նվիրյալ անդամների կողմից: Ընդունված կարգի համաձայն՝ իրենց ծառայություններով և իշխանական

<sup>12</sup> Պահակ (Հայկ Պարիկյան), Հալեպահայության գործօն դերը, «Գեղարդ», հ. 2, Հալեպ, 1976-1978, էջ 464:

նվիրատվություններով Միությանն աջակցած անդամներին շնորհվում են Պատվո և Բարերարի կոչումներ: Սիրայի ՀԲԸՄ Պատվո և Բարերար անդամությանն են արժանացել<sup>13</sup>.

1. Պատվո անդամ՝ Տիար *Արմեն Մազլումյանը*: Հիմնադրությունից ի վեր երկար տարիներ վարել է Հալեպի Մասնաժողովի ատենապետի պաշտոնը, ապա, իր մատուցած թանկագին ծառայությունների համար, ընտրվել է նույն Մասնաժողովի Պատվո նախագահ:
2. Պատվո անդամ՝ Տիար *Համբարձում Պերպերյանը*: 1962 թ. Կենտրոնական Վարչությունը գնահատելով Ազեզի Մասնաժողովի ատենապետ Հ. Պերպերյանի միութենական և ազգային ծառայությունները՝ նրան շնորհեց Պատվո անդամի տիտղոսը:
3. Հայր և որդի *Գևորգ ու Հակոբ Նազարյանները* 1990 թ. իշխանական նվիրատվություն կատարեցին Միությանը, որը նրանց իսկ հավանությամբ օգտագործվում է Հալեպի ՀԲԸՄ սրահի արդիականացման և բարեզարդման ծախսերում: Սրահը բարերարների անունով կոչվում է «Նազարեան»: Սիրիայի Շրջանակային Հանձնաժողովի առաջարկով Միության Կենտրոնական Վարչությունը Նազարյաններին շնորհեց «Բարերար անդամներ» տիտղոսը:
4. Գ. Կյուլպենկյան հիմնարկության հայկական բաժնի պատասխանատու *Միքայել Եսայանը* և նույն բաժնի տնօրեն՝ Դոկտոր *Զավեն Եկավյանը* 2002 թ. մայիսի 10-ին Սիրիա կատարած այցելության ժամանակ նյութաբարոյական կարևոր ներդրումների համար պարգևատրվեցին ՀԲԸՄ և ՀԵԸ բարձրագույն ոսկե շքանշանով:
5. 2002 թ. ապրիլի 21-ին ՀԲԸՄ Կենտրոնական վարչության բարերար անդամ Տիար *Գառնիկ Եագուպյանը* Սիրիայի Շրջանակային Հանձնաժողովի կողմից պարգևատրվեց ՀԲԸՄ բարձ-

<sup>13</sup> «Հայացք» բացառիկ, Հալեպ, 2006, էջ 41:

րագույն ոսկե շքանշանով, ինչպես նաև՝ ՀԲԸՄ Համիշլիի մասնաճյուղի «Յկյանս Պատվո Ատենապետ» Պատվո վկայագրով:

ՀԲԸՄ-ը Սիրիայում հանդիսանում է 20 մեծ և փոքր կալվածքների սեփականատեր, որոնցից 9 գտնվում են Հալեպում, 3-ը՝ Դամասկոսում, իսկ մնացածը՝ Սիրիայի տարբեր շրջաններում: Այս կալվածքներից 13-ը դպրոցական շենքեր են, մեկը՝ դարմանատուն, մեկը՝ կազդուրման կայան, իսկ 4-ը՝ գրասենյակային կամ ակումբային շենքեր<sup>14</sup>:

Սիրիայում ՀԲԸՄ ատենապետներ են եղել ավելի քան 20 հարզված հայրենասեր անձիք, որոնցից հարկ է առանձնացնել՝ Արմեն Մազլունյանին՝ Պատվո Անդամ և Պատվական Նախագահ, բժիշկ Ռոպեր Ճեպեճյանին, Մեթր. Ռուբեն Պողոսյանին, բժիշկ Սիքայել Տիմիճյանին, ներկայիս ատենապետ բժիշկ Պետրոս Պոյաճյանին, որի գիտելիքներն ու գարգացվածությունը էլ ավելի են բարձրացնում ՀԲԸՄ գործունեության մակարդակը: ՀԲԸՄ բոլոր նվիրատուները, անդամները, կամավորները և պաշտոնյաները կարևոր և օգտակար դեր ունեն Սիւրիայան ծրագրերի հաջող և նպատակային իրագործման մեջ:

*СЕДА МУРАДЯН  
ИИ НАН РА*

## ИСТОРИЯ АРМЯНСКОГО ВСЕОБЩЕГО БЛАГОТВОРИТЕЛЬНОГО СОЮЗА СИРИИ

### РЕЗЮМЕ

Крупнейшая армянская филантропическая организация — Армянский Всеобщий Благотворительный Союз (АВБС) (основанная с Каире в 1906 г.) была создана в Сирии в 1910 г. АВБС содействовал культурному, духовному и экономическому развитию армянской диаспоры в Сирии. При помощи образовательных, культурных и благотворительных программ АВБС сохраняет и распространяет армянский язык, этнокультурную идентичность и наследственность.

<sup>14</sup> «Հայաքք», թիվ 1, Հալեպ, 2001, էջ 2:



ՍԻՄՖԵՐՈՊՈՒԼԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆ  
ՈՒ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

1917 թ. ռուսական հեղափոխությունից հետո հասարակական-քաղաքական կյանքի տեղաշարժ նկատվեց նաև Ղրիմի հայության շրջանում. «Երբ սկսվեց հեղափոխությունն ու երբ ամենուր արտահայտվում էր ազգայնականության ոգին, թվում էր՝ Ղրիմահայերը նույնպես փոքր-ինչ շարժվեցին: Պարզ էր, որ նրանք նույնպես պետք է գտնեին իրենց կողմորոշումը, հստակեցնեին իրենց ազգային դիմագիծը: Ուստիև, փորձ արվեց զարգացնել ու բարձրացնել զոյություն ունեցող մշակութային հաստատությունները»<sup>1</sup>:

Ղրիմահայերը, բնակվելով հայկական կենտրոններից և հայ կյանքից հեռու, այս շրջանում օտարացած էին՝ պատճառը խառն ամուսնություններն էին, կրթությունը պետական դպրոցներում ևն: Պետական ռուսական ուսումնական հաստատություններում սովորող հայ երիտասարդությունը արագորեն ռուսանում էր, խոսելով միայն ռուսերենով՝ բացարձակ մոռանալով մայրենին. «Ծիշտ է, Ղրիմի բուրքադաքներում կան հայկական եկեղեցական-ծխական դպրոցներ, բայց նրանք այնպիսի խղճուկ վիճակում են, որ իրականում ոչ մի դեր չեն խաղում երիտասարդ սերնդին ազգային ոգով դաստիարակելու գործում»<sup>2</sup>:

Վիճակագրական ճշգրիտ տվյալներ չկան այս շրջանի Ղրիմի հայության թվի վերաբերյալ, նրանք թիվը հասնում էր մոտավորապես 15 հազարի. «Ղրիմի թերակղզու հայության կեսից ավելին կազմում են Թուրքահայաստանից եկածները, որոնք 1895-1896 թթ. ջարդերից հետո վերաբնակվել էին նաև Տավրիդայում»<sup>3</sup>: Հայ կյանքի որոշակի ակտիվացում նկատվում է Տավրիդայան մահանգի կենտրոններից Սիմֆերո-

<sup>1</sup> Армянский настольный календарь на 1919 год, Ростовь-на-Дону, 1918, с. 34.

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

պոլում: Տասնյակ տարիներ առանձին-առանձին բնակվող տեղի հայության երկու մասերը՝ կաթոլիկներն ու հայ լուսավորչականները մերձեցման փորձեր կատարեցին, և նույնիսկ, լուսավորական նպատակներով հիմնեցին միասնական կառույց՝ Հասարակական Տուն. «Ստեղծվեց միասնական կառույց դպրոցական, ազգային և մշակութային գործերը վարելու համար»<sup>4</sup>:

Այնուհանդերձ, այս թույլ փորձերը լուրջ արդյունքներ չտվեցին, անհրաժեշտ էր ժամանակ և ջանքեր, որը կբերեր ցանկալի նպատակին՝ Ղրիմում հայ կյանքի ինքնորոշմանը. «Մի կողմից ազգային ոգով դաստիարակված փոքրաթիվ մտավորական հայությունը, մյուս կողմից, շրջապատող օտար և շատ ուժեղ մշակույթը, արգելք են հանդիսանում Ղրիմի թերակղզու հայության ազգային վերածննդի գործում»<sup>5</sup>: Այս շատ խիստ, սակայն իրավացի գնահատականը Ղրիմի հայ համայնքի իրականությունն էր 1917-1918 թթ.: Ազգային մշակույթի և հայեցի դաստիարակության պահպանման համար, օտար մշակույթից և ծուլումից խուսափելու համար, մեծ դեր կարող էր ստանձնել ազգային դպրոցը, որն օրախնդիր հարցի էր վերածվել ղրիմահայերի համար:

Հայրենասիրական զգացմունքների վերելքը, ազգային նվիրական ձգտումները, որն համակել էր կովկասահայությանը, իր արձագանքները գտավ նաև ղրիմահայության շրջանում, որտեղ շարժումը գլխավորեցին Ղրիմի «եկվոր» հայերը:

1918 թ. հունվարին Սիմֆերոպոլում տեղի ունեցած ղրիմահայերի համագումարում ընտրվեց կենտրոնական կառույց, որը կոչվում էր «Տավրիկյան նահանգային հայկական կոմիտե»: Ղրիմի մյուս քաղաքներում, ուր հայեր էին բնակվում, ստեղծվեցին տեղական կոմիտեներ. «Կոմիտեի գործունեության շրջանակում էին հայության համախմբումը և կովկասյան ճակատ կամավորների ուղարկումը, դրամահավաքն ու ազգային-մշակութային գործերը»<sup>6</sup>: Անշուշտ մինչ նահանգային կոմիտեի ստեղծումը Ղրիմի մի շարք քաղաքներում դեռևս 1916 թ. սկսած գործում էին հայկական կոմիտեներ. «Ապրիլի 17-ին Յալթայում բնակ-

<sup>4</sup> Երևան, 1997, 107-108:

<sup>5</sup> Երևան, 1997, 107-108:

<sup>6</sup> Երևան, 1997, էջ 35:

վող հայերի ընդհանուր ժողով տեղի ունեցավ: Հարավային նահանգներում հայկական կենտրոնական բյուրոյի լիազոր Ա. Մ. Գազիկի այցը Յալթա, ում նախաձեռնությամբ հրավիրվել էր ընդհանուր ժողով, ժողովին ներգրավեց ավելի քան 200 մարդ»<sup>7</sup>: Հավաքի ավարտին կազմակերպվեց Յալթայի հայկական կոմիտե, որի նախագահ ընտրվեց Ա. Սպենդիարովը, նախագահի ընկերներ՝ Ա. Կայտմազովը, Ն. Ստեփանովը, քարտուղար՝ Մ. Ասատուրյանը և այլք: «Նորակազմ կոմիտեն իր գործունեության առաջին իսկ քայլերից մտադիր է օգնություն կազմակերպել հայկական կամավորական ջոկատներին»<sup>8</sup>:

Այսպես, Նոր Նախիջևանի «Հայ Համայնք» շաբաթաթերթը լուսաբանելով Ղրիմի հայության գործունեությունը ազգային խնդիրների շուրջ, գրում է. «Հունար 13-ին Աիմֆերոպոլում գումարեց Տաւրիկեան (բացի Ղրիմից նաև 3 գավառները մասնակցում էին, որ հիմա Ուկրաինային էին անցել - նշումը «Հայ Համայնք»-ինն է) նահանգի հայկական հերթական /վերջինը 1917 թ. դեկտ. 18-ին/ համագումարը: ...Համագումարը գտաւ, որ ազգի դրութիւնը «շատ փափուկ է և վտանգի ենթակայ»<sup>9</sup>: Շաբաթաթերթն իր հաջորդ համարներում ևս անդրադարձել է Ղրիմահայերի համագումարին, արդեն, ներկայացնելով նրան հաջորդած գործնական քայլերը. «Կոմիտեներ հիմնեցին Տաւրիկի հետևեալ քաղաքներում և գիւղաքաղաքներում՝ Սիմֆերոպոլ, Սևաստոպոլ, Եալթա, Սուդակ, Եւպատորիա, Ղարասուբազար, Ջանկոյ, Հին-Ղրիմ, Սուբաշի, Կերչ, Թեոդոսիա, Արմեանսկ և Սելիտոպոլ»<sup>10</sup>:

Ներկայացնելով անօգնական գաղթականների թշվառ վիճակը՝ շաբաթաթերթն իր մեղադրանքն է ուղղում պարտականություններից և խղճից թերացողներին, խույս տվողներին. «Հարց է ծագում. իսկ ի՞նչ են անում Ղրիմի տեղական հայերը. մի՞թէ նրանց խիղճը մեռել է, ամօթը կորել, ինչու՞ օգնութեան չեն հասնում իրենց տառապող եղբայրներին. մի՞թէ չկան կազմակերպութիւններ, գաղթականութեան օգնող կոմիտե-

<sup>7</sup> Армяне и Война, Одесса, N 2-3, 1916, с. 42.

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> «Հայ համայնք», Նոր Նախիջևան, հ. 9, 1918, էջ 114:

<sup>10</sup> Նույն տեղում, հ. 11, 1918, էջ 140:

ներ...»<sup>11</sup>: Զննադատությունից հետո շաբաթաթերթը գալիս է տխուր եզրահանգման. «...ի՞նչ կարող են անել կոմիտեները: Մի քանի անձնուրաց մարդասեր անհատներ, հաւաքւած իրար գլխի, աշխատում են օգնել գաղթականութեան ծով կարիքներին... Իրողութիւնն այնքան է թշուառ ու ծանր, կարիքն այնքան է մեծ ու սոսկալի, որ այդ օգնութիւնը մի կաթիլ է ծով կարիքի մէջ»<sup>12</sup>: Շաբաթաթերթն իր այս թղթակցության վերջաբանում գրել էր, որ չպետք է թույլ տալ հուսալքությանն ու հիասթափությանը գլուխ հանել, այլ. «Պէտք է շուտափոյթ կազմակերպել Ղրիմի քաղաքները, կապ հաստատել նրանց մէջ, միջոցներ հաստատել, որ ծմրանը չմնայ գաղթականութիւնը անտեր և անօգնական»:

Ղրիմահայերի համար ազգային կյանքի զարթոնքը խորթ էր, նրանք գտնվում էին իներտ վիճակում և, այս պարագայում, կրկին անգամ առաջնությունը իրենց ձեռքում էին պահում, մասնավորաբար, այստեղ գաղթած արևմտահայերը, որոնք կամավոր էին գրվում, ամեն կերպ աջակցում հայրենամեր ձեռնարկներին. «...հայության կյանքում օրինակը չունեցող այդպիսի օրերին անգամ, Ղրիմահայերի մեծամասնությունը խուլ մնաց հայրենիքի խնդիրներին»<sup>13</sup>:

Հայրենիքի պաշտպանության համար կազմակերպված դրամահավաքները Ղրիմահայերի շրջանում անցան չափազանց վատ, տեղի հարուստ հայերը ականջալուր էին հայրենիքի կարիքներին և իրենց նվիրաբերած մանրադրամը որպես ողորմություն էին դիտում. «Գիտակցությունը, որ նվիրաբերությունը հայրենիքի պաշտպանության գործին յուրաքանչյուր հայի սուրբ պարտականությունն է, չկար տեղաբնակ Ղրիմահայերի մոտ»<sup>14</sup>: Երևույթը խիստ մտահոգիչ էր և ցույց էր տալիս այդ խավի ապազգային բնույթը. «Տարված մշտական շահույթի ապահովման մտայնությամբ՝ գաղութահայ բուրժուազիայի մի նկատելի հատվածը լիովին դարձել էր կոսմոպոլիտական և հավատ չէր տածում ապագա Հայաստանի ստեղծման ծրագրի հանդէպ»<sup>15</sup>:

<sup>11</sup> Նույն տեղում, հ. 21, 1918, էջ 304:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 304-305:

<sup>13</sup> Армянский настольный календарь, с. 35.

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 1, Ե., 2003, էջ 222:

1918 թ. սկսված թուրքական արշավանքը և Արդվիհնի, Բաթումի ու Անդրկովկասի այլ կենտրոնների անկման հետևանքով, Ղրիմի թերակղզի գաղթական հայության նոր հոսք սկսվեց. «1915-1920 թթ. Ղրիմում ապաստան գտած հայ գաղթականների զգալի տեղաշարժ մտցրին ղրիմահայության քանակական կազմում, որը նկատելիորեն մեծացավ»<sup>16</sup>: Ղրիմի հայկական կոմիտեները, և տիկին Յու. Սպենդիարյանի գլխավորած՝ Սիմֆերոպոլի հայ կանանց կոմիտեն իրենց ջանքերն ուղղեցին հայ գաղթականությանը օժանդակելու գործում: Ցանկանալով օգնել գաղթականներին՝ Սիմֆերոպոլցի հայուհիները բացեցին «Անկ գավաթ թեյ»-ը (Чашку чая), որով փորձում էին հոգալ հայրենակիցների խնդիրները:

Այս շրջանում, երբ Ղրիմում ակտիվանում էր թաթարական ազդեցությունը, հայության շրջանում ևս նկատվեցին տեղաշարժեր՝ սկսեցին ակտիվ դեր վերցնել տեղաբնակ ղրիմահայերը. «Հենվելով թաթարական իշխանության վրա, նրանք իրենց ձեռքը վերցրեցին հայության բոլոր հասարակական գործերը: Անշուշտ, դրանից առաջին հերթին տուժեցին ուսուցիչները, որոցից ոմանք անհապաղ ազատվեցին աշխատանքից անցյալի գործունեության համար»<sup>17</sup>: Նմանօրինակ գործողություններն ամեն կերպ խաթարում էին ազգային-մշակութային կյանքի առանց այն էլ թույլ բողբոջները Ղրիմում: Ռուսաստանի քաղաքական մթնոլորտի հստակեցումը միայն կարող էր թույլ տալ ազգային կյանքի կառուցման երկարամյա ծրագրեր ունենալ, սակայն տեղի ունեցավ հակառակը՝ Ռուսաստանը ներքաշվեց երկարատև և արյունալի քաղաքացիական պատերազմի մեջ, որի կարևորագույն թատերաբեմերից մեկն էլ դարձավ Ղրիմը:

1917-1918 թթ. Ղրիմի հայ հասարակության և ղրիմահայ կազմակերպությունների գործունեությունը ընթանում էր մի տեսակ անկազմակերպ, չկար համայնքային կենտրոնական կառույց: Այնուհանդերձ, նախորդ տարիների գործունեությունն ու կուտակված փորձը լավ նախադրյալներ ստեղծեցին Ղրիմում Հայ Համայնական Խորհուրդ և Վարչություն հիմնելու համար, որոնք համայնքին տվեցին կազմակերպա-

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 223:

<sup>17</sup> Армянский настольный календарь, с. 35.

կան նոր որակ, իսկ ազգային խնդիրների լուծման համար իրական հնարավորություններ: 1919 թ. հունվարին կայանում է Ղրիմի Համահայկական համագումար, որի ժամանակ մշակվում և ընդունվում են Համայնական խորհրդի ընտրությունների կարգը, հրահանգը, խորհրդի կանոնադրությունը և այլ հարցեր. «...Սիմֆերոպոլի Հայ Համայնական խորհուրդը ընտրած է սոյն տարւայ փիտուար ամսին ընդհանուր ընտրողական իրաւունքի հիման վրայ քառիակ սիստեմով»<sup>18</sup>:

Ինչպես, գրեթե բոլոր ռուսահայ համայնքներում, այնպես էլ Ղրիմում, հայ հասարակական-քաղաքական կյանքում իր լուրջ դերակատարմամբ աչքի էր ընկնում ՀԶԴ կուսակցությունը, որն ակտիվորեն մասնակցեց Սիմֆերոպոլի Հայ Համայնական խորհրդի ընտրություններին իր առանձին ընտրացուցակով: «Դաշնակցության» ընտրացուցակը թեկնածուների թվաքանակով ամենամեծն էր (34 թեկնածու), նրան մրցակից անկուսակցական թեկնածուների ցուցակը բաղկացած էր 33 անդամից. «Ընտրություններին մրցում էին երկու ցուցակ՝ N 1 անկուսակցականների ցուցակը և N 2 «Դաշնակցութեան» առաջարկած ցուցակը: Առաջին ցուցակից անցան 20 անդամ, 2-ից 16: ...խորհրդի անդամների ընդհանուր թիւն է 36»<sup>19</sup>:

Այսպիսով, ընտրությունների արդյուքում հաղթած անկուսակցականների թեկնածու Պետրոս Մալաֆյանն ընտրվում է Սիմֆերոպոլի Հայ Համայնական խորհրդի նախագահ, ավագ փոխնախագահ է դասնում Սմբատ Տեր-Ստեփանյանը, երկրորդ փոխնախագահն էր Հ. Սիրզույանը (անկուսակցական). «խորհրդի քարտուղարն է՝ պ. Ոն. Ոնուիեան»<sup>20</sup>:

Համայնական խորհրդին կից գործել են մի շարք հանձնաժողովներ, այդ թվում՝ ֆինանսական-բյուջետային, ժողովրդական լուսավորության, խնամատարական, գաղթականական և վերստուգիչ:

Ղրիմի Հայ Համայնական խորհրդի ձևավորումից հետո կազմվում է նաև գործադիր մարմին՝ Համայնական Վարչություն, որն ուներ մի շարք բաժանմունքներ. «Համայնական վարչութեան նախա-

<sup>18</sup> ՀԱԱ, ֆ. 1265, ց. 1, գ. 40, թ. 25:

<sup>19</sup> Նույն տեղում:

<sup>20</sup> Նույն տեղում:

գահն է պ. Երևանոյ Զեֆէեան, անդամներ՝ Սիմ. Գամալեան (քարտուղար, վարիչ ժողովորդական Լուսավորութեան և վիճակագրական բաժանմունքների), Ար. Արծրունի (վարիչ գաղթականական բաժանմունքի), Աիմ. Գրիկեան (վարիչ խնամատարական բաժանմունքի), Յար. Կարապետեան (գանձապահ) և Արշակ Բարխուդարեան (տնտեսական բաժանմունքի վարիչ)»<sup>21</sup>:

1919 թ. ընդունված Սիմֆերոպոլի Գայ Գամայնքի կանոնադրութունը բաղկացած էր 27 կետից, որոնք վերաբերում էին Գամայնական խորհրդին ու Վարչությանը, նրանց իրավասություններին ու պարտականություններին, համայնքի անդամներին և այլն: Կանոնադրության առաջին կետով սահմանվում էր. «Սիմֆերոպոլ քաղաքում բնակվող հայերը հիմնում են Սիմֆերոպոլի Գայական համայնք՝ իրենց անդամների ազգային-մշակութային կյանքը կառավարելու նպատակով»<sup>22</sup>: Այս մասին առանձին խոսվում է նաև Կանոնադրության չորրորդ կետում, ուր համայնքի ազգային-մշակութային կյանքի տնօրեն դիտվում էր Սիմֆերոպոլի Գայական համայնքը:

Գամայնքի անդամ կարող էր դառնալ յուրաքանչյուր հայ, ով բնակվում էր Սիմֆերոպոլի շրջանում և չէր մերժում իր՝ հայ ազգությունը (2-րդ կետ): Գամայնքի յուրաքանչյուր անդամ 21 տարեկանից սկսած ձեռք էր բերում ակտիվ և պասիվ ընտրական իրավունք:

Կրոնական, հոգևոր-դաստիարակչական և եկեղեցական գործերին, ինչպես հայ լուսավորչական, այնպես էլ հայ կաթոլիկ, Գամայնքի իրավասությունը չէր տարածվում:

Գամայնքը կառավարում էր Գամայնական խորհուրդը, որի կազմը որոշվում էր հետևյալ սկզբունքով. Գամայնքի մինչև 500 անդամը տալիս էր խորհրդի 11 ներկայացուցիչ, իսկ յուրաքանչյուր հաջորդ 500 անդամը՝ ևս 5-ը. «Գամայնական խորհրդի լիազորությունների ժամկետը երկու տարի է»<sup>23</sup>:

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> Նույն տեղում, թ. 28-29:

<sup>23</sup> Նույն տեղում:

Համայնական խորհրդի նախագահության՝ խորհրդի նախագահի, նախագահի ընկերների (տեղակալ) և քարտուղարի լիազորությունների ժամկետը մեկ տարի էր:

Սիմֆերոպոլի Համայնական խորհուրդը, ղեկավարելով հայ համայնքի ազգային-մշակութային կյանքը, այդ ուղղությամբ առանցքային խնդիրներ էին հանդիսանում խնամքն ու հոգատարությունը.

ա/ ազգային դաստիարակության

բ/ տնտեսական և սոցիալական պայմանների կառուցման (կոոպերատիվների, ընկերությունների, միությունների, ապահովագրման և այլն)

գ/ բարեգործության

դ/ հոգատարության, խնամքի և վերահսկողության իրականացում հայկական բոլոր մշակութային, դաստիարակչական և բարեգործական կազմակերպությունների հանդեպ

Սիմֆերոպոլի Հայկական Համայնքի միջոցները գոյանում էին պարտադիր անդամավճարներից, համայնքի շրջանում գտնվող անշարժ գույքից և կապիտալից, եկեղեցու և համայնքի անդամների նվիրատվություններից և այլն:

Կանոնադրության 12-րդ կետը սահմանում էր. «Համայնական խորհուրդը հարաբերությունների մեջ է մտնում տեղի պետական և երկրամասային իշխանության կառույցների, քաղաքային և զեմստվոների ինքնակառավարման մարմինների հետ հայությանը վերաբերող հարցերի առումով, ինչպես նաև ուրիշ մարզերի հայկական ինքնակառավարման կառույցների և Կենտրոնական Հայկական Ազգային վարչության հետ»<sup>24</sup>:

Համայնական խորհրդի գործադիր մարմինը հանդիսանում էր երկու տարի ժամկետով ընտրվող Համայնական Վարչությունը, որը բաղկացած էր երեք անդամից: Համայնական Վարչության իրավասությունն էր Համայնքի անդամների ցուցակագրումը, խորհրդի որոշումների իրագործումը, զեկուցումների ներկայացումը համայնքի գործերի վերաբերյալ, Համայնքի դրամական միջոցների հավաքումն ու ծախ-

<sup>24</sup> Նույն տեղում:



սումները, անդամների գույքային և քաղաքացիական շահերի պաշտպանությունը՝ լիազորագրերի և երաշխավորագրերի տրամադրմամբ:

Համայնական հորհրդի. նիստերի գումարումը օրինական էր, եթե ներկա էին անդամների կեսը, քվեարկությունը համարվում էր կայացած ծայների պարզ մեծամասնության առկայության պարագայում: Համայնքից անդամը կարող էր հեռացվել քրեական հանցանք գործելու և դատական պատասխանատվության կանչվելու, Համայնքի որոշումներին չենթարկվելու և մի շարք այլ դեպքերում:

Կարգավորված էր նաև նիստերի ժամանակ հատուկ մատյաններով արձանագրության իրականացումը, փաստաթղթերի պահպանության և գործավարության կազմակերպման հարցերը: Համայնական հորհուրդն ուներ իր անվանումով կնիք:

Կանոնադրության վերջին կետով սահմանվում էր, որ Համայնքի լուծարման դեպքում, հորհրդի որոշումով, բոլոր միջոցները ուղղվելու են հայկական մշակութային խնդիրների լուծմանը և փոխանցվելու են այդպիսի խնդիրներով զբաղվող հաստատությանը:

Արդեն 1919 թ. սկզբին Սիմֆերոպոլում ամբողջական տեսք և ձևավորում ստացան համայնքային կառույցները, որոնք անմիջապես անցան համայնքին հուզող խնդիրների կարգավորմանը:

1919 թ. օգոստոսի 1-ին Սիմֆերոպոլի Հայ Համայնական հորհուրդն իր նիստում հաստատում է 1919 թ. (մարտի 10 - դեկտեմբերի 31) մուտքերի և ծախսումների ցանկը, որը կազմել էր ֆինանսական հանձնաժողովը (վարիչ՝ Կ. Ալթունջի): Ըստ այդ ցանկի 1919 թ. ընթացքում Համայնքի անդամներից վճարումներ էին սպասվում.

«I խմբի՝ անշարժ գույք ունեցող 139 անդամներից –	188.950
II խմբի՝ առևտրական (коммерсантовъ) 78 անդամներից –	32.475
III խմբի՝ արհեստավորների 28 անդամներից –	1.600
IV խմբի՝ հացթուխների 39 անդամներից –	2.950
V խմբի՝ ծառայողների 88 անդամներից –	<u>5.475</u>
	231.450

«Մեկ գավաթ թեյ»-ից – 100.000

Պատահական մուտքերից – 11.800

Հանրագումարը ռուբ. – 343.250 »<sup>25</sup>:

Միմֆերոպոլի Հայ Համայնական Խորհրդի ֆինանսական հանձնաժողովի կազմած, փաստացիորեն, բյուջետային այս փաստաթղթից հստակորեն կարելի է պատկերացում կազմել Համայնքի անդամների սոցիալական, տնտեսական վիճակի մասին: Իրենից մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև հաստատված փաստաթղթի ծախսումների մասը, ըստ որի նախատեսվում էր դրանք ուղղել հետևյալ խնդիրների լուծմանը.

*« Ծախսեր ժողովրդական լուսավորության համար.*

Ուսումնարանի պահպանում	<u>65.000</u>	ռուբ. 65.000 +
Մանկապարտեզ	29.100	
Երեկոյան կուրսեր և դասախոսություններ	3.000	
Մամուլ և հրատարակչություն	5.000	
Գրադարան	8.000	
Բեմական գործ	1.000	
Թոշակ	<u>6.000</u>	
	52.100	

*Ծախսեր պատսպարելու (по прикреию) և բարեգործական.*

Օժանդակություն աղքատներին	36.000	ռուբ.
Բժշկական օգնություն	<u>10.000</u>	
	46.000	

*Ծախսեր կազմակերպչական.*

Վարչության պահպանման համար	21.500	ռուբ.
Կենտ. Կոմ. պահպանման բաժին	<u>7.500</u>	
	29.000	

*Արտակարգ ծախսեր.*

Ձինվորներին	10.000	ռուբ.
Ձինվորների ընտանիքներին	10.000	
Գաղթականության պահպանման	40.000	
Ազգային պահուստային կապիտալ	91.150	
Հանրագումարը ռուբ.	<u>343.250»<sup>26</sup>:</u>	

<sup>25</sup> Նույն տեղում, թ. 30:

<sup>26</sup> Նույն տեղում, թ. 31:

Համայնական խորհրդի նիստում ընդունված այս փաստաթղթի նախատեսվող ծախսումային մասից ակնհայտ է դառնում համայնքային կառույցների գործունեության ամբողջ դաշտը, որն ընդգրկում էր ոչ միայն տեղի մշակութային-կրթական կյանքի ասպարեզը, այլ նաև հայ գաղթականությունն ու զինվորությունը:

Սիմֆերոպոլի Հայ Համայնական խորհուրդն իր 1919 թ. օգոստոսի 1-ի նիստում հաստատում է նաև ֆինանսական հանձնաժողովի կողմից մշակած մեկ այլ փաստաթուղթ, որով սահմանվում էին համայնական տուրքերի չափերը, ըստ որի. բնակչության տարբեր խմբերից գանձվելու էին տուրքեր համապատասխան իրենց եկամտային և գույքային ունեցվածքի: Առանձնացվեցին 18 այդպիսի խմբեր.

խումբ N	Գույքային ունեցվածքի չափը, Ֆին. հանձ. նախ. Համայնական խորհրդի կապիտալը կամ եկամուտները	տուրքի չափը	հաստ. տուրքի չափը
1.	5.000 ռ. մինչև 10.000	50 ռ.	50 ռ.
2.	10.000	100	100
3.	20.000	150	150
4.	30.000	200	200
5.	40.000	250	250
6.	50.000	350	
7.	75.000	500	500
8.	100.000	750	
9.	150.000	1.000	1.200
10.	200.000	1.200	
11.	250.000	1.500	2.500
12.	300.000	1.800	
13.	400.000	2.000	3.500
14.	500.000	2.500	
15.	750.000	3.000	5.000
16.	1.000.000	3.500	
17.	1.500.000	4.000	7.500
18.	2.000.000	5.000 <sup>27</sup>	

Համայնական տուրքեր սահմանված էին նաև այլ հայկական համայնքներում, օրինակ՝ Դոնում, ուր սակայն տուրքի վճարման չափը անհամեմատ ցածր էր: Այսպես, Դոնի Նախիջևանի Հայ Համայնական

<sup>27</sup> Նույն տեղում, թ. 32:

Խորհուրդը սահմանել էր գանձումների հետևյալ չափը՝ մինչև 3000 ռ. դեպքում 15 ռ., 200.000-500.000 հազարի դեպքում՝ 600 ռ., 1 մլն. և ավելիի դեպքում 1.500 ռ., իսկ աշխատավարձ ստացողները վճարում էին դրա 1 %-ը<sup>28</sup>: Եթե Դոնում համայնական տուրքի գանձման հետ մեկտեղ համայնքի յուրաքանչյուր անդամ կարող էր դիմել Խորհրդին՝ իրեն վճարման մի կատեգորիայից մյուս տեղափոխելու առաջարկով, ապա Դրիմում այդպիսի հնարավորության մասին, տուրքերի չափը սահմանելիս, չի խոսվում:

Այնուհանդերձ, դրամական հոսքերի մուտք, ինչպես երևում էր, չէր հաջողվում հավաքել ամբողջ ծավալով, քանի որ Համայնական Խորհրդի կրթության-լուսավորության հանձնաժողովի 1919/1920 ուստարվա լուրջ ձեռնարկներից՝ Սիմֆերոպոլում Հայկական գիմնազիան բացելու համար անհրաժեշտ գումարի մի մասը պակասում էր, որի համար օժանդակություն էին հայցում Դոնի Նախիջևանի համայնքային կառույցներից, «Հայ Համայնք» թերթից: Սիմֆերոպոլի Հայ Համայնական Վարչության նախագահ Ս. Համալյանի նամակից (1919 թ. օգոստոս), որն ուղղված էր «Հայ Համայնք»-ի խմբագրությանը, պարզ է դառնում, որ գիմնազիա բացելու համար անհրաժեշտ 40.000 ռուբլուց համայնքը կարող էր տրամադրել մոտ 25.000-ը:

Սիմֆերոպոլի Հայ Համայնական Վարչություն մեկ այլ նամակից (1919 թ. օգոստոս 26), որն ուղղված էր առաջնորդական փոխանորդ Հուսիկ վարդապետին, ակներև է դառնում Վարչության անխոնջ պայքարը՝ թույլ չտալու տեղի հայկական ծխական դպրոցների նկատմամբ լուսբաժնի ոտնձգությունները. «Քաղաքիս ուսումնարանական խորհուրդը յուր կազմվելու օրերից սկսել է մի գործունեություն, որ հակահայկական բնավորություն է կրում: ...Խորհուրդը ոչ թե միայն ձգտում է քննությունների հրավիրել մեր դպրոցների աշակերտներին, այլև ակներև ցույց է տալիս հակումն տեր լինել մեր դպրոցներին, կառավարել նրանց եւ պաշտոնյաներ նշանակել նրանց մեջ»<sup>29</sup>: Վերոհիշյալ նամակը համատեղ հանդես գալու և ոտնձգությունը թույլ չտալու նպատակ էր

<sup>28</sup> Армянский настольный календарь, с. 19; «Բանբեր Հայաստանի Արխիվների», 2006, N1 /107/, էջ 223:

<sup>29</sup> Նույն տեղում, թ. 21:

հետապնդում, որի, դրական ելքի բերած, արդյունքներից էր հայ աշակերտներին քննությունների հրավիրելու փորձի կանխումը:

Սիմֆերոպոլի Հայ Համայնական Խորհրդի կանոնադրության 12-րդ կետով սահմանված էր, որ Խորհուրդը նպատակադիր էր հարաբերությունների մեջ մտնել այլ հայկական համայնական կառույցների հետ, սակայն այստեղ ևս խնդիրներ կային:

Այսպես, Սիմֆերոպոլի Հայկական Համայնական Վարչության նամակից՝ (1919 թ. օգոստոսի 16) ուղղված «Նոր Նախիջևանի և Ռոստովի Հայ Համայնական Վարչությանը» պարզ է դառնում գոյություն ունեցող թույլ կապը երկու հարևան հայաբնակ երկրամասերի հայկական կառույցների միջև: Հետաքրքրական է, որ վերոհիշյալ նամակը պատասխան նամակ էր Դոնի հայկական համայնքային կառույցի նույն թվականի մարտի 15-ի գրության, այսինքն, ուղիղ հիմք ամիս անց գրված նամակի: Սիմֆերոպոլի Համայնական Վարչությունն իր նամակում ներկայացնում էր համայնքային կառույցների վիճակը և գործունեության ուղղությունները՝ նշելով Խորհրդի նոր նախաձեռնություններից ընթացիկ ուստարում «Տավրիկյան Հայկական Գիմնազիայի» և մանկապարտեզի բացման մտադրությունը. «Վարչութիւնս ուրախութեամբ ապագայում և իրազեկ կը պահի Ձեզ իւր գործունեութեանը ու կեանքին: Յոյսով ենք, որ այսուհետև հնարաւոր կը լինի հաստատել մեր մինչև սերտ փոխ-յարաբերութիւններ, որոնց արդիւնքը, անշուշտ, շօշափելի կը լինի մեր նորակազմ Խորհրդի ու նրա գործադիր մարմնի համար»<sup>30</sup>:

Հայկական համայնքային կառույցների միջև առկա այդ թույլ կապի մասին է խոսում նաև վերոհիշյալ նամակի եզրափակիչ տողը, որից պարզ է դառնում, որ Դրիմում գործել է նաև մեկ այլ հայկական կառույց. «Աւելորդ չենք համարում յայտնել Ձեզ և այն, որ Համայնական Խորհուրդ ու Վարչութիւն գոյութիւն ունի նաև մեր հարևան Եւպատորիայում»: 1919 թ. օգոստոսի 16-ով թվագրված այս նամակի վերջում, որպես Խորհրդի Վարչության նախագահ, նշվում էր Աիմ. Համալյանի անունը:

<sup>30</sup> Եւրոյն տեղում, թ. 25:

Տարբեր հայկական կառույցների միջև գործակցության և, ընդհանրապես, թույլ կապի կարևոր պատճառներից մեկն էլ հանդիսանում էր Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի հետևանքով առաջ եկած դժվարություններն ու հաղորդակցության հնարավորությունների բացակայությունը:

Հետագայում թե ինչպիսի ճակատագիր ունեցան Ղրիմում գործող հայկական համայնքային այս կառույցները դժվար է հետևել, քանի որ բացակայում են դրանց վերաբերյալ անհրաժեշտ տվյալներն ու նյութերը, սակայն միանշանակ է փաստը, որ տարածաշրջանի խորհրդայնացումից հետո բոլոր ազգային-համայնքային կազմակերպությունները փակվեցին:

1919 թ. վերջից մինչև 1920 թ. աշունը Ղրիմը դարձավ քաղաքացիական պատերազմի ակտիվ թատերաբեմ, ուր կենտրոնացել էին «սպիտակ շարժման» վերջին ուժերը՝ «Ռուսաստանի Հարավի կառավարիչ» Պ. Վրանգելի գլխավորությամբ: 1920 թ. աշնանը «սպիտակ» ուժերը, դուրս գալով Ղրիմից, արշավեցին Ուկրաինա՝ միանալու համար լեհական զորքերի հետ. «Նոյեմբերի 7-11 խորհրդային զորքերը... ճեղքեցին Պերեկոպի ամրությունները... և նոյեմբերի 17-ին ամբողջությամբ տիրեցին թերակղզուն»<sup>31</sup>, Ղրիմում սկսվեց տենդագին տարիանում, քաղաքացիական պատերազմի ելքը, փաստորեն, վճռվեց:

Այսպիսով, 1917 թ. ռուսական հեղափոխությունից մինչև 1920 թ. աշունը քաղաքացիական պատերազմի ավարտն ու խորհրդայնացումը, Ղրիմի հայ համայնքն ունեցավ կարճատև, սակայն ազգային-համայնքային կյանքով ապրելու կարևոր մի շրջան, որի ձեռքբեղումները թեև համեստ էին, բայց և այնպես, թափ հաղորդեցին տեղի հայության համախմբմանն ու առաջընթացին:

---

<sup>31</sup> Орлов А., Георгиев В. и др., Основы курса истории России, Москва, 1997, с. 471.

**СИМФЕРОПОЛЬСКИЙ АРМЯНСКИЙ ОБЩИННЫЙ  
СОВЕТ И УПРАВА**

**РЕЗЮМЕ**

После революции в России 1917 г. Крым оказался в напряженной политической ситуации. Гражданская война и социально-экономический кризис не обошлись кругом, только в ноябре 1920 г. в полуострове были основаны советская власть и порядки. В этот период в Крыму национальная жизнь армян регулировалась множеством общественно-просветительских и благотворительных организации, которые представляли и защищали права проживающих здесь армян.

На состоявшемся Всеармянском Съезде Крыма в январе 1919 г. было принято Положение и выработан порядок выборов в Симферопольскую Армянскую Общину (в Совет и Управу). Вопросом дня для Крымских армян служил вопрос об открытии национальной гимназии, мобилизации армян вокруг национальных идей.

Помощь беженцам-армянам тоже входила в круг действий Симферопольской Армянской Общины.

Կ. ՊՈԼՍԻ «ՇԱՆԹ» ՀԱՆԴԵՍՆ  
(1918-1919 թթ.)

«Շանթ» հանդեսը լույս է տեսել Կ.Պոլսում 1911-1915 թթ. և 1918-1919 թթ.: Խմբագիրը Սերուժան Պարսամյանն էր: Աշխատակազմում ընդգրկված էին ժամանակի անվանի գրողներն ու հարապարակախոսները. Երվանդ Օտյան, Երուխան (Երվանդ Սրմաքեշխանյան), Օննիկ Չիֆթե Սարաֆ, Եղիա Տեմիրճիպաշյան, Ջարուհի Գալեմքերյան, Սիքալեյ Շամտանճյան, Սկրտիչ Պարսամյան (Կայծակ), Ժակ Սայապալյան (Փայլակ), Արամ Չարզ (Վտարանդի), Հակոբ Անտոնյան, Շավարշ Սիսաքյան, Հակոբ Ճուղյան (Սիրունի), Ենվթ Արմեն, Արշակ Ալպոյաճյան, Գևորգ Մեսրոպ, Հովհաննես Ասպետ և այլք: «Շանթը» թղթակիցներ է ունեցել Արևմտյան Եվրոպայի երկրներում, Կովկասում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում: Նրանց նյութերը հանդեսին հաղորդում էին «տեղի գրական և գեղարուեստական շարժումը՝ մասնաւորապէս հայէն թղխող և հայութիւնը շահագրգռող: «Շանթի» գրական և գեղարուեստական շարժումին մէջ պիտի խօսուի ամէն հրատարակութիւններու վրայ ընդհանրապէս՝ տարուան գրականութեան եւ գեղարուեստին ամփոփի ու ճշգրիտ պատմութիւնը տուած ըլլալու համար: «Շանթ» պիտի ցոլացնէ հայ արուեստը եւ միտքը»:

«Շանթ» հանդեսը հիմնվել էր հայ գրականության զարգացմանը նպաստելու նպատակով: «Հանգրվանը» կոչվող խմբագրականում նշված է. «Ժամանակն հասած է, որ դիմենք գեղարուեստի հանգրուանին, ստեղծենք նոր միջավայր մը, ուր արուեստին գաղտնիքները քողամերկուին, և ուր քաղաքական եւ ազգային մոլեգնոտ կռիվներէն յոգնած մեր ուղեղները անդորրին պահ մը: Այդ հանգրուանը ժամադրավայրը պիտի ըլլայ բոլոր ինքզինքնին հարգող գրագէտներուն. հոն կուսակցական ոգին տեղի պիտի տայ զուտ գեղարուեստական մակընթացութեան, ամէն գրագէտ՝ այդ նոր գետնին վրայ ձեռք պիտի երկարէ իր սկզբունքի ախոյեանին՝ գործակցելու համար գրականութեան պան-



ծացումին: Ահաւասիկ այդ նպատակին համար կը հիմնենք «Շանթ» հանդէսը»<sup>1</sup>:

Հրատարակութեան առաջին շրջանում (1911-1915 թթ.) «Շանթ» հանդէսն ունեցել է գրական-գեղարվեստական և գիտական ուղղվածություն: Հանդեսի հիմնական բաժիններն ու խորագրերն էին՝ Գրական-գեղարվեստական շարժում և մտեցումներ, Նոր գրքեր, Թրքահայ գրականություն, Մամուլ, Թարգմանություններ, Հայ աշխարհ, Հայ հորիզոններ, Նամականի, Լրափունջ: Հրատարակութեան երկրորդ շրջանում (1918-1919) այս բաժինները հարստացել են նորերով՝ Հայ պանթեոնը, Վերապրողները, Մեր մեծ քսորականները, Մեր ազգային վերջին մեծ մարտիրոսները, Դեպի կյանք և այլն: 1918-1919 թթ. «Շանթը» դարձել է գրական-քաղաքական և առավելապես հայապահպանության ու ազգի վերածնության խնդիրներ արծարծող հանդես: Դա պատահական չէր և թելադրված էր Թուրքիայի հասարակական-քաղաքական իրավիճակով: Դեռևս 1911 թ. իր անդրամիկ խմբագրականում «Շանթը» գրում էր. «Ո՛չ մէկ երկրի քաղաքական կեանք այնքան զօրաւոր կերպով ազդած է գրականութեան եւ արուեստի վրայ, որքան մեր մէջ...»<sup>2</sup>: Իսկ 1918 թ. հրատարակութեան նոր շրջանի առաջին խմբագրականում գրված է, թե հանդեսի աշխատակիցների մեծ մասը նահատակվել է, և «մեր ազգին ապրած զարհուրելի օրերէն վերջը, պարզապէս ծիծաղելի պիտի երեւար, գէթ հիմա, զուտ գրական-գեղարուեստական օռկանի մը գոյութիւնը, ինչպէս էր այն ատենուան «Շանթը» (1918, թիվ 1, էջ 2-3)<sup>3</sup>: Պահպանելով գրական-գեղարվեստական ուղղվածությունը՝ «Շանթը» հետապնդում էր նաև Մեծ եղեռնը վերապրողների կողմից «մեր արիւնոտ պատմութիւնը գրելու, ապրելով՝ մահուանը յաղթելու և քանդուած երկիրը վերանորոգելու նպատակները»: «Շանթի» աշխատակիցներն առաջնորդվում էին նշված սկզբունքներով՝ հիշելով, թե իրենք զավակներն են այն սերնդի, որ «մեռաւ՝ մեզի ապրեցնելու համար, որ կռուեցաւ ու յաղթանակեց» (1919, թիվ 13, էջ 148):

<sup>1</sup> «Շանթ», 1911, թիվ 1, էջ 1:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Այսուհետև «Շանթ» հանդեսից կատարված մեջբերումները հղվելու են շարադրանքում փակագծերի մեջ:

Առաջին համարներից սկսած՝ հանդեսում տպագրվում է Մ. Շամտանճյանի «Իթթիհատի հայաջինջ նոպան» հուշագրությունը, որտեղ նա հոգեբանական վերլուծության է ենթարկում հայ մտավորականների մարտիրոսագրությունը և իբրև ականատես ներկայացնում նրանց աքսորի շրջանն իր զրկանքներով, տառապանքներով և ապրելու անկոտրում կամքով: Հայ հորիզոնեն բաժնում այս շարքը գնահատված է որպես «Շանթի» «ներկայացուցած ամենէն աշխատուած ու արժէքաւոր գործը» (1919, թիվ 18, էջ 216):

«Շանթ» հանդեսը, «ունենալով չորս տարուան շրջանի գնահատուած անցեալ մը» (նույն տեղում), 1918 թ. որոշում է նվիրվել ազգային մի նոր ծրագրի իրագործմանը. «Ան հայուն թերթը պիտի ըլլայ այլ ևս, ո՛չ թէ միայն հայ մտաւորականին թերթը: Պիտի ջանանք անկարելին փորձել՝ ցոլացնելու համար հայուն տաժանքոտ կեանքը: Պիտի հրավիրենք մեր գրողները, որպէսզի վերջին դարու հայ ազգային պատմութիւնը գրեն իրենց անձնական պատմութիւններովը: Ամէն հայ վիշտ մը, արցունք մը ունի իր աչքերուն մէջ: Ուրեմն տառապողները թող այս էջերուն դիմեն, որ մեր արիւնոտ պատմութիւնը գրուի: Չի կարճուի, թէ շարունակ պիտի լանք այս էջերուն մէջ: Այլ ևս չպիտի լայ հայը: Այլ ևս մենք պիտի մէկ նպատակ հետապնդենք. քանդուած երկիրը վերանորոգել» (1911, թիվ 1, էջ 3): Եվ ոչ միայն դա. «Պէտք է որ մէկ կուսակցութիւն գոյութիւն ունենայ այլ ևս մեր մէջ: Ամէն հայ պէտք է անո՛ր զինուորագրուի, մեր բոլոր ճիգերը, միշտ ու ամէն պարագայի մէջ, պէտք է անո՛ր ուղղին: Մէկ կուսակցութիւն. Հայութիւնը» (1918, թիվ 2, էջ 24): «Շանթը» համոզված է, որ անհրաժեշտ է մոռանալ նախկին ատելությունները, հաշիվները և նվիրել հայրենիքի վերաշինության գործին: Այս կարևոր առաքելության մեջ հանդեսի կարծիքով ոգևորիչ դերակատարություն ունեն անգամ հայ ժողովրդի վերջին մեծ մարտիրոսները, որոնցից շատերի (Ռուբեն Զարդարյանի, Դանիել Վարուժանի, Ռուբեն Սևակի, Մելքոն Կյուրճյանի և այլոց) գրական և ազգային-հասարակական գործունեությունը հավուր պատշաճի ներկայացված է Մեր պանթեոնը բաժնում: «Շանթի» խմբագիր Մերուժան Պարսամյանը այդ առիթով գրում է. «Մեռցուցին Հայերը, մեռցուցին մեր լաւագոյն մտաւորականները... Ահաւասիկ կը տեսնեն զանոնք, ամէնքն ալ: Կը խնդան... Անոնք

գոհ են, որովհետև կ'զգան, որ թէև իրենցմէ բան մը պակասած է, բայց կատարեալ, մեծ, տեսական գործ մը հիմնուած է. Հայրենիքը» (նույն տեղում, էջ 13-14): Իսկ «Շանթի» 1919 թ. ապրիլի 11-ի թիվ 25-26 միացյալ համարն ամբողջությամբ նվիրված է արևմտահայ գրականության նահատակված սերունդին: Հանդեսի այս համարի խորագրում նրանց մասին ասվում է. «Անոնք մեռան, բայց իրենց մտածումը կ'ապրի»: Հողվածներում և հուշերում նրանցից յուրաքանչյուրը երևում է յուրովի, երևում է խաղացած անփոխարինելի դերով ու տեղով հայ ազգային ու գրական կյանքում:

Հանդեսում առանձնահատուկ մեծարանքով է ներկայացված Ռուբեն Ջարդարյանը, ում գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցումը մեծ հաճույք էր «նոյնիսկ իր գաղափարական ու դաւանական հակառակորդներուն համար» (1919, թիվ 8, էջ 92): «Շանթում» տպագրված է նաև Կոմիտաս վարդապետի կարծիքը Ռ. Ջարդարյանի մասին. «Երբ Ցայգալոյսը կարդացի, Ջարդարեանը չպատկերացուցի բնաւ աչքերուս առջեւ, այլ ամբողջ ազգ մը, ամբողջ ժողովուրդ մը՝ իր գեղեցկութեամբ ու շքեղութեամբ: Այդ մատենանը գրքի մը տպաւորութիւնը չէր որ թողուց վրաս, այլ կեանքի մը, իր բաբախումներովն ու իր զգայնութեամբը»: Ռուբեն Ջարդարյանը դեռ ասելիք ու անելիք ուներ: Նա դեռ չէր ավարտել իր գործը: Նա ծնվել, ապրել և սպանվել էր «աւա՛ղ Ցեղին համար» (նույն տեղում):

«Շանթը» գտնում էր, թե կար մի ընդհանուր արժանիք, որը միավորում էր Ռ. Ջարդարյանին ու մեր մյուս նահատակ մտավորականներին. անդամաճան և անձնուրաց ազգասիրությունն ու հայրենապաշտությունը: Ականատեսի պատմածների վրա Գ.Ա.-ի գրած «Հայ մտավորականությունը աքսորանքի ճամբուն» նյութում կա այդ ընդհանրությունն ամփոփող հատված: Խոսքը վերաբերում է նրան, որ երբ տարսոնահայերը հանդիպում են իրենց քաղաքով անցնող աքսորյալ 80 հայ մտավորականների հետ (Գ. Ջոհրապ, Վ. Սերենկյուլյան, Ռ. Ջարդարյան, է. Ակնունի և այլք), նրանք են սկսում մխիթարել ժողովրդին՝ «Ժպտելով, խնդալով և խոսելով: Բոլորին ըսածը գրեթէ միեւնոյն խօսքերն էր, տարբեր շեշտով, տարբեր հմայքով.

Մենք նման տառապանքներ ու աքսորներ շատ ենք տեսել: Դուք եղէք գործի, սկզբունքի մարդ և ոչ թե խօսքի: Մի վիատիք արգելքներու առջեւ, ասպարէզը ձերն է. հետեւեցէք մեզ և մեր ճամբուն: Որքան ատեն որ լոյս կայ, լոյսին ճառագայթը կայ, որքան ատեն դուք ապրիք, ձեր լոյսովը Հայաստան մը պիտի լուսաւորուի» (1919, թիվ 25-26, էջ 303):

Հայաստանի վերաշինության և հզորացման գաղափարը արժարծվում է «Շանթ» հանդեսի 1918-1919 թթ. գրեթե բոլոր համարներում: Իսկ 1919 թ. թիվ 32-ի խմբագրականում փաստվում է հետևյալ իրողությունը. «Հայ Հանրապետությունը, որուն առաջին տարեդարձը տօնեցինք մեծ հպարտութիւնով, անհուն և անպարտելի զոհողութիւններու արդիւնքն է»: Դա գիտակցում է հատկապես մեր մտավորականությունը, «որ վաղը, հայրենի աներակներու վերաշինութեան ստեղծագործ աշխատանքին մէջ, պարտ մը ունի կատարելիք, հոն թրթռացնելու համար Հայ Բազուկին Երզը, Աշխատանքի Տաճարին Դրան առջեւ ծունկի եկած՝ Հայ Ազատագրութեան առաջին տօնը յուշերգելու՝ ապրող սերունդներուն» (էջ 361): «Շանթի» կարծիքով Հայաստանի Հանրապետության հիմնումը դարագլուխ է բացում հայոց պետականության պատմության մեջ: «Բարենորոգումի բոլոր ծրագիրները այլ ևս մեզի չեն վերաբերիր. քաղաքակիրթ աշխարհը մեզ կը դնէ մեր ճակատագիրը ու մեր ապագան ինքնորոշելու սկզբունքին հետ դէմ առ դէմ: Դադրած ենք ստրուկ ազգ մը ըլլալէ, եւ մենք, անհատաբար ու հաւաքօրէն, կը պատկանինք Մեր Հայրենիքին, Հայ Հայրենիքին... Ամէն հայ միտքով ու սիրտով միացած ու անբաժան. ահա՛ մեր ապագայ յաջողութեան ուղեգիծը», - գրում է «Շանթը» 1919 թ. թիվ 9-10-ի «Հայ դարագլուխը» խմբագրականում (էջ 101): Մայիսի 28-ը «Շանթը» համարում է «Միացեալ եւ Անկախ Հայաստանի պաշտօնական արտայայտութիւնը... Ռուսահայ և Թրքահայ գոյութիւն չունին այլ ևս, բայց Անկախ եւ Միացեալ Հայաստանի ազատ քաղաքացիներ, որոնք վաղը պիտի միանան Հայրենի աներակներուն վրայ, հայրենի կապոյտ երկինքին տակ» (1919, թիվ 37, էջ 425):

Հանդեսի աշխատակազմը համոզված է, որ արդեն ժամանակն է նաև լրջորեն հաշվարկելու հայ ժողովրդի կրած մարդկային, հոգևոր ու բարոյական կորուստները: Բնորոշ է Գևորգ Մեսրոպի «Հայ քաղաքա-

կրթության կորուստները (1914-1918)» ուսումնասիրությունը: Այստեղ ներկայացվող թվերն ու փաստերն առավել քան խոսում են: Ըստ այդմ, մինչև 1914 թվականը Թուրքիայում (բացի Պոլսից) ազգային պատրիարքարանի հսկողության տակ էին գտնվում 803 նախակրթարան 59513 աշակերտներով, 21713 աշակերտուհիներով, 2088 ուսուցիչ-ուսուցչուհիներով: Սրանց էին գումարվում «1908-էն յետոյ Սիացեալ Ընկերութիանց, Ազգանուէր Հայուհեացի բացած 140 դպրոցները հազարաւոր երկսեռ աշակերտներով, հարիւր հազարաւոր ոսկիի պիւտժներով»: 1908 թ.-ից տեղական միջոցներով ու թաղային բյուջեներով գործում էին նաև 15 դպրոց Վանում, 20-ը՝ Էրզրումում, 15 դպրոց՝ Բիթլիսի և նույնքան էլ՝ Խարբերդի վիլայեթներում, 50-ից ավելի դպրոց էլ Թուրքիայի զանազան վայրերում իրենց աշակերտներով: «Աւելցնել հարկ է նոյնպէս Սանասարեան վարժարանի, Վանայ Երամեան վարժարանի նման երկրորդական և անհատական նախաձեռնութեամբ բացուած բազմաթիւ դպրոցները, որոնք իրենց ծաղկումի մէջ էին Պատերազմէն անմիջապէս առաջ: Պէտք է ւնելցնել նմանապէս Հայ Բողոքական կամ Աւետարանական հասարակութեան և Հայ Կաթոլիկներու բացած ու մատակարարած դպրոցները գաւառներու մէջ, մասնաւորաբար Կիլիկիոյ, Գոնիայի, Էնկիւրիի վիլայեթներուն, Իզմիթի սանճագին մէջ, Խարբերդի մէջ և այլուր»: Այս դպրոցները 1919 թ.-ին արդեն չկային: Դրանք հիմնահատակ քանդվել էին թուրքերի կողմից: Սպանվել էին դրանց գրեթե բոլոր ուսուցիչները և ուսուցչուհիները, հոգաբարձուներն ու խնամակալները, աշակերտներն ու աշակերտուհիները: Դպրոցների ու կրթօջախների հետ զուգահեռ ոչնչացվել էին նաև Թուրքիայում գտնվող հարյուր-հազարավոր վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, սրբատներ, որոնց մի մասը վերածվել էր խառոտների ու մառանների: Այրվել ու փոշի էին դարձել վանքերում պահվող հայ գրականության արժեքավոր նմուշները. «Այդ ձեռագիրներուն հետ իսպառ կորան հայ գրչութեան, հայ մանրանկարչութեան թանկագին գոհարները, հայ արուեստի մեծագոյն տոգիւմանները: Այդ ձեռագիրներուն հետ անհետացան հայ ոսկերչութեան գեղեցիկ նմուշներն ալ»: Հայ ժերուհիների կորուստը ուրույն տեղ էր գրավում հոգևոր կորուստների շարքում, քանզի «այդ ժերուհիները, այդ հայ տատիկները ու մամիկները որ կորան, իրենց հետ մէկտեղ տարին Հայ

ժողովրդագիտութեան բոլոր տւիքները: Հայ հեքեաթներն ու առասպելները, հայ առածներն ու առակները, հայ զրոյցներն ու հանելուկները, մէկ խօսքով հայ ցեղին բոլոր թաքուն գանձերը, որ տակաւին ուսումնասիրութեան նիւթ դարձած չէին, գացին անոնց հետ մոռացութեան խաւարին ծոցը» (1919, թիվ 11, էջ 128-129): Հողվածագիրն իր վերլուծութիւնը ամփոփում է այն եզրակացութեամբ, որ հայ ժողովրդի այս հոգևոր կորուստները նաև ողջ քաղաքակիրթ մարդկութեան կորուստներն են:

Ազգային վերածննդի և հայապահպանութեան խնդիրների արծարծումը «Շանթի» էջերում թեև հրատարակութեան 2-րդ շրջանում դարձել էր առաջնահերթ, բայց, միևնույն է, հանդեսն իր բնույթով շարունակում էր մնալ գրական-գեղարվեստական: «Շանթը» հավատարիմ էր մնացել բուն առաքելութեանը՝ արտացոլել ու վերլուծել հայ և համաշխարհային գրական կյանքը, գեղարվեստի տարբեր ճյուղերի անցուդարձը՝ բերելով սեփական նպաստը դրանց զարգացման ու առաջընթացի գործում: Օրինակ՝ 1919 թ. թիվ 18-ի Հայ հորիզոնն բաժնում տպագրված տեղեկատվութիւնը նորակազմ հայ գեղարվեստական միութեան գործունեութեան մասին է: Այդ միութեան հիմնական նպատակներից էր՝ ծանոթացնել քաղաքակիրթ աշխարհին հայ արվեստի դրսևորումներին: «Թող չըսուի թէ քաղաքական փոխանցումի այս յուզումնալից շրջանին երկրորդական կը մնան գեղարուեստական հետապնդումները: Հայ գեղարուեստի ուսումնասիրութիւնը կարելոր է, հաստատելու սա ճշմարտութիւնը թէ, հայը ոչ միայն ռազմիկ մըն է, այլ նաև ունի արուեստագիտական ամենամուրթ ճաշակ և ըմբռնում, շատ հին դարերէ ի վեր: Հայ գեղարուեստական միութիւնը երեւան պիտի բերէ գեղարուեստական նոր փաստեր, ապացուցանելու համար թէ հայը քաղաքակրթութեան ընտանիքներու մէկ անդամն է ու պիտի մնայ, քանի որ ունեցած է ինքնատիպ ու զուտ ազգային արուեստի նախանձելի հրաշակերտներ», - գրում է «Շանթ» հանդեսը (1919, թիվ 18, էջ 215):

Անաչառ են «Շանթի» վերլուծութիւններն ու գնահատականները ժամանակակից արվեստագետների ստեղծագործութիւնների վերաբերյալ: Հանդեսի արժանիքներից մեկն այն է, որ այստեղ քննարկվող հարցերի վերաբերյալ ապահովվում էր բազմակարծութիւն, երբ մաս-

ճավորապես խոսքը վերաբերվում էր արևմտահայ գրականությանը, թատրոնին և արվեստին: Գրական բանավեճի առումով բնորոշ է, օրինակ՝ «Թրքահայ գրական շարժումը» (1919, թիվ 2, էջ 17-19) խմբագրականում Ենովջ Արմենի և Ատրուշանի (Հ. Ստամբուլյանի) տեսակետների բախումը «Հոռետեսությունը քննադատության մեջ» (1919, թիվ 3, էջ 33-34) հոդվածում Երվանդ Արմաքեշխանյանի և «Դժգոհությունները գրականության մեջ» (1919, թիվ 7, էջ 97-98) խմբագրականում Մերուժան Պարսամյանի կողմից արևմտահայ գրականության զարգացման վերաբերյալ արտահայտած կարծիքների հետ: Առաջինների կարծիքով «ճահճային լճացումին մէջ կը նեխի այսօր թրքահայ գրականութիւնը... Գրողներ ունինք, բայց՝ ո՛չ գրականութիւն» (1919, թիվ 2, էջ 17,19): Երկրորդներն էլ առաջիններին հակադարձում են, թե պետք չէ ընկնել հոռետեսության գիրկը և մերժել եղած լավը: Ըստ Ե. Արմաքեշխանյանի՝ «հայկական ոսկեդարէն ասդին ազգային մատենագրութիւնը ոչ մէկ ատէն հասաւ այն ծաղկման, որպիսին՝ վերջին 20 տարուան մէջ: Ես չեմ ճանչնար ազգային աւելի կենդանի, հզօր, առողջ արուեստագիտական գրականութիւն մը, ինչպէս ան, որ յայտնուեցաւ 80-ական թուականներէն ասդին Թուրքիա...»: Օսմանյան Սահմանադրության վերահաստատումից առաջ ունեցանք և այսօր էլ ունենք գրականություն, որն ավելի քան երբևէ հուսադրիչ է, բավական արգավանդ և բազմազան, թեև ո՞վ է ասել, որ եղածն, առանց բացառության ընտիր ու անթերի է (1919, թիվ 3, էջ 33-34): «Շանթի» Գրքեր բաժնի պատասխանատու Սմբատ Դավթյանը ասվածին ավելացնում է իր լրացումը. «Սեր գրական ածուն փոքրիկ է, - աւելի փոքր է թիւը այն ընտրեալներուն, որոնք ձեռնհասօրէն գիտեն գրիչ շարժել և ճշմարտապէս գրական բարձր ոլորտի մը վրայ սաւառնիլ» (1919, թիվ 29, էջ 337): Հանդեսի խմբագիր Մ. Պարսամյանի մոտեցումը միանշանակ էր գրողների ստեղծագործությունները ընդունելու և հրատարակելու առումով: «Գրական կյանքը» խմբագրականում նա պարզորոշ արտահայտել է այդ դիրքորոշումը. «Շանթ կը հիւրընկալէ նորերու յաջող գրուածքները և կը քաջալերէ արժէքաւորները: Այս օրուան նորը, վաղուան հինը դառնալու կոչուած է, եթէ անոր չի պակսիր Աստուածային հոտը... Պէտք է խիստ ըլլանք անտաղանդներուն հանդէպ, և քաջալերենք այն ամէն նորերը, որոնք

վաղուան հայ գրականութեան աստղերը ըլլալու կոչուած են» (1919, թիվ 30, էջ 342): «Շանթ» խրախուսել է մասնավորապէս կին գրողներին, ասեմք՝ երիտասարդ բանաստեղծուհիներ Արաքսիային, Գոհարին և Սիրվարդ Մկրտչյանին: «Գոհարի քերթուածներու մեջ կը շեշտուի անխառն ու վիպական զգացութեան մը անկեղծութիւնը: Կին գրողներու շրջան մը կը բուրդենք. ո՞վ է որ յուզումով չի կարդար Ֆլօրա Անահիտի, Տիկ. Ջարուհի Յ. Պաիրիի ցնցող և ցաւագինօրէն տպաւորիչ գրուածքները... Մեր աշխարհիկ մտահոգութիւնները կը խոնարհին անոնց տառապանքին վսեմութեան առջեւ», - նշվում է հանդեսում (1919, թիվ 19, էջ 228): Տեղեկանում ենք նաև, որ գրասեր հասարակութեան կողմից բարձր գնահատականի են արժանանում «Շանթի» աշխատակցուհի Նարդիկ Դակոբյանի «ա՛յնքան նուրբ և գեղեցիկ քերթուածները» (նույն տեղում): Ընդ որում, «Շանթի» էջերում հանդես էին գալիս ոչ միայն արևմտահայ, այլև արևելահայ և օտարազգի գրողները իրենց ստեղծագործութիւններով: Դանդեսն անդրադառնում էր նաև Եղեռնից հետո օտար ափերում ապաստանած արևմտահայ գրողների գործերին: Օրինակ՝ էղվարդ Չոբուրյանի «Թրքահայ գրականութիւնը Կովկասի մեջ գաղթեն ետքը» վերլուծական հոդվածում (1919, թիվ 9-10, էջ 116-117) ամփոփ պատկերացում է տրվում հայրենիքից տեղահանված գրողների գրական ուղու մասին: Նա գրում է. «Հազիւ հրդեհներու բոցը մարած, հայ մտաւորականը գրիչը ձեռք առաւ օտար հորիզոններու տակ պատմելու Հայ Ցաւը, Հայ Տառապանքը, խորհելու դարձաններու մասին...» (նույն տեղում, էջ 116): Դեղինակը թվարկում է նաև նոր դեմքերին պոեզիայի և վիպասանութեան բնագավառում. Վարդան Պապիկյան, Լևոն Թյուրքունճյան, Վահան Թոթովենց, Ռաֆայել Ջարդարյան, Արաքսի Մովսիսյան, Ծերուն Թորգոմյան: Է. Թորգոմյանի կարծիքով «Լեռ-Կամսար՝ վանեցի երիտասարդ մը, իբրեւ երգիծաբան, առանց վարանելու կարելի է անուանել Յ. Պարոնեանի և Ե. Օտեանի յաջորդը»: Հոդվածագիրը ասելիքն ամփոփելով՝ եզրակացնում է, որ թեև գրական հունձքը քիչ է, սակայն ցույց է տալիս, թե հայ ժողովուրդն ընդունակ է ամենածանր հարվածներից դուրս գալ անդամահատված, բայց՝ միշտ կենսունակ: «Մեծ չէր այդ արդիւնքը, բայց արժանի՝ արձանագրուելու. որով-



հետև նոր բան մը ավելցուց մեր գրականութեան վրայ» (նույն տեղում, էջ 117):

«Շանթ» հանդէսը ոչ միայն անգամ մրցանակներով խրախուսում և իր էջերում տեղ էր տալիս երիտասարդ ու տաղանդավոր գրողներին, այլև փորձում էր աջակցել արևմտահայ նահատակ գրողների անտիպ երկերի ու նրանց արխիվային նյութերի հայթայթմանը: «Չայ հորիզոնեն» բաժնի պատասխանատու Շանթարգելը բարձրացնում է այդ կարևոր հարցը. «Ու՞ր մնացին հայ գրագետներուն անտիպ երկասիրութիւնները, ամբողջացած կամ կէս վիճակի մէջ: Յայտնի է որ ասիական վանտալականութիւնը չի խնայեց նաև անոնց, հեղինակներն ու մտաւորականները կոտորել է վերջ... Բազմաթիւ ձեռագիրներ ուտիկանութեան սնտուկներուն մէջ կը հանգչին, և կամ ոչնչացուեցան» (1919, թիվ 18, էջ 216): «Շանթը» տեղեկացնում է, որ այդ առումով գրականութեան կորուստը ճշտելու նպատակով բանասերներից մեկը ձեռնարկել է ուսումնասիրութիւն պատրաստել: Նրան օգնել ցանկացողները պետք է «Շանթի» խմբագրութեանը հաղորդեին հետևյալ հարցերի պատասխանները.

«ա. ի՞նչ ձեռագիրներ տարուեցան կամ խուզարկութեան վախի հետևանքով այրուեցան,

բ. անունները և եթէ կարելի է ամփոփ մէկ բովանդակութիւնը» (նույն տեղում):

Չրատարակութեան տարիներին իր բաժիններով ու խորագրերով, իր արժարժած թեմաներով ու խնդիրներով «Շանթը» կարողացել է դառնալ իրապես ժամանակի գրական-գեղարվեստական չափանիշներին համապատասխանող հանդես, որի համարները հրատարակվելուն պես սպառվել են, և որը բավարարել է ընթերցող հասարակայնութեան գեղագիտական պահանջները:

ЖУРНАЛ "ШАНТ", ИЗДАВАЕМЫЙ В КОНСТАНТИНОПОЛЕ  
В 1918-1919 гг.

РЕЗЮМЕ

Литературно-политический журнал „Шант“ (Константинополь, 1918-1919 гг.) уделял много внимания материалам о геноциде армян в Турции. В 1918-1919 гг. в „Шанте“, были изданы материалы и воспоминания очевидцев, явствующие о том, что геноцид армян был заранее запланирован. Журнал выступал в защиту прав армянской диаспоры в Турции.

„Шант“ своими публикациямы также пытался способствовать развитию армянской литературы.

АРМЯНСКАЯ ДИПЛОМАТИЯ В ИЮЛЕ-АВГУСТЕ 1919 г.  
ПАРИЖСКОЕ ПРОДОЛЖЕНИЕ ПОСЛЕ  
ВЕРСАЛЬСКОГО ДОГОВОРА

С отъездом главных персон из Парижа после подписания Версальского договора, в Лондоне стали ждать решения США по Армении и добиваться полного вытеснения Италии из Закавказья. Для Республики Армении вытеснение итальянцев было важным, потому что край оставался без внешнего надзора, а Западная Армения теряла военных партнеров. В Ереване же, британский уклон кабинета мешал искать другой помощи, или добывать оружие со складов Антанты в Болгарии; он мешал также прямому разговору с врагом, хотя в новых условиях переговоры были приемлемей, чем год назад. Учитывая новую ситуацию, 4 июля 1919 г. А. Агаронян и Погос Нубар послали шефу Форин оффиса А. Бальфуру меморандум о той неопределенности, в которой оставили беженцев и дело их репатриации. Они жаловались, что Еревану предлагали возвращать людей без охраны. Это было невозможным, а в РА потерпевших косили голод, эпидемии, бесприютность. Если эти люди не смогут обработать землю осенью, телеграфировали делегациям из МИДа, голод продолжится и в следующем году. Не могут ли имперские части, готовящиеся через месяц-два покинуть Закавказье, хотя бы сейчас сопроводить беженцев - спрашивали из Еревана. Республика была готова сотрудничать в военной сфере и создать жандармерию. Но, конечно, указывал кабинет РА и главы двух делегаций, уходящим требуется замена силами кого-либо иного Союзника<sup>1</sup>.

А.Бальфур направил эту записку своим военным. 8-го числа директор военной разведки В.Твейтс откликнулся в меморандуме "Репатриация армян," что идея вернуть 650 тыс. кавказских бе-

---

<sup>1</sup> Национальный архив Армении (далее: НАА), ф. 200, оп. 1, д. 353, ч. 1, л. 57-58.

женцев в Эрзерум, Ван и Битлис исходит от американцев. Они боятся, что не смогут обеспечить помощь на зимний период. Между тем, людям нечем обработать землю, и, в лучшем случае, они получают урожай весной 1920 г. Поэтому беженцам необходима внешняя опека, а проблемы распределения легче решать вблизи от Еревана. Ведь послав людей в далекие пункты, мы не доставим продовольствие в Эрзерум, Ван и Битлис. Дороги, связывающие их с Кавказом, зимой непроходимы. Значит остаются близкие к РА районы Алашкерта и Басена. где предлагалось разместить не более 20 тыс. человек. В. Твейтс добавил, что возможно стихийное движение беженцев, и до 300 тыс. человек пойдут через границу на свой страх и риск. Правительство Армении понимает, написал генерал, что людей не вернешь к их прежним очагам, и предлагает, чтобы они обосновались в ближайших, пустующих районах. Без конкретного плана и надзора, западные армяне станут легкой добычей турок и курдов. Поэтому В.Твейтс считал репатриацию преждевременной. Пусть лучше этим займутся американцы, и не раньше весны следующего года<sup>2</sup>.

Одновременно, англичане убеждали итальянцев, а 5 июля Верховный совет конференции направил в РА полковника В.Гаскеля, убрав из решения о его назначении фразу о признании республики де факто. Еще через день А.Бальфур оговорил, что ряд беженцев мог бы вернуться в Западную Армению, хотя их охрана была не под силу Англии<sup>3</sup>. В это время он получал с Босфора депеши о растущей силе националистов, а Мехмед VI жаловался на желание армян атаковать Эрзерум. Султанские жа-

---

<sup>2</sup> Great Britain Foreign Office Archives, Public Record Office, London, class 608 Peace Conference, 1919-1920; Correspondence /volume 79, file 342/1/9/document 14768 (далее: FO), как и ряд других, был любезно предоставлен мне академиком М.Нерсисяном; Hovannisian R., The Republic of Armenia. In 4 vols, Berkeley & Los Angeles, University of California Press, 1971-1996, vol. II, p.58-59.

<sup>3</sup> United States National Archives, Washington D.C., Record Group 59 Records of the Department of State, class. 763.72119/document 5839; Record Group 256 Records of the American Commission to Negotiate Peace, 184.00101/104 (далее: US NA, RG); Papers Relating to the Foreign Relations of the United States. 1919. The Paris Peace Conference. In 12 vols. Wash., US GPO, 1942-1947, vol.7, p.17-31 (далее: Papers Relating).

лобы дошли 12 июля до генерал-майоров А.Овсепяна, Д.Пирумяна и карсского губернатора С. Корганяна, которые объясняли на обвинения Дж.Кори, В.Бича, Дж.Плаудена, А.Роулинсона и А.Чарльза, что они обязаны защищать жителей и границы от курдских набегов и турецких регулярных частей. Требование разоружать армянское население, когда курдские вожди грозили перерезать горло каждого армянина, до которого смогут дотянуться, было нелепым.

С быстрым выводом британских частей, начались татарские мятежи и нападения от Олты до Нахичевана и пригородов Еревана. Дж.Плауден, Дж. Кори, Дж.Бриджес извещали Дж.Милна и дипломатов, что армян нужно "защищать, либо дать им средства для самозащиты." О серьезной угрозе говорил после встреч с армянскими дипломатами и член Британского комитета Армения, парламентарий А.Вильямс. В Ереване же А.Хатисян и Х.Араратян просили у англичан снаряжения на 30 тыс. человек. К тому моменту, у РА имелось 17 тыс. солдат. "Недостаток определенности в политике, как и заверений, что будут приняты меры по их защите, серьезно нарушили веру [армян] в способность и желание Союзников смягчить их положение." Но Дж.Милн не давал нужных приказов: власти Армении должны было защищать свою землю и население без иностранной поддержки<sup>4</sup>.

В те же дни, С.Гаф-Келторп писал с Босфора, что нельзя "откладывать вопрос до бесконечности." Отсрочка вредит армянам, хотя давать им выгодные, но неподкрепленные силой условия мира - значит создавать серьезную опасность. Отвечая на жалобы А. Агароняна от 23 июля и Погоса Нубара от 29-го числа, С. Гаф-Келторп признавал наличие угрозы. Он разделял мнение Дж.Милна о зловещей роли турецких офицеров и предлагал не

---

<sup>4</sup> FO 608/78-85, 342/1/6/16807; 347/1/6/18643; НАА ф.199, оп.1, д.12, ч.2, л.187; ф.200, оп.1, д. 35, л.187-188; ф.к.4033, оп.2, д.962, л.57; д.964А, л.63-64; Rhodes House Library, Anti-Slavery Papers; Mss British Empire s22/G506: British Armenia Committee, Minute Book, file 32: minutes of 17.07.1919, любезно предоставил Б. Дакомб из Лондонского открытого университета.

вести речей о новой обширной Армении, чтобы не распаять османских экстремистов<sup>5</sup>. При этом, А.Бальфур убеждал коллег, что турки должны знать пределы их потерь. А поскольку испытываемый ими страх мог привести к новой резне, он требовал не предпринимать против них активных действий<sup>6</sup>.

По Республике Армения в Париже заслушали жалобу на власти Грузии, прерывавшие железную дорогу на 5-7 дней, и бравшие за транзит половину прибывшего продовольствия. Экономический совет просил послать в Тифлис "угрожающую телеграмму, чтоб облегчить перевозку грузов в течении двух-трех месяцев." Конференция так и поступила: страны Антанты "старались ослабить в Армении узы голода и смерти." Они ожидали, что в Грузии назначат "нормальную плату" за перевозки. В продолжение, А.Хатисян заявил 24 июля Е.Гегечкори, что Армения станет опираться на решения Европы, поскольку "решение всех кавказских вопросов будет зависеть исключительно от утвердившихся там взглядов." Мнения же "руководящих кругов закавказских республик будут почти игнорированы"<sup>7</sup>.

26 июля в Париже возник разговор о признании краевых правительств де факто, но А.Бальфур возразил: "К несчастью, Союзные и Объединенные Державы не могут сделать все, чего им хотелось бы." Заявление могло "внушить ложные надежды"<sup>8</sup>. Дж. Керзон и военное министерство тоже было против независимости края. Через день А.Агаронян написал в Ереван об испытываемом им беспокойстве и о политических перспективах назначения

---

<sup>5</sup> Ibid., ф.к.4033, оп.2, д.1038, л.1; FO class 371 Political /vols. 4158-4159, docs.100500, 118411, 130723/file 521/index 44; FO 371/4189, 101503/3050/44; Documents on British Foreign Policy. 1919-1939. Ed. by E.L.Woodward and R.Butler. First Series. In 27 vols., Lnd., HMSO, 1947-1986, vol.1, p.31; vol.4, p.666-667, 704-705, 756-760 (далее: British Documents); Rawlinson A. Op.cit., p. 188-194, 199-215.

<sup>6</sup> US NA, RG 59, 763.72119/5839, 5944; RG 256, 180.03501/80; FO 371/3668, 98881, 107336/ 11067/58; British Documents, vol.1, p.84-87, 95-96, 106-109, 132-136, 870; vol.4, p.678-680.

<sup>7</sup> US NA, RG 59, 763.72119/5944, 5955; RG 256, 180.03501/27, 27/App.249; НАА, ф.200, оп.1, д. 290, ч.1, л.14-23; д.355, ч.1, л.56; ф.к.4033, оп.2, д.1030, л.5.

<sup>8</sup> Papers Relating, vol.11, p.620-623, 630-635.

В. Гаскеля. Он хотел верить, что работа В. Гаскеля станет шагом к реализации мандата, и что 10 тыс. английских солдат пока что останутся в Батуме. Так обещал военный министр У. Черчилль в его речи перед Палатой общин. А. Агаронян отмечал, что он ведет работу по четырем направлениям: 1) армия, 2) продовольствие, беженцы и сбор урожая, 3) Карс и Нахичеван, 4) угроза с турецкой стороны, включая военные перемещения в Эрзеруме<sup>9</sup>.

В Париж поступили также 3 телеграммы из Тифлиса о "хорошо подготовленном татарском наступлении" на РА с трех сторон. Первая депеша содержала оценки А. Хатисяна: без внешней защиты катастрофа могла "оказаться более ужасной, чем резня 1915 г." Вторая сообщала, что в Карабахе и Зангезуре татары "окупируют почти открытую снова территорию Российской Армении." Азербайджанскими бандами в Шаруре командовал турецкий полковник Халиль с 30 офицерами, а доведенные "почти до отчаяния" власти в Ереване отдали 23-го числа приказ о всеобщей мобилизации к самому началу уборки<sup>10</sup>. Делегация РА тоже направила обращения по карабахскому вопросу в адрес Конференции и британской делегации. Совместная нота А. Агароняна и Погоса Нубара была направлена и А.Бальфуру.

М. Варандян осадил МИД в Лондоне и вручил через А. Вильямса записку о Карабахе для У. Черчилля. В ней излагалась история карабахского конфликта и суть переговоров местного Совета с имперским командованием; содержался политический портрет навязывавшегося британцами губернатора и приводились факты агрессивной политики Азербайджана. Подобных фактов было достаточно, учитывая июньское нападение на Шуши и резню сел Пахлула, Гайбалишена, Кркжана и Джамилли. Известия о нападении дошли и до главы Американской администрации помощи в Париже Г. Гувера, и до Лондона. Подполковник С. Клаттербак провел бесполезное по сути расследование на месте, напра-

---

<sup>9</sup> НАА, ф.200, оп.1, д.290, ч.1, л.14-23.

<sup>10</sup> См. например сообщение английской миссии от 5 августа, заверенное генералом В.Бичем: д.357, ч.1, л. 40.

вив доклады в Форин оффис и военное ведомство<sup>11</sup>. Трудно сказать, стал ли этот шаг результатом действий А. Хатисяна и М. Варандяна, тем не менее, лондонский ответ представителю Республики базировался на специально проведенном расследовании.

Исходя из письма А. Агароняна от 30 июля, военный министр У. Черчилль отреагировал, что утверждение о передаче англичанами Карабаха Азербайджану "ни на чем не основано и совершенно неточно," ("grossly inaccurate," «լրիվորեն անճշտ է»), а генералитет успокаивал, что подобное состояние будет временным. Формально, англичане действительно не давали приказа о включении Карабаха - они лишь одобрили распоряжение бакинского кабинета о назначении туда и в Зангезур Х.Султанова. Обратим внимание: 1) пока данный эпизод освещается только армянскими источниками, аналогичные английские документы еще не найдены. 2) В Ереване не сомневались в точности агароняновского отчета: слова У.Черчилля приводятся также в письме из Еревана для Л.Евангуляна от 16 сентября 1919 г. И 3) при решении от 15 января назначить Х.Султанова в Карабах-Зангезур, Азербайджан и Грузия рассматривались как возможный британский протекторат. Губернаторство должно было снабжать английские войска в Баку продовольствием. А к 30 июля скорый уход имперских войск уже не вызывал сомнений. Но, даже в этих условиях, британцы сохранили преемственность их политики. Пока же, А. Агаронян и Нубар-паша подали записку о Карабахе А. Бальфуру, а его помощник Дж.Тилли без успеха успокаивал армян<sup>12</sup>. При этом, А.Агаронян заметил: генералы конечно выполняют приказы своего кабинета, и все же с ними нужно работать на месте, пото-

---

<sup>11</sup> Села были вырезаны 4-7 июня 1919 г., а 17-го числа М. Варандян встречался в Форин оффисе с помощником министра Дж.Тилли. В разговоре дипломат указал на "только что полученную" телеграмму с отчетом и упомянул несколько погибших английских солдат. Возможно, их было достаточно, чтобы об этом сказать, но значительно меньше, чем требовалось для защиты местного населения.

<sup>12</sup> НАА ф.200, оп.1, д.290, ч.1, л.24-28, 32-34; оп.2, д.62, л.1-2; ф.199, оп.1, д.222, л.2-5; ф.276, оп.1, д.101, л.80; Papers Relating, vol. 10, p. 532-533.



му что приказы их правительства в немалой степени учитывают те данные и донесения, которые приходят в Лондон от полевого командования.

Заменяя войска дипломатией, Британия направила 22 июля в Тифлис особую политическую миссию Дж.О.Уордропа. 2 и 4 августа заговорили о болгарских арсеналах в 181.300 ружей, 600 пулеметов, 900 пушек, 3,7 млн. снарядов и 217 млн. патронов, часть которых увезли в Салоники<sup>13</sup>. При этом Дж.Керзон, А.Бальфур, П. Стивенс из Батума, П. Кокс, А. Гаф-Келторп и Т. Холер с Босфора, отчасти Дж.Н.Кори из Тифлиса, предрекали РА мрачное будущее. А. Хатисян, телеграмму которого армянские делегаты получили в Париже 6 августа, разделял эти чувства. Он указывал, что Республике понадобится от 30 до 50 тыс. солдат. В обмен на оружие и снаряжение этого контингента, в Ереване соглашались нанять офицеров Союзников и поставить свою армию под их контроль. Одновременно А. Хатисян связывал свои главные надежды со США, потому что, с уходом британских солдат, роль европейцев представлялась ему исчерпанной.

Исполняя его инструкции, А. Агаронян дал телеграммы Д. Ллойд Джорджу, Палате общин, А. Гендерсону, Дж. Макдональду, обратился к Р. Ванситарту, А. Вильямсу, А. Милнеру; отослал депеши В.Вильсону и Ф.Нитти, Ж. Клемансо и вместе с Г. Корганяном провел встречу с Э.Венизелосом. Посланец Еревана подробно описывал положение дел и размещение турецких дивизий на границе, призывал вернуть англичан, и назвал несчастьем полный паралич дипломатии в Париже, наступивший "благодаря столкновению взаимных интересов наихудшего империалистического толка." Причем в письме А.Хатисяна к Ж.Клемансо не только осуждалась подрывная деятельность Баку по организации мятежей в Армении, но и отмечалось его сотрудничество с кемалистами. Благодаря своему генштабу, А. Хатисян располагал неоспоримыми фактами по первому пункту обвинения. Что касается

---

<sup>13</sup> US NA, RG 59, 763.72119/6227, 6274; RG 256, 180.03501/15, 22-25, 122/App.D.

второго аспекта, то речь шла о прямом нарушении Мудросского перемирия, так как регулярные турецкие части были обнаружены под Сарикамышем.

Отвечая премьеру, А. Агаронян принимал угрозу татарских мятежей и призывал отказаться от Олты и Ардагана, поскольку подполковник А.Роулинсон был недоволен действовавшей там армянской армией. А. Агаронян верно заметил, что англичане отнимали у Армении ее естественную часть - Карабах, стараясь заменить его на требовавшую столько сил Карсскую область. С другой стороны, его призыв отказаться от Ардагана с Олты показывал, что, без внешней помощи, его государство не могло утвердиться даже на границе 1914 г., не говоря уже о районах Западной Армении<sup>14</sup>.

Даже руководитель Форин оффиса боялся резни, возможной блокады, большевистской пропаганды, нового голода и беженцев. "Я целиком поддерживаю политику ухода, - писал А.Бальфур. - ...Но... не хочу дожидаться дня, когда скажут, что ...британцы ввергли армян в резню, умышленно отозвав свои части." Можно подождать до 30 сентября, но если Америка ничего не сделает - англичанам придется "начать эвакуацию с 15 августа." В свою очередь, Дж.Керзон приводил слова начальника генштаба Г. Уилсона, что у того остались лишь индийские батальоны, а ими "вряд ли благоразумно или желательно осуществлять оккупацию." Большую часть имущества и арсеналов уже вывезли, причем генерал "ни минуты не верил" в приход США. В похожем письме, Т. Холер известил о "старой внушительной резне" в На-

---

<sup>14</sup> НАА ф.200, оп.1, д.193, ч.7-8, л.551-557Б; д.290, ч.1, л. 32-35; д. 355, ч.1, л.15-16; The Sir Winston Churchill Archive Trust, Churchill Archives Centre, Churchill College, Cambridge, UK, CHAR 16/19/10-11 (далее: CHAR); Լեօ, Թիւրքահայ յեղափոխութեան զաղափարարանութիւնը, 2 հատորով, հ. Բ, Փարիզ, Պահրի, 1935, էջ 215-216; Խատիայան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, 2-րդ հրատ.: Բեյրութ, Համազգային, 1968, էջ 184; Ավետյան Ս., Հայ ազատագրական ազգային հիանանյա (1870-1920) հուշամատյան և զոր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 228-229; Գալոյան Գ., Պատմության քառուղիներում, Ազատագրված ժողովրդի վերածնունդը, Ե., 1982, էջ 263:

хичеване, куда Дж. Милн "естественно и правильно отказывался" посылать войска. Дж. Плауден, с французом А. Пуадебаром, американцами С. Форбсом и К. Ашером, провел там бесполезные и унижительные переговоры с Кербалай Али-ханом; и после ареста имел все основания доложить, что край полон турецкими солдатами и офицерами. Местные татары получили хорошую подготовку и руководство; они просто рвались в бой.

11 августа английское неверие в участие США усилили американский посол Дж. Девис и Э. Хауз - 12-го лондонский кабинет постановил не менять своего решения. Итоговым можно считать долгий разговор Д. Ллойд Джорджа с Дж. Бриджесом, состоявшийся 30 августа. На призывы не прекращать оккупацию РА и войну с большевиками, премьер-министр отверг будущую значимость США, Франции и Лиги Наций. Сохранять прежнюю линию невозможно - услышал генерал. Уступкой стало лишь сохранение до июля 1920 г. войск в Батуме, что не охраняло "армян от возможной резни в Карабахе и Нахичеване." Не помогли и просьбы Е.Гегечкори, Д.Гамбашидзе. В обмен на гарантии независимости края и защиты черноморского берега, Англии предлагали концессии, уголь и базы, брались содержать ее войска за счет местных правительств. Такой план одобряли генералы на местах и в Константинополе, но в Лондоне не брались за его осуществление<sup>15</sup>.

На заседании Парижской конференции от 11 августа, А.

---

<sup>15</sup> США не могут оплатить нашего присутствия, а их Конгресс скорее всего откажет. И я уже объяснял всю ситуацию "столь полно, что нет необходимости повторять все заново," - написал в конце августа 1919 г. Дж. Керзон. FO 371/3659-3668, 115267, 120555/512/58; 97179, 102622, 103146, 123404/1015/58; 113402, 118562, 119686, 122311, 123467/11067/58; FO 371/ 3865, 118250, 122403/150/34; FO 608/78, 342/1/6/18167, 22674; US NA, RG 59, 860J.01/96; US NA, RG 256, 181.9102/9; "New York Herald." NY, 9.08.1919; HAA ф.200, оп.1, д.35, л.187-191; д. 290, ч.1, л.31; оп.2, д.62, л.1-2; ф.276, оп.1, д.101, л.80; ф.к.4033, оп.2, д.964, т.П, л.154-156; д. 1047, л.1-6; ф.к. 4047, оп.1, д.489, л.8; British Documents, vol.3, p.482-484; vol.4, p.716-717, 729-730, 734; Papers Relating, vol.11, p.632-635; Riddell G., Intimate Diary of the Peace Conference and After. 1918-1923. Lnd., V.Gollancz, 1933, p.118; Rawlinson A., Adventures in the Near East 1918-1922. NY, Dodd, Mead and Co, 1924, p.222; Darwin J., Britain, Egypt and the Near East. Imperial Policy in the Aftermath of War. 1918-1922. Lnd., Macmillan, 1981, p.171; Махмурян Г., Лига Наций, Армянский вопрос и Республика Армения. Е., 1999, с. 37-39.

Бальфур напомнил, что Д. Ллойд Джордж дважды предупреждал о неизбежности ухода имперской армии. Политикам было ясно, что Италия или США не вмешаются. В итоге, заключил Ж. Клемансо, останется наблюдать, "останется ли что-нибудь от армян"<sup>16</sup>. В эти дни премьер-министр Британии занимался пересмотром османских границ, стараясь получить доллары для содержания его кавказских частей. Когда это не удалось, в его курсе появилось два аспекта. Можно утверждать, что сохранение Малой Азии помогало Турции принять потерю армянских земель. Именно это произошло в Севре. Однако Д. Ллойд Джордж не был игнорирующим силу теоретиком, и его шаги конечно помогали кемалистам. С августа 1919 г. его курс постоянно редактировался. В пользу Турции. Это заметил В. Кардашян из Американского комитета за независимость Армении, призвавший прекратить раскол Армянского вопроса на две отдельные программы. Затем к нему присоединился и Погос Нубар.

15-16 августа 1919 г. картину дополнил меморандум У. Черчилля "Опасность для Армении." В него вошли телеграмма А. Агароняна и мнение А. Вильямса, что лучше направить иных Союзников, чем вооружать армянскую армию. Правда вооружение не исключалось, и в Лондон пригласили А. Озаняна. 23 августа тот изложил военному министерству его взгляды на возможности самообороны. Андраник говорил в русле тех подходов, которые излагали А. Хатисян и А. Агаронян. Его отношение к делу было решительным, и вскоре, после отчетов Погосу Нубару и консультаций народного генерала с А.Багратуни, делегация РА попыталась заменить его на Г. Корганяна. Британская сторона не проявила равного интереса к новой кандидатуре, и вопрос об оружии заты-

---

<sup>16</sup> US NA, RG 59, 763.72119/6401; FO 371/3659, 121298/512/58; FO 608/78, 342/1/2/20367; HAA ф. 200, оп. 1, д. 353, ч. 1, л. 14,16; British Documents, vol. 1, p. 389-391; Dugdale B., Arthur James Balfour. In 2 vols. NY, G.P.Putnam's Sons, 1937, vol. 2, p. 212-213; Nassibian A., Britain and the Armenian Question. 1915-1923. Lnd., Croom Helm, 1984, p. 162-166.

нулся".

В эти же дни, из Константинополя шли жалобы Дж. Керзону, что угрозы американцев в адрес Порты могли привести к полному распаду Османской империи. Между тем, Эрзерумский конгресс кемалистов решил "сопротивляться всеми средствами оккупации любой части Турции греками, итальянцами или французами." Р.Вебб не указал в этом списке армян, но добавил, что он против британского мандата. 19-го числа он возразил и против включения в Армению Трапезундского и Эрзерумского вилайетов, не желая и создания курдского государства. Ведь выделявшиеся тому Ван и Муш "всегда являлись единственными преимущественно армянскими районами в Турецкой Армении. ...Это было бы воспринято как предательство армянских интересов, прямо противоречащее заверениям" Союзников.

Он назвал невозможным "восстанавливать власть над всеми 6 вилайетами," считая "преждевременным и крайне опасным" определять границы Армении. 22-го числа Р. Вебб написал о готовности кемалистов воевать со всеми странами, кроме Англии и США, если последние примут мандат на всю Турцию. 25 августа адмирал указал на парализующее воздействие столь долгого состояния "ни войны - ни мира"<sup>17</sup>. На заседании Мирной конференции от 25 августа ее председатель подтвердил сложившееся положение. Резня армян, - дополнил Т.Титтони, - это неизбежное следствие задержки с турецким договором. После его подписания армянам лучше не будет, - обронил Ж.Клемансо. Глав Великих Держав уведомляли и о смертельном голоде в Республике Арме-

<sup>17</sup> CHAR 16/19/9-11; 16/24/132-133; см.: "Вестник общественных наук" НАН, 2007, N 2, с.102-111.

<sup>18</sup> FO 371/3659, 120555, 121318/512/58; FO 371/3667, 122311/11067/58; FO 371/4158, 120189, 124460/521/44; FO 371/4192, 118084, 130271/3050/44A; НАА, ф. 200, оп.1, д. 35, л. 201-211; д. 353, ч. 2, л. 85-85А; ф.к.4033, оп. 2, д. 962, л.121-122; д. 964А, л. 105-106; The Parliamentary Debates. Official Report. House of Commons, 5th series, 18.08.1919, vol. 109, col. 2016; British Documents, vol. 4, p. 736; Саакян Р., Франко-турецкие отношения и Киликия в 1918-1923 гг., Е., 1986, с. 28-32; Gidney J.B., A Mandate for Armenia. Kent, Ohio, The Kent State University, 1967, p. 192-196.

нии, а 28-го числа А. Хатисян направил председателю Конференции специальное заявление, протестуя против временного соглашения, навязанного Карабаху 6 днями ранее. А. Хатисян указывал, что из 488 тыс. населения края, 355 тыс. составляли армяне. Писал о нападениях и блокаде края, длившейся с апреля месяца. Напомина о вскормленных из Баку мятежах в Шаруре и Нахичеване. Поэтому правительство Армении передавало проблему на арбитраж Мирной конференции<sup>19</sup>.

Откликаясь на его запрос, 29 августа в Париже заслушали вопрос об ужасном голоде и тяжелейшем положении Республики Армении, где вплоть до середины лета не было запасов пищи хотя бы на 10 дней<sup>20</sup>. Все признали, что 2 млн. жизней находились в опасности, потому что РА не хватало оружия и сил для организации самообороны. Тем не менее, совет британской армии не решил оставить Еревану часть вывозимых боеприпасов, чтобы не "усугублять" положения. Там не хотели вызывать зависть Грузии и Азербайджана - лучше создать два небольших государства из РА и в Киликии.

Общее положение не смягчило и соглашение Н. Усуббекова-В. Гаскеля о нейтральной зоне в Нахичеване от 29 августа. Там ситуация не улучшилась. А на западе республики, 30 августа - 2

---

<sup>19</sup> НАА, ф. 200, оп.1, д. 50, л. 121-124, 153-155; Нагорный Карабах в 1918-1923 гг., Сб. док. и матер. под ред. В. Микаеляна, Е., 1992, с. 332-334.

<sup>20</sup> British Documents, vol.1, p.371-373, 383-384; НАА ф.57, оп.5, д.194, л.1-4А; д.196, л.1-7А; ф. 200, оп.1, д.35, л.131-137, 148-151А; д.193, ч.5, л.402; оп.2, д.31, л.1-17; д.51, л.1-9; FO 371/5088, 3472/27/44; US NA, RG 59, 763.72119/5944/App.C; RG 256, 180.03501/27, 27/App. 249; Tableau approximatif des réparations; Confiscation des Biens des Réfugiés Arméniens par le Gouvernement Turc. Paris, Comité Central des Réfugiés Arméniens, 1929; Burnett Ph.M., Reparations at the Paris Peace Conference: From the Standpoint of the American Delegation. 2 vols. NY, 1940, vol.2, p.583-590; Baghdjian K., La Confiscation par le Gouvernement Turc des Biens Arméniens... Dits Abandonnés. Montréal, 1987, p. 261-269; Toriguan Sh., The Armenian Question and International Law, 2d ed. La Verne, California, ULV Press, 1988, p. 85-96; Marshlian L., The Armenian Question from Sèvres to Lausanne, Economics and Morality in American and British Policies 1920-1923. PhD dissertation. Los Angeles, UCLA, 1992, p.509-510; Dadrian V.N., The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, Providence, Oxford, Berghahn Books, 1995, p.222-225, 232-233.

сентября тоже шли упорные бои. Ее войска обезопасили Кагызван и отбросили противника. Как отмечали начальник штаба военного министерства А.К.Шнеур и губернатор Карса С. Корганян, бесчинствовавшие банды имели пушки и пулеметы, но без турецкой армии их можно было одолеть. По оценке А.К.Шнеура, лишь одна бригада Союзников могла нормализовать ситуацию в Армении<sup>21</sup>.

Проблема же заключалась в том, что к августу британские политики и военные уверенно заявляли, что никакой замены их войскам не будет. И вся трагическая ирония ситуации состояла в том, что опекавшая Армению британская сила отнимала у Республики Карабах, а ее власти и дипломаты вынуждены были просить имперские части остаться, потому что без них, или другой внешней охраны, становилось еще, значительно хуже.

**ԳԱՅԱՆԵ ՄԱԽՍՈՒԹՅԱՆ  
ԴԴ ԳԱՍ ՊԻ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 1919 թ. ՀՈՒԼԻԱ-ՕԳՈՍՏՈՍ  
ԱՄԻՍՆԵՐԻՆ: ՓԱՐԻՁՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՎԵՐՍԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԳՅԵՏՈՒ**

### **ԱՄՓՈՓՈՒՄ**

1919 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Փարիզում գործող հայ դիվանագետները՝ Ա.Ահարոնյանի ձևակերպմամբ, զբաղվում էին 1) բանակի, 2) մթերման, գաղթականների և բերքահավաքի, 3) Կարսի, Նախիջևանի և 4) թուրքական վտանգի հետ առնչվող հարցերով: Իրականում, այս կետերին ավելացան 5) Ղարաբաղի, 6) Հայաստանից բրիտանական զորքի հեռանալու և 7) նրան որևէ այլ Ղազնակցի ռազմուժով փոխարինելու, 8) Օլթիից մինչև Նախիջևան ծավալված խռովությունների և 9) գաղթականների հատկապես տուներարժի հնարավորության խնդիրներ:

Վերոհիշյալ ժամանակամիջոցում Ա.Ահարոյանն ու Պողոս Նուբա-

<sup>21</sup> FO 608/78, 342/1/6/22674; HAA ֆ. 199, օպ. 1, Գ. 222, Լ. 11-12; ֆ. 200, օպ. 1, Գ. 2, Կ. 5, Լ. 387-387A; Գ. 556, Կ. 2, Լ. 112-117; ֆ.Կ. 4033, օպ. 2, Գ. 964, Լ. 42-45; Գ.1047, Լ.1-6.

ըը կազմել են Ա.Բալֆուրին ներկայացված հուլիսի 4-ի հուշագիր գաղթականների մասին, հուլիսի 23-ին ու 29-ին Կ.Պոլսում Բրիտանիայի Գերագույն կոմիսար Ս.Գափ-Քելթորպին հասցեագրած բողոքներ, հուլիսի 28-ի և 30-ի, օգոստոսի 6-ի թվակիր Ա.Նատիսյանին հղած հաշվետվություններ: Նրանք ղեկավարվում էին ՀՀ միլիտոր-նախագահի հուլիսի վերջին ու հատկապես օգոստոսի 6-ին ստացած հեռագրերով Հանրապետությունը Ռաշնակիցների ուժերով պաշտպանելու կամ այն զինելու և հայկական բանակը մինչև 30 հազար շատացնելու անհրաժեշտության մասին, նրա օգոստոսի 28-ին Վեհաժողովին կատարված դիմումով, Ղարաբաղի պատկանելությունը միջազգային իրավարարությամբ որոշելու մասին: Երևանից եկած կարգադրությունների համաձայն, Հայաստանի և Ազգային պատվիրակության ներկայացուցիչները դիմումներ էին ուղղում Ժ.Կլեմանսոին, Վ.Վիլսոնին, Ֆ.Նիտտիին, ինչպես և աշտանք էին տանում Է.Վենիգելուսի, Ա.Բալֆուրի, Ու.Չերչիլի, Ջ.Թիլլիի, Ա.Վիլյամսի հետ: Հայ պատվիրակների գործունեությունը որոշ չափով արտացոլվել է Հաղադրության վեհաժողովի օգոստոսի 8-ի, 11-ի և 25-ի նիստերում, հուլիսի 8-ի Վ.Թվեյտսի «Հայերի տունդարձը» և օգոստոսի 15-16-ի Ու.Չերչիլի «Վտանգ Հայաստանի համար» հուշագրերում, նույն ամսի 23-ին Ա. Օզանյանի բրիտանական ռազմական նախարարություն այցելության ու Հայաստանի ինքնապաշտպանության հնարավորությունների շուրջ զրույցի կազմակերպման փաստում:



ԻՆՉՈՒՐ ԳԱԼՈՒՍ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՏԵՂԱԿԱՅՎԵՑ ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅՈՒՄ

1956 թ. Լիսաբոնում (Պորտուգալիա) հայ մեծահարուստ նավթարդյունաբերող Գալուստ Սարգսի Կյուլպենկյանի (1869-1955) կտակի համաձայն ստեղծվեց բարեգործական հաստատություն, որը գործում է առ այսօր և կրում է հիմնադրի անունը (Calouste Gulbenkian Foundation)<sup>1</sup>: Հիմնարկությունը, բացի կտակարարի՝ Իրաքի նավթային ընկերության (Iraq Petroleum Company) մեջ ունեցած շահութաբաժնից, ժառանգեց նաև արվեստի գործերի նրա հարուստ հավաքածուն<sup>2</sup>:

Գ. Կյուլպենկյանը ծնվել է 1869 թ. մարտի 23-ին՝ Կ. Պոլսում<sup>3</sup>: Բարձրագույն կրթությունն ստացել է Անգլիայի Օքսֆորդի համալսարանում՝ ձեռք բերելով ինժեներ-նավթագործի մասնագիտություն<sup>4</sup>: 1891 թ. հրատարակվել է նրա "La Transcaucasie et la Penin-sule d'Apcheron" («Անդրկովկասը և Ապչերոնյան թերակղզին») աշխատությունը, որից որոշ գլուխներ արտատպվել են "Revue des Deux Mondes" ֆրանսիական պարբերականում<sup>5</sup>:

1898 թ. Գ. Կյուլպենկյանը նշանակվել է Փարիզի և Լոնդոնի թուրքական դեսպանատների տնտեսական խորհրդական<sup>6</sup>, իսկ 1902 թ. ստացել բրիտանական քաղաքացիություն<sup>7</sup>: 1911-1912 թթ. հայ նավթ-

<sup>1</sup> Չամբերտեն Ա., Գալուստ Սարգիս Կիլպենկեան, Մարող եւ իր գործը, 1869-1999, Գալուստ Կիլպենկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Ծանոյութեան Բաժանմունք, Լիզպոն, 1999, էջ 50; Բալազյան Լ., Գալուստ Գյուլպենկյան, Ե., 2004, էջ 248; <http://www.gulbenkian.pt>; <http://www.gulbenkian.org.uk>; <http://www.gulbenkian-paris.org>.

<sup>2</sup> Չամբերտեն Ա., նշվ. աշխ., էջ 50; Բալազյան Լ., նշվ. աշխ., էջ 248; Azeredo de Perdigao Joze, Calouste Gulbenkian Foundation, Chairman's Report, 20<sup>th</sup> July 1955-31<sup>st</sup> December 1959, Lisbon, 1961, pp. 191-201. [http://www.gulbenkian.org/english/the\\_foundation.asp](http://www.gulbenkian.org/english/the_foundation.asp).

<sup>3</sup> [http://www.gulbenkian.org/english/the\\_family.asp](http://www.gulbenkian.org/english/the_family.asp); Չամբերտեն Ա., նշվ. աշխ., էջ 6:

<sup>4</sup> [http://www.gulbenkian.org/english/the\\_family.asp](http://www.gulbenkian.org/english/the_family.asp).

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում; Տես նաև Չամբերտեն Ա., նշվ. աշխ., էջ 10:

<sup>7</sup> Նույն տեղում:

արդյունաբերողը մասնակցել է Թուրքիայի նավթային ընկերության (Turkish Petroleum Company) հիմնադրման աշխատանքներին, որը հետագայում վերանվանվել է Իրաքի նավթային ընկերության: Գ. Կյուլպենկյանը հիշյալ ընկերության արժեթղթերի հինգ տոկոսի սեփականատերն էր, որի պատճառով էլ աշխարհը նրան ճանաչեց որպես Պարոն հինգ տոկոսի<sup>8</sup>:

1942-ին Գ. Կյուլպենկյանը Ֆրանսիայից տեղափոխվել է Պորտուգալիա, որտեղ էլ ապրել է իր կյանքի մայրամուտը: Վախճանվել է Լիսաբոնում 1955 թ. հուլիսի 20-ին՝ 86 տարեկան հասակում<sup>9</sup>: Նրա աճյունը հրկիզվել է Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքում, իսկ սափորամանն՝ ամփոփվել իր իսկ նախաձեռնությամբ և միջոցներով Լոնդոնում կառուցված Ս. Սարգիս եկեղեցում<sup>10</sup>:

Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հիմնադրման օրվանից անցել է ավելի քան կես դար: Հարց է ծագում՝ ի՞նչ գիտի հայ ընթերցողն այդ հաստատության և անցած հիսուն տարիների ընթացքում սփյուռքահայ, օտար մամուլում, ինչպես նաև տարբեր հեղինակների լույս ընծայած աշխատություններում (օտարալեզու, թե հայերեն) կատարված այն բազմաթիվ ու բազմաբնույթ հարցադրումների, հնչած հակասական և հաճախ իրարամերժ կարծիքների մասին, որոնք, մասնավորապես, վերաբերում էին Գ. Կյուլպենկյանի կտակի մեկնաբանումներին, խնդրո առարկա հիմնարկության տեղակայման վայրին ու գործունեությանը<sup>11</sup>:

<sup>8</sup> Չամբերտեն Ա., նշվ. աշխ., էջ 22; Hewins R., Mr. Five Per Cent, The Story of Calouste Gulbenkian, Rinehart & Company, INC., New York, 1958, pp. 255-258.

<sup>9</sup> [http://www.gulbenkian.org/english/the\\_family.asp](http://www.gulbenkian.org/english/the_family.asp).

<sup>10</sup> Gulbenkian Nubar, Portrait in oil, The autobiography of Nubar Gulbenkian, Simon and Schuster, Inc., New York, 1965, p. 262; «Ազատ օր» օրաթերթ, թիւ 3158, Աթենք, 25 յուլիս 1955:

<sup>11</sup> Չամբերտեն Ա., նշվ. աշխ.; Ղալլաքյան Կ., Գալուստ Կյուլպենկյան Հիմնարկությունը (Կեսդարյա հոբելյանի առթիվ), ՊԲՀ, 2007, N 3; Բալազյան Լ., նշվ. աշխ.; Hewins R., նշվ. աշխ.; Gulbenkian N., նշվ. աշխ.; Lodwick John, An Interpretation of Calouste Sarkis Gulbenkian, In Collaboration with D.H. Young, London, 1958; «Արև» օրաթերթ, թիւ 11.198-11.217, 13 հոկտեմբեր - 4 նոյեմբեր, 1955, թիւ 11.219-11.222, 7-10 նոյեմբեր, 1955, թիւ 12.506, 27 յունուար, 1960, Կահիրե; «Ազատ օր», թիւ 7335, 15 ապրիլ 1969, թիւ 7553, 5 յունուար 1970, թիւ 7555, 8 յունուար 1970; «Ազդակ» օրաթերթ, թիւ 72 (7572), 23 մայիս 1957, թիւ 95 (7902), 29 յունիս 1958, թիւ 112 (7917), 20 յուլիս 1958, Բեյրութ և այլն:

Հարցերից, ամենակարևորը սակայն, որը շարունակում է հնչել մինչ օրս և որին հարկ է անդրադառնալ, այն է, թե ինչու՞ Գ. Կյուլպենկյանի հիմնած միջազգային նշանակության բարեսիրական հաստատության, որը ժառանգել էր նաև իր հիմնադրի նյութական կարողությունների գերակշիռ մասը, ղեկավար կենտրոնը տեղակայվեց Լիսաբոնում. այն դեպքում, երբ ինքը բրիտանահպատակ հայ էր<sup>12</sup>, կյանքի մեծագույն մասն անց էր կացրել Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում, իսկ իր նավթային եկամուտներն ստանում էր Իրաքում գտնվող նավթահորերից<sup>13</sup>:

Կարլեն Դալլաքյանը հիշյալ հարցի պատասխանը տեսնում է Գ. Կյուլպենկյանի՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահի պաշտոնից, որը վարել էր 1930-1932 թթ., հրաժարվելու փաստի մեջ: Ըստ նրա. «...Կ. Կիւլպէնկեանի հրաժարականը իրոք կարող էր հանգել «միջազգային ֆինանսի մեջ ունեցած բարձր դիրքի ու իր գանձի» տէր մարդու ինքնամեկուսացմանը հայ կյանքից: Տարաբախտաբար այդպես էլ եղավ»<sup>14</sup>: Այնուհետև հեղինակը շարունակում է. «...Արդյոք ուրիշ բացատրություն ունի՞ այն փաստը, որ նավթաշխարհի խոշորագույն արքաներից մեկի առասպելական հարստությունը, որն այսօր իսկ մասամբ շարունակում է շահույթներ բերել, գրեթե ամբողջովին ի սպաս է դրված Պորտուգալիայի ժողովրդի բարօրությանը, որի համար Գալուշտը (իրենց արտասանությամբ) պաշտամունքի առարկա է: Իր անվամբ ստեղծված միջազգային հիմնադրամը օժանդակում է տարբեր ազգերի, այդ թվում եւ հայերի՝ Սփյուռքում թե Հայաստանում, որոշ կարիքները հոգալուն, բայց սրա առյուծի բաժինը ծառայում է Պորտուգալիայի մշակութային, կրթական, գիտական, առողջապահական գործին, որի համար երկրի կառավարությունը ուրիշ աղբյուր և միջոցներ գրեթե չունի»<sup>15</sup>:

Ընդունելի է, անշուշտ, խնդրի վերաբերյալ գիտնականի արտահայտած տեսակետը, սակայն պետք է նշել, որ հեռանալով ԶԲԸ Միութ-

<sup>12</sup> Չամբերտեն Ա., նշվ. աշխ., էջ 10; Hewins R., նշվ. աշխ., էջ 89:

<sup>13</sup> [http://www.gulbenkian.org/english/five\\_per\\_cent.asp](http://www.gulbenkian.org/english/five_per_cent.asp).

<sup>14</sup> Դալլաքյան Կ., Զ.Բ.Ը.Միության նախագահ Գ. Կյուլպենկյանի հրաժարականի հարցի շուրջ, Ե., 1996, էջ 18:

<sup>15</sup> Նույն տեղում:

յան նախագահությունից, Գ. Կյուլպենկյանը չկտրվեց հայ իրականությանը: Ավելին, Հայաստանի առաջին հանրապետության վարչապետ նշանավոր քաղաքական գործիչ Ս. Վրացյանը վկայում է, որ Գ. Կյուլպենկյանը հայ իրականության հետ սերտորեն շփվել սկսել էր ոչ թե Բարեգործականի նախագահ լինելու հանգամանքի բերումով և ժամանակ, այլ շատ ավելի շուտ: Ս. Վրացյանը մասնավորապես գրում էր. «Գալուստ Կիւլպենկեանի շուրջ խօսքեր կ'ըլլային դեռ Հայաստանի մէջ, Հանրապետութեան շրջանին: Մեր Փարիզի պատուիրակութեան նախագահ Ավ. Ահարոնեանի տեղեկագրութիւններուն մէջ, զանազան առիթներով, կը յիշուէր անոր անունը: Երբ Փարիզէն Հայաստան եկաւ Համօ Օհանջանեանը, իմացանք, որ Կիւլպենկեան մօտէն հետաքրքրուած է Հայաստանի գոռօժոժով՝ սեռտ յառաքեռութիւն աահելով Հ.Հ. ատուհոակութեան հետ (ընդգծումն իմն է - Վ.Ղ.): Յայտնի եղաւ նաեւ, որ Կիւլպենկեանը պատրաստակամութիւն է յայտնած ստանձնելու Հայաստանի պետական դրամատան կազմակերպութիւնը՝ կարելոր գումար մը դնելով իր կողմէն, իբրեւ հիմնադրամ եւ գործակցութեան հրաւիրելով նաեւ ուրիշ հարուստ Հայեր: Եթէ չեմ սխալիր, Հ.Հ. պատուիրակութեան թուղթերուն մէջ պահուած է եւ այդ դրամատան նախագիծը: Յամենայն դէպս, լաւ կը յիշեմ Ա. Խատիսեանի մէկ զեկուցումը կառավարական միստերէն մէկուն մէջ պետական դրամատան մասին՝ Գալուստ Կիւլպենկեանի ծարգրի առնչութեամբ: Եւ կը հաւատամ, որ եթէ Հայաստանի Հանրապետութիւնը տեսէր, Գ. Կիւլպենկեանի անունը պիտի կապուէր անոր հետ ամուր կապերով»<sup>16</sup>:

Բարեգործականից հեռանալը, Հայաստանի Կոմկուսի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի վիրավորական ճառն իր հասցեին<sup>17</sup>, ժամանակակիցների՝ ՀԲԸ Միությունից չափից ավելի պահանջները ճնշող ազդեցություն գործեցին Գ. Կյուլպենկյանի վրա, սակայն իր հարստության ժառանգորդ բարեգործական հաստատությունը Պորտուգալիայում տեղակայելն ուներ այլ՝ ավելի հիմնավորված դրդապատճառներ ու նախապատմություն:

<sup>16</sup> «Ազատ օր», թիւ 3186, 27 օգոստոս 1955:

<sup>17</sup> «Խորհրդային Հայաստան», N 243 (3116), Ե., 15.10.1931:

Բարդ հաշվարկների կամ վերլուծությունների կարիք չկա, որպեսզի հասկանալի դառնա, թե Գ. Կյուլպենկյանը, որ իր հեքիաթային հարստությունը կուտակել էր տարիների քրտնաջան աշխատանքով՝ հաճախ մեն-մենակ ճակատելով հզոր տերությունների կառավարություններին, նվազագույն ցանկություն անգամ չէր ունենա փոշիացնել կամ թողնել այն անորոշ իրավիճակում: Իսկ որ նման վտանգ գոյություն ուներ նրա կյանքի վերջնամասում պարզ երևում է դեպքերի զարգացումներից. ֆինանսական հարցերում որդուն համարում էր անլուրջ, և դա միանգամայն բավարար հիմք էր՝ չվստահելու նրան իր առեւելի կարողությունը, մոլեգնում էր երկրորդ համաշխարհային պատերազմը, Մեծ Բրիտանիայի կառավարությունը նավթային մագնատին հայտարարել էր «տեխնիկական թշնամի» (“Enemy Under The Act”) և այլն<sup>18</sup>: Տրամաբանական է կարծել, որ Գ. Կյուլպենկյանն, այս ամենն ի նկատի ունենալով էլ, մտադրվել էր իր հարստությունը թողնել ապահով ծեռքերում: Հարցերից ամենակարևորն այս պարագայում նպատակահարմար երկրի ընտրությունն էր, որն ի վիճակի կլիներ պահպանելու իրեն վստահված նյութական հսկայական կարողությունը: Հայաստանը, որպես այդպիսին, դուրս էր նրա հաշվարկներից, որի պատճառներն առավել, քան համոզիչ էին:

Նախ, Հայաստանը փաստացի հանդիսանում էր Խորհրդային Միության մի մասը, որտեղ սոցիալիստական կառավարությունը, համեմայն դեպս արտաքնապես, չէր ընդունի «կապիտալիստ» հայի ժառանգությունը: Իսկ համասփյուռքյան բարեգործական կառույց ստեղծելը գրեթե անհնարին գործ էր՝ կապված հայկական համայնքների՝ աշխարհի գրեթե բոլոր անկյուններում՝ ցրված լինելու հանգամանքի հետ: Բեյրութի «Ազդակ» թերթն այդ առիթով գրում էր. «Հայ Կրեսոսը (Գ. Կյուլպենկյանը - Վ.Դ.) իր մահեն աւելի քան քառորդ դար առաջ կը մտածէր մշակութային մնայուն հաստատութիւնով մը օժտել սփիւռքի Հայութիւնը: Այդ առթիւ խօսակցութիւններ ունեցեր էր Հայաստանի Հանրապետութեան նախկին վարչապետ ողբացեալ Ալեքսանդր Խատիսեանի և Զ.Զ. Պատուիրակութեան նախագահ Աւետիս Ահարոնեանի հետ, որոնք

<sup>18</sup> Hewins R., նշվ. աշխ., էջ 219; Բալագյան Լ., նշվ. աշխ., էջ 236:

ծրագիր մըն ալ ներկայացուցեր էին իրեն: Սակայն ծրագիրը մնացեր էր մեռեալ տառ»<sup>19</sup>:

Կար նաև մեկ ուրիշ, յուրաքանչյուր՝ անասելի հարստության տեր մարդու համար մեծ կարևորություն ներկայացնող խնդիր: Ի՞նչ հարկեր և ի՞նչ չափով ու ձևով էին դրանք խորհրդային Չայաստանում գանձվելու գործարքներից ու ժառանգությունն ստանալուց հետո: Խորհրդային վարչակազմի պարագայում 1950-ական թթ. այս հարցերի պատասխանները մնում էին անորոշ, իսկ դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ Չայաստանի իշխանությունները պատրաստ և ի վիճակի չէին պահպանելու «իրենց նվիրված» նյութական կարողությունները: Նախադեպե՞ր. բնականաբար եղել էին: Իրադարձություններ, որոնք Գ. Կյուլպենկյանին, նույնիսկ եթե նա իր հարստությունը Չայաստանին թողնելու հաստատական որոշում կայացրած լիներ, հետ կպահեին այդ մտադրությունից:

1936 թ. հունվարին Չայաստանի ժողովմխորհի նախագահ Ա. Գուլոյանը Վ. Սալեզյանից ստացավ մի նամակ, որով կառավարությանը տեղյակ էր պահվում Գ. Կյուլպենկյանի մտադրության մասին՝ Երևանի պետական համալսարանին նվիրաբերելու Կ. Պոլսում գտնվող իր գույքն ու հողատարածքները: Այդ առիթով բարերարը երկու անգամ հանդիպել է Թուրքիայում ԽՍՀՄ դեսպան Լևոն Կարախանին<sup>20</sup>: Ինքնին հասկանալի է, որ այս նվիրատվությունը մի կողմից Գ. Կյուլպենկյանի՝ հայ իրականությունից կտրված չլինելու ապացույց էր, իսկ մյուս կողմից նրա անսպասելի հայտնվելը տալու էր հետևյալ հարցի պատասխանը՝ ցանկանում կամ, որ ամենաեականն է, ի վիճակի՞ էին խորհրդային Միության և Չայաստանի պետական պաշտոնյաներն ընդունելու և պահպանելու հայ մեծահարուստի ունեցվածքն ու կարողության մի մասը, որն, ի դեպ, այդ տարիներին գնահատվում էր «...մի քանի հարյուր հազար ֆունտ ստեռլինգ»-ով<sup>21</sup>: Ցավով պետք է արձանագրենք, որ ոչ:

<sup>19</sup> «Ազդակ», թիւ 142 (8963), 21 օգոստոս 1961:

<sup>20</sup> Մելքոնյան Էդ., Չայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը խորհրդրդային Չայաստանում 1923-1937 թթ., Ե., 1999, էջ 109-110; Ստեփանյանց Ստ., Չայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Ե., 1994, էջ 201; ՉԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 518, ք. 5-6; «Արեւ», թիւ 11.212, 29 հոկտեմբեր 1955:

<sup>21</sup> Ստեփանյանց Ստ., նշվ. աշխ., էջ 201:

Շուտով Լևոն Կարախանը հայտարարվեց ժողովրդի թշնամի և գնդակահարվեց: Խորհրդային ժողովուրդների թշնամու պիտակը փակցվեց նաև Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ա. Գուլոյանի ճակատին, որը 1937 թ. օգոստոսի 19-ին ԽԱՀՄ արտաքին գործերի ժողկոմ Լիտվինովին գրած նամակում խնդրում էր միջոցներ ձեռք առնել Գ. Կյուլպենկյանի ունեցվածքը ստանալու համար<sup>22</sup>:

Խորհրդային Միությանում և Հայաստանում այդ տարիներին մոլեգնող ստալինյան բռնությունների ալիքը ստիպեց խնդրի լուծման մեջ ներգրավված շահագրգիռ անձանց ու պաշտոնյաներին մոռանալու Գ. Կյուլպենկյանի նվիրատվության մասին մինչև 1946 թ., իսկ ստեղծված անորոշ իրավիճակից փորձեց օգտվել Թուրքիան՝ ցանկանալով առգրավել իր երբեմնի հպատակի ունեցվածքը<sup>23</sup>:

1946 թ. խնդրի կարգավորման համար Վաշինգտոնում ԽԱՀՄ դեսպանությանը դիմեցին Լևոն Կերտանը և Վահան Մալեգյանը: ԱՄՆ-ում ԽԱՀՄ-ի դեսպան Ն. Նովիկովն իր հերթին դիմեց ԽԱՀՄ արտաքին գործերի նախարարությանը, սակայն բոլոր փորձերն անցան ապարդյուն<sup>24</sup>:

1947 թ. տեղի ունեցավ ևս մեկ իրադարձություն, որից հետո Գ. Կյուլպենկյանը վերջնականապես համոզվեց, որ Հայաստանում գոյություն չունեն որչ քարենպաստ քաղաքական մթնոլորտ և ոչ էլ նպատակահարմար օրենսդրական դաշտ՝ կատարված նվիրատվություններն ընդունելու համար. ավելորդ էր դառնում խոսել մի ողջ կարողություն Հայաստանին կտակելու մասին:

Խնդիրն այս անգամ 150.000 ԱՄՆ դոլարի նվիրատվությունն էր, որը հայ բարերարը Մայր տաճարի վերանորոգման նպատակով պատրաստվում էր կատարել էջմիածնի Կաթողիկոսությանը: Գ. Կյուլպենկյանը ցանկանում էր, որպեսզի ծախսված գումարների մասին կառավարության և այլ պատասխանատու մարմինների կողմից իրեն ներկայացվի մանրամասն հաշվետվություն և այդ նպատակով ՀԲԸ Միության մի-

<sup>22</sup> Նույն տեղում: Տես նաև Մելքոնյան եր., նշվ. աշխ., էջ 110-115; Антирелигиозник, 1930 г., N 4, с. 10.

<sup>23</sup> Ստեփանյանց Ստ., նշվ. աշխ., էջ 202: Տես նաև ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 10, թ. 70:

<sup>24</sup> Նույն տեղում:

ջոցով առաջարկեց Հայաստանի կառավարությանն իր հետ կնքել պայմանագիր: Առաջարկը մերժվեց: Հայաստանի նախարարների խորհուրդը հայտնում էր ՀԲԸ Միության ներկայացուցիչ Ա. Գարակյոզյանին, թե կառավարությունը չի կարող պայմանագրեր կնքել անհատների հետ, իսկ «...տաճարի վերանորոգման համար կառավարության կողմից պայմանագիր ստորագրելը կնշանակեր Հայ եկեղեցու սուվերեն իրավունքներու խախտում»<sup>25</sup>:

Մերժումից հետո կարելի էր միանգամայն իրավացի համարել Գ. Կյուլպենկյանին, որը Գևորգ Զ կաթողիկոսին հասցեագրված իր նամակում նշում էր. «...Անձնապես, և ամեն ժամանակ, յոյժ բարեկամական յարաբերութիւններ ունեցած եմ պետական իշխանութեանց հետ (խորհրդային Հայաստանի - Վ.Ղ.), որով խորունկ է զարմանքս, տեսնելով, որ կը մերժեն ստորագրել երկուստեք ընդունուած համաձայնագիր մը, որ էապես բարեսիրական հանգամանք ունի: Այս կետը բնականաբար շուարումի և վարանումի մատնած է զիս, եւ առոճն սովորութիւն չունիմ քաւո մո առնելու գործան գործի մո լիակատար յաջողութիւնը եռաշխաւորուած չեմ տեսնել (ընդգծումն իմն է - Վ.Ղ.)»<sup>26</sup>:

Հարկ է ընդգծել, որ եթե նախքան այս իրադարձությունները կարող էին որոշ հույսեր փայփայվել մեծահարուստ հայի գրեթե ողջ կարողությունը Հայաստանում թողնելու առումով, ապա վերոհիշյալ նամակից հետո հարցը համարվեց փակված:

Հաջորդ երկիրը, որը կարող էր հավակնել ազգությամբ հայ բրիտանահպատակի ժառանգությանը, Մեծ Բրիտանիան էր: Սակայն Անգլիայի կառավարության հետ Գ. Կյուլպենկյանի հարաբերությունները հեռու էին բավարար լինելուց: Մի առիթով Գ. Կյուլպենկյանն իր անձնական քարտուղարի՝ Դեյվիդ Յանգի այն պնդմանը, թե «...նմանապես այն (Անգլիան - Վ.Ղ.) Ձեր հայրենիքն է, պարոն...» պատասխանել է. «...դա, Յանգ, բոլորովին այլ խնդիր է»<sup>27</sup>:

<sup>25</sup> Նույն տեղում: Տես նաև Մելքոնյան եղ., նշվ. աշխ., էջ 116-117; ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 211, թ. 37:

<sup>26</sup> «Արևել», թիւ 11.220, 8 նոյեմբեր, 1955:

<sup>27</sup> Lodwick J., նշվ. աշխ., էջ 81.



«Քարյուղի Թալեյրանն»<sup>28</sup> իր ժամանակի մեծ մասն անց էր կացնում Ֆրանսիայում: Նույնիսկ այն բանից հետո, երբ գերմանացիները գրավեցին այդ երկրի զգալի մասը, նա չհեռացավ այդտեղից: Պարսկական դեսպանության խորհրդականի պաշտոնը Գ. Կյուլպենկյանին ապահովեց գերմանական վտանգից, սակայն Մեծ Բրիտանիայի կառավարությունը, պատճառաբանելով, որ իր քաղաքացին 1940 թ.-ից ի վեր շարունակում էր բնակվել գերմանացիների կողմից զավթված Ֆրանսիայում, նրան, ինչպես արդեն նշվեց, հայտարարեց իր «տեխնիկական թշնամին»<sup>29</sup>: Այդ կարգավիճակում էր նաև Ֆրանսիան, որից մեծապես տուժեց Ֆրանսիական նավթային ընկերությունը (*Compagnie Française des Pétroles*)<sup>30</sup>:

Անգլիացիներն իրենց այդ քայլով ոչ միայն ոտնահարեցին մոտ կես դար Մեծ Բրիտանիայի նավթային շահերին ժառայող մարդու ինքնասիրությունն ու պատիվը, այլև բռնագրավեցին նրա 5 տոկոս շահութաբաժինը: Գ. Կյուլպենկյանը չընդունեց այն կարծիքները, թե իբր բրիտանական կառավարությունն այդ մեթոդով փորձել է անուղղակի կերպով իրեն պաշտպանել գերմանացիներից և նրանց դրածո Պետեն Լավալի ճնշումներից<sup>31</sup>: Նա համոզված էր, որ Իրաքի նավթային ընկերության անգլո-հոլանդա-ամերիկյան խմբավորումն օգտագործել էր առիթը, ճնշում բանեցրել Մեծ Բրիտանիայի կառավարության վրա և ընկերությունից հեռացրել իրեն ու ֆրանսիացիներին: Ըստ Գ. Կյուլպենկյանի, նշված խմբավորումը գողանում էր իր և ֆրանսիական ընկերության նավթը, որն էլ ամերիկյան միջնորդի միջոցով ու սահմանած գներով, առանց իրենց համաձայնության, վաճառքի էր հանվում<sup>32</sup>:

Վիրավորված Անգլիայի կառավարությունից՝ Գ. Կյուլպենկյանը փոխեց իր նկարների հավաքածուն Մեծ Բրիտանիայի Ազգային պատկերասրահին ընդմիջտ թողնելու մտադրությունը և, չնայած 1943 թ. վերջերին անգլիական իշխանությունները վերականգնեցին իրենց հպատակի բարի համբավն ու անունը, բոլոր իրավունքները, իսկ փոքր-

<sup>28</sup> «Ազատ օր», թիվ 7553, 5 յունուար 1970:

<sup>29</sup> Բալազյան Լ., նշվ. աշխ., էջ 236: Տես նաև Hewins R., նշվ. աշխ., էջ 219:

<sup>30</sup> Hewins R., նշվ. աշխ., էջ 223:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 219-220:

<sup>32</sup> Նույն տեղում: Տես նաև Բալազյան Լ., նշվ. աշխ., էջ 236-237:

ինչ անց փոխհատուցեցին նաև այն նյութական վնասները, որ պատճառել էին նրան Մեծ Բրիտանիայի «թշնամի» հայտարարելու ժամանակ, այլևս ոտք չդրեց անգլիացիների հողին<sup>33</sup>:

Երբ Իրանը պատերազմ հայտարարեց Եռյակ Դաշինքին (1942 թ.), Գ. Կյուլպենկյանն ստիպված էր պարսկական դիվանագետների հետ հեռանալ Ֆրանսիայից<sup>34</sup>: Սկզբում նա մտադրվել էր հանգրվանել Շվեյցարիայում, սակայն այդ երկիրը շրջապատման մեջ էր և անապահով: Ժամանակավորապես Գ. Կյուլպենկյանը խարիսխ նետեց Լիսաբոնում, որտեղից ցանկանում էր մեկնել ԱՄՆ: Հարկ է ընդգծել, որ նախկինում նա երբեք չէր եղել Պորտուգալիայում և որոշ ժամանակ ապրելով այստեղ՝ կայացրեց նոր երկրում վերջնականապես հաստատվելու որոշում<sup>35</sup>:

Վերն արդեն նշվեց, որ Երկրորդ համաշխարհային պատերազմը, Ֆրանսիայի անձնատվությունը, Մեծ Բրիտանիայի կառավարության սխալ քաղաքականությունը Գ. Կյուլպենկյանի հանդեպ միանգամայն բավարար հիմքեր էին, որպեսզի նա իր ունեցվածքը չթողներ ոչ Ֆրանսիայում, և ոչ էլ Մեծ Բրիտանիայում: Այդ ամենին գումարվեց ևս մի հանգամանք, որն էլ ստիպեց հայ նավթարդյունաբերողին իր ընտրությունը կատարել հոգուտ Պորտուգալիայի: Խոսքն այս դեպքում խնդրո առարկա երկրում առկա հարկերի մասին է, որոնք անհամեմատ ցածր էին՝ ի մասնավորի «կտակի հարկի»: Անգլիայում և Ֆրանսիայում հիշյալ հարկը բավականին բարձր էր, որից էլ փորձում էր խուսափել կտակարարը:

Պորտուգալիայում բարեգործական հաստատություն հիմնելու առիթով Գ. Կյուլպենկյանի որդին հետևյալ կերպ է մեկնաբանել հոր ցանկությունը. «...Հայրս հակված էր հիմնարկության (բարեգործական հաստատության - Վ.Ղ.) գաղափարին, որի կենտրոնակայանը տեղակայվելու էր Պորտուգալիայում և որը գործելու էր պորտուգալական օրենսդրությանը համապատասխան, քանզի նա հավատում էր, որ այդ ճանապարհով իր հարստությունը կխուսափի հարկվելուց և այդ կերպ

<sup>33</sup> Hewins R., նշվ. աշխ., էջ 219-224:

<sup>34</sup> Լույն տեղում, էջ 220: Տես նաև Lodwick J., նշվ. աշխ., էջ 127:

<sup>35</sup> Hewins R., նշվ. աշխ., էջ 220:

այն կմնա ամբողջական հիմնարկության տնօրինման համար: Իհարկե նա սիրո և հարգանքի զգացմունք ուներ պորտուգալացիների հանդեպ՝ իրեն պատերազմի տարներին ընդունելու և մինչև իր կյանքի վերջը պահելու համար, սակայն պորտուգալական օրենսդրության հովանավորությամբ հիմնարկության ստեղծումը հիմնականում ֆինանսական նպատակահարմարության արդյունք էր»<sup>36</sup>: Եթե սրան էլ հավելենք այն փաստը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Պորտուգալիան հանդիսանում էր չեզոք և ապահով երկիր, ապա դժվար չէ եզրակացնել, թե ինչու Գ. Կյուլպենկյանն իր հիմնած բարեսիրական հաստատությունը տեղակայեց այդ երկրում՝ հիշյալ կառույցին կտակելով իր հիմնական միջոցները:

Նուբար Կյուլպենկյանին Պարոն հինգ տոկոսը չվստահեց իր կարողությունը: Նա գտնում էր, որ Նուբարը չի գիտակցում դրամի գինը և շատ վշտացած էր որդու փիլիսոփայությամբ՝ «...կյանքի իմաստն այն վայելելու մեջ է...»<sup>37</sup>, որն էլ, ըստ Գ. Կյուլպենկյանի, նշանակում էր դրամի անխնա վատնում<sup>38</sup>:

Իսկ պորտուգալացիներին մնում էր միայն արձանագրել կատարվածը. «...Կարելի չէ ուրանալ այն իրողութիւնը, որուն համաձայն մեր երկրին վստահուեցաւ այսքան մեծ և սքանչելի կտակի մը պահպանութեան գործը, հիմնարկութեան վարիչները մեծագոյն մասամբ փորթուկացիներ, վստահ ենք թէ պիտի պատուեն կատարելապէս իրենց յանձնուած այս վստահութիւնը, իրենց ճշգրիտ և ուղղամիտ գործունէութեամբ ի գործ դնելով կտակարարին կամքը... Ուրախութեամբ միայն կարելի է արձանագրել Գալուստ Կիւլպենկեանի նախածեռնութիւնը և նոյն իսկ կարելի է իբրև օրինակ ծառայեցնել, որովհետեւ ինք օտար մըն էր և մեր երկիրը սիրեց և մեր մէջ, պէտք է որ օրինակ ծառայէ շատ մը փորթուկացիներու, որոնք մեծամեծ հարստութեանց տէր են: Մեր ազգը, անշուշտ պիտի ծափահարէ որեւէ նմանօրինակ գործ, որ առանց

<sup>36</sup> Gulbenkian N., նշվ. աշխ., էջ 263:

<sup>37</sup> Hewins R., նշվ. աշխ., էջ 164:

<sup>38</sup> Նույն տեղում:

եսասիրութեան և քրիստոնէական ոգիով տոգորուած պիտի գար դիրացնելու կեանքը շատ մը անբախտ և աղքատ դասակարգերուն»<sup>39</sup>:

Հիմնարկութեան Պորտուգալիայում տեղակայումը, սակայն, չի նշանակում, թե այն այսօր ծառայում է միայն պորտուգալացիներին: Բավական է հիշել, որ բարեսիրական այդ կառույցի գործունեության քսան տարիների ընթացքում (առ 31.12.1976 թ.) հայկական համայնքներին հատկացված նպաստներն իրենց ծավալներով զիջել են միայն Պորտուգալիային արված հատկացումներին<sup>40</sup>:

Ամփոփելով շարադրանքը՝ տեղին է նշել, որ եթե զարմանում, հիանում ու հպարտանում ենք ցանկացած հայ անհատի արտակարգ մտավոր կարողություններով, դիրքով ու հայանպաստ գործունեությամբ, ապա պետք է արժանին հատուցել նաև Գ. Կյուլպենկյանին, որն իր հեռատեսության շնորհիվ կարողացավ քննություն բռնել ժամանակի հետ՝ ստեղծելով մինչ օրս գործող և համայն մարդկության առաջընթացին սատարող բարեգործական հաստատություն, որի հոգածությամբ են արժանանում նաև աշխարհասփյուռ հայությունն ու Հայաստանը:

*ВАГРАМ КАРАХАҢЯН  
ИИ НАН РА*

## ПОЧЕМУ УЧРЕЖДЕНИЕ ГАЛУСТ ГЮЛБЕНКЯН БЫЛО РАСПОЛОЖЕНО В ПОРТУГАЛИИ?

### РЕЗЮМЕ

В 1956 г. в Лиссабоне (Португалия) было основано благотворительное учреждение Г. Гюлбенкян, которое носит имя своего основателя и до сих пор продолжает свою деятельность во всем мире. Г. Гюлбенкян был армянином и гражданином Великобритании. Большую часть своей жизни он провел во Франции, получая свои прибыли от нефтяных скважин, расположенных на территории Ирака. Но учреждение Г. Гюлбенкян было расположено в Португалии. Этот факт объясняется тем, что

<sup>39</sup> «Արեւ», թիւ 12.506, 27 յունուար 1960:

<sup>40</sup> Calouste Gulbenkian Foundation, Report of the Accountancy Checking Commission, Relating to the Year 1976, Lisbon, 1977, pp. 4-22.

в годы Второй мировой войны, когда правительство Великобритании объявило Гюлбенкяна своим "техническим врагом", а Франция была оккупирована Германией, Гюлбенкян был вынужден искать для себя безопасное местожительство, которым стала нейтральная Португалия.

В 1942 г. по приглашению португальских властей Гюлбенкян переехал в Лиссабон. После войны английские власти восстановили доброе имя Г. Гюлбенкяна и возместили нанесенный ему материальный ущерб, но он не простил им и больше не вернулся в Англию.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ 1956-1990 թթ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐՔՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ  
(ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**

Հուշագրությունները դիտվում են պատմության խնդիրներին վերաբերող ոչ առաջնակարգ, բայց բավական կարևոր սկզբնաղբյուրներ: Այդ կարևորությունը կայանում է նրանում, որ դրանք լրացնում և ամբողջացնում են արխիվային սկզբնաղբյուրները և պարբերական մամուլի նյութերը՝ օգնելով լիարժեք կամ վերջնական եզրակացությունների հանգելու՝ պատմական որևէ ժամանակահատվածի վերաբերյալ: Մյուս կողմից էլ՝ հուշագրային սկզբնաղբյուրները շատ են օգնում տվյալ պատմական ժամանակահատվածի խնդիրների վերաբերյալ հայեցակարգային մոտեցումներ մշակելու համար: Ինչու՞ հուշագրությունները չեն դիտվում որպես առաջնային սկզբնաղբյուրներ: Ինչպես ընդունված է ասել, պատճառը մեկն է՝ դրանք չեն կարող զերծ լինել պատմական իրադարձությունների նկատմամբ սուբյեկտիվ մոտեցումներից: Սակայն, միթե՞ սուբյեկտիվիզմի բաժնեչափը բացակայում է արխիվային սկզբնաղբյուրներում կամ պարբերական մամուլում առհասարակ: Այս հարցին դրական պատասխան տալով, անշուշտ, կսխալվենք, քանզի պետք է ընդունենք մի պարզ ճշմարտություն՝ այդ կարգի սկզբնաղբյուրները, որոնք կարող են լինել որոշումներ, արձանագրություններ, նամակներ, հոդվածներ և այլն, նույնպես գրված են տարբեր անհատների կողմից և նույնպես շատ հարցերի վերաբերյալ ունեն սուբյեկտիվ մոտեցումներ: Ուստի, կարծում ենք, որ երեք տիպի սկզբնաղբյուրներն էլ հավասարաչափ կարևոր են և փոխադարձաբար մեկը մյուսին լրացնող: Պարզապես պետք է գտնել դրանց օգտագործման ընթացքում առաջնայինը երկրորդականից զատելու ճիշտ ձևը: Ընդհանրապես հուշագրությունները որպես սկզբնաղբյուրներ, կարելի է բաժանել հետևյալ տեսակների.

1. հուշագրություններ, որոնք իրենցից ներկայացնում են իրադարձությունների նկարագրություններ՝ առանց հեղինակի եզրակացությունների և տեսական ընդհանրացումների:

2. հուշագրություններ, որոնք դեպքերի նկարագրությունը իրականացնում են տեսական ընդհանրացումների գուժորդությամբ:

3. հուշագրություններ, որոնք ներկայացնում են հեղինակի հետ կապված իրադարձությունները և դրանք ներկայացնում են ընդհանուր պատմության ենթախորքի հիման վրա: Նման աշխատությունները որոշ առումով մոտենում են պատմագիտական ուսումնասիրություններին:

Հայաստանի 1956-1990 թթ. մշակութային կյանքի մասին հուշագրությունները հիմնականում վերաբերում են առաջին և երկրորդ խմբին և բավականին մեծաթիվ են:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանին վերաբերող հուշագրությունների մեծաթիվությունը չպետք է առաջացնի այն կարծիքը, որ նրանք անպայմանորեն անաչառ են, քանզի հաճախ գրված են ժամանակի Կոմկուսի առաջնորդների նկատմամբ որոշակի վերաբերմունքի հիմքով: Իսկ այդ վերաբերմունքը շատ դեպքերում ծայրահեղական է և համակված ղեկավար անձի դերի նկատմամբ կամ ժխտողականության կամ էլ գերազնահատության մարմաջով: Ուստի, դրանց օգտագործումը պահանջում է շատ նուրբ մոտեցում: Փորձենք գնահատել մեր կարծիքով այդ հուշագրություններից առավել կարևորները: Նախ և առաջ մենք ուզում ենք առանձնացնել Անտոն Քոչինյանին նվիրված հատորը<sup>1</sup>: Այն լույս է ընծայել Հայաստանի Ազգային արխիվը: Ընդորում, եթե այս հատորյակը ներառում է նաև փաստաթղթեր և նամակներ, ապա՝ մյուսը<sup>2</sup> միայն հուշեր:

Հուշերի հեղինակները նույնն են. Անտոն Քոչինյանի ժամանակակիցները: Հուշագիրների թվում են Սուրադ Սուրադյանը, Դիմիտրի Ադաբաշյանը, Սուրեն Օհանյանը, Վարագդատ Հարությունյանը, Վլադիմիր Ղալունյանը, Եղիշե Ասծատրյանը, Հրանտ Ոսկանյանը, Ալեքսան Կիրակոսյանը, Վլադիմիր Մովսիսյանը, Աուրեն Հարությունյանը և ուրիշներ, բոլորն էլ նրա հետ աշխատանքային գործունեությամբ

<sup>1</sup> Քոչինյան Ա., Փաստաթղթեր, նամակներ, հուշեր, Ե., 2003:

<sup>2</sup> Քոչինյան Ա., Հուշեր նրա մասին, Ե., 2003:

անընթաց անձնավորություններ են: Այս հատորյակին արժեք է տալիս այն, որ արխիվային սկզբնաղբյուրներին (փաստաթղթեր, նամակներ) զուգահեռ հրատարակված հուշերը կարծես թե հիմնավորում են դրանց իսկությունը: Նամակները, որոշումներն ու գրությունները՝ կապված մշակութային ոլորտի այս կամ այն բնագավառի հետ իրենց ստեղծման նախապատմությամբ են մեզ մատուցվում: Հատորում տեղ գտած հուշերը, ամրագրված փաստաթղթերով վկայում են, որ խորհրդային համակարգում, տվյալ պարագայում Ա. Քոչինյանը հաճախ անհաղթահարելի խոչընդոտներին ընդդեմ գնալով՝ նպաստում է մեր ազգային մշակութի զարգացմանը և հառնում է որպես հիրավի բացառիկ հայրենասեր մի կերպար: Արդյունքում նրա ղեկավարած շրջանում «ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» մշակութային արժեքներն այսօր ընկալվում են միայն ու միայն որպես ազգային: Սոցիալիզմի գաղափարախոսությունը փլուզվել է, իսկ նրա առկայությամբ մեծ ջանքերի գնով ստեղծված մշակութային այս կամ այն արժեքն այսօր մնում է որպես մեր ազգի կարևոր նվաճումներից մեկը: Հուշագրությունների ընթերցումը հանգեցնում է կարևոր եզրահանգման՝ Ա. Քոչինյանի համար բնորոշը ազգասիրությունն էր, ազգապահպանման ձգտումը, որը կարող է դառնալ շատ բարդ խնդիր մշակութային անկման պայմաններում: Թերևս կարելի է բերել մեկ-երկու օրինակներ: Վարազդատ Հարությունյանը իր հուշերում պատմում է վարչապետության շրջանում Ա. Քոչինյանի հետ մի հանդիպման մասին, որը վերաբերում էր հայոց եղեռնի զոհերի հիշատակին հուշարձան կառուցելու խնդրին: Ա. Քոչինյանն է, որ նպաստում է նախընտրելու հուշարձանի այն նախագիծը, որում «երկու բաղադրիչները՝ սուգն ու վերածնունդը մատուցված են ճարտարապետական պարզ ու մատչելի լեզվով»<sup>3</sup>: Արդյունքում, վեր է խոյանում Ծիծեռնակաբերդի ներկայիս համալիրը, «որը մերօրյա հայկական ճարտարապետության լավագույն ստեղծագործության շարքին դասվեց»<sup>4</sup>:

Ա. Քոչինյանի կառավարման շրջանում էր, ինչպես վկայում է մեկ ուրիշ հուշագիր՝ Վլադիմիր Ղալունյանը, որ ամենքիս աչքի առաջ մեկը մյուսի հետևից հառնում էին գիտության, կրթության, մշակութի,

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 88:

<sup>4</sup> Նույն տեղում:



ամողջապահության կենտրոններ, հանգստյան տներ ու բազում այլ կառույցներ<sup>5</sup>:

Նման վկայություններ կարելի է բերել նաև մյուս ժամանակակիրների հուշերից ևս, բայց մեր հոդվածի ծավալը նման հնարավորություն չի տալիս: Անկախ դրանից պետք է շեշտել, որ հիշյալ հատորյակը կարևոր սկզբնաղբյուր է հանդիսանում ինչպես մի բավական երկար ժամանակահատվածի՝ 1952-1974 թթ. պատմական իրադարձությունների, այդ թվում և մշակութային կյանքի ուսումնասիրման համար:

Չուշագրային ժանրի կարևոր սկզբնաղբյուր է Ֆադեյ Աարգսյանի աշխատությունը<sup>6</sup>: Վերջինս երկար ժամանակ հանդիսանալով Խորհրդային Չայաստանի Մինիստրների Խորհրդի նախագահը, իր հուշագրության մեջ ներկայացնում է իր ապրած բարդ և հակասական ժամանակահատվածի պատմությունը: Գրքի «Կյանքի դասեր» անվանումը բավական դիպուկ է, քանզի իսկապես ժամանակաշրջանը զարգանում էր բարդ և արգելքներով լի ճանապարհով: 1977-ից աշխատելով կառավարության ղեկավար (Կարեն Դեմիրճյանի կենտկոմի առաջին քարտուղար հանդիսանալու տարիներին)՝ Ֆ. Աարգսյանն իր հուշերում ներկայացնում է Չանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հիմնարար ուղղությունները: Բնականաբար, այնտեղ կարևորագույն տեղեկություններ կան նաև մշակութային կյանքի վերաբերյալ: Ֆ. Աարգսյանի գրքում հատկապես ավելի շատ են գիտության զարգացման մասին տեղեկությունները:

Հատկանշական են Ֆ. Աարգսյանի հետևյալ տողերը. «Ժողովրդական տնտեսության տարբեր ծյուղերի զարգացմանը զուգընթաց մենք առաջնահերթ կարևորություն էինք նվիրում կրթությանը և գիտությանը»<sup>7</sup>: Արժեքավոր են նրա տեղեկությունները Երևանի պետական համալսարանի ֆակուլտետների ընդլայնման, նրա գրադարանի վերակառուցման, հանրապետության տարբեր շրջաններում բուհերի մասնաճյուղերի ստեղծման, պոլիտեխնիկական ինստիտուտի նոր համալիրի կառուցման և այլ նվաճումների մասին: Այս աշխատանքները

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Աարգսյան Ֆ., Կյանքի դասերը, Ե., 2001:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 176:

շարունակվում էին ընդհուպ մինչև արցախյան շարժումը, որին հաջորդած իրադարձությունները կիսատ թողեցին համակարգի համալիր ծրագրի իրականացման գործը:

Հաջորդ հուշագրային սկզբնաղբյուրը Կառլեն Դալլաքյանի աշխատությունն է<sup>8</sup>: Գրքի «նախաբանի փոխարեն, կամ ինքս իմ մասին» ներածականում նա հետևյալն է գրում. «Մերժում են վատախոսությունները խորհրդային Հայաստանի նվաճումների վերաբերյալ: Հաստատում են, որ խորհրդային իշխանության տարիներին Հայաստանը դարձավ բարձր զարգացած տնտեսության, գիտության, կրթության և մշակույթի երկիր, ստեղծվեց բոլոր ուղղությունների կադրերի մի հզոր բանակ: Չեն առարկում, որ գաղափարախոսական պահանջները պարտադրվում էին հասարակական գիտություններին, մշակույթին, կրթական համակարգին: Բայց, առարկում են կտրականապես, թե իբր այդ պատճառով մենք չենք ունեցել պատմագիտություն, արվեստաբանություն, մշակույթի արժեքներ, բարձր զարգացած սերունդներ»<sup>9</sup>:

Ինչ վերաբերում է գաղափարական պարտադրանքներին, ապա դրանք շատ հաճախ կազմում էին ստեղծագործությունների ձևական կողմը, իսկ բուն բովանդակությունը (օրինակ, պատմագիտական շատ աշխատությունների, գեղարվեստական ստեղծագործությունների և այլն) հաճախ միանգամայն այլ ընկալումների տեղիք էր տալիս: Որպես կենտրոնի գաղափարախոսական հարցերի պատասխանատու՝ Կ. Դալլաքյանն ինքն էր գաղափարախոսական պարտադրանքների մեջ ազգային արժեքային հիմքերի պահպանելու ջատագովը, իսկ դա դյուրին խնդիր չէր, քանզի միշտ պատրաստ կանգնած էին «դաշնակցական» պիտակավորող կեղծ կոմունիստները:

Մեր ուսումնասիրած ժամանակահատվածի համար չափազանց կարևոր սկզբնաղբյուր է Ալեքսան Կիրակոսյանի հուշագրությունը<sup>10</sup>: Գիրքը հատկապես գնահատելի է նրանով, որ հեղինակը, որպես մշակավոր պետական-քաղաքական գործիչ ոչ միայն հանդես է գալիս

<sup>8</sup> Դալլաքյան Կ., Հուշապատում (դեմքեր, իրողություններ, մտորումներ), Ե., 1988:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 6:

<sup>10</sup> Կիրակոսյան Ա., Մայրամուտի շեմին, Ե., 2002:

սոսկ հուշագրի դերում, այլ իր ապրած ժամանակի պատմական իրադարձությունները նաև քննական-վերլուծականի ենթարկելով, կատարում է կարևոր տեսական ընդհանրացումներ: Կարելի է չհամաձայնել հեղինակի որոշ տեսակետների հետ, բայց չի կարելի չընդունել նրա այն եզրակացությունները, ըստ որոնց Խորհրդային շրջանում, մասնավորապես 1960-1980-ական թթ., Հայաստանը համակողմանի վերընթաց էր ապրում: Գնահատելի են Ալ. Կիրակոսյանի եզրակացությունները Ստալինի, Խրուշչևի և այլոց անձերի վերաբերյալ: Դրանք անաչառ են և հիմնավոր: Բայց կարևորն այն է, որ վերջիններիս էության ճիշտ ընկալումը բնութագրական չէ նրա դարձյալ հուշեր թողած այլ ժամանակակիցների համար (որոնց կանդրադառնանք): Որոշ գործիչների հուշերն այն տպավորությունն են հաճախ փորձում ներշնչել, որ Կրեմլում նստածները ոչ թե տոտալիտար համակարգի ջերմեռանդ պահապաններն էին, այլ՝ պարզ, մատչելի, մեծ (Ֆ. Սարգսյանն այդպես է կոչում Կոսիգինին) մարդիկ: Մինչդեռ Ալ. Կիրակոսյանի պարագային այդպես չէ: Նրա գիրքը համակողմանի է ներկայացնում բոլոր այն խոչընդոտները, որոնք գալիս էին Կրեմլից: Բազում են նյութերը Ալ. Կիրակոսյանի գործում մշակութային կյանքի վերաբերյալ: Հենց ինքն իր գրքում հանդես է գալիս մշակութի զարգացման ջատագով դեռևս Հոկտեմբերյանի շրջկոմի առաջին քարտուղար աշխատելու ժամանակներից (1957-1961): Այդ շրջանում է, որ քննության առարկա է դառնում Սարդարապատի ճակատամարտի հուշահամալիրի կառուցման խնդիրը: Նա է առաջարկում Հ. Թուրջյանին գրել Սարդարապատի ճակատամարտի պատմությունը, որը թերևս այսօր այն արժեքը չունի, բայց ժամանակին կարևոր քայլ էր մեր պատմության մի փակ հատվածը լուսաբանելու ճանապարհին: Ալ. Կիրակոսյանը կարևորագույն տեղեկություններ է հաղորդում գեղարվեստական գրականության, պատմագիտական աշխատությունների՝ մասնավորապես մեր ժողովրդի հետ կապված ողբերգական իրադարձությունների (1915 թ. ցեղասպանություն) մասին:

Ալ. Կիրակոսյանի աշխատության մեջ սակավ չեն տեղեկությունները նաև Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների մասին: Հատկապես հետաքրքիր են նրա հայրենադարձության խնդրով Իրան մեկնելու, Իտալիայում 1981 թ. սեպտեմբերին 25-ից հոկտեմբերի 1-ը տեղի

ունեցած հայկական արվեստի մասին միջազգային գիտաժողովին նվիրված հուշերը: Գնահատելի են նրա գիտաժողովում ունեցած ելույթի հետևյալ տողերը. «Հայ արվեստն ու մշակույթը հին ու հարուստ ավանդույթներ ունի, սակայն, ամեն մի ավանդույթ դառնում է մեռյալ և անօգուտ, եթե չի վերածնվում նոր ժամանակների լույսով և իր մասնակցությունը չի բերում տվյալ ժողովրդի արվեստի նոր առաջընթացին, կենսական նյութեր չի տալիս»<sup>11</sup>: Այս ընթացումով էին գործում Ալ. Կիրակոսյանը և իր շատ ժամանակակիցներ՝ նպաստելով հայ մշակույթի 1960-1980-ական թթ. զարգացմանը:

Ինչպես առհասարակ Խորհրդային Հայաստանի ցանկացած բնագավառի, այնպես էլ մշակութային կյանքի պատմության համար կարևոր սկզբնաղբյուր է Ստեփան Վարդանյանի աշխատությունը<sup>12</sup>: Ատ. Վարդանյանը վարել է կուսակցական բարձր պաշտոններ՝ Կալինինոյի կուսըջկոմի առաջին քարտուղար, ՀԿԿ կենտկոմի Գյուղբաժնի վարիչ, ՀԿԿ ԿԿ-ի կուսակցական մարմինների բաժնի վարիչ, կենտկոմի գաղափարախոսական բաժնի վարիչ, մինիստրների խորհրդին կից եկեղեցու գործերի գծով խորհրդի նախագահ և այլն: Նրա հիշողությունները գնահատելի սկզբնաղբյուրներ են մի քանի առումներով.

ա) ղեկավար աշխատանքներ կատարելով շրջաններում՝ նա կարևոր տեղեկություններ է հաղորդում այնտեղ իրականացվող մշակութային քաղաքականության մասին, ցույց է տալիս, որ շրջաններում ևս մշակույթն ու կրթությունը վերելք էին ապրում

բ) հանդիսանալով կենտկոմի գաղափարախոսական բաժնի վարիչ, որի իրավասության մեջ էր մտնում գիտության, գրականության, արվեստի և մշակույթի այլ ճյուղերի գաղափարախոսական վերահսկումը, նա կարևոր տեղեկություններ է հաղորդում մշակութային հիմնարկների, նրանց ղեկավարների գործունեության վերաբերյալ: Լինելով նաև բանաստեղծ, դրամատուրգ, արձակագիր՝ Ստ. Վարդանյանը հատկապես արժեքավոր տեղեկություններ է հաղորդում գրողների և թատերական գործիչների միությունների վերաբերյալ

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 163:

<sup>12</sup> Վարդանյան Ստ., Գրիգոր Հարությունյանից մինչև Կարեն Դեմիրճյան, Ե., 2003:

զ) լինելով եկեղեցու գործերի գծով խորհրդի նախագահ՝ նա անհնչություններ է ունեցել հայ սփյուռքի հետ, ուստի և տեղեկություններ է հաղորդում Հայրենիք-Սփյուռք մշակութային անհնչությունների մասին: Հարկավ կարելի է վիճարկել նրա որոշ հայեցակարգային մոտեցումները կապված մասնավորապես Ստալինի անձի գնահատականի հետ, բայց դա ամենևին չի խոչընդոտում նրա աշխատության, որպես խորհրդահայ կյանքի մի բավական երկար ժամանակահատվածի վերաբերյալ ունեցող սկզբնաղբյուրային նշանակությունը:

Մեզ հետաքրքրող ժամանակշրջանի հայ մշակութային կյանքի պատմության վերաբերյալ կարևոր տեղեկություններ կարելի է քաղել նաև Միեր Մելքոնյանի գրքից<sup>13</sup>: Նրա հուշերը սկզբնաղբյուրային նշանակություն ունեն երեք առումով.

ա) ինֆորմացիա են հաղորդում Հայաստանի տարբեր շրջաններում մշակութային կյանքին վերաբերող իրադարձությունների մասին

բ) գիտության զարգացման վերաբերյալ, քանզի աշխատել է որպես կենտրոնի քարտուղար և երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի ռեկտոր:

Քանի որ Մ. Մելքոնյանը մասնագիտությամբ գյուղատնտես էր, նրա հուշերն ավելի շատ վերաբերում են գյուղատնտեսական խնդիրներին: Սիսիանի շրջկոմի առաջին քարտուղար եղած ժամանակ նա անդրադառնում է այնտեղ տեղի ունեցած մշակութային իրադարձություններին: Իսկ գիտական նվաճումների վերաբերյալ նրա տեղեկություններն ավելի շատ վերաբերում են բնագիտության ոլորտին: Մ. Մելքոնյանի հուշերը կարելի է դասել ավելի շատ նկարագրական բնույթի հուշագրային սկզբնաղբյուրների դասին:

Հայաստանի շրջաններում մշակութային կյանքի, ինչպես նաև առանձին գործիչների վերաբերյալ սկզբնաղբյուրներ են Յուրի Ճշմարիտյանի հուշերը<sup>14</sup>: Նա աշխատել է Ստեփանավանի շրջանում նախ՝ որպես թերթի խմբագիր, ՀԼԿԵՄ քարտուղար, ապա՝ շրջկոմի առաջին քարտուղար: Գիրքը իրենից ներկայացնում է ոչ միայն սոսկ հուշագրություն, այլ ներառում է նաև օրագրային գրառումներ, ելույթներ, դի-

<sup>13</sup> Մելքոնյան Մ., Հուշեր, մտորումներ, Ե., 1997:

<sup>14</sup> Ճշմարիտյան Յ., կյանքին դեմ առ դեմ, Ե., 2003:

մանկարների կերտման փորձեր: Նա ներկայացնում է կրթադաստիարակչական և մշակութային խնդիրների զարգացման ընթացքն այդ շրջանը ղեկավարելու տարիներին, տեղեկություններ է հաղորդում մշակութային հիմնարկների մասին: Արժեքավոր են նաև նրա տեղեկությունները Արուս Ասրյանի, Յակով Խաչիկյանի, Սոս Սարգսյանի, Անահիտ Սահինյանի, Վիկտոր Բալայանի, Չրաջա Ղափլանյանի, Վիկտոր Չամբարձումյանի մշակութային և գիտական գործունեությունների մասին:

Սյուս հուշագրային սկզբնաղբյուրը, որն ուզում ենք առանձնացնել եղիշե Ասծատրյանի աշխատությունն է<sup>15</sup>: Վերջինիս գիրքը հատկանշական է երկու տեսանկյունից: Նա ներկայացնում է.

ա) իր գործունեությունը Հայաստանում սկսած 1947թ.-ից և դրա ընթացքում եղած ձեռքբերումները

բ) իր հետ աշխատած պետական գործիչներին, մասնավորապես՝ Գեորգի Հարությունյանին, Աուրեն Թովմասյանին, Յակով Ջարոբյանին, Անտոն Քոչինյանին, Կարեն Դեմիրճյանին:

Թեպետ նա եղել է հիմնականում տնտեսական ոլորտի աշխատող և պատասխանատու (եղել է կենտկոմի քարտուղար, կուսակցական-պետական վերահսկողության կոմիտեի նախագահ, Ժողովրդական վերահսկողության կոմիտեի նախագահ և այլն), բայց և այնպես այնտեղ առկա են տեղեկություններ նաև մեզ հետաքրքրող ոլորտի վերաբերյալ, մասնավորապես գրքի այն բաժիններում, երբ նա անդրադառնում է ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարների գործունեությանը:

Ե. Ասծատրյանի հուշերը առավել կարևոր սկզբնաղբյուր են երկրի տնտեսական և արդյունաբերական խնդիրների զարգացման ուսումնասիրությամբ զբաղվող պատմաբանների համար: Դրանք հատկապես կարևոր են Խորհրդային Միության քաղաքական դիմագիծը ճիշտ ընկալելու և բարդ քաղաքական ոլորտում գործունեության հնարավորությունները ճշմարտացի գնահատելու տեսանկյունից: Իսկ ցանկացած, այդ թվում և մշակութային ոլորտի զարգացումը բխում է քաղաքական համակարգի էությունից:

<sup>15</sup> Ասծատրյան Ե., XX դար, Հայաստանի կառուցման ճանապարհին, հուշեր, գիրք առաջին, Ե., 2004:

Որպես հուշագրային սկզբնաղբյուր չի կարելի անտեսել Սարգիս Խաչատրյանի աշխատությունը<sup>16</sup>: Նա ևս վարել է կուսակցական պաշտոններ (կուսերջկոմի քարտուղար, ԴԿԿ կենտկոմի պատասխանատու կազմակերպիչ, ԴԿԿ Դրագրանի շրջկոմի առաջին քարտուղար, ԴԿԿ կենտկոմի կուսակցական հանձնաժողովի, ապա՝ կուսակցական վերահսկողության հանձնաժողովի նախագահ): Ս. Խաչատրյանն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում 1950-1980-ական թթ. Հայաստանի խորհրդային կյանքի գրեթե բոլոր բնագավառների վերաբերյալ: Շատ իրադարձությունների նրա նկարագրությանը հաճախ հետևում են տեսական ընդհանրացումներ, որոնց նկատմամբ կարող են լինել տարբեր գնահատականներ: Հատկապես հետաքրքիր են նրա հուշերի «Ամբողջատիրական պետություն և վերահսկողություն» բաժինը, որն ընթերցելիս համոզվում ենք մեկ անգամ ևս, թե որքան բարդ էր և դժվարին գործել սովորաբար կան համակարգի պայմաններում: Հուշերից կարելի է տեղեկություններ քաղել թե՛ առանձին շրջաններում (օրինակ՝ Դրագրանում) և թե՛ ամբողջ հանրապետությունում տեղի ունեցած մշակութային վերելքի մասին: Տեղեկություններ կան գիտության և տեխնիկայի նվաճումների, մշակութային օջախների կառուցման մասին: Բայց Ս. Խաչատրյանն իր հուշերում շատ հաճախ անաչառ չէ, հատկապես Ա. Քոչինյանի և Կ. Դեմիրճյանի կյանքի ու գործի նկատմամբ նրա մտեցումներում:

Եվ վերջապես, այս սերնդի հուշագիրներից ցանկանում ենք առանձնացնել Միքայել Մինասյանի գործը<sup>17</sup>: Աշխատությունը ոչ միայն սոսկ հուշագրություն է, այլ ինչպես հեղինակն է նշում՝ «Սոցիալ-բարոյագիտական, քաղաքագիտական-իրապարախոսական մտորումներ հուշագրական և սոցիոլոգիական նյութի հիման վրա»: Սրանում է կայանում այս հուշագրության առանձնահատկությունը: Այն չափազանց գնահատելի է խորհրդային Հայաստանի մշակութային կյանքի, նրա նշանավոր գործիչների վերաբերյալ տեղեկությունների և նրանց տրված գնահատականների տեսանկյունից: Հեղինակը հետաքրքիր

<sup>16</sup> Խաչատրյան Ս., Դավանանքին հավատարիմ, Ե., 2006:

<sup>17</sup> Մինասյան Ս., Ժամանակը, մարդը և նրա գործը, Ե., 2002:

տեղեկություններ է ներկայացնում Վիկտոր Համբարձումյանի, Գրիգոր Ղափանցյանի, Երվանդ Քոչարի, Դերենիկ Դեմիրճյանի, Ա. Ալիխանյանի, Սերգեյ Մերգելյանի, Ֆ. Մոմջյանի, Ավետիք Իսահակյանի, Հրաչյա Քոչարի և հայ արվեստի բազում այլ նվիրյալների մասին: Եվ ամենակարևորը, նա ի մի է բերում և զնահատում նրանց գործունեությունը: Գրքի մյուս արժանիքն էլ կայանում է նրանում, որ այնտեղ ներկայացվում են հայ մշակույթի և գիտության, ճարտարապետության և այլ բնագավառներում կարևոր դերակատարում ունեցած գործիչների՝ Ա. Քոչինյանի, Ալ. Կիրակոսյանի, Գր. Հասրաթյանի աշխատանքները:

Մշակույթի և մասնավորապես ճարտարապետության բնագավառի հայ մեծերից Վարազդատ Հարությունյանի հուշերը<sup>18</sup> ևս բացառիկ սկզբնաղբյուր են հանդիսանում հայ մշակութային կյանքի պատմության ուսումնասիրության համար: Ինչո՞վ են դրանք արժեքավոր.

1. Ապրելով բավականին երկար կյանք՝ Վ. Հարությունյանն ականատես է եղել մշակութային զարթոնքի գրեթե ողջ ընթացքին, որը տեղի է ունեցել Խորհրդային Հայաստանում:

2. Անմիջական շփման մեջ է եղել հայ գիտության և մշակութային կյանքի գրեթե բոլոր ներկայացուցիչների հետ, ականատես է եղել նրանց գործունեությանը:

3. Անձամբ լինելով մշակույթի նվիրյալ՝ անվանի ճարտարապետ, հանդես է եկել որպես հայ մշակույթի կերտողներից մեկը:

Այսպիսով, վերոհիշյալ աշխատություններն են այն հիմնական հուշագրային բնույթի սկզբնաղբյուրները, որոնք հարկ համարեցինք ներկայացնել՝ հաշվի առնելով վերջիններիս նշանակությունը՝ 1956-1990 թթ. հայ մշակութային կյանքի զարգացման ընթացքը առավել ամբողջականացված ներկայացնելու տեսանկյունից: ԽՄԿԿ կենտկոմի գաղափարախոսական պարտադրանքը ամենևին չկարողացավ մեզ զրկել ազգային արժեքների հիմքով նոր մշակույթի արարման հնարավորությունից: Սա է ամենակարևոր եզրակացությունը այս հուշագրություններից:

<sup>18</sup> Հարությունյան Վ., Անմոռաց հանդիպումներ, հուշագրություններ, Ե., 1988:



**ИСТОЧНИКОВЕДЕНИЕ ИСТОРИИ КУЛЬТУРНОЙ ЖИЗНИ  
АРМЕНИИ 1956-1990 гг.  
(МЕМУАРИСТИКА)**

Одним из источниковедческих основ по изучению истории культурной жизни Армении 1953-1990 гг. является мемуаристика. Особо следует отметить значимость мемуаров видных партийных и государственных деятелей изучаемого периода: Антона Кочиняна, Алексана Киракосяна, Владимира Галумяна, Фадея Саркисяна, Карлена Даллакяна, Мгера Мелконяна, Египше Асцатряна, Саркиса Хачатряна, деятелей науки и культуры Вараздата Арутюняна, Микаела Минасяна и других. Несмотря на отдельные проявления субъективизма в оценках событий, в мемуарах содержится богатейший фактологический материал, имеющий научное значение.

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ  
1960-ԱԿԱՆՆԵՐԻՆ ԱԿԱՎԱԾ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

1946-1948 թթ. հայրենադարձությունը համարելով ձախողված միջոցառում՝ Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը իր պարբերականներում սփյուռքահայերի ուշադրության նյութ դարձրեց 1960-ականներին նախատեսվող հայրենադարձության թեման:

«Յառաջ»-ում Հրամտ-Սամուելը տպագրել է հոդված («Ներգա՞ղթ»), ուր քննարկել է Խրուլչչովի այցը Հայաստան և Հայաստանի կառավարության սպասելիքները հայրենադարձության նոր ալիք ակնկալելու ուղղությամբ, իսկ մի այլ համարում գրում է, որ ոչ մի հայրենադարձություն էլ չի սպասվում, և Խրուլչչովի այցը ոչինչ չտվեց հայ ժողովրդի այսօրինակ սպասումներին<sup>1</sup>:

Նույն թերթում տպագրված «Ինչե՞ր կը պատմեն «հայաստանասերները»» հոդվածի հեղինակ Արագը գրում է, որ Հայաստան ներգաղթելու ցանկությունը համահայկական ցանկություն է, որի նպատակն է փրկել աշխարհասփյուռ հայի բեկորները և զորացնել հայրենի տունն ու երիտասարդ հայկական պետությունը:

Սակայն «ներգաղթ կատարելը ցիկաններու կարաւան կազմել չէ» միայն, ներգաղթը լուրջ գիտական ուսումնասիրությունների կարոտ նյութ է, մինչդեռ դրա կազմակերպիչներն այդպես էլ չիմացան, թե ինչ են նախաձեռնում և ինչպես պիտի գործեն: Այդ պատճառով էլ այժմ ներգաղթի հետևանքները ոչ ոքի չեն զարմացնում իրենց ողբերգություններով, մարդկային ճակատագրերի խեղումներով ու կորուստներով, որոնց չափերի իսկությունը տարիներ անց ավելի ճշգրիտ կիմացվի:

Եվ պատահական չէ, որ նրանք, ովքեր կարողացել են մի կերպ ետ վերադառնալ, միաձայն պնդում են, թե «մեծ թիւ մը կը կազմեն անոնք՝ որ կուզեն հեռանալ, բայց ոչ մէկ յոյս ունին առիթ ու միջոց գտնելու՝ հեռանալու համար հայրենիքէն»:

<sup>1</sup> «Յառաջ», 21 մայիսի, 1961 թ.:

Հողվածագիրը նշում է, որ դաշնակցականները երբեք չեն պնդել և չեն պնդի, որ բոլորը հայրենիք վերադառնան, բայց գնացողները պիտի մնան, որքան էլ անընդունելի լինեն պայմանները, քանի որ Հայաստանը «հող չէ միայն, այլ եւ թիւ»<sup>2</sup>:

«Յառաջ»-ի 1961 թ. հոկտեմբերի 8-ի խմբագրականում («Ներգաղթի մասին») քննարկվում են Հայաստանի Կոմկուսի 22-րդ համագումարի ելույթները, մասնավորապես Յա. Զարոբյանի ելույթի այն հատվածը, որ վերաբերում էր հայրենադարձությանը:

Ուշադրություն է հրավիրվում զեկուցման այն մասին, ուր Կոմկուսի քարտուղարը քննադատել է 1946-1948 թթ. հայրենադարձության ժամանակ թույլ տված սխալները, սակայն ընդգծել է նաև, որ բախտի քմահաճույքով աշխարհի շատ երկրներում սփռված հարյուր հազարավոր հայերի համար Հայաստանը իր պարտքն է համարում ստեղծել ապահով պայմաններ, որպեսզի նրանք վերադառնան իրենց միակ հայրենիքը:

Այս կապակցությամբ որոշվել է 1962 թ.-ից կազմակերպել արտասահմանյան հայերի հայրենադարձություն: Այդ նպատակով Հայաստանի կառավարությունը մշակել է գործնական միջոցառումների պլան, որով կապահովվի հայրենիք վերադարձող հայերի ճիշտ տեղաբաշխումը երկրի արդյունաբերական կենտրոններում: Բացի այդ նախատեսվում է ընդլայնել ու բարելավել կապերը արտասահմանի հայերի հետ, որպեսզի նրանք ավելի լավ ճանաչեն Խորհրդային Հայաստանի կյանքը<sup>3</sup>:

Հետաքրքիր է, որ «Յառաջ»-ի էջերում Հրանտ-Սամուելի պարբերաբար տպագրած հոդվածները դարձյալ դաշնակցության այն մտավախության արձագանքներ են, որ նոր ներգաղթը ավելի շատ կուսակցությանը հարվածելու և այն կազմալուծելու, քան թե ազգահավաքի նոր փորձ է:

ՀՅ Դաշնակցությունը նկատում էր, որ սփյուռքահայության զանգվածային հայրենադարձության այս նոր միջոցառումը դարձյալ ոգևորությամբ է ընդունել գաղութահայության չքավոր և միջին խավը:

<sup>2</sup> «Յառաջ», 30 սեպտեմբերի, 1961 թ.:

<sup>3</sup> «Յառաջ», 8 հոկտեմբերի, 1961 թ.:

Մերձավոր Արևելքի երկրներ, Իրան, Իրաք, Կիպրոս մեկնած Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչները սկսեցին ցուցակագրել հայրենիք մեկնել ցանկացողներին:

Այս անգամ էլ Հայաստանի ներկայացուցիչներին աջակցում էին տեղերի թեմական խորհուրդները, հնչակյանները, ռամկավար ազատականները և սրանց ձևավորած հայրենակցական միությունները:

Խորհրդային կառավարության հրահանգով դաշնակցությունը այս անգամ էլ դուրս մնաց համաժողովրդական այս միջոցառումից և վիրավորվածի կեցվածք ընդունելով՝ դարձյալ սկսեց իր պարբերականների միջոցով հայ զանգվածներին հասցնել իր մերժողական դիրքորոշումը հայրենադարձության հանդեպ:

«Մի շարք ինչուներ՝ առ որ անկ է» խմբագրական հոդվածը, որ տպագրվել է «Ալիք» օրաթերթի 1962 թ. հունիսի 20-ի համարում, գրում է, որ մի ամբողջ տարի կոմունիստական քարոզչությունը ճիչ ու վայնասուն է բարձրացրել, և պատճառն այն է, որ նորից ներգաղթ են կազմակերպում:

«Ո՞վ է կազմակերպում ներգաղթը: Ինչպե՞ս են կազմակերպում: Ու՞ր են տանում հայերին: Ինչու՞ են տանում: Ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով են տանում», - հարցնում է խմբագրականը:

Նույն օրաթերթի 1962 թ. հունիսի 26-ի խմբագրականը («Հարց առ ռամկավար — հնչակեան ղեկավարներ») գրում է, որ այս կուսակցությունների ղեկավարների խոսքն ու գործը խիստ տարբեր են, և այս տեսակետից նրանք հար և նման են ռուս համայնավարներին, որոնց տեսության և գործնականի միջև այնքան տարբերություն կա, որքան երկնքի և երկրի միջև, որոնք այնքան հակադիր են, որքան երկու բևեռները:

Թերթը սրանց նմանության պատճառները բացատրում է նրանով, որ թե՛ ռամկավարները, թե՛ հնչակյանները ազգային-քաղաքական մտածողություն չունեն, որ նրանք հրահանգավորվում են Սոսկվայից և Երևանից, ու լծված են միջազգային կոմունիստական քարոզչության մեքենային:

Այժմ էլ, երբ դարձյալ հրապարակ է նետված հայրենադարձության հարցը, զարմանալի է, որ այս քարոզչության թմբկահար «հայրե-

նասերները» իրենք չեն կազմում առաջին քարավանները՝ Հայաստան գնալու համար:

Խմբագրականը համոզված պնդում է, որ ռամկավարների և հնչակյանների հայրենասիրությունը կեղծ է, քանի որ պնդելով, թե Հայաստանը երբեք այնքան ազատ չի եղել, որքան այսօր, այս կուսակցությունների ղեկավարները չեն էլ մտածում Հայրենիք մեկնելու մասին, թեև միայն խորհրդային իրավակարգի մեջ են տեսնում Հայաստանի և հայ ժողովրդի երջանկությունը:

«Եթե ներգաղթ ըլլար իսկապես...» խմբագրականը, որ տպագրել է «Հայրենիք» օրաթերթը, ուշադրություն է հրավիրում հակադաշնակցական աղմուկին և փորձում է բացատրել, թե հայրենադարձության հարցում ինչին է դեմ դաշնակցությունը, և քննադատության իր սլաքը որ կողմ է ուղղված:

Բուլշևիկները շատ լավ գիտեն, որ «դեպի հայրենիք» կարգախոսը ընդունում են նաև դաշնակցականները, որ դաշնակցական հայր «վարանում չունի «դեպի տուն» դիմելու իր զգացումին մէջ»: Դաշնակցականների համար կարևորը Հայաստանում իբրև հայ ապրելը և հայության ինքնորոշման իրավունքի հաստատումն է:

Թերթը սուր քննադատության է ենթարկում ռամկավար - հնչակ - առաջադիմական եռանկյունու ղեկավարներին, որոնք հայրենադարձության քարոզչություն են ծավալում, սակայն միայն խոսքով, քանի որ այս վայ-հայրենասերներից ոչ մեկի գլխում մի վայրկյան անգամ չի ծնվում հայրենիք մեկնելու միտքը:

Իրենց ամբողջ կյանքը անձնական ապահովության և նյութական բարօրության հետամուտ այս առաջնորդները չէ, որ պիտի դաշնակցականներին հայրենիքը սիրել սովորեցնեն: Խմբագրականը նշում է, որ սրանց վայրահաջությունները, սակայն, իրենց չեն վախեցնում հայրենադարձության մասին ասել այն, ինչ իրենք իրոք ասելիք են համարում: Ոչ մի դաշնակցական չի անտեսում հայրենադարձության փրկարար տևությունը, որը, անտարակույս, ապաազգայնացումից կփրկի սփյուռքահային:

«Գացողը կը փրկուի ազգային ուժացումէ, - այս է ընդհանուր համոզումը: Ազգապահպանումի մտահոգութենէն թելադրուած այս ար-

դար եզրակացութիւնը փաստ է անշուշտ: Թէ հայրենի հողի վրայ դալար կը մնանք իբեւ հայ, թէ հայրենի հողը ընդմիշտ կը կապէ մեզ մայր զանգուածին եւ «ամբողջին» - ոչ մէկ կասկած այդ մասին», - հավաստում է խմբագրականը:

Սակայն հողվածում նշվում է, որ ուժացման վտանգը սպառնում է որոշ գաղթօջախներում ապրող հայերին միայն, մինչդեռ կան երկրներ, որտեղ ապաստանած հայերի համար այլևս ծուլման վտանգ չկա, հայերը կարող են դիմանալ, արմատներ ձգել և ընծյուղվել, եթե այդ գործը խելամտորեն ծրագրվի և կազմակերպվի:

Դաշնակցությունը դեմ չէ որոշ հայաշատ գաղութներից հայերի հայրենադարձությանը, սակայն մի վերապահությամբ, այն է՝ հայերը մնան Հայաստանում, հայկական հողի վրա, չքշվեն «խոպան հողեր» և այլուր, կամ կյանքի դժվարությունները տեսնելով՝ սեփական նախաձեռնությամբ չտեղափոխվեն Բաքու, Մոսկվա և այլ խոշոր արդյունաբերական կենտրոններ, որի հետևանքով «Արդիւնքը այն կըլլայ, որ Ֆրանսիայի, Յունաստանի, Լիբանանի, Կիպրոսի կամ մէկ ու միւս գաղութի «օտարացման վտանգին» ենթակայ սերունդներ այս անգամ կամ կը ռուսանան, կա՛մ կը դառնան «սովետական քաղաքացի» - անգոյն ու անհոտ... ազգութիւն մը»:

Դաշնակցության համար հայրենադարձությունը լոկ հայապահպանության հարց չէ, այն նաև քաղաքական տարողություն ունի, քանի որ Հայ դատի, հայկական հողերի և հայի պատմական իրավունքների խնդիրը ևս նրանք կապում են հայրենադարձության հետ:

Խորհրդային կառավարող շրջանները այս մասին ընդհանրապես չեն մտածում, մինչդեռ հայրենիքից դուրս գտնվող գաղթօջախները կարող են դառնալ Հայ դատի լուծման կարևոր ազդակներ:

Ահա այստեղ է, որ դաշնակցության դիրքորոշումը տարբերվում է մյուսներից, և իրենք չեն էլ կասկածում, որ թե՛ հայրենաբնակ, թե՛ ներգաղթող հայերը իրենք էլ շատ լավ գիտակցում են այս ամենը<sup>4</sup>:

Կարծում ենք, որ Հայ դատի լուծման հեռահար նպատակն է վճռորոշ դեր խաղացել դաշնակցական կուսակցության քաղաքակա-

<sup>4</sup> «Հայրենիք», 25 դեկտեմբերի, 1962 թ.:

նության մեջ և հենց սրանով պիտի բացատրել նրանց ճիգ ու ջանքը սփյուռքում հոծ զանգված ունենալու ուղղությամբ: Մյուսխենի «Ազատություն» ռադիոկայանը «Ալիքի» 1963 թ. օգոստոսի 17-ի և 18-ի համարներում շարունակաբար տպագրել է «խորհրդային մամուլը եւ հայրենադարձը» ծավալուն հաղորդագրությունը, ուր փորձել է մեկնաբանել խորհրդային Հայաստանի պարբերական մամուլում վերջին երկու տարվա ընթացքում հայրենադարձության խնդիրները արժարժող հրապարակումները: Զննարկվել են «Գրական թերթի», «Սովետական Հայաստանի», «Կոմունիստի» մեջ տպագրված հոդվածները, ուր դաշնակցությունը ենթարկվում է անհիմն մեղադրանքների՝ հայրենադարձությանը խոչընդոտելու առումով: Նշելով, որ բոլոր թերթերը միահամուռ մի բան են պնդում, թե խորհրդային կառավարությունը իր հայրենասիրական պարտքն է կատարում՝ փրկելով հայերին ծուլումից, թերթը հարց է տալիս, թե արդյո՞ք մեր հայրենիքը՝ խորհրդային Հայաստանը, կոմունիստների իշխանության տակ հանդիսանում է «միակ փրկութեան կայանը» հայերի համար, ինչպես հավատացնում են կոմունիստները, արդյո՞ք այդ պայմաններում հայերը կմնան իսկական հայեր, թե՞ նրանց հայրենիքը դառնալու է խորհրդային Միությունը:

Հողվածը մտահոգված է հատկապես երիտասարդների ճակատագրով, որոնք կամավոր մեկնում են Սիբիր, Հեռավոր Արևելք՝ «ուր անցնում է յանուն ապագայի տարուղ պայքարի գիծը»: Ահա սրանց սպասում է ստույգ ապագազայնացում: Ուստի ներգաղթի մասին մտածելուց առաջ պիտի իրատես լինել և սկզբում մտածել հայրենադարձությունից բխող բոլոր անցանկալի հետևանքների մասին:

«Հայրենիքի» 1963 թ. օգոստոսի 29-ի համարում տպագրված է Արմեն Ազատի «Ներգաղթ» խորագրով հոդվածը, ուր հեղինակը առաջադրում է մի քանի հարցեր՝ ի՞նչ է նշանակում ներգաղթը, ի՞նչ դիրք ունի Հայաստանի ժողովուրդը ներգաղթի հանդեպ, ինչպե՞ս է սփյուռքահայը ընկալում ներգաղթը, ինչպիսի՞ իրականություն է թանձր վարագույրով ծածկում խորհրդային երկիրը, և փորձում է տալ այս հարցերի պատասխանը: Ըստ հեղինակի՝ «ներգաղթ» հասկացությունը միայն իր հայկական իմաստով կարելի է ըմբռնել, որովհետև նրա բովանդակությունը անբաժանելի է հայ ժողովրդի դարավոր պատմությունից, այն է՝

դարավոր արտագաղթի դիմաց ներգաղթ, այսինքն՝ դարձ դեպի հայրենիք: Սա հայ ազգի բարոյական այն մեծ կռվանն է, որը նա միշտ կապել է իր հույսերի ու երազների հետ: Ներգաղթի գաղափարը հայ ժողովրդի ազգահավաքի, հայկական հողի վրա հաստատվելու ամենափայփայած գաղափարն է եղել ոչ թե Հայաստանի խորհրդայնացումից հետո, այլ ժողովրդի պանդխտության հենց առաջին օրերից:

«Ներգաղթի գաղափարականը, - գրում է Արմեն Ազատը, - գաղութահայի մտքում զուգահեռ է հայրենիքի սիրոյ եւ պաշտամունքի զգացումին հետ:

Ներգաղթի գաղափարականը՝ հայ ժողովուրդի ազգային իտելաների մարմնացումն է. հայ ժողովուրդը օտար բոլոր ափերի վրայ ներգաղթի մտապատկերը, ներգաղթի՝ այսինքն հայրենիք վերադառնալու երազը իր հետ ապրեցնում է ամենաերջանիկ և ամենադժբախտ օրերում»:

Սակայն հայ մարդը, երբ ասում է ներգաղթ, հասկանում է ազատ ու անկախ հայրենի հողի վրա ազգահավաքի կազմակերպումը, իր ստեղծագործական բոլոր ունակությունները հայ ազգի բարգավաճմանն ու հզորացմանը ի սպաս դնելը:

Մինչդեռ հայաստանցի հայ անհատը, ամեն բոլոր մտածելով սփյուռքի իր եղբոր վիճակի մասին, բոլորովին այլ կերպ է ընկալում և բացատրում ներգաղթը, երբ այդ մասին նրան հարց են ուղղում: Հայաստանի հայերը շատ լավ զգում են, որ հայկական տարածքը Հայաստան է կոչվում սոսկ անվանապես, իրականում այն խորհրդային հող է և խորհրդային ղեկավարների քմահաճույքի առարկա: Հայաստանի հայերը ևս ներգաղթի մեջ տեսնում են մեր ժողովրդի միավորումը, որը մեր երազն ու դարավոր փափագն է, բայց երբ տեսնում են ժողովրդի ցանկության և խորհրդային ղեկավարների նպատակի հակասությունը, իրենք էլ մերժում են ներգաղթը:

Գիշտ նույն կերպ է մտածում նաև սփյուռքահայը:

Իսկ ինչու՞ է խորհրդային Միության կոմունիստական կուսակցությունը շահագրգռված ներգաղթի խնդրով:

«Համայնավարների համար ներգաղթը հայ ժողովուրդի ազգային միաւորումն է, այլ՝ ներգաղթը Հայաստանում փակ գործարանների



աշխատող ուժի կարիքը գոհացնելու համար է ստեղծուել», - եզրակացնում է հողվածագիրը:

Մյուս կողմից էլ կոմկուսը փորձում է աշխարհին համոզել, թե հայերը վերադառնում են հայրենիք՝ «սիրով ապրելու իրենց ռեժիմի ներքե»:

Ահա այս նպատակով արվող ներգաղթը չի ընդունում ոչ հայաստանցի, ոչ սփյուռքի հայր<sup>5</sup>:

«Ազդակի» 1963 թ. հոկտեմբերի 11-ի խմբագրականը քննադատում է ռամկավարների և հնչակյանների այն դիրքորոշումը, որով նրանք, քաջատեղյակ լինելով Հայաստանի կյանքին ու այնտեղի անցուդարձին, այնուամենայնիվ կեղծում են իրողությունն ու այդ կյանքը ներկայացնում ոչ այնպես, ինչպես այն իրականում կա:

Գտնելով, որ դա սխալ քաղաքականություն է, խմբագրականը նշում է, որ կառուցողական քննադատությունը միակ ճանապարհն է բաղձալի իրականություն ստեղծելու գործում: Այդ սխալ քարոզչության պատճառով նախկինում արված հայրենադարձությունները այնքան հիասթափությունների ու զեղեցիկ պատրանքների փյուզման պատճառ դարձան:

Մինչդեռ այս բոլորը չէր լինի, եթե յուրաքանչյուր հայ տեղյակ լիներ հայրենիքում տիրող վիճակին և գիտակցաբար մեկներ այնտեղ՝ պատրաստ տանելու բոլոր դժվարություններն ու անհարմարությունները:

«Անշուշտ պիտի գտնուեին ծոյլեր և հանգիստ պայմաններ փնտռողներ, - գրում է թերթը, - որոնք պիտի հրաժարեին մեկնել: Անոնց հրաժարումը վնաս պիտի չբերեր հայրենիքին, ընդհակառակն: Մինչ ջախջախիչ մեծամասնությունը, հայու վճռականութեամբ և տոկունութեամբ, հայրենի հողին վրայ ոտք պիտի կոխեր՝ աշխատելու, շինելու և իր քրտինքը խառնելու հայրենիքի իր եղբայրներու քրտինքին»:

Խմբագրականը գտնում է, որ ահա այսօր էլ նույն կացությունն է, ուստի պետք է ճշմարտությունն ասել սփյուռքահային, խոսել Հայաստանի թե նվաճումների, թե՛ բացթողումների մասին, քանի որ Հայաստանի տերը հայ ժողովուրդն է՝ հայրենիքի թե՛ սփյուռքի մեջ:

<sup>5</sup> «Հայրենիք», 29 օգոստոսի, 1963 թ.:

«Չայրենաբնակ հայութիւնը իր մորթին վրայ կը զգայ իրակա-  
նութիւնը: Ինչու՞» արտասահմանի զանգուածները պիտի չգիտնան, թե  
ինչ կանցնի կը դառնայ իրենց բուն տունէն ներս: Գնալը վնաս է, թե՞  
չառ: Մենք կը կարծենք, թե շահ է», - ամփոփում է թերթն ասելիքը և  
ավելացնում, որ միայն այս գիտակցութեամբ կարելի է ծառայել երկրին,  
դարմանել նրա ցավերը<sup>6</sup>:

«Դարձեալ հայրենադարձութեան մասին, Իրանից կատարուած  
ներգադրի արդիւնքներից» հոդվածում «Ալիք»-ի 1963 թ. հոկտեմբերի  
10-ի համարում հոդվածագիրը (ստորագրված է՝ Արամայիս - Ի. Ս.)  
փորձում է տալ հայրենադարձության թվական պատկերը: Յիմք ընդու-  
նելով Չայաստանի հեռագրական գործակալության և «Սովետական  
Չայաստան» պաշտոնաթերթի հաղորդումները՝ հոդվածագիրը նշում է,  
որ 1962-1963 թթ. Չայաստան են ներգաղթել 1936 հոգի, չնչին մի քա-  
նակ, որն «աչքի առաջ ունենալով, կարելի է Ս. Գրքի այն իմաստալից  
վիճակը յիշատակել, թե երկնեց լեռը ու ծնաւ մուկ մի չնչին»: Անդրադառ-  
նալով միայն Իրանից ներգաղթածներին (1428 հոգի), նախ աչքի է գար-  
նում այն, որ մյուս երկրներից շարունակական ներգաղթը հայրենիք է  
հասցրել լավագույնը մոտ 100 հոգի, իսկ իրանաբնակ հայերից ներ-  
գաղթողների մեջ զգալի քանակ են կազմում նրանք, ովքեր դեռևս 1947  
թ. Իրանի զանազան ծայրերից Թեհրան տեղափոխվեցին հայրենիք վե-  
րադառնալու համար և այդպես էլ անտերունչ մնացին Թեհրանում՝ ներ-  
գաղթի գործընթացի անսպասելի դադարեցման հետևանքով:

Ահա սա է շարունակական ներգաղթի պատկերը՝ ըստ հոդվա-  
ծագրի, որը, մեջբերելով Երևանից ստացված գրավոր հաղորդագրու-  
թյունն այն մասին, որով առաջարկվում է բոլոր գաղթօջախներում ժա-  
նանակավորապես դադարեցնել հայրենադարձվել ցանկացողների ցու-  
ցակագրությունը, մինչև լրացուցիչ նոր հայտարարություն ստանալը,  
զգոնության կոչ է անում հայրենակիցներին և նշում, որ «ներգաղթը, թե-  
կուզ աննշան չափով, կանգ է առած»<sup>7</sup>:

Նույն թերթի «Չայրենադարձների «աւերիչ գաղափարները»»  
խմբագրական հոդվածում նշվում է, որ Չայաստանի կոմկուսի ղեկա-

<sup>6</sup> «Ազդակ», 11 հոկտեմբերի, 1963 թ.:

<sup>7</sup> «Ալիք», 10 հոկտեմբերի, 1963 թ.:

վար Ջարոքյանը դժգոհ է, որ հայրենադարձները իրենց հետ բերում են «ավերիչ գաղափարներ»՝ այսինքն՝ ազգայնականություն, և առաջարկում է շուտ ձերբազատվել դրանից, «վերադաստիարակվել» և փառաբանել կոմունիստական կուսակցությանն ու Ս. Խրուշչովին:

«Ի՛նչ տարօրինակ, ի՛նչ առեղծուածային եւ ի՛նչ ողբերգական ճակատագիր ունի հայ մարդը: Նա պանդուխտ է, գաղթական, տարագիր, ապրում է օտարութեան դաժան ցուպը ձեռքին, ու միշտ հայրենաբաղձ, հայրենիքի սէրն ու կարօտը սրտին, աչքը մշտապէս յառած դէպի հայրենիք, պատրաստ՝ վերադառնալու Չայաստան եւ այնտեղ ապրելու իբր հայ, աշխատելու, ստեղծագործելու հայկականութեան մէջ եւ հայկականութեան համար: Եւ ահա՛ նա վերադառնում է՝ դէն շարտելով օտարի աւետարանը: Սակայն իր երագած հայրենիքի հողը չկոխած՝ նրա ձեռքը տալիս են մի ուրիշ օտարի աւետարանը ...», - ավարտում է խոսքը խմբագրականը<sup>8</sup>:

«Ներգաղթը եւ 23-րդ համագումարը» խմբագրականը, որ տպագրվել է «Ալիքի» 1964 թ. մարտի 24-ի և 25-ի համարներում, անդրադարձել է կոմկուսի 23-րդ համագումարում ներգաղթի հարցի շուրջ ծավալված քննարկումներին, ուր, բնականաբար, տեղ են գտել անհիմն քննադատություններ դաշնակցության հասցեին: Խմբագրականը գրում է, որ շատ լավ զգալով, որ կոմունիստական «փոթորկահույզ» քարոզի հետևանքով ընդամենը մոտ երեք հազար հայրենադարձ ունենալը ուղղակի ծիծաղելի արդյունք է, կոմունիստները փորձում են իրենց ձախողված միջոցառման համար քավության նոխազ փնտրել և ողջ մեղքը բարդում են դաշնակցության վրա՝ գրելով, որ վերջիններիս շանտաժի և ահաբեկման հետևանքով տուժեց հայրենադարձության գործը:

«Դաշնակցութիւնը, դաշնակցական պարագլուխները եւ դաշնակցականները շանթաժներ չեն արել, այլ հիմնելով իրական եւ փաստական տւեալների վրայ, բացայայտել են ձեր քաղաքական միտումնաւոր շանթաժները», - գրում է խմբագրականը և ավելացնում, որ դա թելադրվել է իրենց ազգային և քաղաքական պարտականության կողմից, քանի որ դաշնակցությունը շատ լավ գիտակցում էր, որ հայրենադարձությունը, իբրև այդպիսին, իրականում չկա. կա սովետադարձութ-

<sup>8</sup> «Ալիք», 18 նոյեմբերի, 1963 թ.:

յուն, քողածածկ մի նպատակ, որի հետևանքով հայրենադարձության ծախողման պատճառ դարձան և՛ նրա կազմակերպչական եղանակներն ու ձևերը, և՛ նրա բուն էությունն ու բնույթը<sup>9</sup>:

Այնուհետև խմբագրականը կետ առ կետ պարզաբանում է այն կարևոր խոչընդոտները, որոնք ներգաղթի ծախողման հիմնական պատճառներ դարձան:

Ըստ խմբագրականի՝ Խորհրդային Հայաստանի կառավարությունը հայրենադարձությունը հռչակեց իբրև ազգահավաքման գործ և սփյուռքում նրանց կամակատարներ հնչակյան և ռամկավար կուսակցությունները թմբկահարեցին այն՝ դրվատելով հայկական պետության ազգաշեն և ազգանվեր գործունեությունը և հենց սրանով թյուրիմացության մեջ գցեցին հազարավոր գաղթականների, խեղեցին արդեն իսկ բնավեր դարձած հազարավոր հայերի ճակատագրեր:

Քարոզչության ընթացքում երբեք չչափարկվեց «սովետական» բառը, իսկ երբ սկսվեց հայրենադարձությունը, պարզվեց, որ ոչ բոլոր հայերի դարձն է ցանկալի հայրենիքի համար, որ եթե Հայաստանը կա, պետություն է, կառավարություն ունի, ապա ինչու՞ գնացողները ամիսներով ու տարիներով ստիպված են սպասել ռուսական դեսպանատների առջև: Սա էլ հենց դարձավ առաջին հուսախաբությունն ու փաստական բեկումը այս գործում:

Ներգաղթի կազմակերպիչները միշտ խոսել են հայրենիքի և հայրենասիրության մասին և երբեք չեն խոսել սովետական մարդ ստեղծելու և նրան «սոցիալիստական ինտերնացիոնալիզմի» ոգով վերադաստիարակելու մասին, սակայն հայրենիք վերադարձած հայը զգում է, որ «տարբեր բան էին լսել, երբ Սփյուռքում էին գտնուում, տարբեր բան են լսում եւ տարբեր բան են ասել տալիս, երբ Հայաստանում են գտնուում»:

Սա պատճառ դարձավ ներգաղթի բարոյահոգեբանական երկրորդ հիասթափության և բեկման համար, որը հուսախաբության մատնեց ոչ միայն ներգաղթած հայերին, այլև սփյուռքահայությանը, որը ունեցավ իր անցանկալի հետևանքները:

<sup>9</sup> «Ալիք», 24 մարտի, 1964 թ.:

Հուսախաբված ու հիասթափված հայությունը Մերձավոր Արևելքի և Եվրոպայի շատ երկրներից նորից բռնեց արտագաղթի ուղին, փորձեց հեռավոր Ամերիկայում, Կանադայում, Ավստրալիայում և այլուր որոնելու իր բախտն ու հիմնական բնակավայրը<sup>10</sup>:

ՀՀ Դաշնակցությանը, փաստորեն, մտահոգել են հարցեր, որոնք ամենևին էլ անհիմն չեն եղել, և կուսակցությունը իր մտավախությունն է հայտնել, որ Խորհրդային Հայաստան մեկնող հայերը դարձյալ հայտնվելու են գաղթականի կարգավիճակում՝ ցրվելով անժայրածիր Ռուսաստանում և մյուս հանրապետություններում, որ նրանց շարունակելու է սպառնալ ուժացման վտանգը, և վերջապես սփյուռքի հայաթափությունը հետագայում մեծ վտանգի տակ կդնեն և՛ Հայ դատի, և՛ մեր պատմական հայրենիքի գոնե մի մասը ետ ստանալու մեր ժողովրդի իրավացի պահանջը:

*ИШХАН САГАТЕЛЯН  
ИИ НАН РА*

**ПОЗИЦИЯ АРМЯНСКОЙ РЕВОЛЮЦИОННОЙ  
ФЕДЕРАЦИИ ДАШНАКЦУТЮН ОТНОСИТЕЛЬНО  
РЕПАТРИАЦИИ АРМЯН В 1960-ЫЕ ГОДЫ**

**РЕЗЮМЕ**

АРФД, считающая провалившимся мероприятием репатриацию 1946-1948 гг., снова приняла отрицательную позицию по отношению репатриации 1960 гг. АРФД не игнорирует важность и спасительную сущность репатриации, воспринимает концепцию "ностальгии по родине", но одновременно опасается, что новый этап репатриации не достигнет реальных целей. Федерация считает, что это не попытка собрать воедино нацию или увеличить мощь страны, а способ дискредитировать и расколоть партию, а также закрыть Армянский Вопрос.

---

<sup>10</sup> «Ալիք», 25 մարտի, 1964 թ.:

## ՄԱՍՈՒԼԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐԴԻՆ

1970-80-ական թթ. «Լճացման» երևույթները արտահայտվեցին նաև մամուլում, որը դարձել էր անշունչ, անհետաքրքիր, տենդենցիոզ: Խորհրդային հասարակությունը լուրջ ձևափոխումների էր ենթարկվում, բայց գաղափարական նախկին կարգախոսները պահպանվում էին: Այս ամենի հետևանքով մամուլում ձևապաշտության երևույթներ նկատվեցին: Առաջվա նման մեծ ոգևորությամբ էր շեփորվում հնգամյակների կատարման և գերակատարման, կոմունիզմի հաջող կառուցման, ազգային հարցի վերջնական լուծման մասին, անտեսելով այն, որ հասարակության համար իրական կյանքը վաղուց ի վեր չէր համապատասխանում նշված կարգախոսներին: Չնայած դրան, պետական հովանավորչության և մեծաքանակության շնորհիվ պաշտոնական մամուլը մեծ ներգործություն ուներ հասարակության վրա: 1985 թ. հրատարակվում էր 92 անուն թերթ՝ ավելի քան 1 մլն. 560 հազ. տպաքանակով, գրեթե նույնքան ամսագիր և այլ պարբերականներ: Պարբերականների իրացումը հիմնականում տեղի էր ունենում պարտադրանքի նախորդ տարիներին մշակված համակարգի շնորհիվ՝ աշակերտական, ուսանողական, աշխատանքային կոլեկտիվների միջոցով: Այլընտրանքային մամուլ չկար:

1985 թ. ապրիլյան պլենումով սկսված «վերակառուցումը», որն ըստ էության կոսմոսիկ բարեփոխումների համալիր ծրագիր էր, արմատական փոփոխություններ չառաջացրեց հայ մամուլում: Այդ շրջանում ընթերցողները նախընտրում էին կենտրոնական մամուլը, որտեղ հաճախ հրապարակվում էին խորհրդային կյանքի շատ աղտերը մերկացնող հոդվածներ: Բացի պաշտոնական մամուլից հայտնվեց նաև ինքնահրատը: 1988 թ. կեսերի տվյալներով Մոսկվայում, Լենինգրադում, Մերձբալթիկայում լույս էր տեսնում մոտ 64 ինքնահրատ պարբերական: Դրանցից էին "Хроника текущих

событий", "Гласность", "Экспресс-хроника", "Меркурий", "Община", "День за днем", "Благовест", "Референдум", "Российские ведомости", "Демократическая оппозиция" և այլն: Այսպիսով, խորհրդային ամբողջատիրության տարիներին հայտնվեցին ազատական-ժողովրդավարական, կրոնական, ազգայնական, փիլիսոփայական ուղղվածություն ունեցող տարբեր թողարկումներ, հանդեսներ, որոնք առաջարկում էին փոխել արժեքային համակարգը և ոչ թե հակադրվում խորհրդային իրականությանը:

Ինչ վերաբերվում է խորհրդահայ մամուլին, ապա մինչև 1988 թ. քննադատությունն ու ինքնաքննադատությունը մամուլում չէր անցնում «թույլատրելի սահմանը», բացակայում էր խորհրդային կարգերի քննադատությունը: Ընդդիմադիր մամուլի նկատմամբ սոցիալական պատվեր էր ձևավորվել, որը պաշտոնական մամուլը ի զորու չէր բավարարել: Դրանով սկսեց զբաղվել «ինքնահրատը»: Մեր ինքնահրատի պատմությունը սկսվում է 1960-ական թթ., երբ խորհրդային պաշտոնական գաղափարախոսության մեջ ճեղք առաջացավ: Առաջին ինքնահրատ պարբերականները՝ ԱՄԿ-ի կողմից հրատարակված «Փարոս» թերթն էր (1967 թ.) 3000 տպաքանակով և Պ. Հայրիկյանի նախաձեռնությամբ հրատարակված «Երկունք»-ը (1969 թ.) 5000 տպաքանաքով՝ «Անկախությունը որպես կենսական պահանջ» առաջնորդողով: Այլ դերակատարում ունեցան «վերակառուցման» պայմաններում լույս տեսնող ինքնահրատ պարբերականները: 1987 թ. Պ. Հայրիկյանի նախաձեռնությամբ լույս տեսան «Քաղաքական կալանավորների պաշտպանության հայկական կոմիտեի» երկլեզու «ԶՊՀԿ-ի տեղեկագիր»-ը (1987 թ. մայիս, խմբ. Արա Ստեփանյան), «Հրապարակայնություն» (խմբ. Մովսես Գորգիսյան) պարբերականները, որոնք սակայն հայ հասարակության լայն շրջանների համար անհայտ մնացին:

1987 թ. հոկտեմբերի 24-ին հրատարակված "Անկախություն" թերթի առանձնահատկությունն այն էր, որ դա առաջին քաղաքական-այլընտրանքային, կայուն պարբերականությամբ և բացահայտորեն հրատարակվող շաբաթաթերթն էր: Թերթի առաջին համարը (հիմնադիր խմբ. Պ.Հայրիկյան) նվիրված էր ԱԽ-ի հիմնադրման

Նպատակներին: «Մենք և մեր պայքարը» առաջնորդողում առաջարկվում էր համախմբել հայ ժողովրդի մտավոր և հոգևոր ուժերը հայկական հարցի լուծման և, որպես առաջին քայլ, անկախության վերականգնման համար: «Ազգն ինքն է իր ճակատագրի տնօրենը, և ամեն մի միջամտություն ապօրինի է ու հակամարդկային, եթե դրա օգտին չի արտահայտվում ազգի մեծամասնությունը ՀԱՄԱԺՌ-ՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ՝ «ռեֆերենդումի» միջոցով», - ազդարարում էր թերթը: Երկրորդ համարի «Ազգային ինքնորոշման իրավունքը և հայկական հարցը» հոդվածով հաստատվում էր հանրաքվե անցկացնելու իրավունքը, հիշեցվում էր, որ ինքնորոշման սկիզբը դրվում է հոգևոր անկախությամբ: Այդ համարում էր հրապարակված նաև ԱԻՄ-ի դիմումը ՄԱԿ-ի քարտուղարին, Մ. Գորբաչովին, ԽՍՀՄ և ՀԽՍՀ ԳԽ նախագահություններին, որով բացահայտվում էր ԱԻՄ-ի ստեղծման նպատակը:

Թերթի առաջին համարների կարգախոսն էր՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»: Նշվում էր նաև գլխավոր նպատակը՝ ազգային պետության վերականգնումը և առաջնային խնդիրը՝ Հայաստանի անկախացումը հանրաքվեի ճանապարհով: Դրանից հետո, կախված պահի կարևորագույն հիմնախնդիրներից, կարգախոսները փոխվում էին:

1988 թ. արցախյան շարժումը ազգային ինքնագիտակցության աննախադեպ աճ առաջացրեց, որը հետագայում հեղաբեկում մտցրեց մամուլում: Առաջին օրերին մամուլը տեղեկություններ չէր հայտնում ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի որոշման, Ստեփանակերտի, Աբովյանի, Երևանի հանրահավաքների վերաբերյալ: Չհրատարակվեցին տեղեկություններ շարժման պատճառների, ակունքների, հիմնախնդրի լուծման հնարավոր ուղիների վերաբերյալ: Այդ մասին ճշմարիտ տեղեկություններ էր տալիս «Անկախություն»-ը: Ժամանագրական ճշտությամբ հաղորդվում էին տեղեկություններ Ազատության հրապարակից, որը դեռևս չէր դարձել Անկախության հրապարակ: Անկախության կոչերը ոչ միայն դեռ չէին ընդունվում ժողովրդի կողմից, այլև երբեմն զայրույթ ու տարակուսանք էին առաջացնում: «Անկախություն» թերթը



համբերատար շարունակում էր հնչեցնել՝ «Հայկական հարցի լուծման առաջին քայլը ԽՍՀՄ-ից անջատվելն է» (1988 թ. հունվարի 3, 1/11) և բարձրաձայնում.

- Ղարաբաղի հարցի լուծումը պահանջել Մոսկվայից,
- Սումգայիթի կազմակերպիչը կենտրոնն է, զուգահեռներ անցկացնելով XX դարասկզբի դեպքերի հետ:

«Անկախության» փորձը ոգևորիչ էր: 1988 թ. արդեն լույս էին տեսնում 10-ից ավելի անուն ինքնահիրատ պարբերականներ՝ «Ինքնորոշում» և «Հայրենիք» (ԱԻՄ), «Մաշտոց» («Մաշտոց» միավորման թերթը), «Տեղեկագիր» («Ղարաբաղ» կոմիտեի և ՀՀԸ-ի), «Ցեղակրոն» (Հայաստանի ցեղապաշտական կուսակցության պաշտոնաթերթ), «Ազատ Հայք»<sup>1</sup> («Ազգային միասնության ուխտ» կազմակերպության պաշտոնաթերթ) և այլ պարբերականներ:

Ինքնահիրատ մամուլը մեքենագրվում և բազմացվում էր պատճենահանման եղանակով, առանց տպարանային ձևավորման ու պատկերազարդումների, հաճախ՝ անորակ թղթի վրա: «Ինքնահիրատի» ժողովրդական մակարդակը հաճախ զիջում էր, սակայն այն իսկական ընդդիմադիր մամուլ էր: Այդ մամուլում սուր քննադատության էր ենթարկվում խորհրդային ներկան և իդեալականացվում պատմական անցյալը, ներկայացվում էին Հայաստանի զարգացման հեռանկարները, նախանշվում ապագան:

Խորհրդահայ թերթերում ցույցերի մասին առաջին հաղորդումը հայտնվեց միայն 1988 թ. փետրվարի 22-ին: Դա ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Կ.Դեմիրճյանի ելույթն էր: 1988 թ. փետրվարին սումգայիթյան ողբերգության օրերին և դրանից հետո մամուլը չտվեց դեպքերի քաղաքական գնահատականը, ներկայացնելով դրանք որպես «խուլիգանական էլեմենտների կողմից թույլ տրված անկարգություններ»<sup>2</sup>: Օբյեկտիվ տեղեկատվությունը ստանում էինք «Անկա-

<sup>1</sup> 1990 թ. հունվար-մարտ այն հրատարակվել է իբրև ՀՅԴ երևանի կոմիտեի պաշտոնաթերթ, բայց ապահովության համար դա չի նշվել, խմբ. Ռ. Համբարձումյան (Ն. Հայրապետյան, Մատենագիտություն նորանուն հայկական պարբերական մամուլի (1987-1996 թթ.), Ե., 1989, էջ 46):

<sup>2</sup> Միայն 1988 թ. մայիսի 14-ին կենտրոնական «Известия» թերթը խոստովանեց, որ մարդկանց սպանել են հայ լինելու համար:

խություն» թերթից: Միայն 1988 թ. մարտից որոշ հանրապետական թերթեր (օրինակ՝ «Երեկոյան Երևան»-ը) սկսեցին ներկայացնել պատմական ակնարկներ և լուսաբանել արցախյան հիմնախնդրի ներկա փուլը: Ցուցարարների առաջին լուսանկարը թերթերում հայտնվեց միայն նոյեմբերին:

Հանրապետական մամուլի հրապարակայնության բարձրացմանը նպաստեց կենտրոնական մամուլում ծավալված հակահայկական հիստերիան: «Պրավդա» թերթում լույս տեսած «Հույզեր և բանականություն: Լեռնային Ղարաբաղի և նրա հարցի շուրջ տեղի ունեցող իրադարձությունների մասին»<sup>3</sup> հոդվածը ըստ էության արտահայտում էր Մոսկվայի պաշտոնական վերաբերմունքը դարաբաղյան շարժման նկատմամբ: Այդ հրապարակումից հետո էր, որ հանրապետական մամուլը գաղափարապես սկսեց տարանջատվել կենտրոնականից: Այս շրջանում, գրեթե միևնչև դեկտեմբեր, հանրապետական մամուլը աստիճանաբար դարձավ ավելի օբյեկտիվ, հետաքրքիր, ժողովրդավարական: Իրադարձությունները զարգանում էին սրընթաց արագությամբ: 1988 թ. մայիսի 28-ին առաջին անգամ Ազատության հրապարակում բարձրացվեց եռագույնը, բայց ոչ թե որպես անկախության խորհրդանիշ, այլ՝ ազգային: Պատահական չէ, որ այն ծածանվում էր դեռևս Խորհրդային Հայաստանի դրոշի կողքին: Մեր պատմական անցյալը հոգեբանական մի հզոր պատմեշ էր կառուցել մեր և անկախության միջև: «Անկախություն» թերթն էր, որ համբերատար քանդում էր այդ պատմեշը, կոչ էր անում ազատվել մտքի ստրկությունից և «զլուխ չպահել», մխիթարվելով, որ պատմության ընթացքում հարցը կլուծվի, այլ պայքարել դրա համար: Անկախությունն է ազգի գոյապահպանման միակ երաշխիքը, հորդորվում էր թերթի էջերից: Հանրահավաքի մասնակիցները առաջին անգամ անկախություն վանկարկեցին սեպտեմբերի 9-ին, սակայն անհրաժեշտ էր տառապալից պայքարի ևս 3 տարի, որպեսզի այն ընդունվեր ժողովրդի մեծագույն մասի կողմից:

<sup>3</sup> "Правда", 1988 г., 21 марта.

Հայաստանում և խորհրդահայ մամուլում տիրող իրավիճակը լուրջ անհանգստություն էր առաջացրել Կենտրոնում: Պատահական չէ, որ հուլիսին հայրենիքից վտարվել էր Պ.Հայրիկյանը, երկրաշարժից հետո ձերբակալվել էին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները:

1988 թ. դեկտեմբերի 28-ին մամուլում հրապարակվեց «Հանրապետական մասսայական ինֆորմացիայի և պրոպագանդայի միջոցներով ազգամիջյան հարաբերությունների հարցերի լուսաբանման գործում եղած լուրջ թերությունների մասին» ՀԿԿ ԿԿ որոշումը<sup>4</sup>: Մամուլի համարձակության աճը գնահատվեց որպես գաղափարաքաղաքական մակարդակի ու բովանդակության հանդեպ պահանջկոտության բացակայության արդյունք: Ըստ այդ որոշման՝ մամուլի ամբողջ աշխատանքի հիմքում պետք է դրվեին ԽՍՀՄ ԿԿ 1988 թ. նոյեմբերյան պլենումի, ԽՍՀՄ ԳԽ-ի արտահերթ՝ 12-րդ նստաշրջանի և 1988 թ. դեկտեմբերի 1-ի «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի և դրան առնչվող իրադրության վերաբերյալ մի խումբ դեպուտատների հարցապնդման առթիվ» որոշումները: ԶԼՄ-ներին կոչ արվեց սուր քննադատության ենթարկել «Ղարաբաղ» կոմիտեի վնասակար գործունեությունը, ցույց տալ դրա «վտանգավոր, արկածախնդրական բնույթը»: Սակայն հասարակական մտածողության մեջ արդեն բեկում էր առաջացել՝ «հնազանդ» մամուլը չէր բավարարում նրա պահանջներին: Սկսեցին հրատարակվել նյութեր 1930-1940-ական թթ. բռնարարքների մասին, «վերակառուցման» շրջանը հակադրվում էր ստալինյան բռնապետության շրջանին: Մի կողմից դա, կարծես թե, չէր հակասում Կենտկոմի որոշմանը՝ չհրատարակել «ազգայնական» բնույթի նյութեր, սակայն մյուս կողմից այն հանգեցնում էր հիասթափության խորհրդային կարգերից, առաջացնում անորոշ փոփոխությունների ցանկություն, անորոշ՝ հասարակության մեծ մասի, բայց ոչ անկախության առաջամարտիկների համար: Հրապարակվեցին առաջին զգուշավոր հոդվածները հայ ժողովրդի պատմական անցյալի վերաբերյալ, որոնք բավականին գաղափարականացված էին: Ճիշտ է, մամուլը սկսեց անդրադառնալ նախկինում արգելված թեմաներին՝ փորձելով դրանք տեղավորել կոմու-

<sup>4</sup> «Սովետական Հայաստան», 1988 թ., դեկտեմբերի 28:

նիստական գաղափարախոսության սահմաններում: Օրինակ, զորավար Անդրանիկի մասին հողվածում<sup>5</sup> պատմվում էր նրա սխրագործությունների մասին, բայց նաև հատուկ ընգծվում, որ նա վերջում խզեց իր կապերը դաշնակցականների հետ և այլն: Որքան շարժումը ծավալվում էր, այնքան հողվածները ավելի համարձակ և օբյեկտիվ էին դառնում: Մամուլում հայտնվեցին հողվածներ Սփյուռքում գործող կուսակցությունների մասին: Ավելի բազմազանվեց մամուլի կառուցվածքը: Առաջացան մշակութային, հասարակական կազմակերպությունների ու շարժումների, հոգևոր-կրոնական, բուհական-ուսանողական, երգիծական և այլ պարբերականներ:

Խորհրդահայ մամուլում բուռն բանավեճ ծավալվեց Հայաստանի ապագայի վերաբերյալ: Կարծես նշմարվում էր երկու ուղղություն. զգուշավոր, որն ընդունելով հանդերձ, որ ԽՍՀՄ դեկավարության քաղաքականությունը հակահայկական է, բայց հայերը այլընտրանք չունեն բացի ԽՍՀՄ-ից (այս տեսակետը մասնավորապես արտահայտվեց Աոս Սարգսյանի «Խառը ժամանակների խառը մտքեր» հողվածում<sup>6</sup>) և «անկախական», որտեղ նշվում էր, որ ԽՍՀՄ-ը փլուզվում է և Հայաստանի խնդիրը դրա փլատակների տակ չմնալն է (Վազգեն Մանուկյան «Գնացքից թռչելու ժամանակն է» հողվածաշարը<sup>7</sup>):

1989 թ. մայիս-հունիս ամիսներին, հատկապես ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի օրերին և հետո հանրապետական մամուլը ուղղակի հեղեղվեց ազգային անցյալի մասին պատմական նյութերով՝ ֆիդայական շարժում, Հայկական հարց, 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետություն:

1989 թ. կեսերից մամուլում հայտնվեցին ԳՇՀ-ին ընդդիմադիր առաջին հողվածները (օրինակ՝ Ազատ Եղիազարյանի «Քաղաքականության մասին»<sup>8</sup>, Լենդրուշ Խուրշուդյանի «Հայոց համագալային

<sup>5</sup> «Սովետական Հայաստան», 1988 թ., նոյեմբերի 20:

<sup>6</sup> «Սովետական Հայաստան», 1989 թ., մայիսի 11:

<sup>7</sup> «Հայք», 1989 թ., մայիս:

<sup>8</sup> «Խորհրդային Հայաստան», 1989 թ., դեկտեմբերի 19, (1989 թ. ապրիլին «Սովետական Հայաստան»-ը վերանվանվեց «Խորհրդային Հայաստան»):

շարժում կազմակերպությունը և Հայկական հարցը»<sup>9</sup>): 1989 թ. նոյեմբերի 2-ին ՀՀ առաջին համագումարի առիթով լույս տեսավ «Հայք» թերթի առաջին համարը, որը 1990 թ. հունվարից սկսեց լույս տեսնել կանոնավոր պարբերականությամբ և մեծ տպաքանակով: 1990 թ., երբ խորհրդային բանակը օժանդակում էր ադրբեջանական բանակին, մամուլում հայտնվեցին նաև հակառուսական հողվածներ: Սակայն միայն այդ թեմաներով չէր սահմանափակվում մամուլը: Արժարժվուն էին նաև աղետի գոտու վերականգնման, բարեփոխումների հետ կապված հիմնախնդիրներ, քննարկվում էր Պարենային ծրագրի իրագործման ձախողումը և այլն: 1989 թ. դեֆիցիտը ավելի խորացավ, 1990 թ. քարտային ռեժիմ մտցվեց, և Հայաստանի մամուլում հայտնվեցին դրա պատճառները քննարկող վերլուծականներ:

Շրջափակման հետևանքով ծանր կացություն ստեղծվեց թղթի հարցում: Դրա հետ մեկտեղ շարունակվեց նոր պարբերականների առաջացումը: Այդ շրջանում էր նաև, որ առաջանում էին ապագա կուսակցությունների սաղմերը և բացի ԱԻՍ-ի և ՀՀՇ վերը նշված և մի քանի ուրիշ պարբերականներից ստեղծվում էին այլ կազմակերպությունների պարբերականներ, որոնք 1991 թ. հետո համալրեցին կուսակցական մամուլի շարքերը: Դրանցից էին՝ «Իրավունք»-ը («Սահմանադրական իրավունք» միության, հետագայում ՍԻՍ կուսակցության պաշտոնաթերթ), «Հնչակ Հայաստանի» (ՍԴԴԿ պաշտոնաթերթ), «Ազգ»<sup>10</sup> (1-2-րդ համարները որպես ՌԱԿ-ի պաշտոնաթերթ, հետո կուսակցության անվանումը գրանցող մարմնի պահանջով հանվեց), «Ազդարար» (ՀԴԿ-ի պաշտոնաթերթ) և այլն:

1990 թ. «Անկախության հռչակագրի» ընդունումից հետո հիմնադրվեց «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը (հիմնադիր՝ ՀՀ ԳԽ, խմբ.՝ Այդին Մորիկյան), որի տպաքանակը այն ժամանակ հասնում էր 15 հազարի:

<sup>9</sup> «Խորհրդային Հայաստան», 1990 թ., մայիսի:

<sup>10</sup> Առաջին օրաթերթն է, որ շարվել և ձևավորվել է համակարգչային եղանակով, մեծ ժողովրդավարություն էր վայելում բազմակարծիքության, լայն տեղեկատվության շնորհիվ:

1990 թ. ԽՍՀՄ ԳԽ ընդունեց որոշում գրաքննության վերացման մասին և «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքը: Օրինականացվեցին մի շարք պարբերականներ:

ԽՍՀՄ-ի փլուզումով ավարտվեց նաև խորհրդահայ մամուլի պատմությունը, և հայ պարբերական մամուլի պատմության մեջ նոր փուլ սկսվեց:

Արդեն 1991 թ. հոկտեմբերի 8-ին ընդունվեց ՀՀ օրենքը «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին»: Մամուլի դերը հասարակության մեջ փոխվեց, այն ձեռք էր բերում նոր գործառույթ և նոր որակներ: Սկսվեց պարբերականների սրընթաց աճ: 1991-1992 թթ. Հայաստանում հրատարակվեցին 41 նոր ամուն թերթեր և 55 ամուն ամսագրեր: Պահպանվել էին նաև խորհրդային տարիներին լույս տեսնող պարբերականները, որոնց մեծ մասը փոխեց իր ուղղվածությունն ու անվանումը: Ժողովրդավարացման գործընթացները, բազմակուսակցականությունը, ձևավորվող շուկայական հարաբերությունները ներգործում էին ոչ միայն մամուլի կառուցվածքի, այլև բովանդակության վրա, փոփոխվում էին մամուլի ոճն ու լեզուն: Հասարակական-քաղաքական («Իրավունք և օրենսդրություն», «Մտավորական Հայաստան», «Առավոտ») և կուսակցական մեծաթիվ պարբերականների (ՀՅԴ-ի «Երկիր», «Ուսանող», ՀԳԿ-ի «Հանրապետական», ՀԴԿ-ի «Ազդարար», ՀԿԿ-ի «Հայաստանի կոմունիստ» պաշտոնաթերթերը, ՌԱ(ԼԴ)Կ-ի «Հայացք») կողքին հայտնվեցին ուսանողական-երիտասարդական, մանկապատանեկան, կանանց, գրական-մշակութային, երգիծական, առևտրային, տեղեկատվական-գովազդային, գործարար շրջանների, արհմիութենական, հոգևոր-եկեղեցական, գիտական և գիտահանրամատչելի ու այլ նոր պարբերականներ: Մեծ թափ ստացավ տեղական մամուլի զարգացումը: Մարզերում սկսեց լույս տեսնել կուսակցությունների մասնաճյուղային մամուլը: ԱԻՄ-ը Մասիսում հրատարակում էր «15 օր», Թալինում՝ «ՀեՎԶ», Սիսիանում՝ «Ձայն բազմաց», ՀՀԾ-ն Ապարանում հրատարակում էր «Հայացք պաշտոնաթերթը», Իջևանում՝ «Ձայն»-ը, ՀԿԿ-ն Գրազդանում՝ «Կոմունիստ»-ը և այլն: Անկախ հան-

րապետության մամուլը սկսեց իր հաղթարշավը, որի սկիզբը դրեց ԱԻՄ-ի «Անկախություն» պաշտոնաթերթը:

Այսպիսով, թերթի կարևոր դերը արտահայտվեց հետևյալում.

1. այն բացառիկ դեր խաղաց հայ հասարակական գիտակցության մեջ՝ անկախության գաղափարի արմատավորման գործում
2. մեծ դեր խաղաց ժողովրդավարական արժեքների տարածման գործում
3. կարևոր սկզբնաղբյուր է Հայաստանի և Մփյուռքի այդ շրջանի պատմության ուսումնասիրության համար
4. կարևոր սկզբնաղբյուր է ԱԻՄ-ի պատմության ուսումնասիրության համար
5. ունեցավ միջազգային նշանակություն սոցիալիստական ճամբարի երկրների անկախական շարժումների համար: Ուկրաինայից և Վրաստանից հատուկ գալիս էին այդ փորձն ուսումնասիրելու համար

Թերթը ոչ միայն հրապարակային ինքնորոշման շարժում սկսեց, այլև նախանշեց այն ուղին, որով պետք է վերականգնվեր պետականությունը: Այդ առումով «Անկախությունը» բացառիկ դեր ունեցավ ժամանակակից հայ մամուլի պատմության մեջ:

**ЛИЛИТ ЗАКАРЯН  
ИИ. НАН. РА**

## **ПРЕССА НА ПУТИ К НЕЗАВИСИМОСТИ**

### **РЕЗЮМЕ**

Статья посвящена 20-ти летию газеты "Анкахутюн" ("Свобода"). В ней представлена роль газеты в изменении общественного мнения, распространению таких демократических ценностей, как самоопределение и независимость нации, проведение референдума, свободных выборов и т.д. В статье представлены изменения в прессе на фоне арцахского движения и трансформаций в советском обществе.

ПРАВОВЫЕ АСПЕКТЫ ПРОЯВЛЕНИЯ ГЕНОЦИДА АРМЯН  
НА ТЕРРИТОРИИ АЗЕРБАЙДЖАНА В 1988-1990 ГГ.  
НА ПРИМЕРЕ СУМГАИТА

Когда речь заходит о массовых погромах армянского населения в конце XX в. на территории Азербайджана, иногда высказывается мнение, что эти насильственные действия не подходят под определение *геноцида*. Между тем, факты и нормы международного права, и, в частности, Конвенция ООН "О предупреждении преступления геноцида и наказания за него", принятая 9-ого декабря 1948 г., свидетельствуют об обратном.

Согласно международному праву "под геноцидом понимаются следующие действия, совершаемые с намерением уничтожить полностью или частично какую-нибудь национальную, расовую или религиозную группу, как таковую:

а) убийство членов такой группы

б) причинение серьезных телесных повреждений или умственного расстройства членам такой группы и т. д."<sup>1</sup>.

В конце 80-х гг. политическая активность в Армении и Карабахе, протекавшая в основном в мирной форме, сопровождалась убийствами армян в Азербайджане. 27 февраля фанатичные азербайджанцы устроили трехдневную бойню в Сумгаите, в новом промышленном городе в 20 милях от Баку, убивая местных армян и уничтожая их имущество. Согласно официальным данным погибло 32 человек. Однако по свидетельству очевидцев, их реальное число переваливало за сотни.

Резня в Сумгаите была лишь первой в серии антиармянских погромов в Азербайджане. Кировабадский район был явно спровоцирован ложными сообщениями азербайджанской прессы о том, что армяне в Карабахе якобы осквернили священную рощу

---

<sup>1</sup> Конвенция ООН "О предупреждении преступления геноцида и наказания за него", принятая 9-ого декабря 1948-ого года, статья 2.



и собирались строить на ее месте опасную с экологической точки зрения фабрику. 21 ноября 1988 г. начались погромы армян второго по величине азербайджанского города Кировабада, число жертв не уточнено, 40.000 армян были изгнаны толпами азербайджанцев из своих домов и вынуждены были бежать в Армению. После одного инцидента в Кировабаде сотни армянских женщин и детей были вынуждены искать убежище в церкви, которую пыталась защитить группа храбрых, но безоружных советских солдат. Несколько солдат были убиты.

Погром Кировабада совпал по времени с ростом антиармянской активности в Баку. 18 ноября 1988 г. за участие в сумгаитской резне в Москве был вынесен смертный приговор одному из азербайджанцев<sup>2</sup>. На следующий день в Баку состоялась массовая демонстрация протеста против решения московского суда. Митинги охватили более 500.000 азербайджанцев. Наиболее характерными были "Смерть армянам!", "Армяне вон из Азербайджана!" и другие подобного рода антиармянские лозунги.

Массовые убийства армян в Баку начались в январе 1990 г., в результате согласно официальным, обычно заниженным данным, было убито 68 армян<sup>3</sup>. В Баку осталось лишь 1800 армян. Большая их часть — женщины, вышедшие замуж за азербайджанцев или дети из смешанных браков.

Советские войска вошли в Баку 19 января оставляя за собой смерть и разрушения. Антиармянски настроенные толпы превратились в антисоветские и окружили здание Центрального Комитета Коммунистической партии Азербайджана.

На Карабахе также был опробован такой варварский метод, как погромы, резня. С криками: "Не отдадим Карабах" — толпы азербайджанцев врываются в квартиры армян, выбрасывали их из окон, истязали, насиловали, сжигали живьем, забивали насмерть камнями, расчленили топором. Такие погромы вспыхну-

---

<sup>2</sup> Продолжение геноцида армян?, "Зинвори майр", N 1, Е., 2006, с. 7.

<sup>3</sup> Там же.

ли в 1988 г. в Сумгаите, Физули, Кировабаде и в других городах и селах Азербайджана<sup>4</sup>.

Таким образом, убийство армян в Сумгаите, Кировабаде, Баку и других городах Азербайджана согласно Конвенции ООН "О предупреждении преступления геноцида и наказания за него" бесспорно является не чем иным, как убийством "части национальной группы как таковой" — армян, т. е. геноцидом со стороны азербайджанцев в отношении армян.

Только этого уже достаточно, чтобы действия азербайджанцев квалифицировать как геноцид, однако, кроме этого во время армянских погромов армянам, которые чудом спаслись и были депортированы из Азербайджана в Армению "причинялись серьезные телесные повреждения и умственное расстройство", что также входит в состав преступления геноцида.

Преступления такого рода, каковым является геноцид, как правило, совершаются с заранее обдуманым умыслом по тщательно разработанному плану, преследуя четкую цель. Для совершения этого преступления необходима определенная система действий. Во время истребления армянского населения Азербайджана четко соблюдалась следующая система действий сначала в Сумгаите, а затем Кировабаде и Баку.

#### 1. Создание соответствующего психологического настроения преступников

Антиармянские митинги в Сумгаите начались 26-ого февраля на центральной площади Ленина. 27-ого февраля на митинге присутствовало еще больше людей. Помимо обращений к митингующим с призывами "Смерть армянам" организаторы митинга применяли и другие средства, например, водка и наркотики, в большом количестве и бесплатно раздавались толпе прямо с грузовиков. Вечером "митинги" переросли в насильственные действия. Первые избиения и погромы длились до поздней ночи, а на следующий день сотни людей, принявших непосредственное

---

<sup>4</sup> Буркова И., Геноцид карабахских армян, Рязань, 1995, с. 15.

участие в преступлениях, как ни в чем не бывало собрались на свой последний "митинг"<sup>5</sup>. Таким образом толпа "подготавливалась" к тому, что ей предстояло сделать, а именно — пойти убивать армян.

## 2. Создание условий для беспрепятственного существования задуманного преступления

Во время сумгаитских событий было очевидным бездействие и подстрекательство партийных, советских органов и сил государственной безопасности во время митингов 26-29-ого февраля в Сумгаите, явное содействие сумгаитской милиции погромщикам, наличие списков армян на руках у организаторов преступлений, отключение телефонов армян работниками городского узла связи, отключение электроэнергии в целых кварталах и микрорайонах в дни погромов, изготовление холодного оружия на промышленных предприятиях Сумгаита.

Геноцид, совершенный в Азербайджане не пресекли, более того, этому никак "не помешали" центральные власти. На заседании Верховного Совета 18 июля М. Горбачев заявил, что трагедии в Сумгаите не было бы, если бы войска не опоздали на три часа, тогда как подразделения министерства обороны и Министерства внутренних дел страны стали прибывать в Сумгаит вечером 28-ого февраля, а через сутки в вечерние часы 29-ого февраля в Сумгаите было убито по крайней мере десять армян, были совершены погромы десятков квартир<sup>6</sup>. Когда войска вступили в Сумгаит беспомощные люди бросались за помощью к БТР-ам, на что военные отвечали, что у них нет приказа вмешиваться<sup>7</sup>. В таком случае возникает законный вопрос: для чего в Сумгаит были введены войска?

---

<sup>5</sup> Сумгаит, геноцид, гласность?, Составители Шахмурадян С., Золян Ф., Саакян Р., Рштуни Р., Улубабян Г., Е., 1990, с. 13.

<sup>6</sup> Там же, с. 18.

<sup>7</sup> Там же, с. 46.

### 3. Заготовление орудий и средств убийства

В цехах трубопрокатного завода Сумгаита, еще до известных событий изготавливались орудия убийства: топоры, ножи, которые использовались во время убийств армян. У подъездов домов, где проживали армяне останавливались бензовозы, из которых бутылки наполнялись бензином и раздавались преступникам, после чего эти бутылки использовались для сожжения квартир и имущества армян<sup>8</sup>.

### 4. Соккрытие преступления и его участников

Факт геноцида, совершенного в Азербайджане в отношении армянского населения, а также участников этого преступления, всячески пытались скрыть как руководители Азербайджана, так и из центра.

Уже после сумгаитских событий по указаную ответственных работников ЦК КП Азербайджана, производился вывоз и захоронение выброшенных из армянских квартир вещей, а также лихорадочно быстрый ремонт разгромленных квартир.

Пострадавших после погромов армян не принимали в больницы, так как в этом случае пришлось бы выяснять обстоятельства полученных травм, а это было невыгодно. Родным убитых долго не выдавали свидетельств о смерти и выдали только после того, как они подписывали, что убитый умер естественной смертью. Таким образом, во многих свидетельствах о смерти указаны неверные причины смерти.

Уголовные дела по Сумгаиту были расчленены, убийства невинных людей по национальному признаку квалифицировались на судебных процессах как убийства из хулиганских побуждений<sup>9</sup>. Потерпевших вызывали в Сумгаит, где они потеряли своих родных, будучи уверенными, что они туда не поедут. Все это было сделано для того, чтобы прикрыть и как-нибудь пропустить дела через суд<sup>10</sup>.

---

<sup>8</sup> Там же, с. 27.

<sup>9</sup> Там же, с. 19.

<sup>10</sup> Там же, с. 38.

Генеральный прокурор СССР Сухарев на сессии Верховного Совета СССР заявил, что перед судом предстанут 94 человека, тогда как только по одному уголовному делу Ахмедова и других явствует, что только 29-ого февраля в нападениях только на 41-а квартал Сумгаита, где проживали армяне, участвовало около 400 человек<sup>11</sup>.

Дело дошло даже до абсурда. Академик АН Азербайджана З. Буниятов полностью извратил суть и характер трагедии и дошел до того, что объявил виновниками, организаторами и зачинщиками преступлений самих армян и даже зарубежные армянские партии. Армяне объявлены мазохистами, "выдумавшими" Сумгаит, где армян убивали сами армяне<sup>12</sup>.

Существует ошибочное мнение, что под геноцидом понимается истребление представителей какого-либо народа, если это организовано на уровне руководства государства, а нет прямых доказательств, что руководство Азербайджана руководило погромами в городах Азербайджана.

На данное "утверждение" можно ответить по нескольким аспектам. Во-первых, на данную реплику дает четкий ответ сама Конвенция ООН: "Лица, совершившие геноцид или какое-либо преступление из перечисленных в статье 3 (заговор с целью совершения геноцида, прямое и публичное подстрекательство к совершению геноцида, покушение на совершение геноцида, соучастие в геноциде - А. М.) деяний, подлежат наказанию, независимо от того, являются ли они ответственными по конституции правительствами, должностными или частными лицами (подчеркнуто нами - А. М.)"<sup>13</sup>. Таким образом в конвенции констатируется, что не обязательно, чтобы массовую резню национального меньшинства осуществили руководители государства, чтобы данное преступление можно было квалифицировать как геноцид, достаточно и того, чтобы массовую резню осуществили "частные лица". Во-

---

<sup>11</sup> Там же, с. 16.

<sup>12</sup> Там же, с. 19.

<sup>13</sup> Конвенция ООН, статья 4.

вторых, организаторы такого тяжкого преступления, каковым является геноцид, стараются не оставлять прямых доказательств, которые потом позволили бы привлечь их к ответственности. Однако если на данный момент нет прямых доказательств организации геноцида армян в Азербайджане руководством республики, то косвенных доказательств хоть отбавляй:

1. Погромщики окончательно убедились в своей безнаказанности, когда митинг 28-ого февраля завершился тем, что первый секретарь Сумгаитского горкома партии Муслим-заде взял государственный флаг Азербайджанской ССР и повел за собой огромную толпу собравшихся на площади Ленина. Затем толпа разделилась и, уже вооруженная стала нападать на квартиры армян<sup>14</sup>.

2. Бюро Сумгаитского горкома партии 10-ого мая 1988 г. осудило руководство и коллектив Азербайджанского трубопрокатного завода за то, что в дни сложной ситуации в цехах завода имело место изготовление топоров, ножей и других предметов, которые могли быть использованы хулиганствующими элементами<sup>15</sup>.

3. Сразу же после погромов по указаниям сверху, в частности работника ЦК КП Азербайджана Ганифаева, производились вывоз и захоронение выброшенных из армянских квартир вещей, а также лихорадочно быстрый ремонт разгромленных квартир, объектов общественного назначения. То есть уничтожались вещественные доказательства, скрывались следы преступлений<sup>16</sup>. Это факты которые сами говорят за себя.

По той же конвенции ООН, кроме осуществления самого акта геноцида, наказуемы также следующие деяния: заговор с целью совершения геноцида; прямое и публичное подстрекательство к совершению геноцида<sup>17</sup>.

---

<sup>14</sup> Сумгаит, геноцид, гласность?, с. 14.

<sup>15</sup> "Коммунист Сумгаита", 13 мая, 1988.

<sup>16</sup> Сумгаит, геноцид, гласность?, с. 15.

<sup>17</sup> Конвенция ООН, Статья 3.

То, что например в Сумгаите имел также место заговор с целью совершения геноцида, доказывают следующие факты:

1. Всем руководителям предприятий дали указание — не оставлять армян на работе, отправлять их домой, чтобы отвести от руководства ответственность<sup>18</sup>.

2. По подтверждению многих пострадавших в дни погромов по местному радио сообщили три номера телефонов, по которым нужно было позвонить при необходимости и советовали "Сидите дома". После этих звонков через 10-15 минут следовало нападение на эту квартиру<sup>19</sup>.

3. Беседы с пострадавшими сумгайтцами приводят к убеждению, что руководство республики допустило, если не способствовало созданию банд, которые состояли из "отрядов" с четко разграниченными функциями: кто-то убивал, кто то крушил и выбрасывал домашнее имущество в окно, другие поджидали внизу и поджигали имущество армян. В этих отрядах использовались бывшие уголовники и такое распределение функций в бандах было далеко не случайно, четкая дисциплинированность и иерархичность банд<sup>20</sup>.

Совершенно очевидно, что без ведома руководства республики, такого рода действия произвести было невозможно, а это свидетельствует о "заговоре с целью совершения геноцида".

О том, что в Сумгаите имело место прямое и публичное подстрекательство к совершению геноцида свидетельствует хотя бы тот факт, что на митингах организаторы последних обращались к собравшимся призывами "Смерть армянам". Более того, на этих митингах участвовали первые лица города, например первый секретарь Сумгаитского горкома партии Муслим-заде, который своими речами подстрекал митингующих на активные действия, а потом и лично повел толпу за собой, после чего и случились из-

---

<sup>18</sup> Сумгаит, геноцид, гласность?, с. 26.

<sup>19</sup> Лошак В., Сумгаит. Эпилог трагедии, "Московские новости", 22 мая, 1988.

<sup>20</sup> Сумгаит, геноцид, гласность?, с. 53-59.

вестные события. В лучшем случае для руководства Азербайджана, учитывая то, что с их молчаливого согласия и "невмешательства" происходило истребление армянского населения Азербайджана, и наивно полагать, что о процессах в таких масштабах они не знали, их можно обвинить в соучастии в геноциде, что однако тоже наказуемо по международному праву.

Таким образом, можно констатировать, что в любом случае руководство Азербайджана ответственно за геноцид армянского населения на территории Азербайджана в 1988-1990 гг.

*ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԲՅԱՆ  
ՀՀ ՊԱՍ ԴԻ*

**ԱՂԻԲԵՋԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 1988-1990 թթ. ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՄԱՆՈՒԹՅԱՆ  
ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵԶՐԵՐԸ ՍՈՒՄԳԱԻԹԻ ՕՐԻՆԱԿՈՎ**

### **ԱՍՓՈՓՈՒՄ**

Դեպքերի անաչառ ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ միջազգային իրավունքի նորմերի և մասնավորապես ՍԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման» կոնվենցիայի համաձայն հայերի զանգվածային ջարդերը Ադրբեջանի Սունդգայիթ, Կիրովաբադ, Բաքու և այլ քաղաքներում միանշանակ որակվում են իբրև ցեղասպանություն:



ՀԱՅՐԵՆԻԶ-ՍՓՅՈՒՌ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Խորհրդային Միության տարիներին Հայ Հեղափոխական Դաշնակցություն (ՀԶԴ), Ռանկավար-Ազատական (ՌԱԿ) և Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան (ԱԴՀԿ) կուսակցությունների գործունեությունն արգելված էր հայրենիքում, ուստի նրանք գործում էին արտասահմանում: ԽԱՀՄ-ի փլուզումը և անկախ Հայաստանի գոյության փաստը նոր հնարավորություններ ստեղծեցին հայրենիքում նրանց գործունեության համար: Վերահաստատվելով հայրենիքում՝ նրանք ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին երկրի քաղաքական անցուղարձեռին:

Սփյուռքում հասարակական-քաղաքական ակտիվ գործունեության շնորհիվ ՌԱԿ-ը ստեղծել է մի շարք մշակութային միություններ: Նրա ազդեցության ոլորտում է գտնվում նաև Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը (ՀԲԸՄ), որը 1989 թ.-ից իր կրթական, մշակութային, գիտական, առողջապահական, մարզական ծրագրերից բացի սկսեց զբաղվել նաև Հայ դատի գծով քարոզչական աշխատանքով<sup>1</sup>:

Արտասահմանում ՌԱԿ-ը աշխատանքներ է տանում օտար երկրների կառավարական շրջաններին և հանրային կարծիքին Հայաստանի իրավիճակը և շահերը ճշմարտացի ներկայացնելու ուղղությամբ: Կուսակցության կողմից 1990-ական թթ. արտերկրում անցկացվեցին արցախյան դատի պաշտպանությանը նվիրված մի շարք քաղաքական հավաքներ, բողոքագրեր ու դիմումներ հղվեցին ԽԱՀՄ, ԱՄՆ նախագահներին՝ արցախյան խնդրի արդարացի լուծման պահանջով: ՌԱԿ-ը Թուրքիայի հարցում մնում է պահանջատիրության դիրքերում՝ պահանջելով Թուրքիայից ընդունել հայոց ցեղասպանությունը: Այդ ուղղությամբ Վաշինգտոնում գործում է ՌԱԿ հասարակական հարաբերությունների բաժնի մասը հանդիսացող Ամերիկայի մարդու իրավունքների

<sup>1</sup> Դավլաթյան Կ., Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Ե., 2004, էջ 143:

հայկական խորհուրդը, որի նպատակն է արդար լուծում գտնել ցեղասպանության հարցին և ԱՄՆ-ի քաղաքականության մեջ ապահովել հայերի առավել մասնակցությունը: Կուսակցության նպատակն է նպաստել Հայաստանի զորացմանը: Տնտեսական առումով ՌԱԿ-ը օգնություններ հատկացումներից բացի համատեղ ձեռնարկություններ հիմնելու նպատակով Հայաստանում նյութական կարևոր ներդրումներ է կատարում:

ՌԱԿ-ը Հայաստանում հաստատվեց 1990 թ. (ՀՌԱԿ), որը լինելով ինքնուրույն կուսակցություն, հավատարիմ է ՌԱԿ-ի գաղափարական սկզբունքներին:

1995 թ. Կիպրոսում կայացած ՌԱԿ-ի 19-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը կազմավորեց կենտրոնական վարչություն՝ Հակոբ Գասարճյանի ատենապետությամբ: Սակայն կուսակցության նորընտիր վարչության և նախկին ղեկավար կազմի անդամների միջև ի հայտ եկած կազմակերպական բնույթի լուրջ հակասությունների արդյունքում նորընտիր վարչությունը կուսակցությունից հեռացրեց նախորդ ղեկավար կազմի անդամներին: Վերջիններս 1996 թ. Բոստոնում հրավիրված ժողովում վերստանձնելով իրենց լիազորությունները, կազմավորեցին ևս մի կենտրոնական վարչություն՝ Հայկաշեն Ուզունյանի ատենապետությամբ: Փաստորեն կուսակցությունն այսպիսով պառակտվեց, որը խորանալով տարածվեց նաև ՌԱԿ-ի հովանու ներքո գործող Թեքեյան մշակութային միության վրա: Նույն անվան տակ սփյուռքում սկսեցին գործել երկու կուսակցություններ՝ միմյանց նկատմամբ անհաշտ ղեկավար մարմիններով:

Կուսակցությունը հետագայում քայլեր ձեռնարկեց միավորվելու համար, այդ նպատակով անգամ 1999 թ. փետրվարին Փարիզում կայացան ՌԱԿ զույգ վարչությունների բանակցությունները: 2000 թ. փետրվարի 11-13-ին Փարիզում կուսակցության երկու թևերի միջև կայացած համդիպման ընթացքում բանակցող կողմերի միջև կնքված ներքին համաձայնագրով չեղյալ հայտարարվեցին երկուստեք կատարված պատժիչ բնույթի որոշումները և վերահաստատվեցին բոլոր անդամներ-

րի կուսակցական իրավավիճակը<sup>2</sup>: Արդյունքում 2000 թ. ապրիլի 8-ին Աթենքում իրավիրված ՌԱԿ-ի 22-րդ ընդհանուր պատգամավորական ժողովն ավարտվեց կուսակցության վերամիավորմամբ: Կուսակցության պատվո նախագահ ընտրվեց Հայկաշեն Ուզունյանը (Փարիզ), վարչության ատենապետ՝ Լիբանանի խորհրդարանի պատգամավոր Հակոբ Գասարճյանը (Բեյրութ):

Ափյուռքում Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության (ՍԴՀԿ) գործունեության գլխավոր առանցքը հայապահպանությունն է: Աշխարհի տարբեր երկրների հայկական համայնքներում կուսակցության ջանքերով հիմնվել և գործում են կրթական, մշակութային, մարզական-երիտասարդական հաստատություններ, կազմակերպություններ և ակումբներ: ՍԴՀԿ հովանավորությամբ են գործում Նոր սերունդ մշակութային միությունը, Հայ մարմնամարզական միությունը, որոնք մասնաճյուղեր ունեն գրեթե բոլոր հայաշատ համայնքներում: ՍԴՀԿ-ն հանդես է գալիս ազգային համերաշխության և միջկուսակցական համագործակցության դիրքերից, զորավիզ է Հայ Առաքելական եկեղեցու միավորման գաղափարին: Կուսակցության հիմնական խնդիրն է Հայկական հարցի լուծումը:

ՍԴՀԿ-ն Հայաստանում հաստատվեց 1991 թ.: 1990-ական թթ. այն իր առաջնահերթ խնդիրներն է համարում Արցախի հարցը, Հայկական դատը, երկրաշարժի հետևանքների վերացումը, Հայաստանի հետագա վերելքն ու զորացումը: ԱԴՀԿ-ն արցախյան հարցի լուծում է համարում Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի միացումը կամ նրա անկախ կարգավիճակի ընդունումը: Կուսակցությունն իր առջև խնդիր է դնում նպաստել նաև Հայաստանում քաղաքական կայունության և ժողովրդավարության հաստատմանը: «Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության վերահիմնավորումը Հայաստանի մեջ կընձեռնե կարելիություն, որ ան իր հարյուրամյա հեղափոխական-քաղաքական հարուստ փորձառությունը դնե ի սպաս ամբողջական, ինքնիշխան, արդար ու բարգավաճ ազգային պետության մը կերտումին, որը մեր կուսակցության հիմնական նպատակը եղած է և կշարունակե արտահայ-

<sup>2</sup> Ափյուռքահայ կազմակերպություններ, Ե., 2002, էջ 141-142: Տե՛ս նաև Հայ սփյուռք. Հանրագիտարան, Ե., 2003, էջ 724-725:

տել հայ ժողովուրդի լավագույն տենչերը» - ասվում է ՍԴԴԿ Կենտրոնական վարչության շրջաբերականում<sup>3</sup>:

Հայ ավանդական կուսակցություններից Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) իր հիմնական խնդիրն է համարում Հայկական հարցի լուծումը: Կուսակցությունը ազատ, անկախ ու միացյալ Հայաստանի ստեղծման կողմնակից է, որի սահմանները համապատասխանելու են Սևրի պայմանագրի (1920) պայմաններին՝ ընդգրկելով նաև Ղարաբաղն ու Նախիջևանը: ՀՅԴ գտնում է, որ Թուրքիան պետք է ընդունի ցեղասպանության փաստը և հատուցի հայերին հասցված վնասը: Իր հանձնախմբերի գործունեության միջոցով (հրապարակումներ, ժողովների ու ցույցերի կազմակերպում և այլն) ՀՅԴ ձգտում է ազդել միջազգային հասարակական կարծիքի վրա, հասնել հայոց ցեղասպանության համընդհանուր դատապարտմանը և պատմական արդարության վերականգնմանը:

ՀՅԴ-ի և հատկապես նրա Հայ Դատի հանձնախմբերի գործունեության շնորհիվ Հայկական հարցը 1987 թ. հունիսին քննարկվեց Եվրախորհրդարանում, իսկ հայոց ցեղասպանության հարցը՝ ԱՄՆ Սենատում:

ՀՅԴ հովանավորությամբ են գործում Հայ օգնության միությունը, համազգային մշակութային միությունը, Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը, ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպություններ, ինչպես նաև բազմաթիվ դպրոցներ, մարզական ու մշակութային ակումբներ և այլն:

ՀՅԴ Հայաստանում հաստատվեց 1990 թ. օգոստոսին: Սակայն հայրենիքում իր գործունեության ընթացքում կուսակցությունը տարակարծություններ ունեցավ երկրի իշխանությունների հետ և ենթարկվեց հալածանքների: Հակասությունների արդյունքում ՀՅԴ մի շարք գործիչներ, այդ թվում նաև ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրայր Մարուխյանը ՀՀ Մախագահի 1992 թ. հունիսի 29-ի հրամանագրով արտաքսվեցին Հայաստանից: Սփյուռքում դա կուսակցության կողմնակիցների և համակիրների կողմից տեղիք տվեց բողոքի լայն շարժման:

<sup>3</sup> «Հայրենիքի ծայն» շաբաթաթերթ, 12 սեպտեմբեր, 1990:

Կուսակցության հանդեպ կիրառված հալածանքները մեկնաբանելու նպատակով 1992 թ. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում ԱՄՆ-ի արևմտյան և արևելյան շրջանների, ինչպես նաև Կանադայի շրջանի ՉՅԴ Կոմիտեների հրավերով Զ. Մարուխյանը այցելեց Գյուլիսային Ամերիկայի հայահոծ քաղաքները և սփյուռքահայությանը ներկայացրեց ԶԶ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հունիսի 29-ի ելույթը ԶՅԴ դեմ<sup>4</sup>: Իր այցի ընթացքում Զ. Մարուխյանը հերքեց ԶԶ նախագահի՝ ԶՅԴ դեմ ուղղված մեղադրանքները կուսակցության կողմից աղետի գոտու և Արցախի համար հանգանակված գումարների յուրացման կապակցությամբ: Նա հերքեց նաև նախագահի մեղադրանքներն այն մասին, որ ԶՅԴ վարում է հայ ժողովրդին պատերազմի մեջ ներքաշելու քաղաքականություն, մերժում է գործակցել իշխանությունների հետ և իր շարքերից հեռացրել է գործակցող անդամներին:

Կուսակցության հետ հակասությունների հետագա սրումը հանգեցրին նրան, որ 1994 թ. դեկտեմբերի 28-ին ԶԶ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հրամանագրով, ապա և ԶԶ Գերագույն դատարանի 1995 թ. հունվարի 13-ի որոշմամբ ԶՅԴ գործունեությունը Հայաստանում կասեցվեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքի խախտման մեղադրանքով: ԶՅԴ Հայաստանի ղեկավար մարմնի անդամներից մի քանիսը ձերբակալվեցին և դատի տրվեցին, արգելվեց կուսակցության պաշտոնաթերթերի հրատարակումը:

ԶԶ նախագահի 1994 թ. դեկտեմբերյան հրամանագրից հետո ԶՅԴ բյուրոն 1995 թ. հունվարի 8-ի հայտարարությամբ որոշեց.

«Ա) Առկախել «Հայաստան» համահայկական Հիմնադրամի աշխատանքներուն մասնակցութիւնը՝ բոլոր մակարդակներուն վրայ:

Բ) Առկախել Հայաստանի դեսպանատուներուն և ներկայացուցչութիւններուն նիւթական և բարոյական օժանդակութիւնները»<sup>5</sup>:

Միաժամանակ որոշվեց, որ կուսակցությունը շարունակելու է Հայաստանի և Արցախի ժողովրդին հասցնել իր բարեսիրական ու մարդասիրական օժանդակությունը և զորավիճ կանգնել Արցախի ազատագրական արդար պայքարին:

<sup>4</sup> «Դրօշակ», 12 օգոստոս, 1992, թիվ 8, էջ 3:

<sup>5</sup> «Արմենիա», բացառիկ թիվ, հունվար, 1995:

Կուսակցության գործունեության կասեցման դեմ 1995 թ. հունվարի 8-ին ՅՅԴ Կենտրոնական կոմիտեն Փասադենայում կազմակերպեց բողոքի համաժողովրդական հավաք, որին մասնակցեցին շուրջ 4000 մարդ<sup>6</sup>:

Այս պայքարն իր ավարտին հասավ Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականից (1998 թ. փետրվարի 3) և Ռոբերտ Քոչարյանի ԴՀ նախագահի պաշտոնակատար դառնալուց մի քանի օր անց, երբ ԴՀ արդարադատության կոլեգիան իր 1998 թ. փետրվարի 9-ի որոշմամբ պաշտոնապես վերականգնեց ՅՅԴ-ի գործունեությունը Հայաստանում<sup>7</sup>: Կարծվեցին քրեական գործերը ՅՅԴ Հայաստանի գերագույն մարմնի անդամների նկատմամբ, վերսկսվեց կուսակցության թերթերի հրատարակումը: Արդյունքում 1999 թ. ընտրված Ազգային ժողովում ՅՅԴ ապահովեց 8 պատգամավորից կազմված խմբակցություն:

Հայ Բեղափոխական Դաշնակցության հասարակական հարաբերությունների մասնաճյուղն է հանդիսանում Վաշինգտոնում 1923 թ.-ից գործող Ամերիկայի Հայկական Ազգային կոմիտեն, որի ժրագրային հիմնահարցերն են 1990-ական թթ. սկզբին հանդիսանում հայոց ցեղասպանության ճանաչումը, երկրաշարժի կապակցությամբ Հայաստանի համար օգնության ձեռք բերումը և Դարաբաղյան ինքնորոշման պաշտպանությունը: Երբեմն Ազգային կոմիտեն և Ամերիկայի Հայկական համագումարը հանդես են գալիս համատեղ, հատկապես երբ հարցը վերաբերում է ցեղասպանության ճանաչման ուղղությամբ տարվող աշխատանքներին:

Հայ քաղաքական կուսակցությունները և կազմակերպությունները հայությանը վերաբերող արմատական խնդիրների լուծման հարցում սփյուռքում հանդես են գալիս նաև համատեղ ուժերով: Այդ մասին է վկայում 1988 թ. հոկտեմբերին ՅՅԴ, Հնչակյան և Ռամկավար Ազատական կուսակցությունների համատեղ հայտարարությունը Հայաստանի հետ վերամիավորվելու Արցախի հայ բնակչության պահանջը արդարացի ճանաչելու մասին:

<sup>6</sup> «Փարոս» շաբաթաթերթ, 15 հունվար, 1995:

<sup>7</sup> Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 51: Տե՛ս նաև Հայ սփյուռք. Հանրագիտարան, էջ 678:

Հայ քաղաքական կուսակցությունների համագործակցության արդյունք է նաև 1993 թ. մայիսին ՀՀԴ, ՌԱԿ և ՍԴՀԿ ղեկավարությունների կողմից հուշագրերի հանձնումը Լիբանանում Ռուսաստանի և ԱՄՆ-ի դեսպաններին, որոնց ներկայացրած իրենց հուշագրերում երեք կուսակցություններն էլ մերժում էին Թուրքիայի մասնակցությունը Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորմանը որպես միջնորդ<sup>8</sup>:

Ափյուռքահայ կազմակերպություններից ակտիվ է հատկապես 1972 թ. ԱՄՆ-ում հիմնված Ամերիկայի Հայկական համագումարը (ԱՀՀ, Armenian Assembly of America): ԱՀՀ-ի նպատակն է համախմբել ամերիկահայերին, աջակցել ԱՄՆ-ում հայ մշակութային ավանդների և ազգային ինքնագիտակցության զարգացմանը, հայկական հուշարձանների ու մշակութային արժեքների պահպանմանը, հավաստի տեղեկություններ տարածել հայ ժողովրդի պատմական, կրթական, կրոնական ու մշակութային կյանքի և ամերիկահայության մասին, պաշտպանել ամերիկահայերի շահերն ու իրավունքները: Այդ նպատակներն իրագործելու համար ԱՀՀ մշակել է կառավարական, իրավագիտական, հասարակական, ուսանողական, գաղթականական ծրագրեր:

Հայաստանի անկախացումից և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումից (1991 թ. սեպտեմբեր) ի վեր ԱՀՀ զբաղվում է նաև Հայաստանի և ԼՂՀ-ի բնակչության բարօրության, անվտանգության ու զարգացման խնդիրներով՝ հետապնդելով հիմնականում հետևյալ նպատակները. ԱՄՆ-ի Կոնգրեսում հայանպաստ ծրագրերի և բանաձևերի ընդունում, մարդասիրական օգնություն ԼՂՀ-ին, տնտեսական և մարդասիրական օգնություն Հայաստանին, ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման շուրջ հայանպաստ դիրքորոշման ձևավորում, Հայոց ցեղասպանության փաստի ճանաչում:

1990 թ. Հայաստանում բացվեց ԱՀՀ-ի ներկայացուցչություն: ԱՀՀ-ի գրասենյակը Երևանում սկսել էր գործել 1988 թ. երկրաշարժից անմիջապես հետո՝ 1989 թ. փետրվարից:

ԱՀՀ-ն մեծ աշխատանք է կատարել միջազգային հանրությանը Հայաստանին ծանոթացնելու, քաղաքական վիճակը ճշմարտացիորեն

<sup>8</sup> «Ազգ» օրաթերթ, 27 մայիս, 1993:

ներկայացնելու, հայ-ադրբեջանական կոնֆլիկտը պարզաբանելու, միջազգային մարդասիրական կազմակերպություններին Հայաստանի հարցով հետաքրքրություն առաջացնելու խնդրում:

1988 թ. երկրաշարժից տուժած Հայաստանին սատարելու նպատակով ԱՀՀ հիմնեց օգնության հիմնադրամ, որը մինչև 1989 թ. դեկտեմբերի 31-ը հանգանակեց 4 մլն դոլար<sup>9</sup>: 1997 թ. շնորհիվ կոնգրեսի երկկուսակցական աջակցության, ԱՀՀ-ին հաջողվեց 12,5 մլն դոլարի ԱՄՆ մարդասիրական օգնության հատկացում ստանալ Լեռնային Ղարաբաղի կարիքները հոգալու համար՝ ի հավելումն Հայաստանին հատկացված 87,5 մլն դոլարի<sup>10</sup>: ԱՀՀ-ն չի զբաղվում այդ օգնությունների բաժանմամբ, այլ աջակցում է, որ այդ օգնությունը տեղ հասնի, համակարգում է օգնության խմբերի աշխատանքը:

Բացի Հայաստանի համար մարդասիրական օգնություն հայթայթելուց, ԱՀՀ-ն աջակցում է նաև Հայաստանի ժողովրդավարական զարգացմանը: Համագումարի հայաստանյան խոշոր ձեռնարկներից է «Հասարակական կազմակերպությունների ուսուցման և տեղեկատվության կենտրոն»-ի (ՀԿՈՒՏԿ) ստեղծումը, որն օգնում է հայաստանյան ոչ կառավարական կազմակերպություններին ավելի մեծ դեր ստանձնել երկրի զարգացման գործում: ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ նման հաստատություն բացվեց այն մտայնությամբ, որ Հայաստանը չի կարող հավերժ մնալ որպես մարդասիրական օգնություն ընդունող երկիր, այլ շուտով կբռնի զարգացման ճանապարհը: Կենտրոնի ստեղծման գաղափարը ծագել էր դեռևս 1992 թ., սակայն ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը այդ ծրագիրը համաձայնեց ֆինանսավորել միայն 2 տարի անց:

ՀԿՈՒՏԿ-ը աշխատանքներ է տանում հասարակությանը հուզող տարբեր հիմնահարցերի լուծման և իրավական իրազեկության բարձրացման ուղղությամբ, հետևում է, որպեսզի չխախտվեն մարդու իրավունքները, օգնում հաշմանդամներին, բնապահպանության վերաբերյալ կազմակերպում միջոցառումներ, ինչպես նաև հոգում միայնակ ծե-

<sup>9</sup> Սփյուռքահայ կազմակերպություններ, էջ 12:

<sup>10</sup> «Ազգ», 3 հուլիս, 1998:



րերի մասին, տնայնագործության հնարավորություն ընձեռում բազմա-  
զավակ մայրերին: 1996 թ. կենտրոնն իր մասնաճյուղը բացեց Գյումրի-  
ում: Երևանում և Գյումրիում տեղադրված գրասենյակներով ՀԿՈՒՏԿ-ը  
խորհուրդներով և գործնական ծառայություններով համագործակցեց  
ավելի քան 800 ոչ կառավարական կազմակերպությունների հետ,  
որոնց սովորեցնում էր կազմակերպել բյուջեն, ներկայացնել որևէ ծրա-  
գիր, ինչպես նաև քարոզչություն անցկացնել: Կազմակերպվում են  
մարդու իրավունքներին, մեծահասակների, երեխաների, ինչպես նաև  
շրջապատի մաքրության թեմաներին վերաբերող հանդիպումներ կա-  
ռավարության անդամների և լրատվամիջոցների հետ: Կենտրոնը նաև  
հանդիպումներ է կազմակերպում միջազգային այնպիսի հաստատու-  
յունների հետ, ինչպիսիք են Եվրախորհրդարանը, ՄԱԿ-ի փախստա-  
կանների հարցերով հատուկ գրասենյակը և այլն:

ԱՀՀ-ն 1994 թ.-ից Հայաստանում իրագործեց ծառայուն կման  
ծրագիր, որն իր մեջ ներառում էր նաև չորացրած մրգի արտադրության  
վերականգնումը: Օրագրի շրջանակներում 2000 թ. դրությամբ 300 հա-  
զար ծառ է տնկվել<sup>11</sup>:

ԱՀՀ-ն Հայաստանում իրականացնում է նաև ամառային շրջանի  
իր ուսանողական ծրագիրը: Հիմնվելով 1978 թ.-ից ի վեր գործող  
սկզբնական ծրագրի վրա, որը հնարավորություն էր տալիս սփյուռքա-  
հայ ուսանողներին ամառվա ընթացքում աշխատել Վաշինգտոնում,  
ուսանողական ծրագիրն 1999 թ. առավել ընդլայնեց իր ոլորտները՝  
նաև ընդգրկելով Հայաստանի պետական կառավարական կառույցնե-  
րում աշխատելը: Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանի բարգա-  
վաճմանը՝ կամավորական հիմունքներով ՀՀ կառավարական կառույց-  
ներում ներգրավելով ամերիկահայ երիտասարդներին, որոնք իրենց  
աշխատանքային փորձն ու գիտելիքները փոխանցելով հայրենիքին,  
միաժամանակ հարստանում են հայրենիքի պատմության, մշակույթի  
վերաբերյալ գիտելիքներով:

---

<sup>11</sup> Նույն տեղում, 27 մայիս, 2000:

1990-ական թթ. վերջին ԱՀՀ-ն զգալիորեն ընդլայնեց գործունեության ոլորտը՝ իր քարոզչական աշխատանքներում ընդգրկելով բազում ամերիկահայերի, շնորհիվ նորաստեղծ «ԱՐԱՄԱԿ» (Armenian American Actions' Committee - Ամերիկահայերի գործողությունների կոմիտե) կազմակերպության: ԱՐԱՄԱԿ-ը մի կառույց է, որը պայքարում է այս կամ այն հայանպաստ որոշումը պաշտոնական մարմիններում անցկացնելու համար: Օրինակ՝ ԱՐԱՄԱԿ-ի շնորհիվ ամերիկահայությունը բողոքեց Կալիֆոռնիայի համալսարանում Օսմանյան ուսումնասիրությունների ամբիոն բացելու դեմ, որն արդյունքում չբացվեց: Համայնքներում անցկացվող համաժողովների և շրջանային հանդիպումների շնորհիվ «ԱՐԱՄԱԿ»-ը հավաքագրել է ԱՄՆ-ի բոլոր նահանգներում գործնական աշխատանքներ տանող ավելի քան 6 հազար կամավորների:

1996 թ. Վաշինգտոնում ԱՀՀ-ի համակարգում հիմնվեց «ԱՆԻ» (Armenian National Institute - Հայկական ազգային ինստիտուտ) հաստատությունը, որը զբաղվում է հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթերի հավաքման, ուսումնասիրության և օտարներին ճանաչել տալու աշխատանքով: Հաստատության կողմից միայն Անգլիայից ձեռք բերվեց մոտ 12 հազար փաստաթուղթ: Ազգային ինստիտուտի իրավաբանական բաժինը զբաղվում է օսմանյան բանկերում հայերի ունեցվածքի փոխհատուցման խնդրով: Հաստատությունն ընդլայնված աշխատանք է տանում լրատվամիջոցների, ամերիկյան կազմակերպությունների և ճանաչված հասարակական գործիչների հետ:

ԱՀՀ-ն ակտիվ աշխատանք է տանում հայկական ցեղասպանության բանաձևը ամերիկյան կոնգրեսի կողմից ընդունելու ուղղությամբ: ԱՀՀ-ի ուշադրության կենտրոնում է ԱՄՆ-ի կառավարության քաղաքականությունը և հատկապես նրա հնարավոր հետևանքները հայության համար: Այդ նպատակով կազմակերպության կառավարական և իրավագիտական մասնաբաժինը ամերիկահայերին հուզող հարցերի շուրջ մշտապես աշխատում է ԱՄՆ-ի Կոնգրեսի և վարչակազմի անդամների հետ: ԱՀՀ-ի թողարկած հաղորդագրությունները ամերիկահայ համայնքին տեղյակ են պահում ԱՄՆ-ի կառավարության քաղաքականության այն դրսևորումներին, որոնք կարող են անդրադառնալ հայության շահերի վրա: ԱՀՀ-ի պահպանության տակ են գտնվում հայոց ցեղա-

սպանության մասին կարևոր փաստաթղթերի հավաքածուներ (ցեղասպանության մասին 1915 թ. ի վեր ԱՄՆ-ի կառավարության հրապարակած պաշտոնական փաստաթղթեր, Օսմանյան կայսրությունում Առաջին աշխարհամարտի ժամանակ ԱՄՆ-ի դեսպանի և հյուպատոսների տեղեկագրություններ և այլն): ԱՅԴ-ն տեղեկություններ է տրամադրում պաշտոնատար անձանց ցեղասպանության վերաբերյալ: 2000 թ. Վաշինգտոնի կենտրոնական մասում ԱՅԴ-ի կողմից գնվեց շենք՝ Հայոց ցեղասպանության թանգարանի համար:

ԱՅԴ-ի համալսարանական (ակադեմիական) հարցերի մասնաբաժինը հանրային և մասնավոր դպրոցներում օգտագործելու համար մշակել և տարածել է նյութեր Հայկական հարցի վերաբերյալ, ուսուցիչների համար պատրաստել «Հայկական ցեղասպանության աղբյուրների ուղեցույցը», ինչպես նաև հայոց ցեղասպանությունը և նրա դասերը քննարկող դաստիարակչական մի տեսաժապավեն: ԱՅԴ-ն հակազդում է հայոց ցեղասպանությունը հերքելու փորձերին, անդրադառնում ցեղասպանությունը ուրանալու թուրքական կառավարության բոլոր ջանքերին և պայքարում, որպեսզի ԱՄՆ-ի կառավարությունը հայոց ցեղասպանությունը ճանաչի որպես անհերքելի պատմական փաստ: ԱՅԴ-ն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում հայոց ցեղասպանության վերաբերյալ միջազգային գիտաժողովների կազմակերպմանը, հրապարակում և տարածում է նաև ցեղասպանության մասին գիտական գրականություն:

ԱՅԴ-ի և ամերիկահայ մյուս լոբբիստական կազմակերպությունների գործունեության կարևոր ձեռքբերումներից է հանդիսանում ԱՄՆ Կոնգրեսի «Ազատության աջակցության ակտ» կոչվող օրենքի 907 բանաձևի ընդունումն ու կիրառումը, որն արգելում էր ԱՄՆ-ի կառավարության ուղղակի օգնությունն Ադրբեյջանին՝ Հայաստանն ու Ղարաբաղը շրջափակման ենթարկելու համար: Բանաձևը կասեցվեց 2001 թ.:

ԱՅԴ-ի հայազգի ուսանողների ամառային պրակտիկան 20 տարի է, ինչ կազմակերպվում է Վաշինգտոնի կարևոր քաղաքական կենտրոններում, այդ թվում Կոնգրեսում: 1977-1998 թթ. դրությամբ շուրջ 600 ուսանողներ հնարավորություն են ունեցել երկու ամիս շարունակ աշխատել մի միջավայրում, ուր ձևավորվում է ԱՄՆ քաղաքականություն-

նը<sup>12</sup>: ԱԴԴ-ի այս ծրագիրը նպատակ ունի կադրեր պատրաստել ապագայում հայանպաստ գործունեություն ծավալելու համար:

ԱԴԴ-ն աշխատում էր ԱՄՆ Կոնգրեսում 1995 թ. ստեղծված Հայկական հարցերի ավելի քան 60 անդամից բաղկացած կոնգրեսական խմբի հետ՝ կազմակերպելով այցեր Հայաստան ու Արցախ, օգնելով նրանց ավելի եռանդուն ջանքեր գործադրել հայանպաստ օրինագծերի անցկացման հարցում: ԱԴԴ-ն առաջնորդող դեր ունի Կենտրոնական և Արևելասլավոնական կոալիցիայի աշխատանքում: Դա 19 քաղաքական և համայնքային կազմակերպություններ ընդգրկող կառույց է, որի նպատակն է խրախուսել Հայաստանի համար կարևոր ծրագրերի հաստատումը: 1997 թ. կոալիցիան կազմակերպեց «Կենտրոնական և Արևելյան սլավոնական անվտանգությունն ու կայունությունը՝ կենսական շահ» խորագիրը կրող կոնֆերանս, որի բանախոսներն էին Հայկական հարցերի կոնգրեսական ժողովի անդամներ:

Սփյուռքահայ կուսակցությունները, կազմակերպություններն ու եկեղեցին սփյուռքահայության քաղաքական պայքարին տալիս են առավել կազմակերպված ու նպատակաուղղված բնույթ: Դա ակնառու է հատկապես սփյուռքում ցեղասպանության օրերի և Հայաստանի անկախության օրերի նշման ժամանակ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ սփյուռքահայերն իրենց քաղաքական ակտիվությամբ արտերկրի քաղաքական շրջանակներին ամեն կերպ ծանոթացնում և հիշեցնում են հայոց արհավիրքը: Նրանք կազմակերպում են բողոքի ցույցեր, համրահավաքներ, սփյուռքի հայկական եկեղեցիներում անցկացվում են պատարագներ, բացվում են եղեռնի հուշարձաններ, կազմակերպվում են սգո երթեր դեպի եղեռնի հուշակոթողներ, բողոքի հուշագրեր են հանձնվում մի շարք երկրների կառավարություններին՝ պահանջելով ճանաչել հայոց ցեղասպանությունը:

Սփյուռքահայությունն իր քաղաքական պայքարի ընթացքում հատուկ տեղ է հատկացնում նաև Արցախի խնդրին: Հայրենիքից ժամանած մի շարք նշանավոր քաղաքական գործիչներ և մտավորականներ

<sup>12</sup> «Ազգ», 3 հուլիս, 1998:

ևս համախմբված պայքար են մղում՝ իրենց մասնակցությունը ցուցաբերելով սփյուռքահայ հայրենակիցների արդար պայքարին:

**КНАРИК ПЕТРОСЯН**  
**ЕГУ**

## ПОЛИТИЧЕСКИЕ СВЯЗИ МЕЖДУ РОДИНОЙ И ДИАСПОРОЙ В 1990-ЫХ ГОДАХ

### РЕЗЮМЕ

После приобретения независимости Армении в 1990-ых гг. политические отношения между родиной и диаспорой приобрели новый уровень. На родину возвратились и свою деятельность возобновили традиционные армянские национальные политические партии *Рамкаваров, Гнчаков и Дашнакцутюн*, которые сыграли существенную роль в политической жизни страны.

Зарубежом, затем и на родине из организаций диаспоры патриотическую деятельность продолжала также Армянская Ассамблея Америки, которая прежде всего выступала в защиту Армянского вопроса и Карабахской борьбы.

Հին և միջին շրջան

1. Курдиани Михэил След Заратуштры в нартовском эпосе осетин.....	3
2. Վարդանյան Վրեժ Սյունյաց ռազմիկները 482-484 թթ. ժողովրդա-ազատագրական պատերազմում.....	12
3. Վարդանյան Արգիշտի «Աշխարհացոյց»-ի ուսումնասիրության համառոտ պատ- մություն.....	23
4. Սելիքյան Կարինե Բյուզանդիայի վարած եկեղեցական քաղաքականությունը Հայաստանում VII դ.....	37
5. Բարթիկյան Հրաչ 803 թ. բյուզանդական կայսր հռչակված Արևելից զորավար Վարդան Պատրիկը թուրք.....	45
6. Հարությունյան Գագիկ Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների կազմակերպման առանձնահատկությունները Կիլիկյան Հայաստանում.....	57
7. Գևորգյան Ջոհրաբ Պապական արգելքները և Կիլիկիայի հայկական պետության առևտուրը (1291-1344 թթ.).....	71
8. Դանիելյան Էդուարդ Ստեփանոս Օրբելյանի պահպանած ավանդազրույցների պատմական նշանակությունը.....	81
9. Հախվերդյան Սերգեյ Ուրվագծեր Սյունիքի Քաշաթաղի մելիքության պատմությունից.....	88

Նոր և նորագույն շրջան

10. Ստեփանյան Գևորգ Հայ ազգաբնակչության շարժընթացը Շամախի քաղաքում (XIX դ.).....	108
11. Հայրապետյան Արմեն ժողովրդագրական գործընթացները Փամբակի գավառակում XIX դարի առաջին քառասնամյակին.....	124
12. Կարապետյան Արմեն Մի դրվագ զինատար շարժման պատմությունից.....	137
13. Գինոյան Նաիրա Հայ ճարտարապետներն Օսմանյան կայսրությունում (XIX դարի կես – XX դարի սկիզբ).....	144
14. Սահակյան Արման Արաբկիրի սանջակի հայ բնակչության թվաքանակը XIX դարի վերջին և XX դարի սկզբին.....	155
15. Բաբլունյան Արփինե ժողովրդագրական փոփոխությունների հիմնական միտումները Խարբերդի նահանգում XIX դ. վերջին և XX դ. սկզբին.....	168
16. Մուրադյան Մեղա Սիրիայի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմությունը.....	181
17. Ալեքսանյան Հովհաննես Սիմֆերոպոլի Հայ Համայնական Խորհուրդն ու Վարչությունը.....	192
18. Հովսեփյան Մարիամ Կ. Պոլսի "Շանթ" հանդեսը (1918-1919 թթ.).....	207
19. Махмурия Гаяне Армянская дипломатия в июле-августе 1919 г. Парижское продолжение после Версальского договора.....	218

20. Ղարախանյան Վահրամ Ինչու՞ Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը տեղակայվեց Պորտուգալիայում.....	232
21. Միրզախանյան Ռուբեն Հայաստանի 1956-1990 թթ. մշակութային կյանքի պատմության աղբյուրագիտությունը (Հուշագրություններ).....	245
22. Սաղաթեյան Իշխան Հայ Յեղափոխական Դաշնակցության դիրքորոշումը 1960- ականներին սկսված հայրենադարձության հարցում.....	257
23. Ջաքարյան Լիլիթ Մամուլի անկախացման ճանապարհին.....	269
24. Марукян Армен Правовые аспекты проявления геноцида армян на территории Азербайджана в 1988-1990 гг. на примере Сумгаита.....	279
25. Պետրոսյան Զնարիկ Հայրենիք-Սփյուռք քաղաքական առնչությունները 1990- ական թվականներին.....	288